

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**  
**/THEORY OF STATE AND LAW/ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

*Դավիթ Սարոյան*  
Պետությունը՝ իբրև իրավաբանական արժեք ..... 3

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС**

*Հայարիի Զարգարյան*  
Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում ամուսինների  
գույքային իրավահարաբերությունների որոշ առանձնահատկությունները ..... 11

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ  
ПРОЦЕСС**

*Վահե Ենգիբարյան*  
Գաղտնի քննչական գործողությունների իրավաչափության հիմնարար երաշխիքները ..... 22

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ/CRIMINAL LAW AND CRIMINOLOGY/  
УГОЛОВНОЕ ПРАВО И КРИМИНОЛОГИЯ**

*Մելիք Մելիքյան*  
Հանցագործության պրովոկացիայի տեղն ու նշանակությունը քրեական իրավունքի  
ընդհանուր մասի որոշ ինստիտուցիոնալ կառուցակարգերում ..... 33

*Արման Բաբախանյան*  
Քրեական ենթամշակույթի տարածման միտումները Հայաստանի Հանրապետությունում . 49

*Ադելինա Սարգսյան, Հրայր Աղավելյան*  
Մարդու կլոնավորման քրեաիրավական ասպեկտները ..... 64

*Նարեկ Հարությունյան*  
Անօրինական միգրացիայի կազմակերպման սուբյեկտիվ հատկանիշներն  
ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության ..... 73

*Գևորգ Իսրայելյան*  
Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով  
կատարվող հափշտակությունների տիպային մեխանիզմները և կանխարգելման  
միջոցները Հայաստանի Հանրապետությունում ..... 85

**ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/PENITENTIARY LAW/  
УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНОЕ ПРАВО**

*Ռոզա Աբրահամյան*  
«Իրավական երաշխիքները»՝ որպես քրեակատարողական իրավունքի տեսության  
հիմնահարց ..... 92

## ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Վճռաբեկ դատարանի որոշումներ.....	100
----------------------------------	-----

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**  
**/THEORY OF STATE AND LAW/ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

<https://doi.org/10.59546/18290744-2024.7-9-3>

ԴԱՎԻԹ ՍԱՐՈՅԱՆ

«ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի հայցորդ»

DAVIT SAROYAN

*Applicant at the Institute of Philosophy,  
Sociology and Law of the National Academy  
of Sciences of the Republic of Armenia*

ДАВИД САРОЯН

*Соискатель Института философии,  
социологии и права Национальной академии наук  
Республики Армения*

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻԲՐԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ**

**THE STATE AS A LEGAL VALUE**

**ГОСУДАРСТВО КАК ПРАВОВАЯ ЦЕННОСТЬ**

**Ներածություն**

Պետությունը որպես իրավաբանական արժեք հարաբերակցությունը սույն հոդվածում դիտարկվում է զույգ իրավական կատեգորիաներով:

Պետության իրավաբանական արժեքը ոչ միայն այն է, որ անքակտելիորեն կապված է իրավունքի հետ, այլև այն, որ պետությունն ինքնին իրավական բովանդակություն ունի, այսինքն՝ պետությունը կազմավորվել է իրավական հիմքերի վրա և գործում է իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Անգլոամերիկյան դոկտրինում այն կոչվում է «կառավարումն՝ ըստ իրավունքի», իսկ ռոմանագերմանական հայեցակարգի համաձայն՝ պետությունն ինքնին իրավական է («իրավական պետություն»): Իրավունքից զատ՝ պետությունը բռնություն է, (բռնի ուժ է, որն իր իշխանությունն իրականացնում է բացառապես հարկադրանքի ուժով):

Հետևաբար, ժողովրդավարական պետությունն իրավական (իրավաբանական) արժեք է:

**Հիմնական հետազոտություն**

Պետության՝ իբրև իրավաբանական արժեքի վերլուծությունը նշանակում է դրա դիտարկումն իրավունքի պրիզմայով: Պետության նկատմամբ իրավաբանական հայացքը սկսում է

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս *Мамут Л.С.*, Государство в ценностном измерении. М., 1998.

լայնորեն տարածվել բուրժուական հեղափոխությունների դարաշրջանում, երբ ձևակերպվում է, այսպես կոչված, իրավաբանական աշխարհայացքը:

Պետության իրավաբանական բնույթի մասին կանխադրույթը, այն իբրև իրավաբանական երևույթ դիտարկելը մեզ անմիջապես ներմուծում են ոչ նյութական հարաբերությունների ոլորտ: Ինչպես նկատել է Գ. Ելինեկը, «իրավական հասկացությունների միջոցով ճանաչվում է միշտ ոչ իրական կեցությունը, այլ միայն այն նորմերը, որոնք նախատեսված են մարդու գործողություններում դրանց իրականացմանը: Իրավական հասկացություններին որպես այդպիսիք չի համապատասխանում մեզնից դուրս որևէ իրականություն: Մեզնից դուրս գոյություն ունեն նյութական մարմինները, բայց գոյություն չունեն իրեր, իրավաբանական իմաստով, սեփականություն, տիրապետում: Իրավաբանական իմաստով՝ իրերը ի հայտ են գալիս իրավունքով կարգավորվող արտաքին բնության առարկաների ու միմյանց նկատմամբ մարդկանց հարաբերությունների վերացարկումից: Սեփականության ու տիրապետման հասկացությունը դուրս է բերվում իրերի նկատմամբ հարաբերությունները կարգավորող նորմերից: Սեփականությունն ու տիրապետումը՝ տարածված պատկերացումներին հակառակ, ըստ էության, շոշափելի ու տեսանելի իրեր չեն, այլ բացառապես այդ կարգի իրերի նկատմամբ վերաբերմունքները այն նորմերի տեսակետից, որոնք պետք է սահմանեն այդ որոշումները»<sup>2</sup>:

Գլխավոր միտքն այստեղ այն է, որ իրավաբանական երևույթների հիմքում ընկած է նորմը՝ իբրև որոշակի առաջնային իրողություն, մի կողմ դնելով բուն նորմի նյութական կամ իդեալական ծագման մասին բանավեճը, հարկավոր է համաձայնել Գ. Ելինեկի հետ, որ իրավաբանական հարաբերություններն ու ինստիտուտները իրական կյանքում մարդու կողմից նորմի ներառման արդյունք են: Այդ իմաստով կարելի է պնդել, որ պետությունը՝ իբրև իրավաբանական երևույթ և արժեհամակարգ իրենից ներկայացնում է նորմերի իրականացված ամբողջություն, որոնք ունեն առնվազն երեք չափումներ՝

1. պետություն՝ իբրև գիտակցության նորմ,
2. պետություն՝ իբրև վարքագծի նորմ,
3. պետություն՝ իբրև դրական իրավունքի նորմ:

1) Դիրքորոշում, որի համաձայն՝ պետությունը գիտակցության իրագործված նորմ է, առավել լիարժեք կերպով ներկայացված է բնական իրավունքի ու պետության պայմանագրային ծագման տեսություններում: Վաղ բուրժուական կամ նախաբուրժուական գաղափարախոսների տեսակետից, իրավունքի ու պետության աղբյուր է մարդու գիտակցությունը: Արդեն նախապետական, բնական վիճակի պայմաններում մարդկանց գիտակցության մեջ ապրիորի գոյություն ունեն բնական իրավունքի նորմերը, որոնք հանդես են գալիս իբրև իրենց վարքագծի հրամայական և իրենց պատկերացումներ են տալիս ազատության, հավասարության, արդարության ու կոլեկտիվ կյանքի այլ սկզբունքների մասին: Այդպիսի մոտեցման էությունն այն է, որպեսզի մատնանշվի անձի ինքնարժեքը, դրա գլխավոր դերը հասարակական ինստիտուտների ու հարաբերությունների ձևավորման գործում: Բնական վիճակի պայմաններում անձի ինքնարժեք կարգավիճակը զուրկ էր երաշխիքներից, ինչը պահանջեց պետության ստեղծում: Այն ի հայտ է գալիս իբրև ուժային ինստիտուտ, որը նախատեսված է մարդու և իր իրավունքների պաշտպանության համար: Պայմանագրային տեսության հայեցակարգը խոսում է այն մասին, որ անձը՝ սուբստանց է, պետությունը՝ գործառնություն, անձը սկզբունքային է, պետությունը՝ երկրորդական: Տվյալ համատեքստում պետությունն ի հայտ է գալիս և գոյություն ունի իբրև անհատական իրավական գիտակցության սուբյեկտ:

<sup>2</sup> Տե՛ս *Еллинек Г.*, *Общее учение о государстве*. СПб., 2004, էջ 178:

Այդպիսի մոտեցման օրինակներ, մասնավորապես տալիս են Թ. Հոբսի և Ի. Կանտի փիլիսոփայական իրավական հայացքները: Այդպես, օրինակ, Թ. Հոբսը տարբերակում է բնական իրավունքն ու բնական օրենքները: Եթե բնական իրավունքի տակ հասկացվում է ոչնչով չսահմանափակված ազատությունը, ապա բնական օրենքը ձևակերպվում է իբրև «կանխադրույթ կամ բանականությամբ սահմանված ընդհանուր կանոն», որը կարգավորում է մարդու վարքագիծը<sup>3</sup>: Պետության առաջացումը Հոբսի կարծիքով՝ հնարավոր է դառնում այն պատճառով, որ բնական օրենքի նորմերը մարմնավորվում են մարդկանց գործնական հարաբերություններում: Իրենց բուն գիտակցությունը՝ պահանջում էր այնպիսի կառույցի ստեղծում, որն ուժի օգնությամբ կարողանար պահպանել ապրիորի գոյություն ունեցող իդեալական հրամայականները:

Ի. Կանտի իրավունքի փիլիսոփայության մեջ տվյալ ռացիոնալիստական միտումը հասնում է իր տրամաբանական ավարտին: Գերմանացի փիլիսոփայի տեսակետից պետությունը՝ իրավական օրենքներին ենթարկված մարդկանց բազմության միավորում է. «Քանի որ այդ օրենքները, - շարունակում է Կանտը, - պետության մասին իր դատողությունը, անհրաժեշտ են իբրև ապրիորի օրենքներ, այսինքն՝ իբրև օրենքներ, որոնք ինքնուրույն բխում են ընդհանուր առմամբ արտաքին իրավունքի հասկացություններից /այլ ոչ թե իբրև օրենքներ/, պետության ձևը՝ ընդհանուր առմամբ պետության ձև է, այսինքն՝ գաղափարի մեջ պետության՝ այնպիսին, ինչպիսին այն պետք է լինի իրավունքի զուտ սկզբունքներին համապատասխան, ընդ որում՝ այդ գաղափարը ծառայում է իբրև «norma» ցանկացած իսկապես ընդհանրության մեջ մարդկանց միավորման համար<sup>4</sup>: Այլ խոսքով և իրավունքն ու պետությունն իրենց հիմքում անհատական գիտակցության ատրիբուտներ, հատկություններն են: Պետությունն իր բնույթով ապրիորի գաղափար է, նորմ, որը տարբեր էմպիրիկ գործոնների ուժով դառնում է իրականություն:

Պետության ընկալման ռացիոնալիստական ավանդույթը՝ իբրև 20-րդ դարում գիտակցության նորմ, բերում է նոր պտուղներ: Պետությունը սկսում են դիտարկել իբրև իրավագիտակցության հատուկ ձև (Ն. Ն. Ալեքսեն, Ի. Ա. Իյին ժամանակակից տեսական-իրավական գրականության մեջ՝ իրավագիտակցության տակ, սովորաբար հասկանում են պետության և իրավունքի ռացիոնալ իմաստավորումը (իրավական գաղափարախոսությունը) և դրանց նկատմամբ հուզական վերաբերմունքը /իրավական հոգեբանություն<sup>5</sup>: Այլ կերպ ասած՝ հասարակական իրավագիտակցությունն այս դեպքում հանդես է գալիս իբրև այս կամ այն ժողովրդի քաղաքական իրավական կյանք ինչը, մեր կարծիքով, իհարկե աղքատացնում և պարզեցնում է իրավագիտակցության մասին մեր պատկերացումը:

Ն. Ն. Ալեքսենի և հատկապես Ի. Ա. Իյինի ծառայությունը այն է, որ իրենք դրսևորել են իրավագիտակցության ակտիվ, արարչի դերը՝ պետության ու իրավունքի կայացման ու գործառնության գործում: Իրավագիտակցությունը, ըստ Իյինի, պարզապես իդեալական կերպար է, քաղաքական-իրավական իրողության մոդելը, այն քաղաքական-իրավական կեցության եղանակ է: Մարդկանց կազմակերպումը պետությանը հնարավոր է միայն այն պատճառով, որ գիտակցությունը մատնանշում է կապի այն եղանակներն ու այն բնույթը, որոնք անհրաժեշտ են իրավաբանական-իշխանական գործունեության համար: Տվյալ դեպքում ճիշտ կլինի ասել, ոչ թե պետությունն է արտացոլվում հասարակական իրավագիտակցության մեջ, այլ ինքը՝ իրավագիտակցությունը, դրա խորքային ու ճյուղավորված կառուցվածքը կանխորո-

<sup>3</sup> Տե՛ս *Гоббс Т.*, Соч.В 2-х т. Т. 2, М., 1991, էջ 98-99:

<sup>4</sup> Տե՛ս *Кант И.*, Соч. в 6-ти т. 4, Ч. 4.2, М., 1965, էջ 233-234:

<sup>5</sup> Տե՛ս *Алексеев С.С.*, Общая теория права. М., 1995.

շում է այս կամ այն պետության առանձնահատկությունը, ստեղծում է տվյալ պետությունը: Պետության ձևը, մեխանիզմը, գործառույթները, վերջապես, պետական իշխանության բուն էությունը ոչ այլ ինչ է, քան իրավագիտակցության դրսևորում: Եթե այս կամ այն ժողովրդի գիտակցությունը չի պարունակում իրավաբանական իշխանային գործունեության մասին պատկերացումները, պետականություն չի կազմավորում: Պետությունն ապրում ու իրագործում է իր գործունեությունն, առաջին հերթին, այն պատճառով, որ կան մարդիկ, նրանք միավորված են ընդհանուր շահերի գիտակցությամբ, ընդհանուր նպատակներով ու արժեքներով: Բազմաթիվ պատմական օրինակները ցույց են տալիս, որ իրավագիտակցության արմատական բեկումը պետության լուրջ դեֆորմացիայի կամ անգամ վախճանի:

2) Պետության՝ իբրև վարքագծի նորմի դիտարկումը, լայնորեն տարածված է սոցիալ-իրավական ու հոգեբանական դպրոցների տարբեր տարբերակներում: Հասարակագիտությունը՝ գիտություն է հասարակական ինստիտուտների ու իրենց գործառնական փոխկապակցվածության մասին: Հասարակագիտական մեթոդը ենթադրում է պետության ուսումնասիրությունը այլ հատուկ երևույթների հետ իր գործառնական կապերի համատեքստում /տնտեսագիտության, քաղաքականության, կրոնի, բարոյականություն, սովորույթների, ազգային հարաբերությունների և այլն): Հասարակագիտության տեսակետից պետությունը՝ մի կառույց է, որի էությունը բացահայտվում է իր գործառնական, օգտավետության, հասարակության համար և իր կառույցների, ինչպես նաև առանձին անհատների համար անհրաժեշտության մեջ:

Պետությունն ի հայտ է գալիս ու գոյություն ունի այն պատճառով, որ դրա գործունեությունը համապատասխանում է (կամ պետք է համապատասխանի) հասարակության արմատական շահերին, նրա ինքնագիտակցության և իրավագիտակցության մակարդակին: Այս իմաստով կարելի է ասել, որ պետությունն ի հայտ է գալիս ու գոյություն ունի, իբրև կյանքի մի փաստ, որը պայմանավորված է մարդկանց գիտակցված և նյութական կենսագործունեության առանձնահատկություններով և անհրաժեշտությամբ: Այս կամ այն ժողովրդի գոյության համար մղվող պայքարը դրան թելադրում է վարքագծի նորմեր, որոնք մարմնավորվում են այդ թվում պետության գործունեության մեջ: Իրականացնելով քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական և այլ գործառույթները՝ պետությունը փաստացի կատարում է սոցիալական հարաբերությունների բնույթով տրված վարքագծի նորմերը: Հարկավոր է ընդգծել, որ տվյալ նորմերը՝ ոչ մեկի կողմից սահմանված չեն և ոչ մի տեղ ամրագրված չեն, դրանք ծնվում են բուն կյանքի կողմից և գոյություն ունեն իբրև պետական մարմինների ու պաշտոնատար անձանց վարքագծի փաստ: Պետության փաստացի վարքագծի նորմերը կարող են իրենց արտացոլումը գտնել դրական իրավունքում, իրավական սովորույթներում, օրենսդրության մեջ, իրավաբանական նախադեպերում և այլն, սակայն դրանց նախադրյալը՝ հասարակական կյանքն է իր ողջ բազմազանությամբ:

Այդպես, օրինակ, ֆրանսիացի իրավաբան Լ. Դյուգին պնդում էր, որ պետության գոյության ու գործունեության հիմքում ընկած է գլխավոր սոցիալական նորմը՝ համերաշխության նորմը: Նա համարում էր, որ բոլոր սոցիալական կապերի հիմքը, համերաշխության նորմն է, որը միավորում է մարդկանց՝ մեկ միասնության մեջ<sup>6</sup>: Հասարակությունը գոյություն ունի, զարգանում ու ապրում է միայն այն պատճառով, որ իրագործում է համընդհանուր համերաշխության նորմը, որը դրված է բուն բնության կողմից: Պետությունն իբրև կյանքի փաստ, իրենից ներկայացնում է տվյալ նորմի գործողության արդյունք, պետությունը՝ բուն նորմն է իր փաստական, էմպիրիկ արտահայտությամբ: Կարելի է համաձայնվել կամ չհամաձայնվել

<sup>6</sup> Տե՛ս *Дюги Леон*. Конституционное право: общая теория государства. М., 2013:

Լ. Դյուգեի թեզի հետ հասարակական հարաբերությունների համերաշխ բնույթի մասին, սակայն մեթոդաբանական առումով ֆրանսիացի իրավաբանն արդարացի է, պետությունն իր փաստացի վարքագծում իրագործում է բուն կյանքի կողմից թելադրվող նորմերը:

Հոգեբանները նույնպես իրենց ներդրումն են կատարել պետությունը՝ իբրև նորմատիվ վարքագծի փաստ դիտարկելու ավանդույթի ստեղծման մեջ: Այդպես, օրինակ, շվեյցարացի հոգեբան Կ.Գ. Յունգի տեսակետից, մարդկանց վարքագիծը, սոցիալական ինստիտուտների կյանքը սահմանվում է կոլեկտիվ անգիտակցականով, որի տակ հասկացվում է մարդկանց կողմից՝ չգիտակցվող հոգեկան էներգիան, որը հանդես է գալիս իբրև սերնդեսերունդ ժառանգվող բնազդների ու կարծրատիպերի՝ ընկալման ու վարքագծի մեջ: Կոլեկտիվ անգիտակցականը պարունակում է ողջ մարդկության կուտակված փորձը, պարունակում է որոշակի գենետիկ ծածկագիր, որը սահմանում է անհատական ու սոցիալական հոգեբանությունը: Կոլեկտիվ անգիտակցականի կարևորագույն տարր է նախատիպը՝ ինքնատիպ իդեալական բյուրեղը, զուտ ձևը, որ կառուցում է մարդկանց զգայական ու մտավոր փորձն իր կերպարով ու նմանությամբ: Ըստ Յունգի, նախատիպն ունի ոչ նյութական, նախանյութական ծագում, դրա բնույթը երբեք չի կարող ճանաչվել, այն մշտապես իրեն բացահայտում է իբրև սիմվոլիկ կերպարներ՝ երազներում, հոգեկան հիվանդների՝ զառանցումներում, դիցաբանություններում, կրոնական տեքստերում, մոզական ծեսերում, արվեստի մեջ և այլն: Հենց նախատիպերն են «պատասխանում» սոցիոմշակութային ձևերի առանձնահատկության համար պետություն, իրավունք, կրոնական ու ազգային հարաբերություններ, տարբեր ժողովուրդների մոտ, քանի որ յուրաքանչյուր էթնոսի մոտ կախված դրա առաջացման ու զարգացման հանգամանքներից՝ կարող է գերիշխել այս կամ այն նախատիպը:

Տվյալ դիրքորոշմանը համաձայն՝ յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր, միայն իրեն հատուկ նախատիպերը, որոնք սահմանում են պետության առանձնահատկությունը՝ դրա ձևով, մեխանիզմով, գործառույթներով իշխանության իրականացման, ու եղանակներով: Տվյալ դեպքում կոլեկտիվ անգիտակցականի նախատիպը այն նորմն է, որը սահմանում է ժողովրդի քաղաքական վարքագծի շրջանակները իր գոյության ողջ ընթացքում: Պետությունը սոցիալական-կրոնական-դիցաբանական նախատիպ է, որտեղ նորմն ու փաստը միաձուլվել են օրգանական միասնության մեջ:

3) Պետության՝ իբրև դրական իրավունքի իրականացված նորմի ընկալումն իր արտացոլումն է գտել իրավաբանական պոզիտիվիզմում, որը հիմնականում ի հայտ է եկել իբրև իշխանության եկած բուրժուազիայի շահերի սպասարկման գործիք: Բուրժուական ժողովրդավարության պայմաններում բազմակի անգամ մեծանում է նորմատիվ ակտի՝ իբրև իրավունքի աղբյուրի դերը /խորհրդարանի ու կառավարության ակտիվ իրավաստեղծ գործունեության հետևանքով բուռն զարգանում է սահմանադրական օրենսդրությունը/: 19-րդ դարի առաջին երրորդում գերմանացի՝ իրավաբանները սկսում են մշակել իրավական պետության տեսությունը<sup>7</sup>: Այս բոլոր գործոնները նպաստում էին ձևական դոգմատիկ իրավաբանության զարգացմանը, որը հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի տեքստի վրա: Դոգմատիկ-իրավաբանի տեսակետից պետությունը՝ իրավակարգ է, նորմատիվ ակտերի ամբողջականություն է, որպես սահմանադրական օրենսդրության իրականացված նորմերի համակարգ:

Այդպիսի ընդգծված ֆորմալիստական մոտեցումը կարող է թվալ կյանքից կտրված, որն ունակ է ոչ միայն ճիշտ գիտելիքներ տալ պետության մասին, որքան պատրանք: Իսկապես,

<sup>7</sup> Տե՛ս *Тухомиров Ю.А.*, Государство. Норма, М., 2013, с. 43-54:

վերջին երկու տասնամյակների պատմությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ երկրներում ընդունվում էին սահմանադրություններ, որոնք քիչ առնչություն են ունեցել իրական քաղաքական և իրավական իրականության հետ: Շատ հաճախ այդ կարգի սահմանադրությունները եղել են ենթակաների գիտակցության մանիպուլյացիայի միջոց, քաղաքական քարոզչության տարատեսակ: Այս դեպքում պետության՝ իբրև դրական իրավունքների իրացված նորմերի մասին խոսելը կարծես թե դառնում է անտեղ:

Դրա հետ մեկտեղ տվյալ հիմնախնդիրն ավելի բարդ է, քան կարող է թվալ առաջին հայացքից:

Առաջին հերթին, պետության ու դրական իրավունքի միջև գոյություն ունեն ուղիղ ու հետադարձ կապեր: Պետությունը, իրագործելով իր ինքնիշխանությունը, ստեղծում է որոշակի նորմեր, որոնք խախտելու համար սահմանում է պատասխանատվություն: Հարկավոր է հասկանալ, որ իրավունք կարող է դառնալ ցանկացած սոցիալական նորմ /բարոյական, կրոնական, գեղագիտական, տեխնիկական, սովորույթի և այլն/, որի խախտման համար մեղադրելու է պետությունը: Պետությունից բխող նորմատիվ համակարգը՝ հանդիսանում է դրա կամքի դրսևորում, որն ուղղված է միասնական իշխանական կենտրոնին՝ հասարակական կյանքի բոլոր սուբյեկտների ենթարկեցմանը: Իշխանության ռեժիմը պահանջում է կայունություն, որն ապահովվում է իրավունքի օգնությամբ: Պետությունը միշտ շահագրգռված է կայուն իրավակարգի գոյությամբ, քանի որ միայն այդ եղանակով կարելի է երկար ժամանակով ապահովել իր ինքնիշխանությունը: Եթե պետությունը սխտեմատիկորեն դուրս հանի՝ իրեն իր իսկ կողմից սահմանված իրավակարգի շրջանակներից, ապա այս դեպքում իշխանությունը կսկսի խափանել իր իսկ սեփական կարգավիճակը՝ իրավակարգի՝ միակ օրինական աղբյուրի: Այլ կերպ ասած, պետությունը՝ հանձինս իրավունքի, ստեղծում է իր համար, իր գոյության այնպիսի անհրաժեշտ պայման, առանց որի հետագայում արդեն չի կարող դիմանալ: Իրավունքը դառնում է պետության երկրորդ բնություն, դրա անբաժանելի օրգանական տարրը, որը ձեռք է բերում սեփական ինտերցիոն զարգացման ուժ: Դրական իրավունքը, ի հայտ գալով իբրև պետության կամք՝ դրա ինքնիշխանություն պաշտպանության համար, իր հերթին սկսում է կապել բուն պետությունը՝ թելադրելով դրան իր իսկ կամքը: Հենց այդ իմաստով կարելի է պնդել, որ պետությունը՝ դրական իրավունքի իրականացված նորմ է:

Երկրորդ, երբ բուրժուական հասարակության զանգվածային գիտակցության մեջ պետությունը սկսում է ընկալվել հիմնականում իրավաբանական կատեգորիաների պրիզմայի միջոցով, պետությունը՝ իբրև իրավունքի սուբյեկտ, իբրև իրավաբանական անձ, այն իսկապես սկսում է ձեռք բերել իրավաբանական բնույթ: Իհարկե, պետությունը իբրև իրավունքի սուբյեկտ, որոշակի իրավաբանական վերացարկությունն է, իրավաբանական հասկացություն, որը գոյություն ունի կամ գիտակցության մեջ, կամ թղթի վրա: Սակայն, պետության երևույթը դնելով իրավաբանական կառույցների շրջանակում՝ այն կապված է լինում իրավաբանական կատեգորիաներով, մարդկանց գիտակցությունը, ստեղծելով իրավական նորմեր ու կատեգորիաներ, դրանով իրական պետություն է կառուցում դրական իրավունքի աշխարհում: Դրա օրինակն է իրավական պետությունը, որը իրավաբանները հաճախակի սահմանում են իբրև իրավաբանորեն կազմակերպված ժողովուրդ: Չէ որ իրավական պետությունն իրենից ներկայացնում է իրավաբանական կապերի ամբողջություն, սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների հանրագումար, որոնք նախատեսված են դրական իրավունքի նորմերով:

Երրորդ, իրապես գործառնող իրավակարգում պետությունն ու դրական իրավունքը փաստորեն միաձուլվում են, ինչը այնչափ համոզիչ կերպով ցույց տվեց նորմատիվիզմի հիմնադիր



Հ. Քելզենը: Քելզենի տեսակետի համաձայն՝ մարդկային 26 հարաբերությունների ոլորտում աշխարհն ունի երկու բաղադրիչ՝ պարտի ոլորտը, որը ներկայացված է գիտակցության մեջ, և էականի ոլորտը, որը դրսևորվում է մարդկանց փաստացի վարքագծում<sup>8</sup>: Պարտի մտածված աշխարհը ձևավորում է գոյի աշխարհը (այսինքն՝ իրականությունը), դրանում ներմուծում է նորմատիվություն, կազմակերպվածություն ու կարգուկանոն: Պետությունն ու դրական իրավունքը հենց այն նորմատիվ կարգուկանոնն է, որը, ծնվելով պարտի ոլորտում, դառնում է էմպիրիկ իրականություն իրական աշխարհում: Այլ կերպ ասած, և պետությունը, և դրական իրավունքը՝ դրանց էմպիրիկ դրսևորմամբ, իրենցից ներկայացնում են պարտի աշխարհի իրականացված նորմ: Եթե հեռվանանք Հ. Քելզենի մետաֆիզիկական վերացարկությունից ու փորձենք առանձնացնել նորմատիվիզմի ռացիոնալ կորիզը, ապա այն արտահայտվում է հետևյալում՝ պետությունը, որը ներկայացված է իրավակազմի տեսքով, ունի նորմատիվ հիմք, իսկ առավել հստակ՝ այն մեծապես դրական իրավունքի նորմի գործողության արդյունք է:

### Եզրակացություն

Պետությունն իր կառուցվածքով, կառավարման ձևով, քաղաքական ռեժիմով, սոցիալ-տնտեսական և մշակութային հարաբերություններով ոչ միայն սոցիալական արժեք է, այլև իրավաբանական, քանի որ վերոնշյալը հիմնվում և պայմանավորվում է իրավունքով և իրավական կարգավորման կառուցակարգով:

**Ամփոփագիր:** Սույն հոդվածում հեղինակը պետությունը դիտարկում է որպես իրավաբանական արժեք երկու առումով: Առաջինը՝ պետությունն ինքնին նաև իրավական կատեգորիա է: Իր էությամբ և բովանդակությամբ պետությունը չի կարող ծագել, գործառնություն իրականացնել և զարգանալ առանց իրավունքի: Երկրորդ՝ պետությունը անխզելիորեն կապված է պոզիտիվ իրավունքի հետ և դա արտահայտվում է երկակի ձևով. նախ՝ պետությունն է հիմնական իրավաստեղծողը, երկրորդ՝ պետությունն իր գործառնության լիազորություններն իրականացնում է իրավունքի միջոցով: Պետության իրավաբանական արժեքը ոչ միայն նրանում է, որ այն անքակտելիորեն կապված է իրավունքի հետ, այլև նրանում, որ պետությունն ինքնին իրավական բովանդակություն ունի, այսինքն՝ պետությունը կազմավորվել է իրավական հիմքերի վրա և գործում է իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Այս իմաստով կարելի է ասել, որ պետությունն ի հայտ է գալիս ու գոյություն ունի, իբրև կյանքի մի փաստ, որը պայմանավորված է մարդկանց գիտակցված և նյութական կենսագործունեության առանձնահատկություններով և անհրաժեշտությամբ: Պետությունն՝ իբրև կյանքի փաստ, իրենից ներկայացնում է տվյալ նորմի գործողության արդյունք, պետությունը՝ բուն նորմն է իր փաստական, էմպիրիկ արտահայտությամբ: Պետությունից բխող նորմատիվ համակարգը դրա կամքի դրսևորումն է, որն ուղղված է միասնական իշխանական կենտրոնին, հասարակական կյանքի բոլոր սուբյեկտների ենթարկեցմանը: Իշխանության ռեժիմը պահանջում է կայունություն, որն ապահովվում է իրավունքի օգնությամբ:

**Annotation.** In this article, the author considers the state as a legal value in two aspects. First, the state itself is a legal category. By its nature and content, the state cannot arise, operate and develop without law. Secondly, the state is inextricably linked with positive law, and this is expressed in two ways: first, the state is the main lawmaker, and secondly, the state exercises its functional powers through law. Therefore, the State embodies and represents a legal value. The legal value of the state is not only in the fact that it is inextricably linked to the law, but also in the fact that the state itself has legal content, that is, the state was formed on legal bases and acts in accordance with the principles and norms of law. In this sense, it can be said that the state appears and exists as a fact of life, which is determined by the characteristics and necessity of conscious and material life activity of people. The state as a fact of life is the result of the given norm, the

<sup>8</sup> Մանրամասն տես *Kelzen H., General Theory of Law and state.*L. 1961.

state is the norm itself in its factual, empirical expression.

The normative system arising from the state is a manifestation of its will, which is aimed at subordinating all subjects of public life. The regime of power requires stability, which is ensured by law.

**Անոտация.** В данной статье автор рассматривает государство как правовую ценность в двух аспектах. Во-первых, само государство является правовой категорией. По своей природе и содержанию, государство не может возникнуть, действовать и развиваться без права. Во-вторых, государство неразрывно связано с позитивным правом, и это выражается двояко: во-первых, государство является главным законодателем, во-вторых, государство осуществляет свои функциональные полномочия посредством закона. Следовательно, государство воплощает и представляет собой юридическую ценность. Правовое значение государства заключается не только в том, что оно неразрывно связано с правом, но и в том, что само государство имеет правовое содержание, т.е. государство формируется на правовых основах и действует в соответствии с правовыми нормами, принципами и нормами права. В этом смысле можно сказать, что государство возникает и существует как факт жизни, который определяется особенностями и необходимостью сознательной и материальной жизнедеятельности людей. Государство как факт жизни есть результат данной нормы, государство есть сама норма в ее действительном, эмпирическом выражении. Нормативная система, исходящая от государства, является проявлением его воли, которая направлена на подчинение всех субъектов общественной жизни единому властному центру. Режим власти требует стабильности, которая обеспечивается с помощью права.

**Բանալի բառեր** - պետություն, իրավական պետություն, իրավաբանական արժեք, գործառնության լիազորություններ, իրավական կարեգորհա, ժողովրդավարական պետություն:

**Keywords:** state: legal state, legal value, functional powers, legal category, democratic state.

**Ключевые слова:** государство, правовое государство, правовая ценность, функциональные полномочия, правовая категория, демократическое государство.

### Օգտագործված գրականության ցանկ

1. Мамут Л.С., Государство в ценностном измерении, М., 1998.
2. Еллинек Г., Общее учение о государстве, СПб, 2004.
3. Гоббс Т., Соч. в 2-х томах.Т.2., М., 1991.
4. Кант И., Соч. в 6-ти томах.Т.4., М., 1965.
5. Алексеев С.С., Общая теория права, М., 1995.
6. Дюги Леон, Конституционное право: общая теория государства, М., 2013.
7. Тихомиров Ю.А., Государство, «Норма», М., 2013.
8. Kelsen H., The Pur Theory of Law. Los Angeles, 1970.

**Սարոյան Գ.** – ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, էլիասցե՝ saroyan2720@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 18.10.2024 թ., տրվել է գրախոսության 18.10.2024 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 18.11.2024 թ.:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ГРАЖДАНСКИЙ  
ПРОЦЕСС**

<https://doi.org/10.59546/18290744-2024.7-9-11>

ՀԱՅԱՐՓԻ ԶԱՐԳԱՐՅԱՆ  
ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

HAYARPI ZARGARYAN  
Judge of the RA Appeal Anti-Corruption Court,  
PhD in Law

АЙАРПИ ЗАРГАРЯН  
Судья апелляционного антикоррупционного суда РА,  
кандидат юридических наук

**ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒԱԳԱՆՁՄԱՆ  
ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ  
ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**SOME FEATURES ON  
PROPERTY RELATIONS OF SPOUSES IN THE PROCEEDING FOR  
CONFISCATION OF PROPERTY OF ILLEGAL ORIGIN**

**НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ИМУЩЕСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ  
СУПРУГОВ В ПРОИЗВОДСТВЕ О КОНФИСКАЦИИ ИМУЩЕСТВА  
НЕЗАКОННОГО ПРОИСХОЖДЕНИЯ**

**Ներածություն**

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքն<sup>1</sup> (այսուհետ՝ Օրենք) ուժի մեջ է մտել 23.05.2020 թվականին, և դրա կիրառման օրեցօր զարգացող դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ Օրենքի հատուկ կարգավորումներն ինքնատիպ

<sup>1</sup> Տե՛ս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 16.04.2020 թվականին, ուժի մեջ է մտել 23.05.2020 թվականին, [www.arlis.am](http://www.arlis.am) պաշտոնական կայք:

դրսևորում են ստանում քաղաքացիական շրջանառության մեջ: Յուրաքանչյուր հակակոռուպցիոն քաղաքացիական գործի փաստական հանգամանքներով պայմանավորված դատարանն Օրենքի կիրառումն ապահովելու համար պետք է ելնի դրա ընդունման համար հիմք ծառայած միջազգային իրավական փաստաթղթերի տրամաբանությունից՝ հաշվի առնելով օրենսդրի կամքը, ինչպես նաև ապահովելով նոր ձևավորվող ինստիտուտի շարունակական զարգացումը և ամրապնդումը:

Այս առումով հարկ է փաստել, որ հայրենական իրավաբանական գրականությունն առկա է, իսկ Օրենքի կիրառման առանձնահատկություններին նվիրված դեռևս միակ գիտական աղբյուրը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև» վերտառությամբ ձեռնարկն է<sup>2</sup>, որը նվիրված է մինչհայցային վարույթում Օրենքի կիրառման առանձնահատկություններին:

Հետևաբար, հայրենական իրավագիտությունն ունի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ինչպես կիրառական, այնպես էլ տեսական ուսումնասիրության կարիք, և ինստիտուտի նոր լինելու, ինչպես նաև տեսական գրականության բացակայության հանգամանքներով է պայմանավորված այն իրողությունը, որ դատարանները յուրաքանչյուր հակակոռուպցիոն քաղաքացիական գործի շրջանակում իրականացնում են Օրենքի այս կամ այն դրույթի վերլուծություն և մեկնաբանություն, ինչը հնարավորություն է տալիս իրավաբանական հանրությանը ձեռք բերելու գիտելիքներ, տեղեկատվություն օրենսդրական կարգավորումների փաստացի կիրառման պրակտիկայի մասին, որն ինքնին կնպաստի անձի արդար դատաքննության իրավունքի լիիրավ կենսագործմանը:

Հետաքրքրական ենք համարում սույն հոդվածի շրջանակում անդրադառնալ Օրենքի և ՀՀ ընտանեկան օրենսդրության խաչաձևումներին՝ վեր հանելով ընդհանուր տնտեսություն վարելու և ամուսնության պետական գրանցման հիմնահարցերը՝ իրավական հետևյալ հարցադրման տեսքով.

***արդյո՞ք ֆիզիկական անձի հետ ընդհանուր տնտեսություն վարելու փաստն արձանագրելու համար պարտադիր պայման է փվյալ անձի հետ գրանցված ամուսնության մեջ լինելը, թե ոչ:***

### **Հիմնական հետազոտություն**

Այսպես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը»:

ՀՀ ընտանեկան օրենսդրությունը չի սահմանել «ընտանիք» հասկացությունը, ինչը որևէ այլ իրավական ակտով նույնպես վեր հանված չէ: ՀՀ ընտանեկան օրենսգիրքը սահմանում է միայն մերձավոր ազգականների շրջանակը, այն է՝ մերձավոր ազգականներ են ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակները (Հոդված 11):

Մինչդեռ հարկ է նշել, որ Օրենքն իր առանձնահատուկ կարգավորումներով անդրադարձել է ինչպես «ընտանիքի անդամ», այնպես էլ «մերձավոր ազգական» արտահայտություններին:

<sup>2</sup> Տե՛ս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև», համահեղինակությամբ դատավորներ *Գ. Թորոսյանի, Հ. Զարգարյանի, Հ. Շահնազարյանի*, իրավաբան-գիտնականներ *Վ. Հովհաննիսյանի, Վ. Կասկոյի*, Երևան, 2023:

Այսպես, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ **մերձավոր** ազգական է ընտանիքի անդամը, չափահաս զավակը, ծնողը, քույրը, եղբայրը (այդ թվում՝ համահայրը կամ համամայրը), տատը, պապը, թոռները, հորեղբայրը, մորաքույրը, հորաքույրը, մորեղբայրը կամ նրանց ընտանիքի անդամները, անձի ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը:

**Ընտանիքի անդամ է** ամուսինը, անչափահաս զավակը, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը կամ ուսումնասիրվող ժամանակահատվածում ոչ պակաս, քան մեկ տարվա ընթացքում 180 օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձը:

Հետևաբար, կարող ենք արձանագրել, որ կարևորելով Օրենքի իրավակարգավորումների կենսագործումը՝ օրենսդիրն Օրենքում է բացահայտել մերձավոր ազգականների և ընտանիքի անդամների շրջանակը:

Ընդ որում, եթե մերձավոր ազգականների շրջանակը Օրենքի և ՀՀ ընտանեկան օրենսդրության իմաստով որոշակիորեն համընկնում է (Օրենքը սահմանում է ավելի լայն շրջանակ՝ ընդգրկելով ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված անձանց), ապա հարկ է նկատել, որ «ընտանիքի անդամների» մասին ՀՀ ընտանեկան օրենսգրքը որևէ նշում չի պարունակում, մինչդեռ գտնում ենք, որ Օրենքի ընդունումից հետո համապատասխան փոփոխությունների կատարումը ՀՀ ընտանեկան օրենսգրքում պարտադիր էր՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ ընտանեկան իրավահարաբերությունները կարգավորող հիմնական փաստաթուղթը ՀՀ ընտանեկան օրենսգրքն է, ուստի տրամաբանական կլիներ նախևառաջ հենց այդ իրավական ակտում ամրագրել ընտանիքին, մերձավոր ազգականներին վերաբերող բոլոր հասկացությունների բովանդակությունը:

Այս առումով **առաջարկում ենք ՀՀ ընտանեկան օրենսգրքում կատարել լրացում՝ ամրագրելով «ընտանիքի անդամ» հասկացությունը՝ նույն ձևակերպմամբ, որն առկա է Օրենքում:**

Հատկանշական է, որ Օրենքը սահմանում է նաև «փոխկապակցված անձ» հասկացությունը, սահմանելով նրանց շրջանակը, այն է՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ **փոխկապակցված անձ է** անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձը, **մերձավոր ազգականը** կամ ցանկացած իրավաբանական կամ **Ֆիզիկական անձ, որի հետ փոխյալ անձը վարում է ընդհանուր տնտեսություն** կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որին տվյալ անձն անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք:

Ինչպես կարող ենք նկատել օրենսդրական կարգավորումից, փոխկապակցված անձանց շրջանակում ներառվում են նաև մերձավոր ազգականները, ինչը նշանակում է, որ սահմանումն ունի նաև ընտանեկան օրենսդրության իմաստով ամրագրման կարիք՝ ելնելով ոչ միայն այն իրողությունից, որ մերձավոր ազգականների միջև ընտանեկան և գույքային իրավահարաբերությունները կարգավորող ընդհանուր դրույթներն ամրագրված են ՀՀ ընտանեկան օրենսգրքում, այլև հաշվի առնելով հասկացության դիսպոզիցիայի բաղկացուցիչ տարր հանդիսացող «ընդհանուր տնտեսություն վարել» արտահայտությունը, որը բնորոշ է նախևառաջ ընտանիքի անդամներին:

Հիշյալ դրույթի իրավական վերլուծությունը վկայում է նաև այն մասին, որ փոխկապակցված անձ կարող է հանդիսանալ **ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ**: Ընդ որում, ֆիզիկական անձի պարագայում նա կարող է լինել ինչպես Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված **մերձավոր ազգականների ցանկի մեջ մտնող անձը**, այն-

պես էլ ցանկացած այլ ֆիզիկական անձ:

Անձանց փոխկապակցվածությունը հաստատված համարելու համար օրենսդիրը սահմանել է հետևյալ պայմանները, որոնցից թեկուզ մեկի առկայությունը բավարար է Օրենքի իմաստով անձանց փոխկապակցվածությունը «ճանաչելու» համար:

Այն է՝ **տվյալ անձի հետ**՝

- **ընդհանուր տնտեսություն վարելը,**  
կամ

- համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը,  
կամ

- **տվյալ անձին** անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով գույք փոխանցելը:

Հետևաբար, վերոհիշյալ պայմաններից թեկուզ մեկի առկայությունը բավարար է անձանց փոխկապակցվածությունը հաստատված համարելու համար, և օրենսդիրը չի առաջադրել այլ լրացուցիչ պայմանների, ըստ այդմ՝ նաև այդ լրացուցիչ պայմանները հիմնավորող ապացույցների ներկայացման պարտադիրություն:

Հարկ ենք համարում նշել, որ պրակտիկայում հաճախ խնդիր է առաջանում համատեղ կամ ընդհանուր տնտեսություն վարելու փաստն արձանագրելու համար՝ ամուսինների միջև ամուսնության պետական գրանցման բացակայության պատճառով:

Ընդհանուր տնտեսություն վարելու իրավահարաբերություններն առհասարակ, և ընտանիքի անդամների միջև՝ մասնավորապես, հանդիսանում են գույքային իրավահարաբերություններ, ուստի դրանց էությունը և բովանդակությունը վեր հանելու համար պետք է անցում կատարել գույքային իրավահարաբերությունները սահմանող կարգավորումներին:

Այսպես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «Ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով:

2. Գույքը կարող է ընդհանուր սեփականությանը պատկանել սեփականության իրավունքում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշելով (բաժնային սեփականություն) կամ առանց այդ բաժինները որոշելու (համատեղ սեփականություն)»:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորման տառացի բովանդակությունը վկայում է այն մասին, որ գույքի՝ ընդհանուր սեփականություն հանդիսանալու համար **պարտադիր պայմանը երկու և ավելի անձանց սեփականության իրավունքով պատկանելն է**, և օրենսդիրը չի սահմանել այնպիսի պայման, ինչպիսին է, օրինակ, գրանցված ամուսնությունը:

Ավելորդ չէ նշել, որ ամուսինների միջև ծագած իրավունքները և պարտականությունները կարող են լինել ինչպես գույքային, այնպես էլ անձնական ոչ գույքային: Գույքային իրավահարաբերությունների համատեքստում կարևորվում է նաև ամուսինների կամ համատեղ բնակվող զուգընկերների կողմից համատեղ ընդհանուր տնտեսություն վարելը, ինչը նույնպես նրանց միջև ծավալվող գույքային իրավահարաբերություն է:

ՀՀ ընտանեկան օրենսդրությունը չի սահմանել նաև «**ընդհանուր տնտեսություն վարել**» արտահայտությունը, ինչը նույնպես, մեր համոզմամբ, վկայում է այն մասին, ՀՀ ընտանեկան

օրենսդրությունն ունի փոփոխությունների և լրացումների կարիք, քանի որ հասարակական հարաբերությունների ամենօրյա զարգացումները և առկա ու գործող այլ իրավական ակտերով ընտանեկան իրավահարաբերություններին ուղղակի առնչվող հասկացությունների և նոր լուծումների փաստացի առկայությունը պահանջում է համարժեք կարգավորումներ նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքում:

Կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս արձանագրել, որ «ընդհանուր տնտեսություն վարել» արտահայտության բովանդակությունը բացահայտված չէ նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, սակայն համարժեք իրավական կարգավորումն առկա է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի (փոխկապակցված անձինք) 4-րդ մասում, որը սահմանում է, որ «Սույն օրենքի և բանկային գործունեությունը կարգավորող այլ օրենքների, ինչպես նաև ֆինանսական խմբերի գործունեությունը կարգավորող օրենսդրության իմաստով *միևնույն ընտանիքի անդամ են համարվում ամուսինը, ինչպես նաև համատեղ ապրող կամ միևնույն տնտեսություն վարող հետևյալ անձինք՝ ծնողները, տատը, պապը, 18 տարին լրացած թոռը, 18 տարին լրացած զավակն ու նրա ամուսինը, 18 տարին լրացած քույրը, եղբայրն ու նրանց ամուսինները և 18 տարին լրացած նրանց զավակները, ամուսնու ծնողները, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակը:*

**Անձինք համարվում են միևնույն տնտեսություն վարող, եթե նրանցից մեկի ֆինանսական վիճակի վատթարացումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մյուսի ֆինանսական վիճակի վատթարացման, կամ նրանցից մեկի եկամուտը կամ ֆինանսական այլ միջոցները օգտագործվում են կամ կարող են օգտագործվել համատեղ ծախսերի կամ մյուսի ծախսերի ֆինանսավորման նպատակով:**

Հիշյալ իրավական ձևակերպումներից բխում է, որ ֆինանսական, հետևաբար նաև՝ գույքային իմաստով օրենսդիրը միևնույն կամ համատեղ տնտեսություն վարող է համարում այն անձանց, որոնցից մեկի ֆինանսական վիճակի վատթարացումը հանգեցնում կամ կարող է հանգեցնել մյուսի ֆինանսական վիճակի վատթարացման, կամ նրանցից մեկի եկամուտը կամ ֆինանսական այլ միջոցները օգտագործվում են կամ կարող են օգտագործվել համատեղ ծախսերի կամ մյուսի ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Նշված դրույթից ուղղակի բխում է, որ միևնույն կամ համատեղ տնտեսություն կարող են վարել ինչպես ամուսինները, այնպես էլ ծնողները, տատը, պապը, 18 տարին լրացած թոռը, 18 տարին լրացած զավակն ու նրա ամուսինը, 18 տարին լրացած քույրը, եղբայրն ու նրանց ամուսինները և 18 տարին լրացած նրանց զավակները, ամուսնու ծնողները, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակը:

Հետևաբար, անձանց նշված շրջանակը ավելի *նեղ* է, քան Օրենքի իմաստով ընտանիքի անդամների կազմը (քանի որ Օրենքի իմաստով ընտանիքի անդամների կազմի մեջ կարող է ներառվել ցանկացած անձ, ով ուսումնասիրվող ժամանակահատվածում ոչ պակաս, քան մեկ տարվա ընթացքում 180 օր համատեղ բնակվել է անձի հետ), և փաստորեն, *մասամբ համապատասխանում է մերձավոր ազգականների հասկացությանը* (ներառելով ընտանիքի սահմանված 18 տարին լրացած անդամներին և բաց թողնելով հորեղբորը, մորաքրոջը, հորաքրոջը, մորեղբորը կամ նրանց ընտանիքի անդամներին):

Համադրելով Օրենքի, ինչպես նաև ներպետական իրավական հիշյալ ակտերով սահմանված հասկացությունների բովանդակությունը՝ կարող ենք կատարել եզրահանգում առ այն, որ համատեղ տնտեսություն կարող են վարել ոչ միայն ամուսինները, այլև ցանկացած ֆիզիկական անձինք, որոնցից մեկի ֆինանսական վիճակի վատթարացումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մյուսի ֆինանսական վիճակի վատթարացմանը, կամ նրանցից մեկի

եկամուտը կամ ֆինանսական այլ միջոցները օգտագործվում են կամ կարող են օգտագործվել համատեղ ծախսերի կամ մյուսի ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Համատեղ տնտեսություն վարելը, որպես կանոն, ենթադրում է համատեղ բնակություն, կենցաղավարում, և կարող է արտահայտվել բազմաթիվ եղանակներով (օրինակ՝ համատեղ գնումներ կատարելով, բնակարանի վերանորոգմամբ, համատեղ հանգստի մեկնելով, կոմունալ ծախսերը հոգալով և այլն):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ամուսնությունը գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում կատարող մարմիններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են ամուսնության պետական գրանցման պահից»:

Վերոհիշյալ իրավական նորմը վկայում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է միայն գրանցված ամուսնությունը: Սակայն հարկ է փաստել, որ ամուսնության պետական գրանցման պահանջը պետության կողմից ամուսնական հարաբերություններից բխող գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների իրավական պաշտպանության հնարավորություն ստեղծելու և համապատասխանաբար՝ պետությունից իրավական պաշտպանություն հայցելու և ստանալու իրավունքի երաշխիքն է (օրինակ՝ ամուսնու մահվան դեպքում կենդանի մնացած ամուսնու ժառանգման իրավունքը, կամ ամուսնալուծության համար դատական կարգով հայց ներկայացնելու իրավունքը և այլն):

Մինչդեռ, Օրենքի իմաստով պետության կողմից նման անձանց դեմ իր իրավունքների իրացման և գույքային շահերի պաշտպանության համար էական նշանակություն չունի ենթադրյալ պարտապանների միջև ձևավորված իրավահարաբերության՝ օրենքով սահմանված կարգով գրանցումը (ամրագրումը):

Հետևաբար, կարող ենք կատարել ընդհանուր եզրահանգում այն մասին, որ համատեղ կամ ընդհանուր տնտեսություն կարող են վարել ցանկացած ֆիզիկական անձինք, որոնք ունեն կենցաղի և ֆինանսի ընդհանրություն՝ փոխկապակցվածություն, և ընդհանուր տնտեսություն վարելու փաստն արձանագրելու համար պարտադիր չէ ընտանիքի անդամների՝ ամուսինների միջև ամուսնության պետական գրանցման փաստի առկայությունը:

Մեր դիրքորոշման ամրապնդմանն է ծառայում նաև այն իրողությունը, որ միջազգային իրավունքում «ընտանեկան կյանք» հասկացությունն այժմ ավելի լայն է մեկնաբանվում, քան ամուսնությունը:

Այս հարցի կապակցությամբ հարկ է մեջբերել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 8-րդ հոդվածը, ըստ որի՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Վերլուծելով «**ընտանեկան կյանք**» հասկացությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) նշել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ընտանեկան կյանքի հասկացությունը չի ներառում միայն ամուսնության վրա հիմնված հարաբերու-



թյունները և կարող է ներառել այլ **de facto** «ընտանեկան» կապեր, երբ արտասամուսնական կապերի մեջ գտնվող անձինք միասին են ապրում<sup>3</sup>: Մասնավորապես, այն դեպքում, երբ հանգամանքները դա թույլատրում են, «ընտանեկան կյանքը» պետք է տարածվի նաև այն հնարավոր փոխհարաբերությունների վրա, որոնք կարող են զարգանալ արտասամուսնական կապերից ծնված երեխայի և կենսաբանական հոր միջև: Այս գործերում անձնական սերտ կապերի գոյության մասին վկայող վերաբերելի գործոնները ներառում են կենսաբանական ծնողների փոխհարաբերությունների բնույթը ու մինչ երեխայի ծնունդը և ծննդից հետո հոր՝ երեխայի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրվածությունը և նվիրվածությունը<sup>4</sup>:

Այսպիսի կապերը կարող են հաշվի առնվել «անձնական կյանքի» շրջանակներում<sup>5</sup>: Իրենց սեփական ընտանիքը դեռ չհիմնած երիտասարդների վերաբերյալ մի շարք գործերով, ՄԻԵԴ-ն ընդունել է, որ իրենց ծնողների և մերձավոր ընտանիքի այլ անդամների հետ նրանց հարաբերությունները նույնպես համարվում են «ընտանեկան կյանք»<sup>6</sup>:

Դատարանը կարող է ճանաչել «ընտանեկան կյանքի» *de facto* առկայություն խնամակալ ծնողների և իրենց հետ ապրող երեխայի միջև՝ հաշվի առնելով միմյանց հետ անցկացրած ժամանակը, հարաբերությունների որակը և ծնողի դերը երեխայի կյանքում<sup>7</sup>:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածում նշված «**ընտանիք**» **հասկացությունը չի սահմանափակվում միայն ամուսնության վրա հիմնված հարաբերություններով և կարող է ներառել այլ *de facto* ընտանեկան կապեր, որպեսզի կողմերն առանց ամուսնանալու ապրում են միասին**<sup>8</sup>:

Նույնիսկ համատեղ բնակության բացակայության դեպքում հնարավոր է լինեն այլ կապեր, որոնք ընտանեկան կյանքի համար բավարար կլինեն<sup>9</sup>:

Ազգային օրենսդրությանը չհամապատասխանող ամուսնությունները ընտանեկան կյանքի համար խոչընդոտ չեն ներկայացնում<sup>10</sup>: Այն զույգը, որն ամուսնացել է զուտ կրոնական ամուսնությամբ, որը ներպետական իրավունքով որպես իրավաբանական փաստ չի ճանաչվում, կարող է դիտարկվել 8-րդ հոդվածի իմաստով «ընտանեկան կյանքի» շրջանակում: Սակայն, 8-րդ հոդվածին չի կարող տրվել այնպիսի մեկնաբանություն, որի արդյունքում պետությունը, օրինակ՝ ժառանգության իրավունքների և կենսաթոշակների դեպքերում կկրի

<sup>3</sup> Տե՛ս **Պինին և ուրիշները ընդդեմ Ռումինիայի** գործը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 22.06.2004 թվականի որոշում, §143, 146:

<sup>4</sup> Տե՛ս **Նիլունդն ընդդեմ Ֆինլանդիայի** գործը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 29.06.1999 թվականի որոշումը, ինչպես նաև **Նեկվեդազիուն ընդդեմ Գերմանիայի** գործը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 19.06.2003 թվականի որոշումը, ինչպես նաև **L. ընդդեմ Նիդերլանդների**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 01.06.2004 թվականի որոշումը, § 36, ինչպես նաև **Anayo** ընդդեմ Գերմանիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 21.12.2010 թվականի որոշումը, § 57:

<sup>5</sup> Տե՛ս **Սլիվենկոն ընդդեմ Լատվիայի**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 09.10.2003 թվականի որոշում, § 97:

<sup>6</sup> Տե՛ս **Մասյոմն ընդդեմ Ավստրիայի**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.06.2008 թվականի որոշում, § 62:

<sup>7</sup> Տե՛ս **Սորեպին և Բենեդեպին ընդդեմ Իտալիայի**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.04.2010 թվականի որոշում, § 48-52:

<sup>8</sup> Տե՛ս **Ջոնսոնը և ուրիշները ընդդեմ Իռլանդիայի**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 05.03.1985 թվականի որոշում, § 56, ինչպես նաև Վան դեր Հեյդեն ընդդեմ Նիդերլանդների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 03.04.2012 թվականի որոշում, § 50:

<sup>9</sup> Տե՛ս **Քրունը և ուրիշները ընդդեմ Նիդերլանդների**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.10.1994 թվականի որոշում, § 30:

<sup>10</sup> Տե՛ս **Աբդուլազիզը, Քաբալեյը և Բալկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորությունների**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի որոշում, § 63:

կրոնական ամուսնությունը ճանաչելու պարտականություն<sup>11</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոհիշյալ նախադեպային դիրքորոշումները վկայում են այն մասին, որ «ընտանիք» հասկացությունը ենթակա է լայն մեկնաբանության, և այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է ընդհանուր տնտեսություն վարելու պայմաններում իրական, փաստացի ընտանեկան կապերը վեր հանելուն, դատարանը չպետք է սահմանափակվի միայն ամուսնության պետական գրանցման փաստի առկայությամբ, այլ պետք է գնահատման առարկա դարձնի ուշադրության արժանի այլ հանգամանքներ, ինչպիսիք են փաստացի համատեղ բնակվելը, կենցաղավարելը, որպես ամուսիններ այլ անձանց ներկայանալը, երեխա ունենալը (այդ թվում՝ որդեգրման, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների միջոցով) և այլն:

Հիշյալ իրավական դիրքորոշումները կիրառելով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ «ընդհանուր տնտեսություն վարել» հասկացության նկատմամբ՝ գտնում ենք, որ այդ պայմանի առկայությունը հաստատված համարելու համար բավարար է անձանց կողմից համատեղ կենցաղավարումը կամ ֆինանսական միջոցների տնօրինումը կամ երրորդ անձանց առջև որպես զուգընկերներ՝ «ընտանիք» հանգես գալը կամ համատեղ երեխա ունենալը:

### **Եզրակացություն**

Վերոհիշյալ վերլուծությունների ամփոփմամբ կարող ենք կատարել եզրահանգում առ այն, որ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի իմաստով **«ընդհանուր տնտեսություն վարելու» փաստական հիմքի առկայությունը հաստատված համարելու համար պարտադիր պայման չէ տնտեսություն վարող զուգընկերների ամուսնության պետական գրանցումը**, այլ պետք է պարզել այն հանգամանքը, թե վերջիններս փաստացի համատեղ տնտեսվարել են, թե ոչ՝ լայն մեկնաբանելով «ընտանիք» հասկացությունը՝ հաշվի առնելով Օրենքով փոխկապակցվածության համար էական՝ ընդհանուր տնտեսություն վարելու հատուկ կարգավորումը և դրա նշանակությունը:

Այս առումով գտնում ենք, որ ուսումնասիրվող սուբյեկտի՝ փոխկապակցված անձի հետ համատեղ տնտեսություն վարելու վերաբերյալ Իրավասու մարմնի<sup>12</sup> մոտ ողջամիտ կասկած կարող են հարուցել մի շարք փաստեր, այն է, օրինակ, փոխկապակցված անձի հետ համատեղ զավակ ունենալու, հայտարարագրում արտացոլված տեղեկությունը՝ որպես համատեղ բնակվող անձի և նրա հետ ունեցած փաստացի կապի բնույթի վերաբերյալ, 180 օր և ավելի<sup>13</sup> համատեղ կենցաղավարման մասին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ թույլատրելի և վերաբերելի ցանկացած ապացույց:

Ամփոփելով վերոհիշյալ իրավական վերլուծությունները և դիտարկումները՝ կարող ենք հանգել ընդհանուր հետևության առ այն, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում ՀՀ ընտանեկան օրենսգրքի մի շարք կարգավորումներ կարող են առանձնա-

<sup>11</sup> Տե՛ս **Շերիֆ Յադիյն ընդդեմ Թուրքիայի**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 02.11.2010 թվականի որոշում, § 97, 98, 102:

<sup>12</sup> «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ Իրավասու մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանումը:

<sup>13</sup> Նման մոտեցումը բխում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետից, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 10-րդ մասից, համաձայն որի՝ համատեղ բնակվող է համարվում պաշտոնն ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում 183 և ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձը:

հատուկ փոխակերպումներ ստանալ՝ հաշվի առնելով Օրենքի յուրահատկությունը: Մինչույն ժամանակ, ընտանեկան իրավահարաբերությունների՝ պետության և հասարակության ամրապնդման և կայունության ապահովման տեսանկյունից կարևորությունը թույլ չի տալիս անտարբեր մնալ ՀՀ ընտանեկան օրենսգրքի ոչ ճկուն և արդի իրավակիրառ պրակտիկային ոչ համահունչ լինելու իրողության հանդեպ. որքան էլ տարաբնույթ լինեն իրավաբանական հանրության մոտեցումները զարգացող հասարակության «ընտանիքի» մոդելի վերաբերյալ, անհերքելի է Օրենքի և ՀՀ ընտանեկան օրենսգրքի մի շարք դրույթների անհամապատասխանությունը և օրենսդրական բացերի առկայությունը, ինչն օրհասական է դարձնում ՀՀ ընտանեկան օրենսգրքում համահունչ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը: Գտնում ենք, որ մեր կողմից ներկայացված, ինչպես նաև այլ գիտական ու պրակտիկ իրավունքի աղբյուրներում քննարկվող հիմնախնդիրները, առաջարկվող լուծումները և դիտարկումները կնպաստեն առաջիկայում օրենսդրական փոփոխությունների կատարմանը:

**Ամփոփագիր:** Հեղինակի կողմից աշխատանքում քննարկման առարկա են դարձել հայրենական դատավարագիտության մեջ ներդրված նոր ինստիտուտներից ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձման վարույթի որոշ հիմնահարցեր, շեշտադրում կատարելով՝ դրա շրջանակներում ընդհանուր տնտեսություն վարելու փաստն արձանագրելու համար ամուսնության պետական գրանցման պարտադիրության հիմնախնդիրն:

Հեղինակն անդրադարձել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի իմաստով ընտանիքի անդամների, փոխկապակցված անձանց սահմանումների՝ առաջարկելով ՀՀ ընտանեկան օրենսգրքում կատարել համարժեք փոփոխություններ: Այս վերլուծել է օրենքի իմաստով փոխկապակցված անձանց ներկայացվող պարտադիր վավերապայմաններից ընդհանուր տնտեսություն վարելու չափանիշը՝ կրկին արձանագրելով ՀՀ ընտանեկան օրենսգրքում համարժեք սահմանումների բացակայությունը:

Օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում արտահայտված իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում հեղինակը հանգել է այն եզրակացության, որ «ընդհանուր տնտեսություն վարելու» փաստական հիմքի առկայությունը հաստատված համարելու համար պարտադիր պայման չէ տնտեսություն վարող զուգընկերների ամուսնության պետական գրանցումը, այլ պետք է պարզել այն հանգամանքը, թե վերջիններս փաստացի համատեղ տնտեսվարել են, թե՛ ոչ՝ լայն մեկնաբանելով «ընտանիք» հասկացությունը՝ հաշվի առնելով օրենքով փոխկապակցվածության համար էական՝ ընդհանուր տնտեսություն վարելու հատուկ կարգավորումը և դրա նշանակությունը:

**Annotation.** The subject of the author’s discussion was some issues of confiscation of property of illegal origin, as a new institution introduced into domestic judicial practice, focusing on the issue of mandatory state registration of marriage in order to confirm the fact of joint household management.

The author referred to the definitions of family members and persons associated with them in the sense of the RA Law “On Confiscation of Property of Illegal Origin”, proposing to make similar changes to the RA Family Code. Then she analyzed the criterion of joint household management from the mandatory valid conditions presented by affiliated persons within the meaning of the law, again noting the absence of equivalent definitions in the RA Family Code.

As a result of a comprehensive analysis of legislative norms, as well as provisions expressed in the case law of the European Court of Human Rights, the author came to the conclusion that in order to consider the existence of factual grounds for “running a joint household”, state registration of the marriage of partners running the household is not a mandatory, but it is necessary to find out whether the partners actually managed the household jointly or not, interpreting the concept of “family” in a broad sense, taking into account the special regulation of running a joint household and its significance, which is essential for legal relations.

**Аннотация.** Предметом обсуждения автора стали некоторые вопросы конфискации имущества незаконного происхождения, как нового института, введенного в отечественную судебную практику. Автор акцентировал внимание на вопросе об обязательной государственной регистрации брака с целью подтверждения факта ведения совместного хозяйства.

Автор ссылается на определения членов семьи и связанных с ними лиц на закон РА «О конфискации имущества, имеющего незаконное происхождение», предложив внести аналогичные изменения в Семейный кодекс РА. Затем автор проанализировал критерии ведения общего хозяйства из обязательных действительных условий, предъявляемых аффилированным лицам согласно указанному закону, вновь отметив отсутствие эквивалентных определений в Семейном кодексе РА.

В результате комплексного анализа законодательных норм, а также положений, отраженных в прецедентной практике Европейского суда по правам человека, автор пришел к выводу, что для рассмотрения наличия фактических оснований для «ведения совместного хозяйства», государственная регистрация брака партнеров, ведущих совместное хозяйство, не является обязательным условием, но необходимо выяснить, действительно ли партнеры совместно управляли хозяйством, воспринимая понятие «семья» в широком смысле и принимая во внимание специальное регулирование ведения совместного хозяйства и его значение, играющее существенную роль в вопросе урегулирования правоотношений.

**Բանալի բառեր** - ապօրինի ծագում, ընդհանուր տնտեսություն, գրանցված ամուսնություն, ընտանիք, մերձավոր ազգական, փոխկապակցված անձ, ֆինանսական վիճակ, համատեղ ծախս, «ընտանեկան» կապեր, գույքընկերներ:

**Keywords:** *Illegal origin, joint household, registered marriage, family, close relative, affiliated person, financial status, joint expenses, “family” ties, partners.*

**Ключевые слова:** *незаконное происхождение, совместное хозяйство, зарегистрированный брак, семья, ближайшие родственники, аффилированное лицо, финансовое положение, совместные расходы, «семейные» связи, партнеры.*

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 16.04.2020 թվականին, ուժի մեջ է մտել 23.05.2020 թվականին, [www.arlis.am](http://www.arlis.am) պաշտոնական կայք:
2. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև», համահեղինակությամբ դատավորներ Գ. Թորոսյանի, Հ. Զարգարյանի, Հ. Շահնազարյանի, իրավաբան-գիտնականներ Վ. Հովհաննիսյանի, Վ. Կասկոյի, Երևան, 2023:
3. Պինին և ուրիշները ընդդեմ Ռումինիայի գործը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 22.06.2004 թվականի որոշում, §143, 146:
4. Նիլունդն ընդդեմ Ֆինլանդիայի գործը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 29.06.1999 թվականի որոշումը:
5. Նեկվեդացիուսն ընդդեմ Գերմանիայի գործը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 19.06.2003 թվականի որոշումը:
6. L. ընդդեմ Նիդերլանդների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 01.06.2004 թվականի որոշումը, § 36:
7. Անայոն ընդդեմ Գերմանիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 21.12.2010 թվականի որոշումը, § 57:
8. Սլիվենկոն ընդդեմ Լատվիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 09.10.2003 թվականի

որոշում, § 97:

9. ՄալոՎն ընդդեմ Ավստրիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.06.2008 թվականի որոշում, § 62:

10. Մորետին և Բենեդետին ընդդեմ Իտալիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.04.2010 թվականի որոշում, § 48-52:

11. Ջոնսոնը և ուրիշները ընդդեմ Իռլանդիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 05.03.1985 թվականի որոշում, § 56:

12. Վան դեր Հեյջդեն ընդդեմ Նիդերլանդների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 03.04.2012 թվականի որոշում, § 50:

13. Քրունը և ուրիշները ընդդեմ Նիդերլանդների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.10.1994 թվականի որոշում, § 30:

14. Աբդուլազիզը, Քաբալեյը և Բալկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորությունների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի որոշում, § 63:

15. Շերիֆ Յաղիտն ընդդեմ Թուրքիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 02.11.2010 թվականի որոշում, § 97, 98, 102:

**Զարգարյան Հ.** - ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլիասցե՝ hayarpiz@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 05.08.2024 թ., տրվել է գրախոսության 05.08.2024 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, ի.գ.դ., պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 18.11.2024 թ.:

## **ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС**

<https://doi.org/10.59546/18290744-2024.7-9-22>

**ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

*ՀՀ վաստակավոր իրավաբան,  
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր*

**VAHE YENGIBARYAN**

*Honored Lawyer of the RA, Doctor of Law, Professor,  
Professor at YSU Chair of Criminal Procedure and Criminology*

**ВАГЕ ЕНГИБАРЯН**

*Заслуженный юрист РА,  
доктор юридических наук, профессор,  
профессор кафедры уголовного судопроизводства и криминалистики ЕГУ*

## **ԳԱՂՏՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ**

### **FUNDAMENTAL GUARANTEES OF LEGALITY OF SECRET INVESTIGATIVE ACTIONS**

### **ОСНОВНЫЕ ГАРАНТИИ ПРАВОМЕРНОСТИ ТАЙНЫХ СЛЕДСТВЕННЫХ ДЕЙСТВИЙ**

#### **Ներածություն**

Գաղտնի քննչական գործողությունները մինչդաստական վարույթի ընթացքում իրականացվում են որոշակի խնդիրների լուծման նպատակներով, որոնք պետք է ապահովվեն դրանց իրականացման արդյունքում: Գաղտնի քննչական գործողությունների խնդիրը լայն առումով հանցագործության դեմ պայքարն է, դրա համատեքստում՝ հանցագործությունների խափանումը և բացահայտումը, այդ նպատակով տեղեկատվության հավաքագրումը, գործի լուծման համար նշանակություն ունեցող ապացույցների ստացումը, հանցագործություն կատարած անձանց հայտնաբերումը:

Բանասիրական իմաստով՝ *գաղտնի* նշանակում է ծածուկ, չիրապարակվող, չերևացող, չնկատվող, արտաքուստ չարտահայտվող, արտաքին դրսևորում չունեցող<sup>1</sup>: Իրավական տե-

<sup>1</sup> *Էդուարդ Բագրատի Աղայան*, «Հայաստան» իրատարակչություն, Երևան, 1976, էջ 217: <http://www.nayiri.com/>

սանկյունից, մասնավորապես, Լ. Օ. Կրասավչիկովը գաղտնիքը բնորոշում է որպես որոշակի անձի (քաղաքացու, կազմակերպության, պետության) գործողությունների մասին որոշակի տեղեկատվություն, որը ենթակա չէ հրապարակման<sup>2</sup>:

Գործող ՀՀ ՔԴՕ-ի գլուխ 30-ը նվիրված է գաղտնի քննչական գործողությունների իրավակարգավորումներին, որոնք թեև իրենց բնույթով և բովանդակությամբ քրեադատավարական նոր ինստիտուտներ չեն, այդուհանդերձ դրանց համակարգային ինկորպորացիան քրեադատավարական օրենսդրության մեջ, թերևս, գործող օրենսգրքի նորամուծություններից կարելի է համարել:

Գաղտնի քննչական գործողությունների մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է անդրադառնալ դատավարագետների խնդրո առարկայի վերաբերյալ արտահայտած տեսակետներին:

Այսպես, Ա. Մ. Բարանովն առաջարկում է ապացույցների հավաքման ոչ հրապարակային եղանակը ներդնել քրեական դատավարության օրենսգիրք և դրանց տալ դատավարական գործողությունների որակ<sup>3</sup>:

Կ.Ս. Դորոնինի կարծիքով՝ գաղտնի քննչական գործողությունը կարելի է բնութագրել որպես հատուկ դատավարական գործողություն, որը նախատեսված է հատուկ միջոցների կիրառմամբ գաղտնի (քողարկված) մեթոդներով ապացույցներ ձեռք բերելու համար: Քրեական վարույթի մասնակիցները, այդ թվում՝ քննչական գործողությունների մասնակիցները, չպետք է տեղեկացված լինեն դրանց կատարման նպատակների մասին, բացառությամբ գործողությունն իրականացնողների<sup>3</sup>:

Բ. Մ. Նուրգալիևը և Կ. Ս. Լակբաևը նշել են, որ քողարկված քննչական գործողություններն ուղղված են քրեական դատավարության ընթացքում ապացուցման ենթակա հանգամանքների պարզաբանմանը և իրականացվում են առանց քրեական վարույթի մասնակիցներին և այդ տեղեկությունները տրամադրողներին ծանուցելու: Կարող են իրականացվել է միայն այն դեպքում, երբ ապացուցվող հանգամանքներն այլ կերպ չեն կարող հաստատվել<sup>4</sup>:

Գաղտնի քննչական գործողությունները կարելի է սահմանել որպես մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական և հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով մինչդատական վարույթում քննիչի հանձնարարությամբ՝ դատարանի որոշման հիման վրա, հետաքննության մարմին իրավասության սահմաններում իրականացվող գործունեություն՝ ուղղված վարույթի համար նշանակություն ունեցող ապացույցների ձեռքբերմանը, եթե այլ եղանակով այդ ապացույցի ձեռքբերումը ողջամտորեն անհնար է:

Գաղտնի քննչական գործողությունների արդյունքների քրեադատավարական հեռանկարի ապահովումն անմիջականորեն պայմանավորված է դրանց կատարման իրավաչափության երաշխիքների պահպանմամբ: Գաղտնի քննչական գործողությունների իրավաչափության երաշխիքներն այն դատավարական կարգավորումներն ու ընթացակարգերն են, որոնք կոչված են բացառել քննարկվող գործողությունների կատարման ընթացքում մարդու իրա-

imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY\_HY&pageNumber=233

<sup>2</sup> Красавчикова Л.О., Личная жизнь под охраной закона, 1983, էջ 160:

<sup>3</sup> Стн Доронин К.С., Понятие негласного следственного действия в уголовном процессе // Вестник Московского университета. Серия 11. Право. 2017:

<sup>4</sup> Стн Нургалиев Б.М., Лакбаев К.С., Негласные следственные действия: история, понятие, проблемы, перспективы // Актуальные проблемы использования ситуационного подхода в юридической науке и правоприменительной деятельности: материалы междунар. науч.-практ. конф. Калининград: Изд-во БФУ им. И. Канта, 2012. с. 164:

վունքների խախտումները, ինչպես նաև հնարավորինս բացառել տարատեսակ միջամտությունները:

### **Հիմնական հետազոտություն**

Գաղտնի քննչական գործողությունների՝ որպես պետության իրավապահպան գործունեության առանձնահատուկ ուղղության իրավական հիմքը ձևավորում են այն իրավական ակտերը, որոնք պարունակում են վերոնշյալ գործողությունների իրականացման ընթացքում ծագող, փոփոխվող և դադարող հասարակական հարաբերությունները կարգավորող իրավանորմեր: Դրանց շարքում հատկապես կարևորվում է ՀՀ Սահմանադրությունը՝ որպես պետության հիմնական օրենք:

Այսպես, Սահմանադրությունը, ամրագրելով մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, սահմանում է նաև համընդհանուր շահերից ելնելով դրանց սահմանափակման հնարավորությունը, ընդ որում, դրանք կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Գաղտնի քննչական գործողությունների շրջանակում մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակումները կարող են վերաբերել, մասնավորապես, Սահմանադրությամբ ամրագրված այնպիսի իրավունքներին, ինչպիսիք են՝ բնակարանի անձեռնմխելիության ու հաղորդակցության ազատության և գաղտնիության, ինչպես նաև մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքները:

1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 29-րդ հոդվածը նախատեսում է. «Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պետք է ենթակա լինի միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են բացառապես այլոց իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքն ապահովելու և ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բարելավելու նպատակով»:

Այդ համատեքստում, հարկ է վկայակոչել Եվրոպական դատարանի դիրքորոշումներն առ այն, որ «երբ (...) հավասարակշռության էր բերվում մի կողմից՝ գաղտնի հսկողության միջոցների օգնությամբ անվտանգությունը պաշտպանելու պատասխանող պետության շահը, իսկ մյուս կողմից՝ դիմումատերի անձնական կյանքը հարգելու իրավունքի իրացման նկատմամբ միջամտության լրջությունը, իրավասու ազգային մարմիններն ունեն սեփական հայեցողության որոշակի լուսանցք պատշաճ այն միջոցների ընտրության հարցում, որոնք կօգտագործվեն ազգային անվտանգության պաշտպանության օրինական նպատակին հասնելու համար: Այդուհանդերձ, [ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝] պետք է գոյություն ունենան չարաշահումներից զերծ պահող բավարար և արդյունավետ երաշխիքներ: Այսպիսով, դատարանը հաշվի է առնում գործի բոլոր հանգամանքները, օրինակ՝ հնարավոր միջոցառումների բնույթը, տարածման տիրույթը և տևողությունը, դրանց կարգադրման համար պահանջվող պատճառները, դրանց թույլատրելու, կատարելու և հսկելու իրավասություն ունեցող մարմինները, ինչպես նաև ներպետական իրավունքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցի տեսակը»<sup>5</sup>:

<sup>5</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Roman Zakharov v. Russia* գործով 2015 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 47143/06, կետ 232, *Irfan Guzel v. Turkey* գործով 2017 թվականի փետրվարի



Ակնհայտ է, որ գաղտնի քննչական գործողությունների իրականացման պարագայում միջամտություն է տեղի ունենում մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին, ուստի նույնիսկ որոշակի գաղտնի քննչական գործողության ընտրության հարցի լուծման, ինչպես նաև դրա իրականացման ողջ ընթացքում հարկավոր է նկատի ունենալ նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ պետության կողմից ստանձնած պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունները՝ մշտապես պահպանելով հանրային շահի և անհատի շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռությունը: Մասնավորապես, ինչպես ընդգծում է Վճռաբեկ դատարանը, *Գոռ Իշխանի Սարգսյանի* գործով, ՕՀԳ-ի բնույթից ելնելով՝ իրավասու մարմիններն առաջադրված խնդիրները լուծելու նպատակով, համապատասխան միջոցառման տեսակն ընտրելիս և այն իրականացնելիս, անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության դեպքում՝ համաչափության սկզբունքին համահունչ պետք է ապահովվեն նաև արդար դատաքննության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու և այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների համարժեք պաշտպանությունը<sup>6</sup>:

Եվրոպական դատարանը Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով նշում է, որ վերահսկման գաղտնի միջոցառումների վերաբերյալ իր նախադեպային իրավունքում Եվրոպական դատարանը մշակել է հետևյալ նվազագույն երաշխիքները, որոնք պետք է սահմանվեն օրենսդրությամբ՝ լիազորությունների չարաշահումներից խուսափելու նպատակով. հանցագործությունների բնույթը, որոնք կարող են վերահսկման մասին որոշում կայացնելու հիմք հանդիսանալ, մարդկանց այն կատեգորիաների սահմանումը, որոնց հեռախոսները կարող են գաղտնալսման ենթակա լինել, հեռախոսների գաղտնալսման ժամանակահատվածի սահմանափակ լինելը, այն ընթացակարգը, որին պետք է հետևել ձեռք բերված տվյալների ուսումնասիրության, օգտագործման և պահպանման համար, նախազգուշական միջոցները, որոնք պետք է ձեռնարկել այդ տվյալներն այլ կողմերին տրամադրելու դեպքում և այն հանգամանքները, որոնց դեպքում ձայնագրությունները կարող են կամ պետք է ջնջվեն կամ ժապավենները՝ ոչնչացվեն<sup>7</sup>:

Եվրոպական դատարանը նշել է նաև, որ հետապնդվող նպատակների կատարմանն ուղղված միջոցների ընտրությունը սկզբունքորեն ընկնելով պետության սեփական հայեցողության լուսանցքի շրջանակում՝ ունենում է լայն կամ նեղ դրսևորում՝ ելնելով պաշտպանության ենթակա իրավունքի բնույթից: Օրինակ՝ *«հաշվի առնելով անձի ինքնության ինքնորոշման և ֆիզիկական ու բարոյական անձեռնմխելիության համար [Եվրոպական կոնվենցիայի] 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների առանցքային կարևորությունը՝ պետություններին վերապահված սեփական հայեցողության լուսանցքը բնակարանի հարցերում ավելի նեղ է, եթե խոսքը գնում է միայն [Եվրոպական կոնվենցիայի] թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված իրավունքների մասին»<sup>8</sup>:*

Այսպես, Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:*

7-ի վճիռը, գանգատ թիվ 35285/08, կետ 85:

<sup>6</sup> Ընդ որում, հանրային և մասնավոր շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռության պահպանման անհրաժեշտության մասին ընդգծվում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2020 թ. ապրիլի 28-ի ՍԴՈ 1526 որոշման 4.4-րդ կետում ՕՀՄ-ների իրականացման թույլտվության որոշումների բողոքարկման համատեքստում:

<sup>7</sup> Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թ. հոկտեմբերի 2-ի վճիռը:

<sup>8</sup> Տե՛ս *Gladysheva v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 7097/10, կետ 93:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը պաշտպանում է «մասնավոր հաղորդակցության» գաղտնիությունը՝ անկախ հաղորդակցության բովանդակությունից (...) և անկախ դրա ձևից: Դա նշանակում է, որ 8-րդ հոդվածի պաշտպանությունը վերաբերում է բոլոր այն «փոխանակումների» գաղտնիությանը, որոնց միջոցով անհատները հաղորդակցվում են միմյանց հետ: («Frerot v. France», 12.06.2007, գանգալ 70204/01, § 53):

Ազգային դատարանների խնդիրն է վերահսկել և ապահովել, որպեսզի իրավասու մարմինների գործունեությունը չխախտի Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքների նկատմամբ միջամտությունը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ «դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում (...) անկարգությունների կամ հանցագործությունների կանխման հետ»: Ուստի միջամտությունը թույլատրվում է որոշումը պետք է ցույց տա, թե ինչպես են ազգային դատարանները կիրառել 8-րդ հոդվածի 2-րդ մասը:

Գաղտնի քննչական գործողության կոնկրետ տեսակն ընտրելիս, ելնելով անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության բնույթից, պետությանը վերապահված հայեցողական տիրույթի տարբերակման գաղափարն արտացոլված է ՀՀ ՔԴՕ 242-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ *գաղտնի քննչական գործողություն կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրա արդյունքով կարող է ձեռք բերվել տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց, և միաժամանակ այլ եղանակով այդ ապացույցի ձեռքբերումը ողջամտորեն անհնար է:*

Ժողովրդավարական հասարակարգի հիմնական նպատակներից մեկն էլ հենց պետական մարմինների կամայականությունների և չարաշահումների սահմանափակումն է: Այս առումով ՀՀ ՔԴՕ-ն կարևոր իրավակարգավորում է պարունակում՝ սահմանելով գաղտնի քննչական գործողությունների իրավաչափության երաշխիքները:

ՀՀ ՔԴՕ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք առանձնացնել գաղտնի քննչական գործողությունների կատարման իրավաչափության, մասնավորապես այնպիսի տարրեր, ինչպիսիք են դրանց իրականացման ժամկետները, այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ այն կարող է կատարվել, այն հացագործությունների տեսակները, որոնց շրջանակներում կարող է կատարվել որոշակի գաղտնի քննչական գործողություններ, նվազագույն շեմը, որը հաղթահարելու դեպքում կարող են իրականացվել դրանք, չնախատեսված արդյունքներ ձեռք բերելու դեպքում դրանց պահպանման կամ վերացման պայմանները, ինչպես նաև կիրառվող հատուկ տեխնիկական միջոցների շրջանակն ու օգտագործման պայմանները և այլն:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ գործող ՀՀ ՔԴՕ-ն առանձնակի կարևորելով գաղտնի քննչական գործողությունների քրեադատավարական ինստիտուտի նշանակությունը՝ առանձին նորմ է նվիրել դրանց կատարման իրավաչափության երաշխիքներին:

Ասպես, ՀՀ ՔԴՕ 243-րդ հոդվածի ձևակերպումից հետևում է, որ այդպիսի երաշխիքներ են հանդիսում.

- Որոշակի պայմաններում գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում անձի վերաբերյալ ձեռք բերված տվյալների օգտագործման ոչ բացարձակ արգելքը:
- Անձանց որոշակի շրջանակը, որոնց նկատմամբ կարող են կատարվել առանձին գաղտնի քննչական գործողություններ :
- Անձանց որոշակի շրջանակը, որոնց ողջամտորեն կարող են վերաբերել գաղտնի քննչական գործողության արդյունքով ստացվելիք տեղեկությունները:
- Առանձին գաղտնի քննչական գործողության, ինչպես նաև դրանց կատարման ընդհանուր ժամկետները:
- Գաղտնի քննչական գործողությունը դադարեցման որոշակի հիմքերը:
- Առանձին գաղտնի քննչական գործողությունների կատարման ուղղակի արգելքը, անձի՝ իր փաստաբանի հետ հաղորդակցվելու դեպքում:
- Գաղտնի քննչական գործողությունների կատարման ընթացքում հատուկ տեխնիկական միջոցների և դրանք կիրառելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը, ինչպես նաև դրանց գործադրման պայմանները:

Եթե գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում ձեռք են բերվել անձի վերաբերյալ տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ գործողությունը կատարելու մասին որոշմամբ, ապա դրանք քրեական վարույթում չեն կարող օգտագործվել, բացառությամբ այն դեպքերի, երբ հետաքննության մարմինը գործել է դատարանի որոշման հիման վրա և բարեխղճորեն: Հնարավոր է, սակայն, որ գաղտնի քննչական գործողության արդյունքում ստացվեն տեղեկություններ, որոնք, թեև պարունակեն նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործության վերաբերյալ տվյալներ, որոնց ստացումը, սակայն, նախատեսված չլինի տվյալ գործողությունն իրականացնելու մասին որոշմամբ: Որպեսզի նման տեղեկություններն անհետևանք չմնան, մյուս կողմից՝ գաղտնի քննչական գործողությունը չկատարվի այլ՝ քողարկված նպատակներով, ՀՀ ՔԴՕ-ն նախատեսել է նման տեղեկությունները, նյութերը և փաստաթղթերը վարույթում օգտագործելու իրավաչափության հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության պարտադիր պահանջ.

ա) հետաքննության մարմինը պետք է գործած լինի դատարանի որոշման հիման վրա, այսինքն՝ կատարած լինի դատարանի որոշման մեջ նշված գաղտնի քննչական գործողությունը՝ դատարանի որոշմամբ սահմանված վերաբերելի պայմաններով, և

բ) հետաքննության մարմինը պետք է գործած լինի բարեխղճորեն (ՀՀ ՔԴՕ 243-րդ հոդվածի 1-ին մաս):

Հաշվի առնելով, որ գաղտնի քննչական գործողությունների կատարումը ենթադրում է միջամտություն անձի սահմանադրական իրավունքներին, ՀՀ ՔԴՕ-ն սահմանափակել է այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ նման գործողություններ կարող են կատարվել: Անձանց շրջանակը սահմանելիս հիմք է ընդունվել ոչ թե կամ ոչ միայն անձի կարգավիճակը, այլ.

ա) անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու մասին փաստերի առկայությունը: Օրինակ՝ թվային, այդ թվում հեռախոսային հաղորդակցության վերահսկում գաղտնի քննչական գործողությունը կարող է կատարվել որևէ դատավարական կարգավիճակ չունեցող անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր:

բ) ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ որոշակի կապերի առկայությունը: Օրինակ՝ թվային, այդ թվում հեռախոսային հաղորդակցության վերահսկում գաղտնի քննչական գործողությունը կարող է կատարվել ենթադրյալ հանցանք կատարած անձի մտերիմ ընկերոջ

հետ, ով ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ գտնվում է անընդհատ հեռախոսային կապի մեջ:

Ինչ վերաբերում է գաղտնի քննչական գործողությունների դադարեցման հիմքերին, ապա պետք է նշել, որ դրանք հստակ և սպառիչ սահմանված են վերոնշյալ իրավանորմում, համաձայն որի՝ գաղտնի քննչական գործողությունը դադարեցվում է, եթե՝

- 1) վերացել է դրա անհրաժեշտությունը.
- 2) ավարտվել է նախաքննությունը.

3) լրացել է իրավասու դատարանի որոշմամբ սահմանված ժամկետը կամ գաղտնի քննչական գործողության կատարման ընդհանուր ժամկետը:

Ընդհանուր առմամբ մեղադրյալի պաշտպանության ապահովումն արդար դատաքննության իրավունքի իրացման երաշխիքներից մեկն է: Այս առումով չափազանց կարևոր է օրենսդրի կողմից պաշտպանության իրավունքի իրացման երաշխիքների սահմանումը գաղտնի քննչական գործողությունների կատարման կապակցությամբ:

Այսպես, բացառությամբ ֆինանսական գործարքների վերահսկման և կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակման, մնացած բոլոր գաղտնի քննչական գործողություններն արգելվում է կատարել, երբ անձը, որի նկատմամբ իրականացվելու է այդ գործողությունը, հաղորդակցվում է իր փաստաբանի հետ: Ամեն դեպքում, այդ հաղորդակցության վերահսկման արդյունքով ստացված տեղեկությունները ենթակա են անհապաղ ոչնչացման, հակառակ դեպքում ըստ էության կնշանակի խախտել անձի պաշտպանության սահմանադրական իրավունքը: Փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկություններ կամ նյութեր հավաքելու, պահելու կամ օգտագործելու արգելքը բացարձակ է, հետևաբար, գաղտնի քննչական գործողության արդյունքում ձեռք բերված փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործման նկատմամբ ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված բացառությունը կիրառելի չէ: Դա է պատճառը, որ ՀՀ ՔԴՕ-ն պարտավորեցնում է անհապաղ ոչնչացնել փաստաբանի հետ ունեցած հաղորդակցության վերահսկման արդյունքով ստացված տեղեկությունները, նույնիսկ եթե ի սկզբանե չի նախատեսվել հավաքել նման տեղեկություններ և միայն գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում կամ դրանից հետո է պարզվել, որ անձը հաղորդակցվում է իր փաստաբանի հետ:

Այդուհանդերձ ընդհանուր կանոնից օրենսդիրը ահմանում է բացառություններ, մասնավորապես ֆինանսական գործարքների վերահսկման և կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակման գաղտնի քննչական գործողությունների իրականացման պարագայում, ինչը բխում է նշված գործողությունների բնույթից և նպատակային նշանակության առանձնահատկություններից:

Այսպիսով, կարող ենք հավաստել, որ մեղադրյալ և պաշտպան շփումների կապակցությամբ պետությունը՝ ի դեմս քրեական հետապնդման մարմինների, պետք է մի կողմից իր ունեցած նեգատիվ պարտավորության շրջանակում ձեռնպահ մնա այդ շփումներին անհարկի միջամտելուց, մյուս կողմից՝ իր պոզիտիվ պարտավորության շրջանակում երաշխավորի այդ շփումների պատշաճ կազմակերպումը՝ ապահովելով անձի հիմնարար իրավունքների լիարժեք պաշտպանությունը<sup>9</sup>:

Որպես գաղտնի քննչական գործողության իրավաչափության կարևոր երաշխիքներից՝ ՀՀ ՔԴՕ-ն կանոնակարգել է նմանօրինակ գործողությունների կատարման տևողությունը՝ սահմանելով ժամանակային սահմանափակումներ:

<sup>9</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0028/01/16 քրեական գործով 18.09.2019 թ. որոշումը:

Այսպես, գաղտնի քննչական գործողություն կատարելու թույլտվությունը յուրաքանչյուր անգամ դատարանի կողմից կարող է տրվել երեք ամիսը չգերազանցող ժամկետով: Սակայն, անկախ անձի դատավարական կարգավիճակից կամ նման կարգավիճակի բացակայությունից, նույն անձի նկատմամբ կատարվող որևէ գաղտնի քննչական գործողության կատարման ընդհանուր ժամկետը նույն վարույթով չի կարող գերազանցել տասներկու ամիսը:

Հետաքննության մարմինը պատասխանատու է գաղտնի քննչական գործողությունները սահմանված կարգով, ժամանակին և արդյունավետ կատարելու համար: Տակտիկական տեսանկյունից խիստ կարևոր է գաղտնի քննչական գործողության կատարման ճիշտ ժամանակահատվածի ընտրությունը: Հաշվի առնելով դրանց կատարման ընթացքում մի շարք հիմնարար իրավունքների սահմանափակման փաստը՝ դրանք չեն կարող իրականացվել չափազանց երկար ժամանակահատվածով: Նման ժամանակային սահմանափակումների պարագայում առաջնային է դառնում այն հարցը, թե երբ պետք է սկսել գաղտնի քննչական գործողությունը: Անհրաժեշտ է ընտրել այնպիսի ժամանակահատված, որի ընթացքում անձն առավել հավանական է, որ կցուցաբերի ակտիվ ու նախաձեռնող վարքագիծ, կապեր կհաստատի տարբեր անձանց հետ կամ կիրականացնի որոշակի տեղեկատվության փոխանակում:

Սահմանադրությունը հռչակում է յուրաքանչյուրի կյանքի իրավունքը, «ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից»<sup>10</sup>: Եվրոպական դատարանը ևս իր որոշումներում բազմիցս կրկնում է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը Պետության վրա պարտավորություն է դնում պաշտպանել յուրաքանչյուրի կյանքի իրավունքը: Այլ կերպ՝ կյանքի իրավունքը պետության վրա դնում է պարտավորություն անել ամեն ինչ, որպեսզի մարդու կյանքը չվտանգվի: Սա նշանակում է, որ նախաքննության և հետաքննության մարմինները պետք է ձեռնարկեն իրենց հասու բոլոր հնարավոր միջոցները՝ դեպքին առնչվող անհրաժեշտ բոլոր ապացույցները ձեռք բերելու համար: Սակայն, բոլոր դեպքերում պետությունը պարտավորվում է ստանձնել պոզիտիվ և նեգատիվ պարտավորություններ պահպանելու անձի կյանքի իրավունքը՝ անկախ հետապնդվող նպատակին հասնելու արդյունավետության եղանակներից: Վերոնշյալը վերաբերում է գաղտնի քննչական գործողությունների կատարման ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցներին: Իրավապահ մարմինները որևէ պարագայում չպետք է թույլ տան, որպեսզի գաղտնի քննչական գործողությունների կատարման ընթացքում հատուկ տեխնիկական միջոցների գործադրումը վնաս պատճառի մարդկանց կյանքին և առողջությանը, ինչպես նաև շրջակա միջավայրին: Արգելվում է գաղտնի տեղեկություններ ստանալու համար նախատեսված (մշակված, ծրագրված, հարմարեցված) հատուկ տեխնիկական և այլ միջոցների օգտագործումը և գաղտնի քննչական գործողությունների կատարումը ՀՀ ՔԴՕ-ով չլիազորված պետական մարմինների, ստորաբաժանումների կամ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից: Ինչպես արդեն նշել ենք, սույն պարագայում հետաքննության մարմինն է ՀՀ ՔԴՕ-ին համապատասխան կատարում գաղտնի քննչական գործողությունները:

### **Եզրակացություն**

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ գաղտնի քննչական գործողությունների արդյունքների քրեադատավարական հեռանկարի ապահովման, դրանց արդյունավետ օգտագործման

<sup>10</sup> Տե՛ս Սահմանադրության հոդված 24-ը:

գլխավոր նախապայմանը դրանց կատարման ընթացքում ներպետական օրենսդրությամբ, ինչպես նաև միջազգային իրավական տարբեր ակտերով նախատեսված պայմանների անշեղ պահպանումն է: Այլ կերպ՝ ցանկացած գաղտնի քննչական գործողության արդյունքի արժանահավատությունը ուղիղ համեմատական է դրա կատարման իրավաչափության երաշխիքների պահպանման հետ: Ընդ որում, հարկ է նկատել, որ այդպիսի երաշխիքները հիմնականում վերաբերելի են գաղտնի քննչական գործողությունների ժամկետներին, անձանց որոշակի շրջանակին, դրանց կատարման ընթացքում հատուկ տեխնիկական միջոցների և դրանք կիրառելու իրավություն ունեցող սուբյեկտների շրջանակին և այլն:

Այսպիսով, փաստելով, որ գաղտնի քննչական գործողությունները, լինելով իրավապահ մարմինների կողմից օրենքով իրենց վերապահված գործառույթների շրջանակում իրականացվող պետական գործունեության ինքնուրույն տեսակ, ենթակա են իրականացման այդ գործունեության բնույթին, նպատակային նշանակությանը և օրենսդրությամբ առաջադրվող համաչափության պայմաններին համապատասխան, մշտապես երաշխավորում են հանրային շահի և անհատի իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը:

**Ամփոփագիր:** Սույն հոդվածում քննարկվում են գաղտնի քննչական գործողությունների իրականացման վերաբերյալ մի շարք կարևոր և հրատապ հիմնահարցեր: Գաղտնի քննչական գործողությունները, որպես մինչդատական վարույթի ընթացքում իրականացվող գործողություններ, ունեն հատուկ խնդիրներ, որոնք ուղղված են հանցագործությունների հայտնաբերմանն ու կանխարգելմանը, ապացույցների հավաքմանը և հանցագործություն կատարած անձի (անձանց) բացահայտմանը: Իրավական և լեզվաբանական իմաստներով «գաղտնի» նշանակում է ծածուկ, ոչ հանրային, աննկատ գործելաձև, որի նպատակը քննիչի գործողությունների համար անհրաժեշտ ապացույցների ապահովումն է:

Գաղտնի քննչական գործողությունների ապացուցողական նշանակությունը մեծապես պայմանավորված է դրանց իրականացման ընթացքում օրենքով նախատեսված երաշխիքների ապավումից: Գաղտնի քննչական գործողությունների իրավաչափությունն ապահովելու համար կարևոր է միջազգային չափանիշներին ազգային օրենսդրության համապատասխանությունը: Եվրոպական դատարանի դիրքորոշումը տվյալ հարցի շուրջ շեշտում է, որ պետությունների իրավասու մարմինները կարող են իրականացնել գաղտնի գործողություններ՝ ապահովելով հասարակության անվտանգության պաշտպանությունը, սակայն անհրաժեշտ է հստակ և արդյունավետ երաշխիքներ առկայությունը մարդու իրավունքների պաշտպանության համար: Գաղտնի քննչական գործողությունների իրականացման համար պետության կողմից սահմանված երաշխիքները նպատակ ունեն բացառել մարդու իրավունքների խախտումները, հնարավոր միջամտությունները և չարաշահումները: Օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն՝ գաղտնի քննչական գործողություններն իրականացվում են դատարանի որոշման հիման վրա և միայն այն պարագայում, երբ այլ միջոցներով ապացույցների հավաքագրումն անհնար է: Գաղտնի քննչական գործողությունների իրականացման պարագայում առաջնահերթություն է տրվում անձնական տվյալների և մասնավոր կյանքի պաշտպանության և հիմնարար իրավունքների նկատմամբ միջամտության համաչափությանը: ՀՀ օրենսդրությունը սահմանում է նաև հստակ սահմանափակումներ այն անձանց շրջանակի վերաբերյալ, որոնց նկատմամբ կարող են իրականացվել գաղտնի գործողություններ, այդ թվում՝ դատարանի թույլտվությամբ:

Հեղինակը եզրահանգում է, որ գաղտնի քննչական գործողությունները, լինելով իրավապահ մարմինների կողմից օրենքով իրենց վերապահված գործառույթների շրջանակում իրականացվող պետական գործունեության ինքնուրույն տեսակ, ենթակա են իրականացման այդ գործունեության բնույթին, նպատակային նշանակությանը և օրենսդրությամբ առաջադրվող իրավաչափության պայմաններին համապատասխան, մշտապես երաշխավորում են հանրային շահի և անհատի իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը:

**Annotation.** This article discusses a number of important issues regarding the implementation of secret investigative activities. Secret investigative operations, as operations carried out during pre-trial proceedings, have specific tasks aimed at detection and prevention of crimes, collection of evidence and identification of the person who committed the crime. In the legal and linguistic sense, “covert” means a secret, non-public, inconspicuous practice, the purpose of which is to provide evidence necessary for the investigator’s actions. The probative value of secret investigative operations is largely determined by the protection of the guarantees provided by law during their implementation. Compliance of national legislation with international standards is essential to ensure the legality of covert investigative activities. The position of the European Court of Human Rights on this issue emphasizes that the competent authorities of the states can carry out secret operations to ensure the protection of public safety, but there must always be clear and effective guarantees for the protection of human rights. The guarantees established by the state for the implementation of secret investigative activities are intended to exclude human rights violations, possible interferences and abuses. For example, according to Article 243 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, secret investigative actions are carried out based on a court order and only in the event that gathering evidence by other means is impossible. In the case of conducting secret investigative activities, priority is given to the proportionality of the interference with personal data and the protection of private life and fundamental rights. The legislation of Armenia also sets clear restrictions on the scope of persons against whom secret actions can be carried out, including with the permission of the court. The author concludes that secret investigative actions, being an independent type of state activity carried out by law enforcement agencies within the scope of the functions assigned to them by law, are subject to implementation in accordance with the nature of that activity, its purpose and the legality conditions set by the legislation, always guaranteeing a fair balance between the public interest and the rights of the individual.

**Аннотация.** В данной статье рассматриваются актуальные вопросы осуществления тайных следственных действий. Тайные следственные действия в качестве досудебных действий, осуществляемых в ходе расследования, имеют конкретные задачи, направленные на выявление и предотвращение преступлений, сбор доказательств и на установление лица, совершившего преступление. В юридическом и лингвистическом значениях «тайный» означает ‘скрытый, непубличный, незаметный образ действий’, цель которого – обеспечение доказательств, необходимых для дальнейших действий следователя.

Доказательная значимость тайных следственных действий во многом обусловлена обеспечением гарантий, предусмотренных законом при их осуществлении. Для обеспечения правомерности тайных следственных действий важное значение имеет соответствие международным стандартам национального законодательства. Позиция Европейского суда по данному вопросу подчеркивает, что компетентные органы государств могут проводить секретные действия, обеспечивая общественную безопасность, но всегда должны быть четкие и эффективные гарантии защиты прав человека. Гарантии, введенные государством для осуществления тайных следственных действий, направлены на исключение нарушений прав человека, возможные вмешательства и злоупотребления. Например, согласно со статьей 243 УПК РА, тайные следственные действия проводятся на основании решения суда и только в том случае, если сбор доказательств другими способами невозможен. В случае проведения тайных следственных действий приоритетом является предоставление защиты личных данных и частной жизни, а также пропорциональности вмешательства по отношению к фундаментальным правам. Законодательство РА также четко определяет ограничения в отношении круга лиц, в отношении которых могут быть применены тайные операции, по решению суда.

Автор приходит к выводу, что тайные следственные действия, проводимые правоохранительными органами в рамках отведенных им законом функций, как самостоятельный вид деятельности, осуществляемой государством, при условии соблюдения характера, этой деятельности, в соответствии с целевым назначением и условиями правомерности, установленными законодательством, постоянно гарантируют справедливое соотношение между общественными интересами и правами личности.

**Բանալի բառեր** – գաղտնի քննչական գործողություններ, իրավաչափություն, հիմնարար երաշխիքներ, մարդու իրավունքներ և ազատություններ, քրեական դատավարություն, ապացույցներ հավաքում, դատարանի որոշում, քրեական վարույթ, ՀՀ Սահմանադրություն, Եվրոպական դատարան, մասնավոր հաղորդակցություն, հասարակական անվտանգություն:

**Keywords:** *secret investigative operations, legality, fundamental guarantees, human rights and freedoms, criminal trial, evidence collection, court decision, criminal proceedings, RA Constitution, European Court, private communication, public security.*

**Ключевые слова** – *тайные следственные действия, правомерность, основные гарантии, права и свободы человека, уголовное судопроизводство, сбор доказательств, решение суда, уголовное производство, Конституция РА, Европейский суд, частная коммуникация, общественная безопасность.*

### Օգտագործված գրականության ցանկ

1. Էրուարդ Բագրատի Աղայան, «Հայաստան» իրատարակչություն, Երևան, 1976, էջ 217: [http://www.nayiri.com/imaginedictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY\\_HY&pageNumber=233](http://www.nayiri.com/imaginedictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&pageNumber=233)
2. Красавчикова Л. О., Личная жизнь под охраной закона, 1983, էջ 160:
3. Доронин К.С. Понятие негласного следственного действия в уголовном процессе // Вестник Московского университета. Серия 11. Право. 2017:
4. Нурғалиев Б.М., Лакбаев К.С. Негласные следственные действия: история, понятие, проблемы, перспективы // Актуальные проблемы использования ситуационного подхода в юридической науке и правоприменительной деятельности: материалы междунар. науч.-практ. конф. Калининград: Изд-во БФУ им. И. Канта, 2012. с. 164:
5. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Roman Zakharov v. Russia* գործով 2015 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 47143/06, կետ 232, *Irfan Guzel v. Turkey* գործով 2017 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 35285/08, կետ 85:
6. Ընդ որում, հանրային և մասնավոր շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռության պահպանման անհրաժեշտության մասին ընդգծվում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2020թ. ապրիլի 28-ի ՍԴՈ 1526 որոշման 4.4-րդ կետում ՕՀՄ-ների իրականացման թույլտվության որոշումների բողոքարկման համատեքստում:
7. Եվրոպական դատարանի՝ Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012թ հոկտեմբերի 2-ի վճիռը:
8. *Gladysheva v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 7097/10, կետ 93:
9. Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0028/01/16 քրեական գործով 18.09.2019թ. որոշումը:
10. Սահմանադրության հոդված 24-ը:

**Ենգիբարյան Վ.** - ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, էլիասցե՝ [vahe777@yahoo.com](mailto:vahe777@yahoo.com):

Ներկայացվել է խմբագրություն 21.10.2024 թ., տրվել է գրախոսության 21.10.2024 թ., երաշխավորվել է իրավ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Դիրանդյանի կողմից, ընդունվել է տպագրության 18.11.2024 թ.:



**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ/CRIMINAL LAW AND CRIMINOLOGY/  
УГОЛОВНОЕ ПРАВО И КРИМИНОЛОГИЯ**

<https://doi.org/10.59546/18290744-2024.7-9-33>

ՄԵԼԻԿ ՄԵԼԻԿՅԱՆ  
«Վճռաբեկ դատարանի աշխատակազմի  
իրավական փորձաքննությունների ծառայության  
գլխավոր մասնագետի պաշտոնակատար,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ»

MELIK MELIKYAN  
*Acting Chief Expert of the Legal Expertise  
Service of the Cassation Court of Republic of Armenia,  
Applicant at the Chair of  
Criminal Law of YSU Faculty of Law*

МЕЛИК МЕЛИКЯН  
*И.о. главного эксперта службы правовой экспертизы  
аппарата Кассационного суда Республики Армения,  
соискатель кафедры уголовного права  
Юридического факультета ЕГУ*

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ՏԵՂՆ ՈՒ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍԻ  
ՈՐՈՇ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ**

**THE PLACE AND SIGNIFICANCE OF PROVOCATION OF CRIME IN  
SOME INSTITUTIONAL STRUCTURES OF THE GENERAL PART OF  
CRIMINAL LAW**

**МЕСТО И ЗНАЧЕНИЕ ПРОВОКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЯ В  
НЕКОТОРЫХ ИНСТИТУЦИОНАЛЬНЫХ СТРУКТУРАХ ОБЩЕЙ ЧАСТИ  
УГОЛОВНОГО ПРАВА**

**Ներածություն**

Հանցագործության պրովոկացիան եղել և շարունակում է մնալ քրեական իրավունքում հարաբերականորեն քիչ ուսումնասիրված, տեսական ուսումնասիրություններ և գործնական

ուղենիշներ նախանշելու ուղղությամբ աշխատանքներ պահանջող, բազմաշերտ ու բարդ քրեաիրավական կատեգորիա:

Քրեական իրավունքում հանցագործության պրովոկացիան դրսևորված է տարակերպ և իրավունքի տարբեր աղբյուրներում դրա դրսևորումներն արտացոլվում են ինչպես քրեական իրավունքի ընդհանուր, այնպես էլ հատուկ մասերում:

Ներպետական և արտասահմանյան երկրների փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախադեպային իրավունքում արտահայտված դիրքորոշումների, ինչպես նաև տարբեր տեսական դոկտրինների հիման վրա հետազոտման առարկա դարձնելով հանցագործության պրովոկացիայի առանձնահատկությունները՝ ի հայտ են գալիս մի շարք հիմնահարցեր, որոնք, ի թիվս այլնի, կապված են քրեական պատասխանատվության բացառող հանգամանքների, պատիժ նշանակելու, քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուցիոնալ կառուցակարգերում՝ քննարկվող կատեգորիայի զբաղեցրած տեղի և նշանակության հետ:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում ներառվել են հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ մի շարք նոր դրույթներ, որոնք նախկինում հայրենական օրենսդրությամբ նախատեսված չեն եղել և վերը հիշատակված իրավական բազայի պայմաններում պահանջում են մանրամասն աշխատանք՝ ի նպաստ դրանց կատարելագործմանը:

Նշվածով ինքնին պայմանավորվում է ընտրված թեմայի արդիականությունը:

Սույն հոդվածով իրականացվող հետազոտման նպատակն է քրեական իրավունքի վերոգրյալ կառուցակարգերի հետ փոխհարաբերակցել հանցագործության պրովոկացիայի բովանդակային առանձնահատկությունները և նախանշել տվյալ ինստիտուտի զարգացման հետագա այն միտումները, որոնք այդ մասով կնպաստեն քրեական օրենքի նպատակների ու խնդիրների կենսագործմանը:

Նշված նպատակին հասնելու ուղղությամբ սույն աշխատանքում խնդիր է դրվել՝

(i) Դիտարկել քրեական պատասխանատվությունը բացառող, ինչպես նաև քրեական պատասխանատվությունից ազատող հանգամանքներում հանցագործության պրովոկացիայի դրսևորումները, այդ համատեքստում նաև՝ նշված երևույթը զուգակցելով արդեն համեմատաբար հայտնի և դրա հետ որոշակի զուգահեռներ ունեցող այլ համասեռ երևույթների հետ,

(ii) Ցույց տալ հանցագործության պրովոկացիայի ազդեցությունը պատիժ նշանակելու հարցերում,

(iii) Հետազոտման արդյունքում հանդես գալ գիտականորեն հիմնավորված այնպիսի առաջարկներով, որոնք նպատակամետ կլինեն նախորդ երկու կետերի շուրջ տարված հետազոտությունների արդյունքում վերհանված խնդիրների լուծմանը:

Կատարվող աշխատանքի համար մեթոդաբանական հիմքն են հանդիսացել գիտական ճանաչողությանը հայտնի՝ համեմատաիրավական, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական վերլուծական, անալիզ, սինթեզ և այլ մեթոդները:

### **Հիմնական հետազոտություն**

#### **Ֆ1. Հանցագործության պրովոկացիայի հիմնահարցերը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներում**

Իրավունքի տարբեր աղբյուրներում հանցագործության պրովոկացիան դրսևորվում է քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շրջանակում: Հարկ է նշել,

որ հիշյալ աղբյուրներում հիմնական շեշտադրումը կատարվում է հանցագործության պրովոկացիայի՝ իբրև առանձին քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի անհրաժեշտության վրա:

Վերոգրյալի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք անհրաժեշտ է քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանք նախատեսել նաև հանցագործության պրովոկացիան:

Բարձրացված հարցի կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ մի շարք երկրներում հանցագործության պրովոկացիան հիմք է անձի քրեական պատասխանատվությունը բացառելու համար: Մասնավորապես, Իսպանիայի քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածով<sup>1</sup>, Լիտվայի քրեական օրենսգրքի 227-րդ հոդվածի 6-րդ մասով<sup>2</sup>, Սերբիայի քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածով<sup>3</sup>, Նյու-Յորք նահանգի քրեական օրենքով<sup>4</sup> նախատեսված կարգավորումների համաձայն՝ հանցագործության պրովոկացիայի դեպքում անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Բացի դրանից՝ ԱՄՆ-ի Գերագույն Դատարանը, հաշվի առնելով իրահրված անձի իրավական դրությունը, մատնանշում է պրովոկացիայի անընդունելիությունը, և եթե անձը կատարել է հանցագործություն պրովոկատորի տևական համոզումների, ինտենսիվ ու համառ ազդեցության արդյունքում, բացառվում է վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելը<sup>5</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներով սահմանվել են իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց կողմից իրավաչափ գործելու և հանցագործության պրովոկացիայի սահմանազատման համար անհրաժեշտ չափանիշները<sup>6</sup>, որոնք ներառում են տվյալ անձանց պասիվ ներգործության և նրանց կողմից ճշում գործադրելու արգելքի սկզբունքները<sup>7</sup>, սուբյեկտի կողմից նախաձեռնություն ցուցաբերելու արգելքը<sup>8</sup>, ինչպես նաև նշված սուբյեկտների կողմից իրականացվող միջոցառումների օրինականությունը և դրանց նկատմամբ սահմանված իրականացվող վերահսկողությունը<sup>9</sup>:

<sup>1</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

<sup>2</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.derechos.org/intlaw/doc/ltu1.html> (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

<sup>3</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ (հղման վերջին մուտք՝ [https://www.mpravde.gov.rs/files/Criminal%20%20Code\\_2019.pdf](https://www.mpravde.gov.rs/files/Criminal%20%20Code_2019.pdf) 13.08.2024 թ.):

<sup>4</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://ypdcrime.com/penal.law/article35.php> (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

<sup>5</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.supremecourt.gov/opinions/16pdf/16-369\\_09m1.pdf](https://www.supremecourt.gov/opinions/16pdf/16-369_09m1.pdf) (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

<sup>6</sup> Այս մասով առավել մանրամասն տե՛ս *Մ. Մելիքյան* «Հանցագործության պրովոկացիայի քրեաիրավական առանձնահատկությունները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում» գիտական հոդվածը, Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2022 7-9 (277-279), էջեր 54-61:

<sup>7</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Grba v. Croatia* գործով 2017 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 47074/12, կետեր 102-103, *Constantin and Stoian v. Romania* գործով 2009 թվականի սեպտեմբերի 29-ի վճիռը, գանգատներ թիվ 23782/06 և 46629/06, կետ 55, *Burak Hun v. Turkey*, գործով 2009 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 17570/04, կետ 44, ինչպես նաև *Sepil v. Turkey* գործով 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 17711/07, կետ 34, *Ramanauskas v. Lithuania* գործով 2008 թվականի փետրվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74420/01, կետ 67:

<sup>8</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ վերի հիշատկված *Burak Hun v. Turkey*, գործով վճիռը, կետ 44 և *Sepil v. Turkey* գործով 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, կետ 34, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Գառնիկ Գալստյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14 որոշման 15-րդ կետը:

<sup>9</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Miliniene v. Lithuania* գործով 2008 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 74355/01 կետեր 37-38, *Teixeira de Castro v. Portugal* գործով 1998 թվականի հունիսի 9-ի

Այս համատեքստում տեսությունում տեսակետեր են ձևավորվել առ այն, որ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված պրակտիկայի հիման վրա, անհրաժեշտ է հանցագործության պրովոկացիան ներառել քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շարքում, որպեսզի իրավաչափորեն իրականացվող օպերատիվ միջոցառումների դեպքում այն կատարող սուբյեկտի նկատմամբ քրեական պատասխանատվությունը բացառվի<sup>10</sup>:

Մի շարք հեղինակներ կարծում են, որ պայմանավորված նրանով, որ «հանցագործության կատարումը սադրելու» դեպքում անձի կողմից հանցանք կատարելու դիտավորությունը չէր առաջանա առանց պրովոկատորի միջամտության, տվյալ պարագայում բացակայում է հանցագործության սուբյեկտի կողմի հատկանիշները, ուստի պրովոկացիայի առկայության պայմաններում հանցանք կատարած անձի նկատմամբ պետք է բացառվի քրեական պատասխանատվությունը<sup>11</sup>:

Որոշ հեղինակներ էլ նշում են, որ կոռուպցիայի հակազդման տեսանկյունից, գործուն միջոց կհանդիսանա «իրավաչափ պրովոկացիայի» նախատեսումը, ինչը կարող է կենսագործվել հանցագործության պրովոկացիայի՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք սահմանելով<sup>12</sup>:

Սույն հետազոտության շրջանակներում առանձնակի կարևորվում է նաև ներպետական փորձի ուսումնասիրությունը՝ կապված իրավունքի այլ ճյուղերով դրսևորվող պրովոկացիոն երևույթների հետ, որոնք լինելով քրեական իրավունքի դաշտից դուրս՝ միաժամանակ իրենց արտացոլում են գտել նաև քրեական օրենսդրությամբ: Մասնավորապես, դեռևս 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածում ավելացված դրույթն առ այն, որ տվյալ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված արարքների կատարումը հանցագործություն համարվել չի կարող, եթե կատարվել է օրենքով սահմանված դեպքերում առաքինության ստուգման նպատակով<sup>13</sup>:

Տվյալ օրենսդրական փոփոխության և լրացման հիմնավորումներում նշվում է, որ «[Պ]րովոկացիոն տերմինի կիրառումը չպետք է շփոթ առաջացնի քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիայի հետ, քանի որ Նախագծի 33-րդ հոդվածով առաքինության նման սրուգման համար սահմանվել է ոչ թե քրեական, այլ կարգապահական ներգործության միջոցի կիրառում, իսկ Նախագծի 35-րդ հոդվածի 9-րդ մասի և Քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածով նախատեսված փոփոխություններով բացառվում է հետագայում Կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական պատասխանատվությունը»:

---

վճիռը, գանգատ թիվ **44/1997/828/1034** կետ 38, *Ramanauskas v. Lithuania* գործով վճիռը, կետ 51, ինչպես նաև *Tchokhonelidze v. Georgia* գործով վճիռը, գործով 2018 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 31536/07, կետ 51:

<sup>10</sup> Տե՛ս *Комиссаров В.С., Яни П.С.* Провокационно-подстрекательская деятельность в отношении должностного лица как обстоятельство, исключающее ответственность за получение взятки // *Законность.* 2010, էջեր 3-8:

<sup>11</sup> Տե՛ս *Волкова И.А.* Провокация преступления в контексте отдельных институтов Общей части УК РФ // *Закон и право.* 2020. № 1, էջեր 106-108, *Жарких И.А.* Перспективы регламентации и развития института провокации преступления в системе норм уголовного права // *Вопросы российской юстиции.* 2021. № 12. էջեր 311-319, *Дорогин Д.А.* «Провокация совершения преступления» как обстоятельство, исключающее уголовную ответственность // *Актуальные проблемы уголовного права, криминологии и уголовно-исполнительного права : научные труды кафедры уголовного права.* Вып. 7. М., 2017. էջեր 39-52:

<sup>12</sup> Տե՛ս *Миллюков С.Ф., Никуленко А.В.* Провокация в борьбе с коррупцией: диалектическое противоречие и пути выхода из него // *Актуальные проблемы экономики и права.* 2016. № 4. էջեր 45-53, *Капинус О.С.* Практика Европейского суда по правам человека по вопросу провокации преступления и ее уголовно-правовое значение // *Законы России: опыт, анализ, практика.* 2014. № 12, էջեր. 62-70:

<sup>13</sup> Տե՛ս «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-151-Ն օրենքը:

*խանարվության կիրառումը: Նշված միջոցը կրում է բացառապես Կոմիտեի ծառայողների բարեվարքության և առաքինության սրուգման դեր և կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության<sup>14</sup>»:*

Հարկ է նշել, որ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածում տվյալ կարգավորումը պահպանվել է և դրա 2-րդ մասում ամրագրվել է, որ կաշառքի պրովոկացիա չի համարվում օրենքով սահմանված դեպքում առաքինության ստուգման նպատակով նույն հոդվածի 1-ին մասով նկարագրված արարքի կատարումը:

Վերոնշյալից հետևում է, որ ՀՀ քրեական իրավունքում արդեն իսկ գործում է «իրավաչափ պրովոկացիան» և հայ օրենսդիրն օրենսդրական մակարդակում ամրագրել է՝ հանրօգուտ նպատակների իրականացման առումով կատարվող պրովոկացիոն միջոցառումները՝ այդպես դրանք իրականացնող սուբյեկտի գործողությունները համարելով լեգիտիմ:

Միաժամանակ, հնարավոր են իրավիճակներ, երբ անձը, ողջամտորեն զգալով հանցավոր ոտնձգության կատարման վերահաս վտանգը, պրովոկացիոն եղանակներով մյուս անձին «բերում» է հանցագործության կատարմանը՝ կանխելով կամ խափանելով այն, ինչպիսի իրավիճակը փաստորեն կարելի է մեկնաբանել հիմնավորված ռիսկի ներքո:

Հարկ է նշել նաև, որ հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվության բացառման անհրաժեշտության հարցը կարող է դիտարկվել նաև հանցանքը կատարելու պահին իր արարքի հակաիրավականությունը գիտակցելու և այն ղեկավարելու դիտանկյունից, այնքանով, որքանով անձի նկատմամբ գործադրվում է հոգեբանական ներգործություն:

Այս համատեքստում կարիք է առաջանում հանցագործության պրովոկացիայի դրսևորումները զուգակցելու քրեական իրավունքում արդեն համեմատաբար հայտնի և պրովոկացիայի հետ որոշակի զուգահեռներ ունեցող այնպիսի կատեգորիայի հետ, ինչպիսին աֆեկտն է:

Նախ հարկ է նշել, որ աֆեկտը նշանակալի դեր է խաղում սուբյեկտի mens rea-ի («մեղավոր միտք») կամ հոգեվիճակի որոշման գործում, ինչն էական նշանակություն ունի հանցավորի դիտավորությունը որոշելու համար: Օրինակ, եթե սուբյեկտի հուզական վիճակը խաթարում է գիտակցված գործելու նրա կարողությունը, ապա դա ազդում է նրա արարքի որակման վրա՝ կանխամտածված արարք կատարելու փոխարեն այն վերածելով ժամանակավոր հուզական խանգարման ազդեցության տակ հանցավոր ոտնձգության կատարման<sup>15</sup>:

Աֆեկտը որոշ դեպքերում այն կանխորոշիչ նշանակություն ունեցող գործոնն է, որի առկայությամբ կարող է բացառվել հակաիրավական արարք կատարած անձի մեղսունակությունը, հետևաբար նաև քրեական պատասխանատվության ենթարկվելու կարողությունը<sup>16</sup>:

Հարկ է նշել, որ քրեական օրենսդրության մեջ աֆեկտ և պրովոկացիա քրեաիրավական կատեգորիաները հաճախ միմյանց հետ փոխհարաբեկացվում են, և աֆեկտն իր ուղղակի ազդեցությունն է ունենում՝ պարզելու, թե որքանով է անձը պրովոկացիայի արդյունքում գիտակցել իր արարքի բնույթն ու դրսևորել կամային վարքագիծ տվյալ ազդեցության ներքո հակաիրավական արարք կատարելիս:

Օքսֆորդի համալսարանի հետազոտողներն աֆեկտը բնութագրել են իբրև անհատի էմոցիոնալ վիճակ, վերջինիս վարքագծին և հոգեկան վիճակին ազդող ինտենսիվ գործոն, որով

<sup>14</sup> Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի հիմնավորումները՝ [www.parliament.am](http://www.parliament.am) կայքում:

<sup>15</sup> Տե՛ս Ashworth, A. “Principles of Criminal Law” (7th edition), Oxford University Press., Oxford, էջեր 100-120, (2022):

<sup>16</sup> Տե՛ս Duff, A., & Green, S., “The Philosophy of Criminal Law: Theory and Practice”, Oxford University Press, Oxford, 2018, էջեր 180-205

անձի մոտ «ակնթարթորեն» ձևավորում է խիստ հուզական հոգեվիճակ: Վերջիններս նշել են, որ եթե պրովոկացիան սովորաբար ծագում է արտաքին ազդակներից, որոնք նպատակ են հետապնդում հուզական արձագանք առաջացնելու, ապա աֆեկտը, վերաբերում է անհատի ավելի լայն հուզական կամ հոգեբանական վիճակին և հոգեկան խիստ հուզմունքի առաջացումը չի համարվում հոգեբանական ներգործություն կատարող սուբյեկտի նպատակը<sup>17</sup>:

**Այսպիսով, զուգահեռներ անցկացնելով հանցագործության պրովոկացիայի և աֆեկտի միջև՝ հարկ է արձանագրել հետևյալը.**

- ինչպես պրովոկացիան, այնպես էլ աֆեկտը համարվում են անձի հոգեկան վիճակի, վարքագիծը տիրապետելու և սեփական արարքների նշանակությունը գիտակցելու վրա ազդող գործոններ,

- պրովոկացիան հանդիսանում է քողարկված բնույթի արարքների ամբողջություն, որի նպատակը հենց անձին հանցագործության կատարմանը «ներքաշելն» է, մինչդեռ աֆեկտի պարագայում, անձին հոգեկան խիստ հուզմունքի հասցնող անձը նպատակ չի հետապնդում վերջինիս կողմնորոշելու հանցանքի կատարման,

- աֆեկտի պարագայում տվյալ հոգեվիճակի առաջացման պատճառ հանդիսացող անձը չի ձգտում մեկ այլ անձի մոտ առաջացնել հոգեկան խիստ հուզմունքի վիճակ կամ առնվազն անտարբեր է նրա հուզական վիճակի նկատմամբ, մինչդեռ պրովոկացիայի պարագայում սուբյեկտը մտադրված է «մոլորության» մեջ գցել անձին և հենց դրա միջոցով վերջինիս համար առաջացնել բացասական հետևանքներ,

- աֆեկտը պրովոկացիայի դեպքում, դրան ենթարկվող անձի արարքների և օբյեկտիվ իրադրության միջև համարվում է համաչափության ցուցիչ:

Վերոգրյալից հետևում է նաև, որ եթե հոգեբանական ներգործության արդյունքում պրովոկացիայի ենթարկված անձը դրա հետևանքով հանցանք կատարելու պահին հոգեկան առողջության խնդիրների հետևանքով չի գիտակցել իր արարքի հակաիրավականությունը կամ ամբողջությամբ չի կարողացել ղեկավարել իր արարքը, որի համար պատճառ կարող է հանդիսանալ նաև աֆեկտի վիճակում գտնվելը, ապա տվյալ պարագայում վերջինս պետք է համարվի անմեղսունակ: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ պրովոկացիայի ենթարկված անձն ամբողջությամբ զրկված չի եղել գիտակցելու իր կողմից կատարվող արարքի հակաիրավականությունը և ղեկավարելու դրանք, վերջինս կհամարվի սահմանափակ մեղսունակ՝ ենթակա լինելով քրեական պատասխանատվության:

Այսպիսով, հանցագործության պրովոկացիայի ազդեցության տակ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս հասցնող անձի համար քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանքի նախատեսումը դառնում է առարկայազուրկ ներքոգրյալ հիմնավորումներով.

ա) Եվրոպական դատարանի կողմից սահմանված և սույն հետազոտությամբ առանձնացված ստանդարտների պայմաններում հստակ գծված է սահմանը՝ օրինաչափ վարքագծի և պրովոկացիայի միջև, ուստի այն չհատելն արդեն իսկ բացառում է քրեական պատասխանատվությունը և դրա ավելորդ շեշտադրումը կլինի իմաստազուրկ,

բ) բոլոր այն դեպքերում, երբ խոսք է գնում իրավունքի այլ ճյուղերով կարգավորվող հարաբերություններում պրովոկացիոն արարքների մասին, որոնք արտաքին հատկանիշ-

<sup>17</sup> Տ'ես, *David Ormerod and Karl Laird*, "Smith and Hogan's Criminal Law", 15th edition, Oxford University Press, էջեր 305-310:

ներով նմանվում են հանցագործության պրովոկացիայի իրականացմանը, դրանց համար սահմանված են լինում իրավական պատասխանատվության այլ՝ տվյալ իրավունքի ճյուղով սահմանված հիմքեր, որոնք ընդհանրապես քրեական իրավունքի տիրույթից դուրս են գտնվում,

գ) որոշակի իրավիճակներում, երբ ա) կետում հիշատակված սահմանը կարող է հատվել պայմանավորված հաստատապես հայտնի նախատեսվող հանցագործության իրականացումը խափանելու համար, և եթե հետապնդվող նպատակին չէր կարելի հասնել առանց ռիսկի դիմելու, և ռիսկի դիմած անձն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը կանխելու համար, այդ դեպքում գործադրելի կլինի հիմնավորված ռիսկի հիմքով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքը,

դ) պրովոկացիայի արդյունքում, անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության դեպքում կիրառելի կլինեն ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածները, որոնցով արդեն իսկ կապահովվեն հանցագործության պրովոկացիայի ազդեցությամբ հանցանքը կատարելու պահին իր արարքի հակաիրավականությունը գիտակցելու և այն ղեկավարելու ունակությունը կորցնելու, կամ դրանք ամբողջությամբ չգիտակցելու կամ չղեկավարելու դեպքերում քրեաիրավական արդարացի միջոցներ կիրառելու մեխանիզմները:

Միաժամանակ, խոսելով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներում հանցագործության պրովոկացիայի մասին՝ հարկ է նկատել, որ գործող ՀՀ քրեական օրենսգրքով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներում կատարված նորամուծությունների շարքում գտնվող 32-րդ հոդվածի 7-րդ և 34-րդ հոդվածի 6-րդ մասերում ամրագրված՝ պրովոկացիայի որպես համապատասխանաբար՝ անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ պաշտպանության վիճակները բացառող պայմանի առկայությունը վերաբերելի է նաև նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավիճակին:

Մասնավորապես, օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակով անհաղթահարելի ուժ ստեղծող կամ մեկ ուրիշին իր նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք գործադրելուն դրդող և հետագայում իր կողմից օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելն անհաղթահարելի ուժի կամ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արդարացնող անձի արարքները բխում են պրովոկացիայի դասական ընկալումներից և էությունից, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված հիշյալ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի դեպքում, ևս, պետք է կատարվի լրամշակում և նախատեսվի պրովոկացիայի արգելքի պայմանը:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի մեկնաբանություններում արձանագրված է, որ ներկայացված դրույթով, ըստ էության, խոսքն իրավիճակի սադրումի մասին է և հիշյալ նորմով նախատեսված քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքը կոչված է կանխելու քրեական պատասխանատվությունից ազատելու նշված հանգամանքի կիրառման հնարավոր չարաշահումներն այն դեպքերում, երբ անձն ինքն է ստեղծում դրա կիրառման համար «իրավաչափ» իրավիճակ, ինչը, սակայն, օրենսդրական մակարդակով չի ամրագրվել<sup>18</sup>:

<sup>18</sup> Տե՛ս Ա. Գաբրիելյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան, «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների եվ նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, 2022 թվական, էջեր 89-90:

## **§2. Հանցագործության պրովոկացիան՝ իբրև քրեական պատասխանատվությունից ազատող հանգամանք.**

Նախորդիվ արձանագրելով հանցագործության պրովոկացիայի՝ որպես քրեական պատասխանատվության բացառող առանձին հանգամանք նախատեսելու անհրաժեշտության բացակայությունը, այնուամենայնիվ հնարավոր չէ անտեսել այն հանգամանքը, որ հանցագործության պրովոկացիայի ազդեցությունը հանցագործություն կատարելու էական խթանիչ գործոն է և հնարավոր չէ անտեսել այն հանգամանքը, որ հանցագործություն կատարելու դրդապատճառն առանց տվյալ ներգործության չէր առաջանա, հետևաբար պահանջվում է հասկանալ տվյալ հանգամանքի քրեաիրավական նշանակությունը՝ ըստ դրա փորձելով ուղենշել այն անհրաժեշտ զարգացումները, որոնք այդ մասով կնպաստեն վերաբերելի կարգավորումների արդիականացմանը:

Տեսությունում նշվում է, որ պրովոկացիայի ենթարկված անձը, թեև գործում է պրովոկատորի ազդեցության տակ, սակայն դիտավորություն է ունենում հանցագործություն կատարելու, ուստի սադրանքի ենթարկված անձն իր կատարած հանցագործության համար պետք է պատասխանատվության ենթարկվի<sup>19</sup>:

Հետաքրքիր է Վ. Ն. Բորկովի մոտեցումը՝ կապված պրովոկատորի ազդեցության ներքո հանցագործություն կատարած անձի նկատմամբ հասարակության վերաբերմունքի փիլիսոփայական և իրավական մոտեցումների վերաբերյալ: Վերջինս նշում է, որ պետությունը չպետք է գործադրի պատժիչ մեխանիզմներ իր ներկայացուցիչների կամայականության հետևանքով դեռևս չկատարված, կամ արդեն կատարված, բայց էական վնաս չհասցրած հանցագործության համար, իսկ պրովոկացիայի ենթարկված անձի կողմից էական վնաս պատճառած կամ ծանր հետևանքներ առաջացրած հանցանքը չի կարող դուրս մնալ քրեական իրավունքի դաշտից<sup>20</sup>:

Հետևաբար, պրովոկացիայի ենթարկված անձի կողմից հանցագործությունը որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք դիտարկելու չափազանց մեղմ և անարդարացի համարվելու պայմաններում, իրատեսական է թվում տվյալ իրավիճակում այնպիսի հնարավորությունների նախատեսումը, որով իրավակիրառը հնարավորություն կունենա պրովոկացիոն ազդեցության ենթարկված անձին ազատելու քրեական օրենքով պահանջվող օբյեկտին էապես բարձր վտանգավորություն ունեցող վնաս չհասցրած անձին:

Ընդհանրապես, խոսելով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի մասին, և միաժամանակ չշեղվելով հիմնական հետազոտման առարկայից՝ նշված ինստիտուտը հակիրճ կարելի է բնութագրել՝ որպես օրենսդրի կողմից ցուցաբերած մարդասիրական քայլ, բոլոր այն դեպքերում, երբ որոշակի հանգամանքների զուգորդմամբ քրեական օրենքով պահանջվող արժեքի նկատմամբ թույլ է տրվում հանցագործության բոլոր հատկանիշները պարունակող ոտնձգություն, սակայն որոշակի՝ հատուկ հանգամանքների հաշվառմամբ սուբյեկտն ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Այս կամ այն հանգամանքը՝ որպես քրեական պատասխանատվությունից ազատող հիմք նախատեսելիս պետք է պատասխանել այնպիսի հարցերի, ինչպիսիք են, թե ինչպե՞ս կարող է այն նպաստել հասարակական կարգի և սոցիալական արդարության վերականգնմանը<sup>21</sup>,

<sup>19</sup> Տե՛ս *Волженкин Б.В.* Провокация или оперативный эксперимент? // Законность. 1996. № 6, էջեր 26–30, Хомич В.М. Оперативный эксперимент без провокации взятки // Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции. 2009. № 2, էջեր 297–317:

<sup>20</sup> Տե՛ս *Борков В.Н.* Провокация преступления: уголовно-правовая оценка действий провокатора и спровоцированного / В.Н. Борков // Законы России: опыт, анализ, практика. - 2019. - № 6, էջեր 68–74:

<sup>21</sup> Տե՛ս *Gerry Johnstone* “Restorative Justice: Ideas, Values, Debates, 2013, Routledge, էջեր 45–60:



կամ հասարակության բարոյական և էթիկական չափանիշների հաշվառմամբ՝ հանուն հասարակական արժեքների, թույլ տրված հանցանքը որքանո՞վ կարող է «դարձնել ներելի»<sup>22</sup>:

Նշվածի համատեքստում հատկանշական է վերը շարադրյալ ստանդարտների տրամաբանությունից բխող դոկտրինալ մեկնաբանությունն առ այն, որ պրովոկացիան որպես քրեական պատասխանատվությունից ազատող հանգամանք դիտարկելն էական նշանակություն կարող է ունենալ իրավական համակարգում արդարության ապահովման համար, որով թույլ չի տրվի անձին անարդարացիորեն պատժել այն հանցագործությունների համար, որը նա կատարել է ուրիշների՝ հաճախ իրավապահների ակտիվ ներգործության ներքո<sup>23</sup>:

Միննույն ժամանակ պետք է ուշադրություն դարձնել տեսաբանների կողմից արտահայտված վերը հիշյալ այն թեզերը, որոնց համաձայն՝ պրովոկացիան հանդիսանում է հանցագործություն կատարելու վճռականություն առաջացնելու էական գործոն և առանց այդ ներգործության, սուբյեկտի կողմից հանցանք կատարելու վճռականություն չէր ցուցաբերվի, փաստորեն ուղիղ համեմատական կերպով բարձրացվում է նաև պրովոկացիոն ներգործության ներքո հանցագործություն կատարած անձի «ներելիությունը»:

Այս հանգամանքով պայմանավորված՝ հանցագործության պրովոկացիայի դեպքում քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատող հանգամանք նախատեսելու դեպքում իրատեսական է թվում հանցագործության պրովոկացիայի ենթարկված անձի համար՝ կոնկրետ հանգամանքների հաշվառմամբ<sup>24</sup>, ոչ թե հայեցողական, այլ պարտադիր կիրառման ենթակա պայման դիտարկելը, հակառակ պարագայում պրովոկացիայի ենթարկված անձի կողմից հանցանք կատարելու դեպքում՝ համապատասխան հանգամանքների հաշվառմամբ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը կկլանվի գործուն զոջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի մեջ և առանձին հիմքի նախատեսումը կկորցնի իր իրավական արժեքը:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ հանցագործության պրովոկացիայի հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորության պայմաններում, պետք է նաև որոշակի զսպիչներ սահմանվեն ծանր և առանձնապես ծանր հանցագործության դեպքերում և այդ իրավական հնարավորությունը պետք է տարածվի առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար:

**§3. Հանցագործության պրովոկացիան՝ որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք**

Հաշվի առնելով, որ հոգեբանական այն ազդեցությունը, որը պատճառվում է հանցագործության պրովոկացիայի ենթարկվող անձին, և որի արդյունքում փաստացի նվազեցվում է վերջինիս սոցիալական վտանգավորությունը<sup>25</sup>, անհրաժեշտություն է առաջանում քննարկ-

<sup>22</sup> Տե՛ս Joel Feinberg, *The Moral Limits of the Criminal Law: Volume 1, Harm to Others*, 2022, Oxford, Oxford University Press, էջեր 200-225:

<sup>23</sup> Տե՛ս *Андреевна Ж. И.*, Провокация преступления в уголовном праве России, Специальность: 12.00.08 – Уголовное право и криминология; уголовно-исполнительное право, Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Մոսկվա 2021, էջեր 213-214:

<sup>24</sup> Այդպիսի հանգամանքներ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատող հիմքերի համալիր վերլուծության արդյունքում կարելի է համարել՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարելը, քրեական հետապնդման մարմինների հետ համագործակցելը, իրեն մեղազրկող արարքը չվիճարկելը, վստա պատճառած լինելու դեպքում հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը:

<sup>25</sup> Այս մասով տե՛ս նաև *Волкова И.А.* Провокация преступления в контексте отдельных институтов Общей части УК РФ // Закон и право. 2020. № 1, էջեր 106-108, *Жарких И.А.* Перспективы регламентации и развития института

ման առարկա դարձնել հանցագործության պրովոկացիայի՝ իբրև քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող առանձին հանգամանք դիտարկելու հարցը:

Հարկ է նշել, որ արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրություններում, մասնավորապես Լիտվայի քրեական օրենսգրքի 59-րդ<sup>26</sup>, Օմանի քրեական օրենսգրքի 78-րդ<sup>27</sup>, Զիմբաբվեի քրեական օրենսգրքի 260-րդ<sup>28</sup>, Հարավային Սուդանի քրեական օրենսգրքի 225-րդ, 231-րդ, 236-րդ<sup>29</sup> հոդվածներով հանցագործության պրովոկացիան տարբեր դրսևորումներով համարվում է քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք:

Հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքի նախատեսման մասին բազմիցս անդրադարձ է կատարվել նաև իրավական դոկտրինում:

Անդրադառնալով պրովոկացիայի՝ որպես արարքի կատարման նախադրյալ հանդիսանալու հանգամանքին տեսությունում նշվել է, որ թեև պրովոկացիան կարող է բացատրել սուբյեկտի վարքագծի վերահսկողության կորուստը, սակայն միաժամանակ, չպետք է անտեսվի նրա կողմից հանցանք կատարելու փաստը, ուստի պրովոկացիայի ազդեցությամբ հանցավոր ոտնձգության իրականացումը դիտարկման է ենթակա պատիժը մեղմացնող հանգամանքի համատեքստում<sup>30</sup>: Այս մեկնաբանությունը կարելի է փոխկապակցել այն ընդհանուր տեսակետի հետ, որ անձի մոտ հոգեկան կամ ֆիզիկական ճնշում գործադրելու միջոցով կոնկրետ հանցագործություն կատարելու վճռականություն առաջացնելը նվազեցնում է տվյալ սուբյեկտի սեփական արարքները կառավարելու գիտակցումն ու ազատությունը, ինչն էլ հենց պետք է հաշվի առնվի իբրև պատիժը մեղմացնող հանգամանք<sup>31</sup>:

Կրիմինոլոգիական հայեցակետում՝ Ս.Կուզուշևան կարծում է, որ «պրովոկացիայի ազդեցության տակ կատարված հանցագործության սոցիալական վտանգի նվազեցումը պետք է ի վերջո արտացոլվի անձի նկատմամբ նշանակվող պատիժի մեջ՝ ցույց տալով դրա մեղմացուցիչ հանգամանք դիտարկվելու փաստը<sup>32</sup>: Կարևոր է հաշվի առնել նաև, որ նման հանգամանքի նախատեսումը դատարանին թույլ կտա հանցագործության պրովոկացիայի բոլոր դեպքերում հաշվի առնել պրովոկացիայի ենթարկված անձի կողմից կատարված արարքի ավելի փոքր սոցիալական վտանգը և այն հանգամանքները, որոնք դրդել են պրովոկացիայի ենթարկված անձին կատարել հանցագործությունը, ինչպես նաև արդար պատիժ սահմանել՝ հաշվի առնելով հանցագործության հասարակական վտանգավորության բնույթն ու աստիճանը և կատարողի անձը<sup>33</sup>:

---

провокации преступления в системе норм уголовного права, Журнал: Вопросы российской юстиции, № 12, 2021, էջեր 311-319:

<sup>26</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.mpravde.gov.rs/files/Criminal%20%20Code\\_2019.pdf](https://www.mpravde.gov.rs/files/Criminal%20%20Code_2019.pdf) (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

<sup>27</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.mola.gov.om> (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

<sup>28</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/pd/4c45b64c2.pdf> (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

<sup>29</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/South-Sudan-Penal-Code-TIP-Articles.pdf> հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

<sup>30</sup> Տե՛ս *Duff, A., & Green, S.* (2018). \*The Philosophy of Criminal Law: Theory and Practice\*. Oxford University Press, Oxford, էջեր 180-205:

<sup>31</sup> Տե՛ս *Бранчель И. И.*, Провокация и инсценировка преступлений при осуществлении оперативно-розыскной деятельности, Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции, 2011, էջեր 72-90:

<sup>32</sup> Տե՛ս *Кугушева С. В.* Провокация преступления: проблемы уголовно-правовой квалификации // Уголовное право. – 2005. – № 10. էջեր 25-26:

<sup>33</sup> Տե՛ս *Волкова И. А.* Провокация преступления в контексте отдельных институтов Общей части УК РФ // Закон и право. 2020. № 1, էջեր 106-108, *Жарких И. А.* Перспективы регламентации и развития института провокации преступления в системе норм уголовного права // Вопросы российской юстиции. 2021. № 12, էջեր 311-319:

Քննարկվող հարցի շրջանակներում պետք է նշել նաև, որ պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարելը չի կարող մեկնաբանվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված հանցանքը հանցագործությունից տուժած անձի հակաիրավական վարքագծի ազդեցության տակ կատարելու տիրույթում, քանզի նախ՝ պրովոկացիայի պարագայում տուժողի կարգավիճակում իրականում հայտնվում է այն անձը, որը հանցագործությունն իրականացնում է պրովոկատորի ներգործության արդյունքում, և երկրորդ՝ նոր օրենսդրությամբ քրեական հակաիրավականությունը հանդիսանալով հանցագործության օբյեկտիվ չափանիշ, սույն դեպքում իրենից ենթադրում է հանցանքի կատարում, մինչդեռ պրովոկացիոն ներգործությունը դեռևս չի ենթադրում հանցակազմի տարրերի առկայություն:

Պետք է նաև ընդգծել, որ մեղմացուցիչ հանգամանքի նախատեսումը շաղկապված կլինի նաև նախորդ պարագրաֆում ներկայացված եզրահանգման հետ՝ կապված որոշ դեպքերում հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվությունից ազատող հիմքի նախատեսման վերաբերյալ, այնքանով, որքանով որպես մեղմացուցիչ հանգամանք՝ պրովոկացիայի ազդեցությամբ ոտնձգություն իրականացրած անձի կողմից էական վնաս հասցնելու դեպքում այն կլինի արդարացի և համաչափ պատիժ նշանակելու գործիք:

**Եզրակացություն.**

Ամբողջացնելով սույն հոդվածում վկայակոչված իրավական դիրքորոշումները հնարավոր եղավ ցույց տալ հանցագործության պրովոկացիայի առանձնահատկությունները քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շրջանակներում:

Այդ շրջանակում ստացվեց նաև համեմատականներ անցկացնել հանցագործության պրովոկացիայի և քրեական իրավունքում հայտնի՝ նշված երևույթի հետ որոշակի զուգահեռներ ունեցող կատեգորիաների միջև:

Միաժամանակ, կատարված աշխատանքի շնորհիվ արձանագրվեց հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք նախատեսելու աննպատակահարմար լինելը, հանցագործության պրովոկացիայի հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու առանձին հանգամանքի, ինչպես նաև պատիժը մեղմացնող առանձին հանգամանք հանգամանքներ նախատեսելու անհրաժեշտությունը, **ուստի կարելի է փաստել, որ հնարավոր եղավ նաև հասնել սույն աշխատանքով ուսումնասիրության առարկա դարձված խնդիրների վերհանմանը և դրա նպատակների իրագործմանը:**

**Ի ապահովումը փաստագրված խնդիրների և դրանց լուծման, ինչպես նաև այդ մասով իրավունքի հետագա զարգացման նպաստմանը ներկայացվում են հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները.**

1. Իրավունքի տարբեր աղբյուրներում հանդիպող մոտեցումը, որտեղ հանցագործության պրովոկացիան համարվում է նաև քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանք, արդարացված չէ այն հիմնավորումներով, որ Եվրոպական դատարանի սահմանված չափանիշներն արդեն իսկ տարանջատել են հանցագործության պրովոկացիան և համապատասխան սուբյեկտների իրավաչափ գործելու պայմանները, իրավունքի այլ ճյուղերով կարգավորվող հարաբերություններում արտահայտվող պրովոկացիոն դրսևորումները քրեական իրավունքի դաշտից դուրս են և դրանցով նախատեսվում են այլ ներգործության ձևեր, հաստատապես հայտնի կամ ողջամտորեն ակնկալելի վերահաս վտանգի դեպքում պրովոկացիոն մեթոդներով այդ իրավիճակների խափանումը տեղավորվում է հիմնավորված ռիսկի հիմքով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շրջանակներում, իսկ պրովոկացիայի արդյունքում, ան-

մեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության դեպքում կիրառելի կլինեն ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով նախատեսված իրավադրույթները:

2. Առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի դիսպոզիցիալում, ինչպես անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության պարագայում, պրովոկացիան դիտարկել որպես անհաղթահարելի ուժի, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի առկայությունը բացառող պայման՝ հետևյալ սահմանմամբ.

*«Հոդված 35. Անհաղթահարելի ուժը, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը (...)*

4. *Անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից սույն հոդվածով նախատեսված հիմքով, եթե թույլ է տվել սույն հոդվածի 1-ին հիմքով նախատեսված որևէ իրավիճակի պրովոկացիա, այսինքն՝ օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակով ինքն է ստեղծել անհաղթահարելի ուժ կամ մեկ ուրիշին դրդել է իր նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք գործադրել՝ հետագայում իր կողմից օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելն անհաղթահարելի ուժի կամ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արդարացնելու համար»:*

3. Հանցագործության պրովոկացիայի ենթարկված անձի համար քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանք նախատեսելու առարկայազուրկ համարվելու և միաժամանակ, այդ ազդեցությամբ կատարված արարքի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ առաջարկվում է նախատեսել քրեական պատասխանատվությունից ազատվելու նոր հիմք՝ լրացնելով ՀՀ քրեական օրենսգրքում հետևյալ բովանդակությամբ 83<sup>1</sup>-րդ հոդվածով.

*«Հոդված 83<sup>1</sup>. Քրեական պատասխանատվությունից ազատելը՝ պայմանավորված հանցագործություն պրովոկացիայով.*

*«Պրովոկացիայի հետևանքով առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նա համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը»:*

4. Հաշվի առնելով պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարող անձի սուբյեկտային առանձնահատկությունները՝ պայմանավորված վերջինիս վտանգավորության, սեփական վարքագիծը տնօրինելու կարողության նվազման հետ, ինչպես նաև քննարկվող մեղմացուցիչ հանգամանքն անհնար համարելով մեկնաբանել ՀՀ գործող քրեական օրենսգրքի՝ քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող այլ հանգամանքների տիրույթում, արդարացված կլինի պրովոկացիայի՝ որպես առանձին մեղմացնող հանգամանքի նախատեսումը, որն իրավակիրառի կողմից պարտադիր հաշվի կառնվի տվյալ ազդեցության ներքո հանցանք կատարած անձի պատժի անհատականացման հարցերում, նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների պարագայում:

Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը լրացնել 13-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

*«Հոդված 70. Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքները.*

*(...)*

*13) հանցանքը պրովոկացիայի ազդեցությամբ կատարելը»:*

**Ամփոփագիր:** Հանցագործության պրովոկացիան քրեական իրավունքում իր ուրույն տեղն ունեցող երևույթ է, որի շուրջ ձևավորված հարուստ փորձի պայմաններում անգամ, տարբեր երկրների օրենսդրություններում, դատական նախադեպերում, դոկտրինաներում ունենում է տարբեր, հաճախ իրար հակասող դրսևորումներ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված՝ գործող ՀՀ քրեական օրենսգիրքն անմասն չմնաց նաև հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ դրույթներից, որի արդյունքում նոր հորիզոններ ստեղծվեցին ի նպաստ այդ մասով իրավունքի զարգացման և գործնական առումով թիրախային կիրառման շուրջ հետագա աշխատանքներ ծավալելու համար:

Հանցագործության պրովոկացիայի շուրջ ձևավորված տեսական և գործնական իրավական բազայի բաղկացուցիչ մաս է կազմում նաև քրեական պատասխանատվությունը բացառող, քրեական պատասխանատվությունից ազատող և քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքներում քննարկվող երևույթի արտացոլումները, որոնք հարաբերակցվում են քրեական իրավունքում հայտնի այլ կատեգորիաների հետ՝ արդիական դարձնելով ընտրված թեմայի ուսումնասիրությունը:

Այդ համատեքստում հանցագործության պրովոկացիայի իրավական կարգավորման արդյունավետացման նպատակով՝ միահյուսելով ներպետական և արտասահմանյան երկրների օրենսդրական կարգավորումներում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախադեպային իրավունքում արտահայտված դիրքորոշումներում և մի շարք տեսական դոկտրինաներում տեղ գտած իրավական թեզերը՝ անհրաժեշտություն է առաջանում վերհանել հնարավոր բացերը և դրանց լուծման տեսանկյունից հանդես գալ գիտականորեն հիմնավորված եզրակացություններով և առաջարկներով, ինչն էլ հենց հանդիսանում է ընտրված թեմայով հետապնդվող նպատակները:

Կատարված աշխատանքի արդյունքում վերը նշյալ նպատակների իրականացմամբ հաջողվել է ցույց տալ թեմայի շրջանակներում այն խնդիրները, որոնք առկա են տարբեր քրեաիրավական ասպեկտներում՝ միաժամանակ հանդես գալով համապատասխան փաստագրումներով և առկա խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներով, որոնց թվում նաև՝ օրենսդրական լրամշակումներով և լրացումներով՝ այդպիսով կատարված աշխատանքի արդյունքներին տեսական և գործնական առումներով հաղորդելով բարձր կարևորություն:

**Annotaion.** Provocation of a crime is a phenomenon that has its own place in criminal law, and even in the conditions of rich experience formed around it, in legislations, judicial precedents, doctrines of different countries, has various, often contradictory manifestations.

It is noteworthy that the current RA Criminal Code, adopted on May 5, 2021, did not leave out the provisions on the provocation of the crime, as a result of which new horizons were created for the development of the law in this regard and for carrying out further work on targeted application in practical terms.

An integral part of the theoretical and practical legal base formed around the provocation of a crime is also the reflections of the phenomenon discussed in the circumstances excluding criminal responsibility, exempting from criminal responsibility and mitigating criminal responsibility or punishment, which are correlated with other categories known in criminal law, making the research of the selected topic relevant.

In that context, in order to improve the legal regulation of crime provocation by intertwining the legal regulations of domestic and foreign countries, the positions expressed in the case law of the European Court of Human Rights, the Cassation court of RA and the legal theses in a number of theoretical doctrines, it is necessary to highlight the possible gaps and from the point of view of their solution. to come up with scientifically substantiated conclusions and proposals, which are precisely the goals of the chosen topic.

As a result of the work done, with the implementation of the above-mentioned goals, it was possible to show the problems that exist in various criminal law aspects within the framework of the topic, while coming up with appropriate documentation and proposals aimed at solving the existing problems, including legislative amendments and additions, thus adding to the results of the work done theoretically and conveying high importance in practical terms.

**Аннотация.** Провокация преступления – явление, занимающее особое место в уголовном праве. Даже в условиях богатого опыта, сформированного вокруг этого явления, в законодательствах, судебных прецедентах,

доктринах разных стран оно имеет различные, часто противоречащие друг другу проявления.

Примечательно то обстоятельство, что действующий Уголовный кодекс РА, принятый 5 мая 2021 г., не остался в стороне и от положений о провокации преступления, в результате чего были созданы новые горизонты для развития права в этой части и проведения дальнейших работ по его целевому применению на практике.

Неотъемлемой частью теоретико-практической правовой базы, сформированной вокруг провокации преступления, являются также отражения рассматриваемого явления в обстоятельствах, исключающих уголовную ответственность, освобождающих от уголовной ответственности и смягчающих уголовную ответственность или наказание, которые соотносятся с другими известными в уголовном праве категориями, что делает исследование выбранной темы актуальным.

В этом контексте, в целях совершенствования правового регулирования провокации преступлений путем переплетения правовых норм отечественных и зарубежных стран, позиций, выраженных в судебной практике Европейского суда по правам человека, Кассационного суда РА и правовых положений ряда теоретических учений, необходимо выделить возможные пробелы и с точки зрения их решения выработать научно обоснованные выводы и предложения, что и является целями выбранной темы.

В результате проделанной работы с реализацией вышеуказанных целей, нам удалось продемонстрировать проблемы, которые существуют в различных аспектах уголовного права в рамках темы, одновременно выработать соответствующую документацию и предложения, направленные на решение имеющихся проблем, включая законодательные изменения и дополнения, тем самым дополнив результаты проделанной работы в теоретическом плане и придав им высокую значимость в практическом плане.

**Բանալի բառեր** - հանցագործության պրովոկացիա, քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներ, քրեական պատասխանատվությունից ազատող հանգամանքներ, քրեական պատիժը կամ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ, դոկտրին, նախադեպ, քրեական օրենսգիրք, արտասահմանյան փորձ, աֆեկտ, ինստիտուտ

**Keywords:** *Provocation of crime, circumstances excluding criminal liability, circumstances exonerating criminal responsibility, circumstances mitigating criminal punishment or responsibility, doctrine, incident, criminal code, foreign experience, affect, institution,*

**Ключевые слова:** *провокация преступления, обстоятельства, исключающие уголовную ответственность, обстоятельства, освобождающие от уголовной ответственности, обстоятельства, смягчающие наказание и уголовную ответственность, доктрина, прецедент, уголовный кодекс, зарубежный опыт, аффект, институт,*

### Օգտագործված գրականության ցանկ

1. Իսպանիայի քրեական օրենսգիրքը՝ հետևյալ հղմամբ՝ [https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Criminal\\_Code\\_2016.pdf](https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Criminal_Code_2016.pdf) (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):
2. Լիտվայի քրեական օրենսգիրքը՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.derechos.org/intlaw/doc/ltu1.html> (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):
3. Սերբիայի քրեական օրենսգիրքը՝ հետևյալ հղմամբ՝ [https://www.mpravde.gov.rs/files/Criminal%20%20%20Code\\_2019.pdf](https://www.mpravde.gov.rs/files/Criminal%20%20%20Code_2019.pdf) (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):
4. Նյու Յորք նահանգի քրեական օրենքը՝ հետևյալ հղմամբ՝ <https://ypdcrime.com/penal.law/article35.php> (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):
5. ԱՄՆ Գերագույն Դատարանի թիվ No. 16–369 որոշումը՝ հետևյալ հղմամբ՝ [https://www.supremecourt.gov/opinions/16pdf/16-369\\_09m1.pdf](https://www.supremecourt.gov/opinions/16pdf/16-369_09m1.pdf) (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):

6. Մ. Մելիքյան «Հանցագործության պրովոկացիայի քրեաիրավական առանձնահատկությունները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում» գիտական հոդվածը, Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2022 7-9 (277-279), էջեր 54-61:

7. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Grba v. Croatia գործով 2017 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 47074/12:

8. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Constantin and Stoian v. Romania գործով 2009 թվականի սեպտեմբերի 29-ի վճիռը, գանգատներ թիվ 23782/06 և 46629/06:

9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Burak Hun v. Turkey, գործով 2009 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 17570/04:

10. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Sepil v. Turkey գործով 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 17711/07:

11. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ramanauskas v. Lithuania գործով 2008 թվականի փետրվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74420/01:

12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Burak Hun v. Turkey, գործով վճիռը, կետ 44,

13. Sepil v. Turkey գործով 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 17711/07:

14. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Milinienė v. Lithuania գործով 2008 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 74355/01:

15. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Teixeira de Castro v. Portugal գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 44/1997/828/1034:

16. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ramanauskas v. Lithuania գործով վճիռը:

17. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Tchokhonelidze v. Georgia գործով 2018 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 31536/07:

18. Комиссаров В.С., Яни П.С. Провокационно-подстрекательская деятельность в отношении должностного лица как обстоятельство, исключающее ответственность за получение взятки // Законность. 2010, էջեր 3-8:

19. Волкова И.А. Провокация преступления в контексте отдельных институтов Общей части УК РФ // Закон и право. 2020. № 1, էջեր 106-108:

20. Жарких И.А. Перспективы регламентации и развития института провокации преступления в системе норм уголовного права // Вопросы российской юстиции. 2021. № 12. էջեր 311-319:

21. Дорогин Д.А. «Провокация совершения преступления» как обстоятельство, исключающее уголовную ответственность // Актуальные проблемы уголовного права, криминологии и уголовно-исполнительного права : научные труды кафедры уголовного права. Вып. 7. М., 2017. էջեր 39-52:

22. Милюков С.Ф., Никуленко А.В. Провокация в борьбе с коррупцией: диалектическое противоречие и пути выхода из него // Актуальные проблемы экономики и права. 2016. № 4. էջեր 45-53:

23. Капинус О.С. Практика Европейского суда по правам человека по вопросу провокации преступления и ее уголовно-правовое значение // Законы России: опыт, анализ, практика. 2014. № 12, էջեր. 62-70:

24. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-151-Ն օրենքը:

25. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի հիմնավորումները՝ [www.parliament.am](http://www.parliament.am) կայքում:

26. Ashworth, A. (2022). "Principles of Criminal Law" (7th edition), Oxford University Press., Oxford, էջեր 100-120:

27. Duff, A., & Green, S., "The Philosophy of Criminal Law: Theory and Practice", Oxford University Press, Oxford, 2018, էջեր 180-205:

28. David Ormerod and Karl Laird, "Smith and Hogan's Criminal Law", 15th edition, Oxford University Press, էջեր 305-310:

29. Ashworth, A. (2022). "Principles of Criminal Law" (7th edition), Oxford University Press., Oxford, էջեր 100-120:

30. Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան, «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների եվ նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, 2022 թվական, էջեր 89-90:

31. Волженкин Б.В. Провокация или оперативный эксперимент? // Законность. 1996. № 6. էջեր 26-30, Хомич В.М. Оперативный эксперимент без провокации взятки // Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции. 2009. № 2, էջեր 297-317:

32. Борков В.Н. Провокация преступления: уголовно-правовая оценка действий провокатора и спровоцированного / В.Н. Борков // Законы России: опыт, анализ, практика. - 2019. - № 6, էջեր 68-74:

33. Օմանի քրեական օրենսգիրքը՝ հետևյալ հղմամբ՝ <http://www.mola.gov.om> (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):

34. Հիմաբավեի քրեական օրենսգիրքը հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/pdfid/4c45b64c2.pdf> (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):

35. Հարավային Սուդանի քրեական օրենսգիրքը հետևյալ հղմամբ՝ <https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/South-Sudan-Penal-Code-TIP-Articles.pdf> (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):

36. Duff, A., & Green, S. (2018). \*The Philosophy of Criminal Law: Theory and Practice\*. Oxford University Press. pp. 180-205. Oxford

37. Бранчель И.И., Провокация и инсценировка преступлений при осуществлении оперативно-розыскной деятельности, "Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции", 2011, էջեր 72-90:

38. Кугушева С.В. Провокация преступления: проблемы уголовно-правовой квалификации // Уголовное право. – 2005. – № 10. – էջեր. 25-26:

**Մելիքյան Մ.** - ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետի պաշտոնակատար, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, էլիասցե՝ [melikmelikyan1994@gmail.com](mailto:melikmelikyan1994@gmail.com):

Ներկայացվել է խմբագրություն 20.08.2024 թ., տրվել է գրախոսության 20.08.2024 թ., երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Թադևոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 18.11.2024 թ.:



<https://doi.org/10.59546/18290744-2024.7-9-49>

ԱՐՄԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ  
ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս

ARMAN BABAKHANYAN  
Assistant to the Judge of the Criminal Chamber of the RA Cassation Court,  
Lecturer at YSU Chair of Criminal Law

АРМАН БАБАХАНИЯН  
Помощник судьи Уголовной палаты Кассационного суда РА,  
преподаватель кафедры уголовного права ЕГУ

## ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### TRENDS IN THE SPREAD OF CRIMINAL SUBCULTURE IN THE REPUBLIC OF ARMENIA

### ТЕНДЕНЦИИ РАСПРОСТРАНЕНИЯ КРИМИНАЛЬНОЙ СУБКУЛЬТУРЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

#### Ներածություն

Քրեական ենթամշակույթը, ձևավորվելով բավականին վաղ անցյալում, շարունակում է գոյություն ունենալ մինչև օրս: Այնուամենայնիվ, ներկայում Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթի տարածվածության վերաբերյալ առկա են հակասական մոտեցումներ:

Սույն հոդվածում փորձ է կատարվել բացահայտել քրեական ենթամշակույթի տարածվածությունը հայաստանյան հասարակության տարբեր շերտերում, ինչպես նաև վեր հանել քրեական ենթամշակույթի գոյության և տարածվածության վերաբերյալ սոցիալ-իրավական հետազոտությունների քրեաիրավական նշանակությունը:

#### Հիմնական հետազոտություն

Քրեական ենթամշակույթը՝ որպես յուրահատուկ սոցիալական երևույթ, ձևավորվելով բավականին վաղ անցյալում, ունի բազմամյա պատմություն, որի ընթացքում այն, ենթարկվելով որոշակի փոփոխությունների, շարունակում է պահպանել իր գոյությունը մինչ օրս:

Կազմակերպված հանցավորությունն ընդհանրապես և քրեական ենթամշակույթի գոյությունը մասնավորապես, ներկայիս առաջադեմ մարդկության առջև ծառայած բարդագույն

խնդիրներից է<sup>1</sup>:

Այսպես կոչված «գողական աշխարհը» (վրացերեն՝ «ქურდული სამყარო» և ռուսերեն՝ «воровской мир») համարվում է ժամանակակից կազմակերպված հանցավոր կառույցի հիմքը ողջ հետխորհրդային տարածքում: Այս պրոֆեսիոնալ հանցավոր աշխարհն ունի իր ճանաչված առաջնորդները, մշակում է անդամագրման ծեսերը և վարքագծի կանոնները: Այն ունի հատկապես լավ կազմակերպված իշխանական կառուցվածք, իր (հանցավոր) անդամների, բայց երբեմն նաև հասարակության տարբեր հատվածների նկատմամբ ենթակայության և վերահսկողության խիստ համակարգ<sup>2</sup>:

Խորհրդային ժամանակաշրջանի «գողական աշխարհ» ինստիտուտի պատմությունը սկսվում է կայսերական Ռուսաստանից: Խորհրդային հանցավոր սինդիկատի ավանդական կառուցվածքը, սկսած 1917 թվականի հեղափոխության ժամանակներից, կառուցվել է հիերարխիայի և «Գողական օրենքին» (վրացերեն՝ «ქურდული კანონი» և ռուսերեն՝ «Воровской Закон» («գողական աշխարհի» անդամների վարքագիծը կարգավորող կանոնների հատուկ հավաքածու)) խստորեն ենթարկվելու վրա: Այդ հանցավոր կազմակերպությունների անդամներն այն ժամանակ բուռն հակակոմունիստ էին, և մեծ մասամբ նրանցից պահանջվում էր համեստ, ոչ նյութական կյանք վարել: Սակայն, խորհրդային դարաշրջանի զարգացմանը զուգընթաց սկսեցին ի հայտ գալ նոր տեսակի հանցագործներ և հանցավոր կառույցներ, որոնք իրականում մտահոգված էին միայն հարստություն կուտակելով և իշխանությամբ: Այս անձինք կոտրեցին «գողական աշխարհի» ավանդական տեսակետները և ձևավորեցին նոր բանդաներ՝ հիմնված զուտ նյութապաշտական շահերի վրա: Պնդվում է նաև, որ խորհրդային պետությունը նպաստել է հանցավոր աշխարհի ավանդական կառուցվածքի ոչնչացմանը, որն իր հերթին հանգեցրել է «օրենքով գողերի» առասպելական կարգավիճակ ստանալուն<sup>3</sup>:

ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ նրա փոխարեն առաջացան մի շարք պետություններ, քրեական մշակույթը չէր անհետանալու: Այն ձևափոխվեց ու սկսեց նոր դրսևորում և ինքնություն ստանալ նոր իրականության մեջ՝ որպես նյութական բարիքների, իշխանության հասնելու այլընտրանքային ճանապարհ: Նորանկախ Հայաստանում քրեական բարքերի ազդեցության մեծացումը տեղի ունեցավ ընդհանուր հետխորհրդային տիրույթում առկա սոցիալ-մշակութային, տնտեսական և քաղաքական, իրավական անեմիայի պայմաններում, երբ գործող համակարգերն արդեն իսկ փլուզված էին, իսկ նոր համակարգերը կա՛մ չէին ձևավորվել, կա՛մ դեռևս, գաղափարական առումով, բողբոջի նման նոր բացվելու փուլում էին: Այսպիսով, անոմիայի, իրավական և քաղաքական համակարգերի դեռևս չգծված սահմանների, մյուս կողմից՝ պետության կողմից հիմնական դաստիարակչական, գաղափարական գործառույթների վակուումի, կրթության մեջ բովանդակության և արժեքային քառսի պայմաններում գողականությունը ներխուժեց հանրային բոլոր հարաբերություններ՝ պետության մեջ ձևավորելով

<sup>1</sup> Տե՛ս *Քիշարյան Կ. Ա.*, Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործական մեկնաբանություններ), գիտ. խմբ.՝ **Առաքելյան Ս. Վ.**, Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 4, (հասանելի է <https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64f49C5IzEu.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

<sup>2</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ashlarba v. Georgia* գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճռի 22-րդ կետը, գանգատ թիվ 45554/08, (հասանելի է <https://hudoc.echr.coe.int/?i=001-145572> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, 22-րդ կետ: Քրեական ենթամշակույթի ձևավորման և զարգացման ընթացքի վերաբերյալ տե՛ս նաև *Հովակիմյան Գ.*, Քրեական բարքերի, լեզվի և վարքագծի ազդեցությունը սոցիալական հարաբերություններում բռնության դրսևորման վրա, Բռնության մշակույթը Հայաստանում, գլխ. խմբ.՝ *Տեր-Գաբրիելյան Գ.*, Եր., Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, էջեր 32-55:

ստվերային կառավարման համակարգ՝ իր մշակութային, այդ թվում՝ խոսքային, վարքային և ինստիտուցիոնալ արտահայտումներով<sup>4</sup>:

Ներկայում Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթը դեռևս չի զիջել իր դիրքերը և այն լայն տարածում ունի հասարակության տարբեր շերտերում, այս հանգամանքը փաստվել է թե՛ ներպետական, թե՛ միջազգային մակարդակներում:

Այսպես, հայրենական գիտության շրջանակում քրեական ենթամշակույթն ուսումնասիրվել է և քննարկման առարկա է դարձել բազմաթիվ գիտնականների կողմից:

Տ. Սիմոնյանի կողմից ՀՀ քրեակատարողական մի շարք հիմնարկներում կատարված հետազոտությունները, այդ մարմինների աշխատակիցների հետ ունեցած հարցազրույցները բացահայտել են մի պատկեր, որը լրջագույն կրիմինոգեն վտանգ է պարունակում երիտասարդների հանցավորության առումով: Այս հիմնարկների ներսում ադմինիստրացիան գրեթե անզոր է և կատարում է միայն հսկողության ու հիմնարկի արտաքին սահմանների պաշտպանության գործառույթ: Այնտեղ ներքին կյանքը կարգավորվում և ղեկավարվում է գողերի և հեղինակությունների կողմից, և հաճախ ուղղիչ հիմնարկի ադմինիստրացիան ներքին կարգ ու կանոնի պահպանման համար դիմում է վերջիններիս օգնությանը, ինչը հանգեցնում է կրիմինոգեն ծանր հետևանքների, քանզի բարձրանում և ամրապնդվում է այդ խմբային լիդերների հեղինակությունը<sup>5</sup>:

Ա. Առաքելյանի հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի բնակչության տարբեր խմբերի բազմաթիվ ներկայացուցիչների շրջանում բավականին տարածված է պատկերացումն այն մասին, որ կենսական շատ խնդիրների լուծման համար բռնության կիրառումը ոչ միայն ընդունելի է, այլ նույնիսկ անհրաժեշտ կամ անխուսափելի: Դրան զգալի չափով նպաստում է նաև հանցավոր («գողական») գաղափարախոսության և բարոյականության ազդեցության ուժեղացումը: Մասնավորապես, շատերը (հատկապես անչափահասները և երիտասարդները) ոգեշնչված են հանցավոր կյանքի ռոմանտիզմով, ինչը հաճախ և կանխորոշում է միջանձնային հարաբերություններում նրանց վարքագիծը<sup>6</sup>:

Ըստ Ա. Գաբուզյանի՝ հանցավորության մակարդակի վրա կարող է ազդեցություն ունենալ նաև այս կամ այն տարածաշրջանում քրեական հեղինակությունների առկայությունը, հատկապես այնպիսիք, որոնք ունեն հեղինակություն ոչ միայն տարածաշրջանային, այլև հանրապետական մասշտաբով: Այդպիսի անձանց առկայությունն ազդում է հանցավորության վրա մի քանի ուղիներով: Առաջին հերթին նրանք կարող են մեծաշնորհել հանցավոր գործունեությունը, որը կարող է նպաստել ընդհանուր քրեաիրավական հանցավորության որոշակի օբյեկտիվ նվազման, որովհետև հանցավորությունը, եթե կարելի է այդպես ասել, կգտնվի այդ անձի (անձանց) թողտվության սահմաններում: Երկրորդ հերթին, այդպիսի անձանց առկայությունը նպաստում է հանցավորության լատենտիզացիային, որովհետև իրավապահ մարմինները հաճախ գործում են իրենց գործունեության նկատմամբ այդ անձի ռեակցիան հաշվի առնելով, կամ էլ նրա հետ գտնվում են կոռուպցիոն կապերի մեջ: Այդ պատճառով, այդպիսի տարածաշրջաններում օրենքը կիրառելիս երկակի ստանդարտներն ավելի տարածված են, իսկ պատժի անխուսափելիության սկզբունքն ավելի հաճախ է խախտվում: Հետևաբար, հանցավորության՝ վիճակագրորեն գրանցվող, համեմատաբար ցածր մակարդակն այնպիսի տա-

<sup>4</sup> Տե՛ս Հովակիմյան Գ., նշված աշխ., էջեր 47, 55, 60:

<sup>5</sup> Տե՛ս Սիմոնյան Տ. Վ., Երիտասարդների հանցավորության կրիմինոլոգիական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի համար, Երևան, 2004, էջ 139:

<sup>6</sup> Տե՛ս Արակեյան Ս. Վ., Насильственная преступность в Республике Армения, дисс. на соиск. учен. степени доктора юрид. наук, Ереван, 2014, էջ 105:

րաձաշրջաններում, ինչպիսիք են Արմավիրը, Կոտայքը, Գեղարքունիքը կարող են լինել նաև վերը նշված պատճառներով հանցավորության լատենտիզացիայի արդյունք<sup>7</sup>:

Հայրենական գիտության շրջանակներում քրեական ենթամշակույթին իրենց աշխատություններում անդրադարձել են նաև Ռ. Հակոբյանը<sup>8</sup>, Հ. Խաչիկյանը<sup>9</sup>, Վ. Գալստյանը<sup>10</sup>, Ա. Ասատրյանը<sup>11</sup> և այլոք:

Այսպիսով, հարկ է փաստել, որ հայրենական գիտության մեջ բավականին մանրամասն ուսումնասիրված է քրեական ենթամշակույթի տարածվածությունը և դրա բացասական ազդեցությունն ինչպես քրեակատարողական հիմնարկներում, այնպես էլ դրանցից դուրս՝ հասարակության այլ շերտերի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթի առկայությունը տարբեր տարիներին արձանագրվել է նաև միջազգային մակարդակում՝ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (այսուհետ նաև՝ ԽԿԿ) կողմից: Այսպես՝ պատվիրակությունը 2010 թվականին կատարած իր այցի ժամանակ նկատել է, որ «Նուբարաշեն» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում առկա է անձնակազմի կողմից քրեակատարողական հիմնարկում պահվող՝ ընտրված թվով անձանց իրավասություններ պատվիրակելու ընդհանուր միտում, որոնք գտնվում են քրեակատարողական հիմնարկի ոչ պաշտոնական աստիճանակարգման գազաթամասում, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկում պահվող «առաջնորդին» (այսպես կոչված՝ «զոն նայողին»), և որոնց օգտագործում են՝ վերահսկելու համար քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում «առաջնորդին», իր իրավասությունն իրականացնելու համար, ակնհայտորեն տրվել էին որոշ արտոնություններ, ինչպես օրինակ՝ հաստատությունում համեմատաբար ազատ տեղաշարժվելու և ցանկացած բանտախուց մտնելու հնարավորություն: «Կոշ» քրեակատարողական հիմնարկում «առաջնորդը» պարզապես պատասխանատու էր քրեակատարողական հիմնարկում պահվողների շրջանում կարգուկանոն պահպանելու համար: Պարզվել է նաև, որ նրանք, ովքեր չէին ցանկացել կամ ի վիճակի չէին եղել լիարժեք պաշտպանություն ստանալու դիմաց «առաջնորդին» տրամադրել ֆինանսական կամ այլ միջոցներ, մեկուսացվել և հայտնվել էին ահաբեկման վտանգի տակ: Անձնակազմի այն անդամները, ում հետ զրուցել են պատվիրակության անդամները, նշել են, որ սահմանափակ թվով աշխատողներ ունենալու հանգամանքը նրանց այլընտրանքի հնարավորություն չէր տվել, քան «առաջնորդին» իրավասությունների զգալի մասը վերապահելը՝ քրեակատարողական հիմնարկում անվտանգությունն ապահովելու համար: Միևնույն ժամանակ, անձնակազմը խորապես համոզված էր, որ «կառավարման» այս տեսակը կենսունակ էր այնքան ժամանակ, քանի դեռ նրանք կարող էին ապահովել, որ «առաջնորդը» չկարողանա օգտագործել քրեակատարողական հիմնարկում

<sup>7</sup> Տե՛ս *Գաբույան Ա. Ա.*, Проблемы преступности в Республике Армения в переходный период, дисс. на соиск. учен. степени доктора юрид. наук, Ереван, 2008, էջ 120:

<sup>8</sup> Տե՛ս *Հակոբյան Ռ. Խ.*, Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեաբանական հիմնահարցերը, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի համար, Երևան, 1999, էջեր 27, 41, 100-104, 115-120, 193-196:

<sup>9</sup> Տե՛ս *Խաչիկյան Ա. Մ.*, Лишение свободы и актуальные проблемы его исполнения в Республике Армения, дисс. на соиск. учен. степени доктора юрид. наук, Ереван, 2008, էջեր 245-254:

<sup>10</sup> Տե՛ս *Գալստյան Վ. Մ.*, Կազմակերպված հանցավորության քրեաիրավական բնութագիրը և դրա դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման, Երևան, 2011, էջեր 18-20:

<sup>11</sup> Տե՛ս *Ասատրյան Ա. Է.*, Պենիտենցիար հանցավորությունը Հայաստանի Հանրապետությունում, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման, Երևան, 2016, էջեր 63-81:

պահվող անձանց մեծամասնության վրա ունեցած իրենց ազդեցությունն ի վնաս քրեակատարողական հիմնարկի վարչակազմի<sup>12</sup>:

2015 թվականի այցի ընթացքում կրկին նկատվել է ընդհանուր միտում առ այն, որ այցելած քրեակատարողական հիմնարկների ղեկավարությունը և անձնակազմը մասամբ պատվիրակում էին լիազորությունները որոշակի թվով դատապարտյալների, որոնք գտնվում էին բանտային ոչ պաշտոնական հիերարխիայի վերևում, այսպես կոչված «նայողներ», և օգտագործում էին նրանց՝ դատապարտյալների նկատմամբ հսկողության (կարգապահությունը պահպանելու) համար: Իրենց լիազորություններն իրականացնելու համար «նայողներին» ըստ երևույթին տրվել է որոշակի արտոնություններ, ինչպիսիք են հաստատություններում համեմատաբար ազատ տեղաշարժվելու և ցանկացած խուց մուտք գործելու հնարավորությունը<sup>13</sup>:

2019 թվականին կատարած այցի արդյունքում արձանագրվել է, որ դատապարտյալների միջև բռնությունը, ահաբեկումը և շորթումը խնդիր են մնացել այցելած քրեակատարողական հիմնարկների մեծ մասում, և դա ակնհայտորեն կապված էր ոչ ֆորմալ բանտային հիերարխիայի մշտական ազդեցության հետ<sup>14</sup>:

Քրեական ենթամշակույթի առկայությունն արձանագրվել է նաև ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի կողմից: Այսպես, Կոմիտեն նշել է, որ քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների միջև բռնության դեպքերը կարող են լինել քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի և ոչ ֆորմալ հիերարխիայի գոյության արդյունք, որը, չնայած վերջին տարիներին նվազմանը, կարծես թե դեռևս էական ազդեցություն ունի քրեակատարողական համակարգի վրա: Կոմիտեն շարունակել է մտահոգված լինել քրեակատարողական աշխատակիցների պակասով, ինչն ավելացնում է «հանցավոր առաջնորդներից» կախվածությունը՝ քրեակատարողական հիմնարկներում անվտանգությունն ապահովելու համար<sup>15</sup>:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթի առկայության փաստը և դրա դեմ պայքար մղելու անհրաժեշտությունը, ըստ էության, ընդունվում է նաև պետության կողմից:

Այսպես, Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի համաձայն՝ օրենքի առջև բոլորի հավասարության երաշխավորման, խտրականության դրսևորումների կանխման, ինչպես նաև հավասար իրավունքների իրագործման նպատակով Կառավարությունը շարունակելու է անզիջում պայքար մղել և անհանդուրժողականություն ցուցաբերել քրեական ենթամշակույթի նկատմամբ՝ բացառելով քրեակատարողական հիմնարկներում արտոնյալ-

<sup>12</sup> Տե՛ս Ձեկույց Հայաստանի կառավարությանը՝ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) 2010 թվականի մայիսի 10-21-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ, Ստրասբուրգ, 2010, 66-67-րդ կետերը, էջեր 53-54, (հասանելի է [https://www.gov.am/u\\_files/file/kron/CPT\\_arm\\_final.pdf](https://www.gov.am/u_files/file/kron/CPT_arm_final.pdf) հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

<sup>13</sup> Տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 5 to 15 October 2015, Ստրասբուրգ, 2016, 53-րդ կետը, էջ 33, (հասանելի է <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806bf46f> հղումով 04.10.2024թ. դրությամբ):

<sup>14</sup> Տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 2 to 12 December 2019, Ստրասբուրգ, 2021, էջ 4, (հասանելի է <https://rm.coe.int/1680a29ba1> հղումով 04.10.2024թ. դրությամբ):

<sup>15</sup> Տե՛ս Concluding observations on the fourth periodic report of Armenia of the Committee against Torture of the United Nations, 2017, 31-րդ կետ, էջեր 9-10, (հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/TreatyBodyExternal/Download.aspx?symbolno=CAT/C/ARM/CO/4&Lang=En](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Download.aspx?symbolno=CAT/C/ARM/CO/4&Lang=En) հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

ների առկայությունը<sup>16</sup>:

Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթի տարածվածության մասին վկայում է նաև դատական պրակտիկան: Այսպես, դատական պրակտիկայի ուսումնասիրությունից երևում է, որ նույնիսկ մինչև քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի նախատեսումը տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ քննվող քրեական գործերում առկա են բազմաթիվ տվյալներ, որոնք վկայում են քրեական ենթամշակույթի գոյության և ազդեցիկ բնույթ ունենալու մասին:

Այդպիսի տվյալներ, ի թիվս այլնի, առկա են Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ թիվ ԵԷԴ/0033/01/12 քրեական գործով 2012 թվականի հունիսի 25-ի դատավճռում, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ թիվ ԵԿԴ/0267/01/16 քրեական գործով 2017 թվականի հունիսի 16-ի դատավճռում, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ՇԴ/0070/01/17 քրեական գործով 2019 թվականի հունիսի 26-ի դատավճռում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԴ/0896/01/19 քրեական գործով 2021 թվականի սեպտեմբերի 15-ի դատավճռում, Վերաքննիչ քրեական դատարանի՝ թիվ ԿԴ2/0003/01/16 քրեական գործով 2019 թվականի մարտի 21-ի որոշման մեջ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ թիվ ԱՐԱԴ/0024/01/15 քրեական գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի որոշման մեջ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ թիվ ԵՇԴ/0088/01/17 քրեական գործով 2023 թվականի մայիսի 26-ի որոշման մեջ<sup>17</sup>:

Քրեական ենթամշակույթի գոյությունը և դրա բացասական հետևանքները տարբեր տարիների ընթացքում բազմիցս փաստվել է նաև Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ նաև՝ ՄԻՊ) կողմից: Այսպես՝ գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներում առավելապես տիրում է անգործություն: Ազատ ժամանակը լրացվում է կալանավորվածների ու դատապարտյալների կողմից կազմակերպվող խաղերով, որը միայն նպաստում է քրեակատարողական հիմնարկներում առկա «քրեական ենթամշակույթի» դրսևորումների և վերահսկողության ներքին կառուցակարգերի տարածմանը: Հետագայում հայտնվելով ազատության մեջ՝ այդ անձինք ոչ միայն պատրաստ չեն ինտեգրվելու հասարակությանը: Հակառակը՝ այդ անձինք իրենց հետ հասարակություն են բերում հիմնարկում ձեռքբերված և վերարտադրված «քրեական ենթամշակույթ», և, որպես կանոն, անմիջապես նոր հանցանք են գործում ու նորից վերադառնում քրեակատարողական հիմնարկ<sup>18</sup>:

2013 թվականի ընթացքում ՄԻՊ-ի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցի համաձայն՝ ուսումնասիրություններով արձանագրվել է ազատազրկվածների շրջանում որոշակի ենթամշակույթի առկայությունը, որի արդյունքում՝ ոչ ֆորմալ հիերարխիայի ամենաբարձր տեղում գտնվող ազատազրկվածների կողմից նվաստացնող վերաբերմունքի են արժանանում «խոցելի» ազա-

<sup>16</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի՝ ԱԺՈ-002-Ն որոշման 5.6-րդ բաժինը, ընդունվել է 2021 թվականի օգոստոսի 26-ին, ուժի մեջ է մտել 2021 թվականի սեպտեմբերի 5-ին, Միասնական կայք 2021.08.23-2021.09.05 Պաշտոնական հրապարակման օրը 26.08.2021:

<sup>17</sup> Տե՛ս [www.datalex.am](http://www.datalex.am) Դատական տեղեկատվական համակարգ (հասանելի է 04.10.2024թ. դրությամբ):

<sup>18</sup> Տե՛ս ՄԻՊ-ի զեկույցը՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ, Երևան, 2011, էջ 25, (հասանելի է <https://ombuds.am/images/files/68269b43c9a7c73665200e9f7bdc3ebfb.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

տազրկվածները<sup>19</sup>:

2015 թվականի ընթացքում ՄԻՊ-ի գործունեության, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման համաձայն՝ քրեական ենթամշակույթով առաջնորդվող ազատությունից զրկված անձինք առանձնագրույցների ընթացքում մշտապես նշել են, որ ցանկացած աշխատանք լինելու պարագայում չեն ներգրավվի այդ աշխատանքներում, քանի որ դա հարիր չէ իրենց: Խնդրահարույց է, որ այս երևույթը արձանագրվել է մի քանի տարի ի վեր և քրեակատարողական համակարգը որևէ միջոց չի ձեռնարկում այս ենթամշակույթը վերացնելու, դատապարտյալներին ուղղելու և վերաինտեգրելու ուղղությամբ: Արդյունքում, կալանավորված անձանց և դատապարտյալների շրջանում քրեական ենթամշակույթն ավելի է տարածվում, իսկ դատապարտյալներին ուղղելու հնարավորությունը՝ նվազում<sup>20</sup>:

ՄԻՊ-ի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցի համաձայն՝ հասարակությունից մեկուսացվելով ազատությունից զրկված անձանց շրջանակում ժամանակի ընթացքում ձևավորվում է արժեքների, համոզմունքների, սովորույթների և վարքագծի կանոնների համակարգ՝ ենթամշակույթ, որը տարածվում է ազատությունից զրկման վայր ընդունված անձանց վրա: Հետխորհրդային երկրներում լայն տարածում ստացած բանտային ենթամշակույթին բնորոշ են հանցավոր տարրեր, որոնք հիմք են հանդիսանում քրեական ենթակառուցվածքների ձևավորման և ամրապնդման համար: Այսպիսի ենթամշակույթի տարածումն իրենից բարձր հանրային վտանգավորություն է ներկայացնում ինչպես Քրեակատարողական հիմնարկներում, այնպես էլ արտաքին աշխարհում, ուստի դրա կապակցությամբ պետք է ձեռնարկել համապատասխան միջոցներ<sup>21</sup>:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգի համաձայն՝ քրեական ենթամշակույթը չի սահմանափակվում միայն քրեակատարողական հիմնարկներում տարածվելով, այն ծավալված է հասարակության առավել լայն շրջանակներում, ուստի այն պետք է արտացոլվի նաև հանցավորության դեմ պայքարի պետության քաղաքականության մեջ՝ ապահովելով արդյունավետ միջոցների կիրառում: Քրեական ենթամշակույթի արմատավորված և բազմատարր բնույթը պահանջում է, որպեսզի պետությունը դրա նկատմամբ որդեգրի հատուկ և բազմակողմանի քաղաքականություն: Այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով ենթամշակույթի արմատները, դրա ազդեցության տարածման ուղիները և հեռանկարները<sup>22</sup>:

<sup>19</sup> Տես ՄԻՊ-ի՝ 2013 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց, Երևան, 2014, էջ 353, (հասանելի է <https://www.ombuds.am/images/files/afe1e423a8f465a4fba32ccc27ef913a.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

<sup>20</sup> Տես ՄԻՊ-ի՝ 2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, Երևան, 2016, էջեր 357-358, (հասանելի է <https://ombuds.am/images/files/a42b07b145e69f9193cda108ef262d7c.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

<sup>21</sup> Տես ՄԻՊ-ի տարեկան զեկույցը՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ, Երևան, 2019, էջ 337, (հասանելի է <https://ombuds.am/images/files/159e14f47f029294110998e75a5433f.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

<sup>22</sup> Տես ՄԻՊ-ի արտահերթ հրապարակային զեկույցը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգը, Երևան, 2018, էջ 43, (հասանելի է <https://ombuds.am/images/files/2094e1a8f0bd3e90d09d07b8b65d2fd6.pdf> հղումով):

Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց շրջանակում քրեական ենթամշակույթի գոյության փաստն արձանագրվել է նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (այսուհետ նաև՝ Դիտորդների խումբ) կողմից:

Այսպես՝ Դիտորդների խմբի՝ 2020 թվականի գործունեության հաշվետվության համաձայն՝ քրեական ենթամշակույթը հատուկ է հետսովետական երկրներին, ինչպիսին է Հայաստանը: Այն իրենից ենթադրում է ՔԿՀ-ում պահվող անձանց աստիճանակարգություն, երբ ամենաբարձր աստիճանին գտնվող անձինք վայելում են ազատագրված մյուս անձանց և ՔԿՀ-ի աշխատակիցների հարգանքը, իսկ ամենաստորին աստիճանին գտնվողներն արժանանում են նվաստացուցիչ վերաբերմունքի: Հայաստանում գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներում առկա է բանտարկյալների բաժանում ոչ ֆորմալ հիերարխիկ խմբերի<sup>23</sup>:

Քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի գոյության փաստն արձանագրվել է նաև այլ հետազոտողների աշխատություններում, որոնց համաձայն՝

- Քրեական բարքերի և բռնության խտացված ազդեցությունն առկա է փակ միջավայրերում, որտեղ և տեղի է ունենում դրանց անարգել վերարտադրությունը, որն ազդում է «դրսի» հասարակության վրա: Այս առումով առավել խոցելի են փակ հաստատությունները, մասնավորապես, ազատագրկման վայրերը. ենթամշակույթ կրողները, իշխանության կողմից խրախուսվող և հաստատված բարքերին հենվելով (այդ բարքերն արդեն նույնիսկ չի կարելի անվանել «ոչ ֆորմալ», քանի որ դրանք կազմում են այդ հաստատությունների ամենօրյա գործունեության հիմքը և նույնիսկ նշվում են պաշտոնական դիսկուրսում որպես քրեակատարողական հաստատությունների մշակույթ), իշխանության և տնտեսական միջոցների տիրապետման նպատակով տարածում են իրենց բարքերը յուրաքանչյուր նորեկի ընդգրկմամբ<sup>24</sup>:

- Որպես կանոն՝ վարչակազմը միջանձնային հարաբերություններին չի միջամտում, այն քիչ ազդեցություն ունի միջանձնային հարաբերությունների վրա, նման հարցերը հիմնականում կարգավորում են «քրեական» հեղինակությունները<sup>25</sup>:

- ներկայում Հայաստանում գործում է գողական օրենք (պռագոն), որը տարբերվում է խորհրդային նախատիպից թե՛ էթիկական սկզբունքներով, թե՛ հիերարխիայի կառուցվածքով, թե՛ դրա աջակցության և բանտի վարչակազմի հետ փոխհարաբերությունների առումով<sup>26</sup>:

Հարկ է նշել, որ քրեական ենթամշակույթը, բացի քրեակատարողական հիմնարկներից, հանդիպում է նաև հասարակության այլ շրջանակում ևս, ինչի մասին են վկայում տարբեր աղբյուրներում առկա տվյալները:

Այսպես, Զինված ուժերում առկա քրեական ենթամշակույթին անդրադարձել է ՄԻՊ-ը,

---

04.10.2024 թ. դրությամբ):

<sup>23</sup> Տե՛ս Դիտորդների խմբի՝ 2020 թվականի գործունեության հաշվետվություն /ամենամյա/, Հայաստան, 2021, էջեր 80, 87 (հասանելի է <https://prisoninitiatives.am/reports/18277/> հղումով 04.10.2024թ. դրությամբ):

<sup>24</sup> Տե՛ս Հովակիմյան Գ., նշված աշխ., էջեր 83-84:

<sup>25</sup> Տե՛ս Իշխանյան Ա., Ռևազյան Ռ., Ազատագրկում, թե՛ տառապանք, Կյանքը քրեակատարողական հիմնարկներում, զեկույց, «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» ԻՀԿ, Երևան, 2013, էջ 39, (հասանելի է <http://armhels.com/wp-content/uploads/2013/12/zekuyc-2014Arm-NN.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

<sup>26</sup> Տե՛ս Իսկանդարյան Ն. և այլ համահեղինակներ, Ոչ ֆորմալ հարաբերությունները Հայաստանի ազատագրկման վայրերում. Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի օրինակով, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ, 2017, էջ 8, (հասանելի է [http://www.csi.am/sites/default/files/library/report\\_prison\\_subculture%20Arm.pdf](http://www.csi.am/sites/default/files/library/report_prison_subculture%20Arm.pdf) հղումով 04.10.2024 թ. դրությամբ):



համաձայն որի՝ դեռևս առկա է այսպես կոչված «դեդոլվձինա» երևույթը, որը բերում է «հին» և «նոր» ծառայողների միջև անթույլատրելի խտրականության, նաև անմարդկային և հանցավոր սովորույթների արմատավորման<sup>27</sup>:

Մեկ այլ աշխատության համաձայն՝ բանակում քրեական վարքի և բռնության դրսևորումները կարող են մեծապես պայմանավորված լինել հասարակության որոշ հատվածների դավանած արժեքներով, մասնավորապես հասարակությունում առկա քրեական բնույթի կարծրատիպերով և տաբուներով: Ներանձնային հարաբերությունների կարգավորման մեխանիզմներում և ինստիտուտներում առկա են բացեր, որոնք ինքնաբերաբար լրացվում են ոչ ֆորմալ մեխանիզմներով և ինստիտուտներով: Այդպիսի ինստիտուտների և մեխանիզմների շարքին են դասվում քրեական ենթամշակույթից բխող ներանձնային հարաբերությունների կարգավորման մոդելները<sup>28</sup>:

Քրեական ենթամշակույթը բացասական ազդեցություն է թողնում նաև անչափահասների վրա, ինչին անդրադարձել են տարբեր հեղինակներ:

Այսպես՝ ըստ Ա. Գաբուզյանի՝ ռեցիդիվիստների վերաբերյալ ուսումնասիրությունները, որոնցից շատերը հանդիսանում են քրեական ենթամշակույթի ներկայացուցիչներ, ցույց են տվել, որ նրանցից գրեթե 80 %-ն ունեցել են առաջին շփումները քրեական ենթամշակույթի ներկայացուցիչների հետ հենց անչափահաս տարիքում, իսկ նրանց սոցիալական միջավայրը բնութագրվում էր որպես ծայրահեղ անբարենպաստ. աղքատ ընտանիք, բռնության տարածում, ալկոհոլիզմ, նարկոտիզմ, ծնողների ցածր կրթական մակարդակ, ծնողներից մեկի բացակայություն և այլն<sup>29</sup>:

Ա. Մարգարյանի կարծիքով՝ երեխաների մի մասի վրա իր անմիջական ազդեցությունն ունի նաև «գողական աշխարհի ռոմանտիզմով» հետաքրքրվելը, դրա լույսի ներքո երևույթները «ճիշտ» կամ «սխալ» դիտարկելը, «գողական աշխարհի օրենքներով» կենսակերպ վարելու, «լավ տղա», «ճիշտ տղա» կարգավիճակ ձեռք բերելու ձգտումը, ինչը ենթադրում է իրավապահ մարմիններին տեղեկատվություն չտալ, նրանց հետ չհամագործակցել<sup>30</sup>:

Այս առումով հատկանշական է, որ 2019 թվականին ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ կատարած այցելությունների ընթացքում Դիտորդների խմբի անդամները անչափահաս կալանավորված անձանց հետ զրույցից հետո եզրահանգել են, որ հիմնարկում գտնվող բոլոր անչափահասները հակում ունեն հարելու քրեական ենթամշակույթին, և իրենց արարքները որոշ մասամբ նաև պայմանավորված էին այդ ենթամշակույթին առնչվելու ցանկությամբ (անչափահասներից մեկը նշել է, որ մի անգամ գողություն է կատարել, ինքնակամ գնացել է ոստիկանություն և խնդրել, որ իրեն տանեն բանտ, որպեսզի «արագ հայտնվի գաղութում»)<sup>31</sup>:

Ուշադրության է արժանի նաև դպրոցականների շրջանում բռնության վրա քրեական են-

<sup>27</sup> Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների առաջին պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին 2005 թվականի տարեկան զեկույց, Երևան, 2006, էջ 92, (հասանելի է <https://www.ombuds.am/images/files/3a40ddeca72b5ef727f2567b257cbdbd.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

<sup>28</sup> Տե՛ս Պեպրոսյան Դ., Ավագյան Յու., ՀՀ զինված ուժերում առկա քրեական բարքերի և վարքային մոդելների վերլուծություն, Բռնության մշակույթը Հայաստանում, գլխ. խմբ.՝ Տեր-Գաբրիելյան Գ., Եր., Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, էջեր 150-151, 154:

<sup>29</sup> Տե՛ս Գաբուզյան Ա.Ա., նշված աշխ., էջեր 97-98:

<sup>30</sup> Տե՛ս Մարգարյան Ա. Ռ., Անչափահասների հանցավորության կրիմինալոգիական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոս. իրավ. գիտ. դոկտորի գիտ. աստիճանի հայցման համար, Երևան, 2017, էջ 217:

<sup>31</sup> Տե՛ս Դիտորդների խմբի՝ 2019 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն, Հայաստան, 2020, էջ 37, (հասանելի է <https://prisoninitiatives.am/reports/14072/> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

թամշակույթի ազդեցությունը հիմնավորող, ստորև ներկայացված հետազոտությունը:

Այսպես, 2019 թվականի օգոստոս-հոկտեմբեր ամիսներին իրականացված հետազոտության համաձայն՝ դպրոցական բռնության հիմքերը գրեթե լիովին համընկնում են քրեական ենթամշակույթի բարքերին: Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս նկատել, որ դպրոցական բռնությունը դիտարկելի է գողական կամ քրեական ենթամշակույթի մոդելի համանմանությամբ, երբեմն՝ նույնիսկ դրա ամենանուրբ դրսևորումներով: Դպրոցական բռնությունը, առնվազն հասկացությունների մակարդակում, կրկնօրինակում է գողական ենթամշակույթը: Բնականաբար, գողական տերմինաբանությունը չի առաջանում դպրոցի ներսում, այլ ձևավորվում է տարբեր աշակերտների կենսափորձերի համադրությունից՝ բակային, ու գուցե, ընտանիքից եկող փորձառությունը տեղափոխելով դպրոց<sup>32</sup>:

Վերոգրյալի հիման վրա՝ հարկ է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթը տարածում ունի հասարակության տարբեր շերտերում: Նման պայմաններում, չենք կարող համաձայնվել այն տեսակետի հետ, որ քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերը նախատեսող «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենք<sup>33</sup> ընդունելով՝ օրենսդիրը կարգավորել է այնպիսի հարաբերություններ, որոնք տարածված չեն մեր հասարակությունում, բայց կարող են ունենալ եզակի բացասական դրսևորումներ և վերաբերում են անձանց նեղ շրջանակում ձևավորվող հարաբերություններին<sup>34</sup>:

Այսպիսով, հայաստանյան հասարակության վրա քրեական ենթամշակույթի ազդեցությունը, դրա դրսևորումների բազմազանությունը և տարածվածությունը վկայում են քրեական ենթամշակույթի դրսևորումների վտանգավորության բարձր աստիճանի մասին: Նման պայմաններում, առանց քրեաիրավական գործիքակազմի, բացառապես իրավական այլ միջոցներով (օրինակ՝ վարչական իրավունքի շրջանակում վարչական տույժերի կիրառմամբ, քաղաքացիական իրավունքի շրջանակում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմամբ, քրեակատարողական իրավունքի շրջանակում տույժի միջոցների կիրառմամբ) քննարկվող ենթամշակույթի դեմ պայքար մղելը, կարծում ենք, անարդյունավետ է:

### **Եզրակացություն**

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք հանգել հետևության, որ՝

- Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթը՝ որպես սոցիալական երևույթ, ունի բազմամյա պատմություն, որի ընթացքում այն, ենթարկվելով որոշակի փոփոխությունների, շարունակում է պահպանել իր գոյությունը և դեռևս չի զիջում իր դիրքերը:

<sup>32</sup> Տե՛ս *Սմբարյան Հ.*, Բռնության առաջացման պատճառները և կանխարգելման մեխանիզմները ՀՀ միջնակարգ կրթության ոլորտում, Բռնության մշակույթը Հայաստանում, գլխ. խմբ.՝ *Տեր-Գաբրիելյան Գ.*, Եր., Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, էջեր 91-92, 106, 116:

<sup>33</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը, ընդունվել է 2020 թվականի հունվարի 22-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի փետրվարի 22-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2020.02.21/13(1568) Հոդ.167:

<sup>34</sup> Տե՛ս Հանրապետության նախագահը ստորագրել է ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքների փաթեթը, 2020 թվականի փետրվարի 18, (հասանելի է <https://www.president.am/hy/signed-laws/item/2020/02/18/President-Armen-Sarkissian-signed-law/> հղումով 04.10.2024թ. դրությամբ):

- Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթը տարածում ունի հասարակության տարբեր շերտերում: Քրեական ենթամշակույթը, թեև, առավելապես տարածված է քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց շրջանում, սակայն դրա ազդեցությունը սահմանափակված չէ միայն վերոնշյալ սուբյեկտների շրջանակով: Վերջիններս նպաստում են քրեակատարողական հիմնարկներում տիրող քրեական ենթամշակույթի տարածմանը, ինչի արդյունքում այն իր տարածումն է գտել նաև հասարակության տարբեր շերտերում, այդ թվում նաև՝ անչափահասների շրջանում, Հայաստանի Հանրապետության Չինված ուժերում:

Վերոգրյալ հետևությունների պայմաններում չենք կարող համաձայնվել այն տեսակետի հետ, որ քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերը նախատեսող «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունելով՝ օրենսդիրը կարգավորել է այնպիսի հարաբերություններ, որոնք տարածված չեն մեր հասարակությունում, բայց կարող են ունենալ եզակի բացասական դրսևորումներ և վերաբերում են անձանց նեղ շրջանակում ձևավորվող հարաբերություններին:

Հարկ ենք համարում նշել նաև, որ հայաստանյան հասարակության շրջանում քրեական ենթամշակույթի գոյության և տարածվածության մասին վերը մեջբերված սոցիալ-իրավական հետազոտությունները և մեր կողմից կատարված հետևություններն ունեն քրեաիրավական կարևոր նշանակություն: Այսպես, դրանցով հաստատվում է հայաստանյան հասարակության վրա քրեական ենթամշակույթի ազդեցությունը, որպիսի հանգամանքը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) հաշվի է առնում քրեական ենթամշակույթի դեմ առավել արդյունավետ պայքար մղելու համար օրենսդրական (այդ թվում նաև՝ քրեաիրավական) բազա ստեղծելու վերաբերյալ պետության որոշման հիմնավորվածությունը գնահատելիս<sup>35</sup>: Այդպիսի օրենսդրական բազա ստեղծելու քայլերից մեկն էլ քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեականացումն է:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ հայաստանյան հասարակության վրա քրեական ենթամշակույթի ազդեցությունը, դրա դրսևորումների բազմազանությունը և տարածվածությունը վկայում են քրեական ենթամշակույթի դրսևորումների վտանգավորության բարձր աստիճանի մասին: Նման պայմաններում, առանց քրեաիրավական գործիքակազմի, բացառապես իրավական այլ միջոցներով (օրինակ՝ վարչական իրավունքի շրջանակում վարչական տույժերի կիրառմամբ, քաղաքացիական իրավունքի շրջանակում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմամբ, քրեակատարողական իրավունքի շրջանակում տույժի միջոցների կիրառմամբ) քննարկվող ենթամշակույթի դեմ պայքար մղելը, կարծում ենք, անարդյունավետ է: Հետևաբար, քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ իրավական պայքար մղելու կարևոր գրավական քրեաիրավական գործիքակազմը, որի լրամշակմանը և կատարելագործմանը միտված՝ հիրավի մեծ ջանքեր պետք է գործադրվեն:

**Ամփոփագիր:** Հոդվածը նվիրված է քրեական ենթամշակույթի՝ որպես յուրահատուկ սոցիալական երևույթի տարածման միտումներին Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթը՝ որպես սոցիալական երևույթ, ունի բազմամյա պատմություն, որի ընթացքում, ենթարկվելով որոշակի փոփոխությունների, այն շարունակում է պահպանել իր գոյությունը և դեռևս չի զիջում իր դիրքերը: Ուսումնա-

<sup>35</sup> Տե՛ս ՄԻԵԴ-ի՝ Ashlarba v. Georgia գործով նշված վճռի 36-րդ կետը:

սիրելիվ Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթի գոյության վերաբերյալ ներպետական և միջազգային տարբեր սոցիալ-իրավական հետազոտություններ՝ հանգել ենք հետևության, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթը տարածում ունի հասարակության տարբեր շերտերում, այդ թվում նաև՝ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց շրջանում, անչափահասների շրջանում, Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերում:

Արդյունքում, գտել ենք, որ Հայաստանի Հանրապետության հասարակության վրա քրեական ենթամշակույթի ազդեցությունը, դրա դրսևորումների բազմազանությունը և տարածվածությունը վկայում են քրեական ենթամշակույթի դրսևորումների վտանգավորության բարձր աստիճանի մասին: Նման պայմաններում, առանց քրեաիրավական գործիքակազմի, բացառապես իրավական այլ միջոցներով (օրինակ՝ վարչական իրավունքի շրջանակում վարչական տույժերի կիրառմամբ, քաղաքացիական իրավունքի շրջանակում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմամբ, քրեակատարողական իրավունքի շրջանակում տույժի միջոցների կիրառմամբ) քննարկվող ենթամշակույթի դեմ պայքար մղելը, կարծում ենք, անարդյունավետ կլինի: Հետևաբար, քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ իրավական պայքար մղելու կարևոր գրավական քրեաիրավական գործիքակազմն է:

**Annotation.** The article is devoted to the tendencies of spreading criminal subculture as a unique social phenomenon in the Republic of Armenia. Criminal subculture as a social phenomenon in the Republic of Armenia has a long history, during which, having undergone certain changes, it continues to exist and still does not give up its position. Having studied various domestic and international socio-legal studies on the existence of criminal subculture in the Republic of Armenia, we came to the conclusion that criminal subculture in the Republic of Armenia is widespread in various strata of society, including among persons deprived of liberty in penitentiary institutions, among minors, in the Armed Forces of the Republic of Armenia.

As a result, we have found that the influence of criminal subculture on the society of the Republic of Armenia, the diversity and prevalence of its manifestations testify to the high degree of danger of manifestations of criminal subculture. In such conditions, without criminal law instruments, we think it would not be effective to fight the discussed subculture exclusively by other legal means (for example, by applying administrative penalties within the framework of administrative law, confiscation of property of illegal origin within the framework of civil law, use of penalties within the framework of law enforcement rights). Therefore, criminal law tools are an important guarantee of an effective legal fight against criminal subculture.

**Аннотация.** Статья посвящена тенденциям распространения криминальной субкультуры как уникального социального явления в Республике Армения. В Республике Армения криминальная субкультура как социальное явление имеет давнюю историю, в течение которой, претерпев определенные изменения, она продолжает сохранять свое существование и до сих пор не сдает своих позиций. Изучив различные отечественные и международные социально-правовые исследования о существовании криминальной субкультуры в Республике Армения, мы пришли к выводу, что криминальная субкультура в Республике Армения широко распространена в различных слоях общества, в том числе среди лиц, лишенных свободы в пенитенциарных учреждениях, среди несовершеннолетних, в Вооруженных Силах Республики Армения.

В результате исследования мы установили, что влияние криминальной субкультуры на общество Республики Армения, разнообразие и распространенность ее проявлений свидетельствуют о высокой степени опасности криминальной субкультуры. В таких условиях, без уголовно-правовых инструментов, бороться с анализируемой субкультурой исключительно иными правовыми средствами (например, путем применения административных наказаний в рамках административного права, конфискации имущества незаконного происхождения в рамках гражданского права, использования мер взыскания в рамках уголовно-исполнительного права), полагаем, будет неэффективным. Поэтому уголовно-правовой инструментарий является важной гарантией эффективной правовой борьбы с криминальной субкультурой.

**Բանալի բաներ** – քրեական ենթամշակույթ, գողական աշխարհ, գողական օրենք, օրենքով գող:

**Keywords:** criminal subculture, thieves' world, thieves' code, thief in law.

**Ключевые слова:** криминальная субкультура, воровской мир, воровской закон, вор в законе.

### Օգտագործված գրականության ցանկ

1. Բիշարյան Կ. Ա., Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտազործական մեկնաբանություններ), գիտ. խմբ.՝ Առաքելյան Ս.Վ., Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, 46 էջ, (հասանելի է <https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64fq9C5IzEu.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):
2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ashlarba v. Georgia գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճիռ, գանգատ թիվ 45554/08, (հասանելի է <https://hudoc.echr.coe.int/?i=001-145572> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):
3. Հովակիմյան Գ., Քրեական բարքերի, լեզվի և վարքագծի ազդեցությունը սոցիալական հարաբերություններում բռնության դրսևորման վրա, Բռնության մշակույթը Հայաստանում, գլխ. խմբ.՝ Տեր-Գաբրիելյան Գ., Եր., Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, էջեր 27-90:
4. Սիմոնյան Ս. Վ., Երիտասարդների հանցավորության կրիմինոլոգիական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի համար, Երևան, 2004, 194 էջ:
5. Аракелян С. В., Насильственная преступность в Республике Армения, дисс. на соиск. учен. степени доктора юрид. наук, Ереван, 2014, 307 էջ:
6. Габузян А. А., Проблемы преступности в Республике Армения в переходный период, дисс. на соиск. учен. степени доктора юрид. наук, Ереван, 2008, 303 էջ:
7. Հակոբյան Ռ.Խ., Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեաբանական հիմնահարցերը, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի համար, Երևան, 1999, 197 էջ:
8. Хачикян А. М., Лишение свободы и актуальные проблемы его исполнения в Республике Армения, дисс. на соиск. учен. степени доктора юрид. наук, Ереван, 2008, 354 էջ:
9. Գալստյան Վ. Մ., Կազմակերպված հանցավորության քրեաիրավական բնութագիրը և դրա դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման, Երևան, 2011, 163 էջ:
10. Ասատրյան Ա. Է., Պենիտենցիար հանցավորությունը Հայաստանի Հանրապետությունում, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման, Երևան, 2016, 123 էջ:
11. Ջեկոյց Հայաստանի կառավարությանը՝ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) 2010 թվականի մայիսի 10-21-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ, Ստրասբուրգ, 2010, 208 էջ, (հասանելի է [https://www.gov.am/u\\_files/file/kron/CPT\\_arm\\_final.pdf](https://www.gov.am/u_files/file/kron/CPT_arm_final.pdf) հղումով 04.10.2024թ. դրությամբ):
12. Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 5 to 15 October 2015, Ստրասբուրգ, 2016, 72 էջ, (հասանելի է <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806bf46f> հղումով 04.10.2024թ. դրությամբ):
13. Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 2 to 12 December 2019, Ստրասբուրգ, 2021, 60 էջ, (հասանելի է <https://rm.coe.int/1680a29ba1> հղումով 04.10.2024թ. դրությամբ):
14. Concluding observations on the fourth periodic report of Armenia of the Committee against Torture of the United Nations, 2017, 14 էջ, (հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/TreatyBodyExternal/Download.aspx?symbolno=CAT/C/ARM/CO/4&Lang=En](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Download.aspx?symbolno=CAT/C/ARM/CO/4&Lang=En) հղումով 04.10.2024թ. դրությամբ):

15. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի՝ ԱԺՈ-002-Ն որոշում, ընդունվել է 2021 թվականի օգոստոսի 26-ին, ուժի մեջ է մտել 2021 թվականի սեպտեմբերի 5-ին, Միասնական կայք 2021.08.23-2021.09.05 Պաշտոնական հրապարակման օրը 26.08.2021:

16. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ, Երևան, 2011, 40 էջ, (հասանելի է <https://ombuds.am/images/files/68269b43c9a7c7365200e9f7bdc3ebfb.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

17. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ 2013 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց, Երևան, 2014, 443 էջ, (հասանելի է <https://www.ombuds.am/images/files/afe1e423a8f465a4fba32ccc27ef913a.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

18. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ 2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, Երևան, 2016, 455 էջ, (հասանելի է <https://ombuds.am/images/files/a42b07b145e69f9193cda108ef262d7c.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

19. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցը՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ, Երևան, 2019, 379 էջ, (հասանելի է <https://ombuds.am/images/files/159e14f47f7029294110998e75a5433f.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

20. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգը, Երևան, 2018, 43 էջ, (հասանելի է <https://ombuds.am/images/files/2094e1a8f0bd3e90d09d07b8b65d2fd6.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

21. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի՝ 2020 թվականի գործունեության հաշվետվություն /ամենամյա/, Հայաստան, 2021, 165 էջ, (հասանելի է <https://prisoninitiatives.am/reports/18277/> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

22. Իշխանյան Ա., Ռևազյան Ռ., Ազատագրվում, թե՞ տառապանք, Կյանքը քրեակատարողական հիմնարկներում, զեկույց, «Հայաստանի Հեյմլենդ կոմիտե» ԻՀԿ, Երևան, 2013, 60 էջ, (հասանելի է <http://armhels.com/wp-content/uploads/2013/12/zekuyc-2014Arm-NN.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

23. Իսկանդարյան Ն. և այլ համահեղինակներ, Ոչ ֆորմալ հարաբերությունները Հայաստանի ազատագրված վայրերում. Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի օրինակով, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ, 2017, 18 էջ, (հասանելի է [http://www.csi.am/sites/default/files/library/report\\_prison\\_subculture%20Arm.pdf](http://www.csi.am/sites/default/files/library/report_prison_subculture%20Arm.pdf) հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

24. ՀՀ մարդու իրավունքների առաջին պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին 2005 թվականի տարեկան զեկույց, Երևան, 2006, 288 էջ, (հասանելի է <https://www.ombuds.am/images/files/3a40ddec72b5ef727f2567b257cbdbd.pdf> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

25. Պետրոսյան Դ., Ավագյան Յու., ՀՀ զինված ուժերում առկա քրեական բարքերի և վարքային մոդելների վերլուծություն, Բռնության մշակույթը Հայաստանում, գլխ. խմբ.՝ Տեր-Գաբրիելյան Գ., Եր., Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, էջեր 145-213:

26. Մարգարյան Ա.Ռ. Անչափահասների հանցավորության կրիմինալոգիական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոս. իրավ. գիտ. դոկտորի գիտ. աստիճանի հայցման համար, Երևան, 2017, 275 էջ:

27. ՀՀ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրակա-

նացնող հասարակական դիտորդների խմբի՝ 2019 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն, Հայաստան, 2020, 120 էջ, (հասանելի է <https://prisoninitiatives.am/reports/14072/> հղումով 04.10.2024 թ. դրությամբ):

28. Սմբատյան Հ. Բռնության առաջացման պատճառները և կանխարգելման մեխանիզմները ՀՀ միջնակարգ կրթության ոլորտում, Բռնության մշակույթը Հայաստանում, գլխ. խմբ.՝ Տեր-Գաբրիելյան Գ., Եր., Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, էջեր 91-143:

29. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 2020 թվականի հունվարի 22-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի փետրվարի 22-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2020.02.21/13(1568) Հոդ.167:

30. Հանրապետության նախագահը ստորագրել է ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքների փաթեթը, 2020 թվականի փետրվարի 18, (հասանելի է <https://www.president.am/hy/signed-laws/item/2020/02/18/President-Armen-Sarkissian-signed-law/> հղումով 04.10.2024թ. դրությամբ):

**Բաբախանյան Ա.** - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, էլ. հասցե՝ arman.babakhanyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 07.10.2024 թ., տրվել է գրախոսության 07.10.2024 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Տ. Սիմոնյանի կողմից, ընդունվել է տպագրության 18.11.2024 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2024.7-9-64>

**ԱԴԵԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Իրավաբանական գիտությունների թեկնածու,  
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և  
քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և  
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս  
ՀՐԱՅՐ ԱԴԱՎԵԼՅԱՆ*

*Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի  
ինստիտուտի իրավագիտության ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող*

**ADELINA SARGSYAN**

*PhD in Law,  
Lecturer at the Department of Criminal Law and  
Criminal Procedure Law Institute of Law and Politics of the  
Russian-Armenian University*

**HRAYR AGHAVELYAN**

*4<sup>th</sup> year student at the Institute of Law of the Faculty  
of Law of the Russian-Armenian University*

**АДЕЛИНА САРГСЯН**

*Кандидат юридических наук,  
преподаватель кафедры уголовного права и  
уголовно-процессуального права  
Института права и политики Российско-Армянского университета*

**ГРАЙР АГАВЕЛЯН**

*Студент IV курса Института права Российско-Армянского  
университета по направлению «Юриспруденция»*

## **ՄԱՐԴՈՒ ԿԼՈՆԱՎՈՐՄԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ**

### **CRIMINAL LAW ASPECTS OF HUMAN CLONING**

#### **УГОЛОВНО-ПРАВОВЫЕ АСПЕКТЫ КЛОНИРОВАНИЯ ЧЕЛОВЕКА**

##### **Ներածություն**

Զարգացման ներկա փուլում բժշկությունն արագ զարգացող ոլորտներից մեկն է: Գիտատեխնիկական առաջընթացի ոլորտներից մեկը, որն արժանի է առանձին պատշաճ քրեաիրավական կարգավորման, նորագույն կենսաբժշկական տեխնոլոգիաների ոլորտն է: Կենսաբժշկական տեխնոլոգիաները, մի կողմից, լինելով զգալի առաջընթաց բժշկության մեջ, թույլ են տալիս լուծել հարցեր, որոնք նախկինում հասանելի չէին բժշկությանը, մյուս կողմից՝



ենթադրում են էթիկական և իրավական բնույթի մի շարք նկատառումներ՝ մարդու իրավունքների քրեաիրավական պաշտպանության համատեքստում: Արդի բժշկության զարգացման արդյունքներից է մարդու կլոնավորումը, սակայն իրավական տեսանկյունից կան բացեր, որոնք ենթակա են կարգավորման:

Կլոնավորման էթիկական բաղադրիչի պատճառով է, որ հասարակության մեջ դրա նկատմամբ միատեսակ վերաբերմունք չկա:

Անդրադառնալով կլոնավորման ակունքներին՝ հարկ է նշել, որ «Կլոն» բառը (անգլերեն՝ cloning) ծագում է հին հունական κλών բառից, որը հայերեն թարգմանությամբ նշանակում է սերունդ, ժառանգ: Սկզբնական փուլում կլոնավորումը որպես այդպիսին սկսեց օգտագործվել բույսերի խմբի վրա, որոնք ստացվում են արտադրող բույսից վեգետատիվ բազմացման եղանակով: Առաջացող բույսերը նույնությամբ կրկնում էին իրենց սկզբնական բույսի որակական բաղադրությունը և հիմք էին ծառայում նոր սորտի ստացման համար:

Ավելի ուշ կլոն սկսեցին անվանել ոչ միայն այդպիսի բույսերի խումբը, այլ նաև այդ խմբում գտնվող յուրաքանչյուր բույս (բացառությամբ սկզբնականից), իսկ այդպիսի սերունդ ստեղծելն անվանեցին կլոնավորում:

Ժամանակակից գիտությունում կլոնավորումը բնորոշվում է որպես օրգանիզմի կամ առանձին բջիջների գենետիկորեն նույնական պատճենների պատրաստման գործընթաց: 1980 թվականին աշխարհում առաջին անգամ տրամադրվել է կլոնավորման արտոնագիր, իսկ մեկ տարի անց ստեղծվեց առաջին կլոնավորված կենդանին՝ մուկը: 1997 թվականին շոտլանդացի գիտնականներին հաջողվեց ստեղծել այծի կլոնը, որին անվանեցին Դոլլի<sup>1</sup>: 2002 թ. ստեղծվեց մարդու օրգանիզմի գրեթե ամբողջական գենետիկական քարտեզը, և նույն թվականին Ռաելիտների կրոնական աղանդավորական կազմակերպությունը հայտարարեց, որ աշխարհում առաջին անգամ ստեղծվել է մարդու կլոնը, սակայն դա հավաստող լուրջ ապացույցներ չներկայացվեցին:

### **Հիմնական հետազոտություն**

Տարբերում են կլոնավորման երկու տեսակ՝ վերարտադրողական նպատակներով կլոնավորում, որի դեպքում կլոնավորումը կատարվում է մարդու գենետիկական պատճենի ստեղծման համար, և թերապևտիկ նպատակներով կլոնավորում, որի ընթացքում մարդու ԴՆԹ-ի օգտագործմամբ ստեղծվում են նույնական բջիջներ՝ դեռևս անբուժելի համարվող հիվանդությունների բուժման և մարդու մարմնի մասերի, հյուսվածքների փոխպատվաստմանն այլընտրանք գտնելու նպատակով:

Անհրաժեշտ է նշել նաև կլոնավորման հարցերը կարգավորող մի շարք միջազգային իրավական ակտեր: Մարդու կլոնավորումը, ինչպես նաև մարդու գեների հետ կապված այլ մանիպուլյացիաները (այդ թվում՝ գենոմի խմբագրումը և այլն), խախտում են միջազգային և ազգային իրավունքի գործող նորմերը: Այսպես, մի շարք միջազգային կոնվենցիաներ, հոչակագրեր սահմանում են մարդու վերարտադրողական կլոնավորման արգելքը:

Այսպես, 2005 թվականի մարտի 8-ին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան ընդունել է «Մարդու վերարտադրողական կլոնավորման դեմ միջազգային կոնվենցիա», որտեղ ամրագրել է, որ «Համոզված լինելով մարդու արժանապարկության համար մարդու կլոնավորման հնարավոր վտանգների կանխարգելման հրապարակության մեջ՝

<sup>1</sup> Миненко И. А., Сердюков Д. Г., К вопросу об истории клонирования // Вестник новых медицинских технологий. Электронное издание. 2014.

անդամ բոլոր Պեպոթություններին կոչ է անում արգելել մարդու կլոնավորման բոլոր ձևերը, քանի որ դրանք անհամարելի են մարդկային արժանապատվության և մարդու կյանքի պաշտպանության հետ»<sup>2</sup>:

Մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիայի կիրառման հետ կապված՝ մարդու վերարտադրողական կլոնավորման արգելման վերաբերյալ «Կենսաբանության և բժշկության նվաճումների մասին լրացուցիչ արձանագրության» համաձայն՝ «Ցանկացած միջամտություն, որն ուղղված է մեկ այլ մարդու գենետիկորեն նույնական մարդու ստեղծմանը՝ կենդանի կամ մահացած, արգելվում է»<sup>3</sup>:

Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին Եվրոպայի խորհրդի 1998 թվականի հունվարի 12-ի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, որը վերաբերում է մարդու կլոնավորման արգելմանը, ամրագրում է հետևյալը՝ «Մարդու կանխամտածված կլոնավորումը վրանգ է ներկայացնում մարդու անձի համար, քանի որ այն հակասում է մարդուն իր գենետիկական կառուցվածքի կանխորոշումից պաշտպանելու հիմնարար գաղափարը երրորդ կողմից»<sup>4</sup>:

Արդյո՞ք կլոնավորումը մարդկային արժանապատվության խախտում չէ: Արդյո՞ք կլոնավորումը չի նսեմացնում մարդկային արժանապատվությունը: Սրանք հարցեր են, որոնք մինչ օրս միատեսակ պատասխան չեն գտել: Գենետիկական արժանապատվության դեմ ոտնձգության հետ կապված արարքների քրեականացման սոցիալական պայմանավորումը ակնհայտ է գենետիկական հետազոտությունների արագ զարգացման ֆոնին<sup>5</sup>: Իր իրավական բնույթով լինելով անօտարելի բարիք՝ մարդկային արժանապատվությունն, անշուշտ, ենթակա է քրեաիրավական պաշտպանության<sup>6</sup>:

Մասնավորապես, «Մարդու գենոմի և մարդու իրավունքների համընդհանուր հոչակագիրը» ամրագրում է, որ «Չի թույլատրվում այնպիսի պրակտիկա, որը հակասում է մարդկային արժանապատվությանը, ինչպիսին է կլոնավորման պրակտիկան մարդու անհատի վերարտադրության նպատակով»<sup>7</sup>:

Միևնույն ժամանակ, «Մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիան», կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման վերաբերյալ ամրագրում է «Կենսաբանության և բժշկության դատարարների օգտագործումը կարող է հանգեցնել այնպիսի գործողությունների, որոնք կվրանգեն մարդու արժանապատվությունը»:

Մարդու վերարտադրողական և թերապևտիկ (բուժական) կլոնավորման սահմանազատման հիմքում ընկած է դրանց իրականացման նպատակը:

Մարդու վերարտադրողական կլոնավորման նպատակը գենետիկորեն նույնական սուբյեկտի ստեղծումն է (մարդու վերարտադրումը, բազմանալը), իսկ թերապևտիկ (բուժական) կլոնավորման նպատակը կլոնավորումը սաղմնային, ցղունային բջիջների արտադրու-

<sup>2</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://press.un.org/en/2005/ga10333.doc.htm>

<sup>3</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://eulaw.edu.ru/publikatsii/stati-po-pravu-evropejskogo-soyuz/zapret-klonirovaniya-cheloveka-v-evropejskom-prave-p-a-kalinichenko/>

<sup>4</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://rm.coe.int/168007f2ca>

<sup>5</sup> Genomic testing for human health and disease across the life cycle: applications and ethical, legal, and social challenges / g.a. bilkey, b.a. burns, e.p. coles [et al.]. — doi 10.3389/fpubh.2019.00040 // frontiers in public health. — 2019. — 11 march.

<sup>6</sup> Козаченко И. Я., Мелюханова Е.Е., Об обусловленности уголовно-правовой охраны генетического достоинства // всероссийский криминологический журнал. 2021. с. 423.

<sup>7</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/universal-declaration-human-genome-and-human-rights>

թյան, գիտական հետազոտությունների, ինչպես նաև մարդկային տարբեր հիվանդությունների բուժման մեջ օգտագործելն է: Այդ ցողունային բջիջները կարող են օգտագործվել փորձարկումների մեջ, որոնք ուղղված են տարբեր հիվանդություններ ուսումնասիրելուն և համապատասխան բուժման մեթոդներ վերհանելուն: Թերապևտիկ (բուժական) կլոնավորումը, մարդու առողջության պահպանության նպատակներից ելնելով, բջիջների, օրգանների, հյուսվածքների, ցողունների ստեղծումն է: Թերապևտիկ կլոնավորման կողմնակիցներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են մարդասիրական նկատառումներով՝ ելնելով մարդկային կյանքեր փրկելու առաջնահերթությունից:

Պետք է նշել, որ աշխարհում առաջին երկիրը, որը պաշտոնապես ստացել է թերապևտիկ նպատակներով սաղմերի կլոնավորման թույլտվություն, Մեծ Բրիտանիան է:

Թերապևտիկ կլոնավորումը սաղմի ստեղծումն է (որը հետագայում հանդես է գալիս որպես ցողունային բջիջների աղբյուր) սաղմնային զարգացման մինչև երկու շաբաթվա ընթացքում: Սաղմնային զարգացման երկու շաբաթվա ժամկետը, որպես մարդու սաղմերի վրա փորձերի սահման, հիմնավորված է նրանով, որ երկրորդ շաբաթից հետո սաղմը սկսում է ձևավորել նյարդային համակարգ, և ենթադրվում է, որ այն սկսում է զգալ, թե ինչ է կատարվում իր հետ<sup>8</sup>:

Համեմատական իրավական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունը կլոնավորման համար պատասխանատվության ապահովման հարցում նույնպես բազմազան է:

Մի շարք երկրներ իրենց ներպետական օրենսդրության մեջ անդրադարձել են մարդու կլոնավորմանը՝ որպես քրեորեն պատժելի արարք:

- Համաձայն Կանադայի «Մարդու վերարտադրողության վերաբերյալ» բանաձևի՝ «գիտակցաբար ստեղծել մարդու կլոն՝ անկախ նպատակից, ներառյալ բուժական (թերապևտիկ) և վերարտադրողական կլոնավորումը անօրինական է»<sup>9</sup>:

- Համաձայն Ֆրանսիայի Հանրապետության 2021 թվականի «Կենսաէթիկայի մասին օրենք»-ի՝ «նոր օրենքը վերահաստատում է որոշ բժշկական փորձերի արգելքը, ինչպիսիք են մարդու սաղմում կենդանական բջիջների միացումը, հեղուկացման նպատակներով սաղմերի ստեղծումը կամ էմբրիոնների կլոնավորումը դրանք կրկին իմպլանտացնելով»<sup>10</sup>:

- Գերմանիայում, ինչպես եվրոպական երկրների մեծ մասում, մարդկանց վերարտադրողական կլոնավորումը խստիվ արգելված է: 1990 թվականի սաղմերի պաշտպանության գերմանական ակտն արգելում է սաղմերի արտադրությունը կամ օգտագործումը որևէ այլ նպատակով<sup>11</sup>:

- Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգրքի 214-1 հոդվածը սահմանում է, որ «Բուժական նպատակներով մարդկային սաղմերի կլոնավորման միջոցով ստեղծելը պատժվում է յոթ տարի ազատազրկմամբ և տուգանք 100 հազար եվրոյի չափով»<sup>12</sup>:

- Ըստ Իսպանիայի Թագավորության քրեական օրենսգրքի 160-րդ հոդվածի՝ «կլոնավորման միջոցով միանման մարդկանց ստեղծմանը պատժելու համար նախատեսվում է

<sup>8</sup> Геномные преступления. Опыт теоретического моделирования / под ред. И. Я. Козаченко, Д. Н. Сергеева. – Екатеринбург: SAPIENTIA, 2022, с. 55.

<sup>9</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://www.wired.com/2004/03/canada-closes-door-on-cloning/>

<sup>10</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://www.loc.gov/item/global-legal-monitor/2021-11-16/france-president-macron-signs-new-law-on-bioethics/>

<sup>11</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://www.dpz.eu/en/info-center/knowledge/cloning.html#:~:text=Legal%20status&text=In%20Germany%2C%20as%20in%20most,from%20whom%20the%20eggs%20originate.>

<sup>12</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] – [https://www.equalrightstrust.org/ertdocumentbank/french\\_penal\\_code\\_33.pdf](https://www.equalrightstrust.org/ertdocumentbank/french_penal_code_33.pdf)

ազատագրվում մեկից՝ հինգ տարի ժամկետով»<sup>13</sup>:

Վրաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համաձայն՝ քրեական պատասխանատվություն է նախատեսում գենետիկ մանիպուլյացիաների համար, այսինքն՝ մարդու նման արարածի ստեղծման համար:

Իսպանիայի քրեական օրենսգրքը պատասխանատվություն է նախատեսում կլոնավորման կամ բուծմանն ուղղված այլ գործողությունների միջոցով նույնական մարդկային էակներ ստեղծելու համար:

Ուշադրության արժանի է ռումինացի օրենսդիրի մոտեցումը, որը քրեականացրել է ինչպես վերարտադրողական, այնպես էլ բուժական կլոնավորումը: Այսպես, Ռումինիայի քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում երեխայի ծննդյան հետ չկապված նպատակներով մարդու սաղմերի ստեղծմանն ուղղված արարքների համար, իսկ արդեն հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանել վերարտադրողական կլոնավորման համար:

Եթե անդրադառնանք մարդու կլոնավորման, և առավել ևս վերարտադրողական կլոնավորման էթիկական տեսանկյունին, ապա այն փոքր-ինչ հակասական արձագանք ունի հասարակության շրջանում: Էթիկական տեսանկյունից մարդու վերարտադրողական կլոնավորումը ունի թե՛ դրական և թե՛ բացասական կողմեր:

Բացասական հատկանիշի էությունն այն է, որ նախ առաջին հերթին կլոն՝ կրկնօրինակ ունենալու գաղափարն անբնական է և հակասում է մարդու արժանապատվությանը: Յուրաքանչյուր նորածնի պետք վերաբերվել որպես անհատականություն, որպես բարձրագույն արժեք՝ մարդու այլ ոչ թե մեկ այլ անձի կրկնօրինակի՝ կլոնի: Քանի որ մարդու վերարտադրողական կլոնավորման արդյունքում առաջանում են գենետիկորեն նույնական օրգանիզմներ, այն կարող է հանգեցնել գենետիկական անհատականության կորստի, որովհետև կլոնավորման արդյունքում ստեղծված կլոնը և տվյալ մարդը կրում են նույն գեները և մյուս այլ անհատական հատկանիշները: Իսկ մարդու՝ իր անհատական բնութագրական հատկանիշների, իր գեների փոխանցումն իր կրկնօրինակին՝ կլոնին մարդը կորցնում է իր անհատականությունը և այն մնացած բոլոր հատկանիշները, որոնք միայն իրեն են պատկանում:

Կենսաբանական տեսանկյունից թերապևտիկ կլոնավորումը նույնն է ինչ վերարտադրողական կլոնավորումը, բացառությամբ սաղմի աճի սահմանափակ ժամկետով (մինչև 14 օր): Նշված ժամանակահատվածից հետո բջիջների վերարտադրության գործընթացն ընդհատվում է: Թերապևտիկ կլոնավորման առանձնահատկությունը նաև այն է, որ երկու շաբաթվա ընթացքում ձևավորված սաղմնային բջիջները կարող են հետագայում վերածվել տարբեր օրգանների տարբերակված բջիջների՝ սիրտ, լյարդ, ենթաստամոքսային գեղձ, երկամներ և այլն: Այս մեթոդը նպաստում է բժշկության մեջ բազմաթիվ հիվանդությունների բուժմանը, կանխարգելմանը: Թերապևտիկ կլոնավորման նպատակն է ստանալ ցողունային բջիջներ, որոնք գենետիկորեն համատեղելի են դոնոր օրգանիզմի հետ: Օրինակ՝ Պարկինսոնի հիվանդությամբ հիվանդի ԴՆԹ-ից կարելի է ստանալ սաղմնային ցողունային բջիջներ, որոնք կարող են օգտագործվել դրա բուժման համար, և համատեղելի կլինեն հիվանդի իմունային համակարգի կողմից: Կարող ենք ասել, որ բժշկության ոլորտում թերապևտիկ կլոնավորման ներուժը հսկայական է<sup>14</sup>:

<sup>13</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –[https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Criminal\\_Code\\_2016.pdf](https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Criminal_Code_2016.pdf).

<sup>14</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC2323472/#:~:text=Therapeutic%20cloning%20in%20the%20context,shown%20by%20in%20vivo%20studies.>

Բժշկական տեսանկյունից կլոնավորումը բարոյապես արդարացված է այն առումով, որ սաղմն ընկալվում է բուժաշխատողի կողմից որպես սաղմնային ցողունային բջիջների կուտակում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հարցի հակառակ կողմին՝ որքանով է հիմնավորված սաղմի ստեղծումը՝ դրա ոչնչացման նախապես հայտնի նպատակով:

Աշխարհի շատ երկրներում մարդու թերապևտիկ կլոնավորում իրականացնելը թույլատրելի է: Օրինակ՝ Ավստրալիայում, 2002 թվականին Ավստրալիայի խորհրդարանի կողմից ընդունված «Մարդու վերարտադրողական կլոնավորման արգելքի» մասին ակտը, որն արգելում էր Ավստրալիայում մարդու վերարտադրողական կլոնավորումը, առհասարակ որևէ հետազոտություն մարդու կլոնավորման նպատակով և ամրագրում, որ «(...) մարդը պետք է նախապես տեղեկացվի և զեկուցվի իր նկատմամբ կատարվող վիրահատություններից և փորձարկումներից առաջ, այդ թվում նաև թերապևտիկ կլոնավորման հետազոտություններից առաջ»<sup>15</sup>: Սակայն 2006 թվականի նոյեմբերին Ավստրալիայի խորհրդարանը չեղյալ հայտարարեց մարդու թերապևտիկ կլոնավորման նպատակով հետազոտությունների արգելքը և մինչ օրս Ավստրալիայի որոշ նահանգներում թույլատրվում և իրականացվում է մարդու թերապևտիկ կլոնավորում<sup>16</sup>:

Մեծ Բրիտանիայում մարդու բեղմնավորման և սաղմնաբանության կենտրոնը Նյուքասլի համալսարանին արտոնագիր է տվել իրականացնելու մարդու թերապևտիկ կլոնավորմանն ուղղված փորձարարություններ՝ շաքարային դիաբետի, Պարկինսոնի և Ալցհեյմերի հիվանդություններ բուժման նպատակով<sup>17</sup>:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25-րդ հոդվածի երրորդ մասը սահմանում է, որ «Բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, **մարդու վերարտադրողական կլոնավորումը**»<sup>18</sup>:

Կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի Սահմանադրությունը բացարձակ արգելք է սահմանում մարդու վերարտադրողական կլոնավորման հարցում: Խոսքը ինչպես մահացած մարդու, այնպես էլ կենդանի մարդու կլոնավորման մասին է<sup>19</sup>: Սակայն թերապևտիկ կլոնավորման վերաբերյալ որևէ կարգավորում բացակայում է Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության մեջ:

Թերապևտիկ կլոնավորման ներուժը հսկայական է, քանի որ ցողունային բջիջները կարող են օգտագործվել մարդու մարմնի գրեթե բոլոր հյուսվածքներից և օրգաններից բջիջներ աճեցնելու համար: Մարդու առանձին օրգանների աճեցումը դրանց հետագա փոխապատվաստման համար շատ խոստումնալից ուղղություն է գենետիկայի մեջ:

Իր հերթին, մարդու թերապևտիկ կլոնավորման թույլտվությունը մտահոգության տեղիք է առաջացնում:

Միևնույն ժամանակ, աշխարհում միտում է նկատվում ցողունային բջիջներ ձեռք բերելու նպատակով մարդկանց բուժական կլոնավորման օրինականացման և դրանց հետագա օգտագործման հետազոտական և բուժական նպատակներով:

<sup>15</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://www.legislation.gov.au/C2004A01081/latest/text>.

<sup>16</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://pubmed.ncbi.nlm.nih.gov/18807802/>.

<sup>17</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://web.archive.org/web/20071009024233/http://www.hfea.gov.uk/en/1048.html>.

<sup>18</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] –<https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723>.

<sup>19</sup> Թորոսյան Ս. Լ., «ՀՀ Սահմանադրությունը մեկնաբանություններով», Երևան. 2023թ. «Հայրապետ» հրատարակչություն, էջ 70:

Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածն արձանագրում է, որ մարդու վերարտադրողական կլոնավորումը՝ մահացած կամ կենդանի մարդու՝ արհեստական ճանապարհով գենետիկորեն նմանադիպող ստեղծելուն ուղղված ցանկացած գործողություն կատարելը համարվում է քրեորեն հետապնդելի արարք<sup>20</sup>:

### **Եզրակացություն**

Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքին անդրադառնում է միայն մարդու վերարտադրողական կլոնավորման արգելքին՝ վերջինիս կատարումը համարելով քրեորեն հետապնդելի արարք: Հայաստանի Քրեական օրենսդրությունը մարդու թերապևտիկ կլոնավորման որևէ արգելք կամ բնութագրում չի սահմանում: Հայաստանի Հանրապետությունի ներպետական օրենսդրության մեջ բացակայում է նաև մարդու կլոնավորման վերաբերյալ առանձին օրենք, որը կկարգավորի բոլոր այն հիմնախնդիրները մարդու կլոնավորման վերաբերյալ, մասնավորապես՝ մարդու կլոնավորման հասկացությունը տեսակները, ընթացակարգը, արգելման կամ պատասխանատվության նպատակը:

Մարդու թերապևտիկ կլոնավորում իրականացնելու արդյունքում երբ ստեղծվում են մարդու առանձին օրգաններ շատ հնարավոր է և կա բավականին մեծ ռիսկ, որ այդ ստեղծված օրգանները կենթարկվեն ապօրինի առք և վաճառքի, մաքսանենգ ճանապարհով կվաճառվեն:

Ամփոփելով, կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության անհրաժեշտ է ունենալ մարդու կլոնավորման մասին առանձին օրենք, որը կկարգավորի մարդու թերապևտիկ կլոնավորման հիմնահարցերը:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով մի շարք բարոյաիրավական խնդիրներ, հնարավոր քրեաձին ռիսկեր, կարծում ենք, նպատակահարմար կլիներ քրեականացնել նաև թերապևտիկ կլոնավորումը:

**Ամփոփագիր:** Ներկայում կենսաբժշկական նորագույն տեխնոլոգիաների արագ զարգացումն օրակարգ է բերում դրանց պատշաճ օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը: Նմանօրինակ տեխնոլոգիաներից մեկը մարդու կլոնավորումն է, որն առաջ է քաշում մի շարք էթիկական և իրավական խնդիրներ: Ցավոք, ներկայում ՀՀ քրեական օրենսդրությունը, ի տարբերություն արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրության, քրեական պատասխանատվություն է նախատեսում միայն վերարտադրողական կլոնավորման համար՝ դրանով իսկ քրեաիրավական պաշտպանության շրջանակից դուրս թողնելով թերապևտիկ կլոնավորումը: Սույն հոդվածում, հիմնվելով կլոնավորման հարցերը կարգավորող միջազգային իրավական ակտերի վերլուծության վրա, օրենսդրական կարգավորման դրական արտասահմանյան փորձի ուսումնասիրության վրա, փորձ է արվում վերլուծել կլոնավորումը և ներկայացնել դրա հետագա քրեաիրավական կարգավորման ուղղությունները: Նշվածի կապակցությամբ հեղինակները բարձրացնում են կլոնավորման էթիկական և իրավական ասպեկտների քրեաիրավական ոչ բավարար կանոնակարգման հարցը: Մասնավորապես, նշելով մարդկային արժանապատվության պաշտպանության սկզբունքի պահպանման կարևորությունը, հեղինակները մատնանշում են թերապևտիկ կլոնավորման քրեականացման նպատակահարմարությունը, որի դեպքում ստացված սաղմնային ցողունային բջիջներն օգտագործվում են նոր օրգանների վերարտադրության և աճեցման նպատակով: Հեղինակները նշում են սաղմի ոչնչացման և ցանկացած նպատակով դրա օգտագործման անթույլատրելիությունը:

**Annotation.** Currently, the rapid development of the latest biomedical technologies puts on the agenda the need for their proper legislative regulation. One of these technologies is human cloning, which raises a number of ethical and legal

<sup>20</sup> [Էլեկտրոնային ռեսուրս] – Հասանելիության ռեժիմ. <https://www.arlis.am/documentView.aspx?docid=189521>

issues. Unfortunately, at present, the criminal legislation of the Republic of Armenia, unlike the legislation of a number of foreign countries, provides for criminal liability only for reproductive cloning, thereby leaving therapeutic cloning outside the scope of criminal protection. In this article, based on the analysis of international legal acts regulating cloning issues, studying the positive foreign experience of legislative regulation, the authors attempt to analyze cloning and present their vision of its criminal legal regulation. In connection with the above, the authors raise the issue of insufficient criminal law regulation of the ethical and legal aspects of cloning. In particular, noting the importance of observing the principle of protecting human dignity, the authors point to the expediency of criminalization and therapeutic cloning, in which the obtained embryonic stem cells are used for the purpose of reproduction and cultivation of new organs. The authors point out the inadmissibility of the destruction of the embryo and its use for any purpose.

**Аннотация:** В настоящее время стремительное развитие новейших биомедицинских технологий выдвигает на повестку дня необходимость их надлежащей законодательной регламентации. Одной из таких технологий выступает клонирование человека, которое выдвигает ряд этических и правовых вопросов. К сожалению, в настоящее время, уголовное законодательство РА, в отличие от законодательства ряда зарубежных стран, предусматривает уголовную ответственность лишь за репродуктивное клонирование, тем самым оставляя за рамками уголовно-правовой охраны терапевтическое клонирование. В настоящей статье на основе анализа международно-правовых актов, регулирующих вопросы клонирования, изучения позитивного зарубежного опыта законодательного регулирования авторами предпринята попытка проанализировать клонирование и представить свое видение его уголовно-правовой регламентации. В связи с отмеченным авторы поднимают вопрос о недостаточной уголовно-правовой регламентации этических и правовых аспектов клонирования. В частности, отмечая важность соблюдения принципа охраны человеческого достоинства, авторы указывают на целесообразности криминализации и терапевтического клонирования, при котором полученные эмбриональные стволовые клетки используются с целью воспроизводства и выращивания новых органов. Авторы указывают на недопустимость разрушения эмбриона и его использования в каких бы то ни было целях.

**Բանալի բառեր** - Վերարտադրողական կլոնավորում, թերապևտիկ կլոնավորում, արժանապատվություն, անձ, քրեական պատասխանատվություն:

**Keywords:** Reproductive cloning, therapeutic cloning, dignity, embryo, criminal liability

**Ключевые слова:** репродуктивное клонирование, терапевтическое клонирование, достоинство, эмбрион, уголовная ответственность.

### Օգտագործված գրականության ցանկ

1. Миненко И. А., Сердюков Д. Г., К вопросу об истории клонирования // Вестник новых медицинских технологий. Электронное издание. 2014.
2. Genomic testing for human health and disease across the life cycle: applications and ethical, legal, and social challenges / g.a. bilkey, b.a. burns, e.p. coles [et al.]. — doi 10.3389/fpubh.2019.00040 // frontiers in public health. — 2019. — 11 march.
3. Козаченко И. Я., Мелюханова Е. Е. об обусловленности уголовно-правовой охраны генетического достоинства // Всероссийский криминологический журнал. 2021. с. 423.
4. Геномные преступления. Опыт теоретического моделирования / под ред. И.Я. Козаченко, Д. Н. Сергеева. – Екатеринбург: SAPIENTIA, 2022. – С. 55.
5. Թորոյան Ս. Լ., «ՀՀ Սահմանադրությունը մեկնաբանություններով», Երևան. 2023 թ. «Հայրապետ» հրատարակչություն, էջ 70:

**Սարգսյան Ա.** - իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, էլիասցե՝ [adelina-sargsyan@mail.ru](mailto:adelina-sargsyan@mail.ru):

**Աղավեյան Հ.** - Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի ինստիտուտի իրավագիտության ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող, էլիասցե՝ [Aghavelyan003@gmail.com](mailto:Aghavelyan003@gmail.com):

Ներկայացվել է խմբագրություն 02.07.2024 թ., տրվել է գրախոսության 02.07.2024 թ., երաշխավորվել է ի.գ.թ., Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս Վ. Սուքիասյանի կողմից, ընդունվել է տպագրության 18.11.2024 թ.:



<https://doi.org/10.59546/18290744-2024.7-9-73>

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,  
ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության  
Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնի ավագ քննիչ,  
երրորդ դասի խորհրդական

NAREK HARUTYUNYAN  
*Applicant at YSU Chair of Criminal Law,  
Senior Investigator of the 1st Investigation Division of Kentron and  
Nork-Marash Administrative Districts of the Investigation  
Department of Yerevan City of the RA Investigative Committee,  
3-rd Class Counselor*

НАРЕК АРУТЮНЯН  
*Соискатель кафедры уголовного права ЕГУ,  
старший следователь 1-го следственного отдела административных  
районов Кентрон и Норк-Мараш Следственного управления города Еревана  
Следственного комитета РА, советник 3-го класса*

**ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ  
ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ  
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ**

**SUBJECTIVE ATTRIBUTES OF THE ORGANIZATION OF ILLEGAL  
MIGRATION UNDER THE CRIMINAL LEGISLATION OF THE REPUBLIC  
OF ARMENIA**

**СУБЪЕКТИВНЫЕ ПРИЗНАКИ ОРГАНИЗАЦИИ НЕЗАКОННОЙ  
МИГРАЦИИ ПО УГОЛОВНОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЕСПУБЛИКИ  
АРМЕНИЯ**

**Ներածություն**

Սուբյեկտիվ հատկանիշները, ինչպես հայտնի է, ցանկացած հանցակազմի պարտադիր բաղադրատարրեր են, առանց որոնց բացահայտման հնարավոր չէ որակել համապատասխան հանցավոր արարքները, պատշաճ քրեաիրավական գնահատական տալ

դրանց: Մասնավորապես, խոսքը հանցագործության սուբյեկտին (հանցանքը կատարողին) և սուբյեկտիվ կողմը (կատարված արարքին հանցավորի ներքին հոգեբանական վերաբերմունքը) բնութագրող հատկանիշների մասին է:

Անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվություն սահմանող ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցակազմն այդ առումով պարունակում է մի շարք առանձնահատկություններ, որոնց վերլուծությանն էլ նվիրված է հետազոտական սույն աշխատանքը:

### **Հիմնական հետազոտություն**

Հանցագործության **սուբյեկտի** ուսումնասիրությանը տարիներ շարունակ անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ: Այդ առումով հատկանշական է, որ առկա է միասնական մոտեցում առ այն, որ այդպիսին է համարվում քրեորեն պատժելի արարք կատարած այն անձը, որն օրենքին համապատասխան ունակ է քրեական պատասխանատվության ենթարկվել դրա համար<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 19-ը սահմանում է ոչ թե հանցագործության, այլ **քրեական պատասխանատվության սուբյեկտի** հետևյալ հասկացությունը՝

«1. Քրեական պատասխանատվության ենթակա է մեղսունակ ֆիզիկական անձը, որի 16 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ինչպես նաև իրավաբանական անձը:

2. Այն անձը, որի 14 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ենթակա է քրեական պատասխանատվության սույն օրենսգրքի 155-161-րդ հոդվածներով, 166-170-րդ հոդվածներով, 191-րդ հոդվածով, 198-րդ հոդվածով, 252-րդ հոդվածով, 253-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 254-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 258-րդ հոդվածով, 264-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 297-րդ հոդվածով, 338-րդ հոդվածով, 339-րդ հոդվածով, 397-րդ հոդվածով կամ 398-րդ հոդվածով նախատեսված հանցանքների կատարման համար:

3. Եթե անձը հասել է սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ունակ չի եղել գիտակցելու իր արարքի հակաիրավականությունը կամ ղեկավարելու իր արարքը, ապա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

4. Եթե անձը հասել է սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ունակ չի եղել ամբողջությամբ գիտակցելու իր արարքի հակաիրավականությունը կամ ղեկավարելու իր արարքը, ապա պատիժ նշանակելիս դա հաշվի է առնվում որպես մեղմացնող հանգամանք»:

Օրենսդրական ներկայացված մեջբերումից կարելի է հետևություն անել, որ **հանցագործության սուբյեկտ (ընդհանուր)** կարող է հանդիսանալ մեղսունակ ֆիզիկական անձը, որը հանցանքը կատարելու պահին հասած է եղել քրեական օրենքով նախատեսված որոշակի տարիքի: Մինևս այն ժամանակ, հանցագործության **հատուկ սուբյեկտի** հասկացությունը սահմանված է ՀՀ քր. օր.-ի հոդված 20-ի 1-ին մասում, որի համաձայն՝ այդպիսին է համարվում հանցանք կատարած այն անձը, որը, բացի ընդհանուր սուբյեկտի հատկանիշներից, օժտված է նույն օրենսգրքի Հատուկ մասով սահմանված լրացուցիչ հատկանիշներով, որոնք հիմք են տալիս նրան քրեական պատասխանատվության ենթարկելու սույն օրենսգրքի Հատուկ

<sup>1</sup> Տե՛ս նաև՝ *Андрюшенков В. А.*, Субъект преступления, предусмотренного ст. 322, УК РФ «Организация незаконной миграции» // *Психопедагогика в правоохранительных органах*, 2016, № 3(66), էջ 39:

մասով նախատեսված համապատասխան հանցագործության համար:

**Մեղսունակության** հասկացությունը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի հոդված 21-ով, որի համաձայն՝ «Մեղսունակությունն անձի՝ հանցանքը կատարելու պահին իր արարքի հակահրավականությունը գիտակցելու և այն ղեկավարելու ունակությունն է»: Համապատասխանաբար, անմեղսունակությունը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք է, որի պարագայում բացակայում է նաև հանցագործության սուբյեկտը: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի հոդված 29-ի համաձայն՝

«1. Անմեղսունակության վիճակում սույն օրենսգրքով նախատեսված արարք կատարած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

2. Անմեղսունակ է համարվում այն անձը, որը սույն օրենսգրքով նախատեսված արարքը կատարելու պահին հոգեկան առողջության խնդիրների հետևանքով չի գիտակցել իր արարքի հակահրավականությունը կամ չի ղեկավարել դա»:

Այդ կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ իրավամբ նշվում է, որ հենց իր արարքի փաստական կողմն ու նշանակությունը ճիշտ հասկանալու և գնահատելու, ինչպես նաև իր կամքն ու վարքագիծը գիտակցված ղեկավարելու ունակությամբ է մեղսունակ անձը տարբերվում անմեղսունակից: Համապատասխանաբար, այլ հատկանիշների հետ մեկտեղ, հենց այդ հանգամանքն է հիմք հանդիսանում հանցագործության սուբյեկտի առկայությունը կամ բացակայությունը հիմնավորելու համար<sup>2</sup>:

Հանցանքը կատարելու պահին **որոշակի տարիքի հասած լինելը**, ինչպես արդեն նշվել է, նույնպես հանցագործության սուբյեկտի պարտադիր հատկանիշ է: Այդ կապակցությամբ Ռ. Ի. Միրխենն առաջարկում է անձի տարիքը հասկանալ լայն և նեղ իմաստով: Մասնավորապես, առաջինի պարագայում, ըստ հեղինակի, այն բնորոշվում է որպես օրացուցային ժամանակաշրջան, որն անցել է մարդու ծնվելու օրից մինչև նրա կյանքի որոշակի ժամանակագրական պահը: Մինչդեռ նեղ իմաստով տարիքը պետք է հասկանալ որպես այս կամ այն անձի հոգեֆիզիոլոգիական զարգացումը բնութագրող ժամանակահատված, որը կապված է ինչպես բժշկա-կենսաբանական և սոցիալ-հոգեբանական, այնպես էլ իրավական փոփոխությունների հետ<sup>3</sup>:

Տվյալ հարցի կապակցությամբ համանման մոտեցում ունեն նաև մի շարք այլ քրեագետներ: Մասնավորապես, նրանց կարծիքով, լայն իմաստով տարիքը հասկացվում է որպես ժամանակահատված, որն անցել է մարդու ծնվելու օրից մինչև նրա կյանքի ցանկացած այլ որոշակի ժամանակագրական շրջան: Նեղ իմաստով, ըստ նշված հեղինակների, տարիքը անձի հոգեֆիզիոլոգիական զարգացման օրացուցային ժամանակաշրջանն է<sup>4</sup>:

Ուշագրավ է նաև տարիքի՝ որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա և համընդհանուր ճանաչում ստացած հետևյալ դիրքորոշումը: Մասնավորապես, քրեագետներն արդարացիորեն նշում են, որ ընդունելի, հիմնավոր և արդյունավետ պետք է համարել մոտեցումը, որի համաձայն, քրեական պատասխանատվության ենթակա լինելու ունակությունը կապվում է տարիքային սահմանի ոչ թե կամայական որոշման, այլ անձի հոգեֆիզիոլոգիական հասունության որոշակի մակար-

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ՝ *Михеев Р. И.*, Проблемы вменяемости, вины и уголовной ответственности (теория и практика): автореф. дис... д-ра юрид. наук. М., 1995, էջ 17, *Павлов В. Г.*, Учение о субъекте преступления. М., 2015, էջ 60, *Парог А. И.*, Квалификация преступлений по субъективным признакам. СПб., 2002, էջեր 248-249:

<sup>3</sup> Տե՛ս *Михеев Р. И.*, նշված աշխատություն, էջեր 17-18:

<sup>4</sup> Տե՛ս Полный курс уголовного права: в 5 томах / [Бойцов А.И. и др.] / Под ред. А.И. Коробеева. СПб.: «Юридический центр Пресс», 2008, էջ 388:

դակի հետ, որն անհրաժեշտ և բավարար է վարքագծի դրսևորման այս կամ այն տեսակի ընտրության համար<sup>5</sup>:

Ուստի, սահմանելով քրեական պատասխանատվության ենթակա լինելու որոշակի տարիքային սահման՝ օրենսդիրը պետք է հիմնվի բժշկագիտության, հոգեբանության, մանկավարժության և գիտության այլ ճյուղերի արդի նվաճումների վրա, ինչպես նաև հաշվի առնի տվյալ պետությունում դեռահասների ձևավորման և զարգացման առավել ընդհանրական պայմանները<sup>6</sup>:

Այս առումով հարկ է նշել նաև, որ անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվություն սահմանող ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ը նախատեսված չէ նույն օրենսգրքի հոդված 19-ի 2-րդ մասում: Այսինքն՝ քննարկվող հանցավոր արարքը տեղ չի գտել այն հանցագործությունների շարքում, որոնց համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում 14 տարեկանից: Հետևաբար, անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվություն սահմանելով 16 տարեկանից՝ հայրենի օրենսդիրը փաստորեն համարել է, որ հենց այդ տարիքից է անձը սկսում ամբողջովին գիտակցել տվյալ արարքի հակահրավակականությունը և իր համապատասխան վարքագիծը ղեկավարելու կարողությունը:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի **հոդված 470-ով նախատեսված հանցագործության սուբյեկտը** հանցանքը կատարելու պահին 16 տարին լրացած ցանկացած մեղսունակ ֆիզիկական այն անձն է, որը կազմակերպել է, մի դեպքում, օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը), իսկ մյուսում՝ անձի (անկախ քաղաքացիությունից կամ այն ունենալուց)՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության **սուբյեկտը հատուկ է՝** այն անձը, որն օժտված է իշխանական կամ ծառայողական որոշակի լիազորություններով և անօրինական միգրացիա կազմակերպելիս օգտագործում է այդ լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը:

Բացի դրանից՝ ՀՀ քրեական գործող օրենսդրության դրույթներին համապատասխան, քննարկվող հանցագործության պարագայում հարց կարող է առաջանալ նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի հոդված 123-ի 1-ին մասի համաձայն՝ **իրավաբանական անձը** ենթակա է քրեական պատասխանատվության, եթե՝

1) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ այդպիսի անձի թողտվությամբ կամ դրդմամբ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով և ի շահ իրավաբանական անձի գործելով,

2) իրավաբանական անձի կողմից չի ապահովվել դրա գործունեությունը կարգավորող օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների կատարումը, որը հանգեցրել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի, իրավաբանական ան-

<sup>5</sup> Տե՛ս Уголовное право. Общая часть: Учебник. Издание второе переработанное и дополненное / Под ред. докт. юрид. наук, проф. Л. В. Иногамовой-Хегай; докт. юрид. наук, проф. А.И. Парога; докт. юрид. наук, проф. А.И. Чучаева. – М.: Юридическая фирма «КОНТРАКТ»: ИНФРА-М, 2008, էջ 116:

<sup>6</sup> Տե՛ս նաև Павлов В. Г., Учение о субъекте преступления, СПб., 2000, էջ 60:

ծին ներկայացնող անձի կամ իրավաբանական անձի աշխատողի կողմից հանցանքի կատարմանը,

3) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով կամ իրավաբանական անձի միջոցով (այն օգտագործելով):

Իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հարց, օրինակ, կարող է առաջանալ ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարույթում եղած գործերից մեկի հետ կապված հետևյալ իրադրությունում. համապատասխան գործի նյութերում առկա փաստական տվյալներով պարզվել է, որ մի խումբ անձինք՝ շահադիտական նպատակով, երկու և ավելի անձանց անօրինական միգրացիան կազմակերպելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Երևան քաղաքում գործող **փորհստական գործակալության ղեկավար կազմի հետ**, կատարելով դերերի բաշխում, յուրաքանչյուր անձի հաշվարկով 20.000 – 26.000 ԱՄՆ դոլարի դիմաց կազմակերպել են ՀՀ մի շարք քաղաքացիների անօրինական մեկնումը Շենգենյան համաձայնության գոտու երկրներ՝ այդ նպատակով մեկնող անձանց անվամբ պատրաստելով աշխատանք ունենալու, աշխատավարձի չափի, այլ եկամուտների, անշարժ ու շարժական գույքերի վերաբերյալ կեղծ փաստաթղթեր, որոնք ներկայացվել են ՀՀ-ում և արտերկրում գտնվող իրավասու մարմիններին<sup>7</sup>:

Նույն մոտեցումն, ըստ մեզ, պետք է դրսևորել նաև նմանօրինակ մեկ այլ իրավիճակում, երբ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության և կոռուպցիայի հակազդման ու քննչական դեպարտամենտների կողմից իրականացված ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ինչպես նաև վարույթային գործողությունների արդյունքում պարզվել է, որ մի խումբ անձինք՝ շահադիտական նպատակով, երկու և ավելի անձանց անօրինական միգրացիան կազմակերպելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Երևան քաղաքում գործող **փորհստական փարբեր գործակալությունների ղեկավար կազմերի** և այլ անձանց հետ, կատարելով դերերի բաշխում, յուրաքանչյուր անձի հաշվարկով մինչև 25.000 ԱՄՆ դոլարի դիմաց կազմակերպել են ՀՀ մի շարք քաղաքացիների անօրինական մեկնումը տարանցիկ երկրներով Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ այդ նպատակով մեկնող անձանց անվամբ պատրաստելով տարանցիկ երկիր մուտք գործելու և այնտեղ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար իրավասու մարմիններ ներկայացվելիք՝ աշխատանք ունենալու, աշխատավարձի չափի, այլ եկամուտների, մեկնող անձանց մերձավոր ազգականների մահվան վերաբերյալ կեղծ փաստաթղթեր, որոնք ներկայացվել են ՀՀ-ում և արտերկրում գտնվող իրավասու մարմիններին<sup>8</sup>:

Վերը ներկայացված և նմանաբնույթ այլ իրավիճակներում, ըստ էության, գործ ունենք իրավաբանական անձի (ներկայացված օրինակներում՝ տուրիստական գործակալությունների) քրեական պատասխանատվության ենթակա լինելու հետ, քանի որ իրականացվել է անօրինական միգրացիայի կազմակերպում, որը կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 123-ի 1-ին մասով նախատեսված բոլոր պայմանների առկայությամբ:

Մասնավորապես՝

1) կամ այդ կազմակերպության գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշում-

<sup>7</sup> Տե՛ս ԱԱԾ-ն անօրինական միգրացիայի կազմակերպմամբ զբաղվող հերթական հանցավոր խումբն է բացահայտել // <https://www.aravot.am/2022/07/19/1280917/>:

<sup>8</sup> Տե՛ս 25.000 ԱՄՆ դոլարի դիմաց կազմակերպել են ՀՀ քաղաքացիների անօրինական մեկնումը ԱՄՆ // <https://www.aravot.am/2022/11/14/1304457/>:

ների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ այդպիսի անձի թողտվությամբ կամ դրդմամբ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով և ի շահ իրավաբանական անձի գործելով,

2) կամ իրավաբանական անձի կողմից չի ապահովվել դրա գործունեությունը կարգավորող օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների կատարումը, որը հանգեցրել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի, իրավաբանական անձին ներկայացնող անձի կամ իրավաբանական անձի աշխատողի կողմից հանցանքի կատարմանը,

3) կամ նշված հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով կամ իրավաբանական անձի միջոցով (այն օգտագործելով):

Միևնույն ժամանակ, բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ անօրինական միգրացիայի կազմակերպմամբ զբաղվողները բնութագրվում են տարբեր հատկանիշներով: Այդպիսիք կարող են հանդիսանալ, օրինակ, ինչպես միջազգային, այնպես էլ տեղական մասշտաբի արհեստավարժ հանցագործները, որոնց մի մասը մասնագիտանում է բացառապես հանցավոր գործունեության տվյալ (անօրինական միգրացիայի) ոլորտում, իսկ մյուսները չեն սահմանափակվում միայն դրանով<sup>9</sup>:

Բացի դրանից՝ թեև աշխարհի առանձին տարածաշրջանների և երթուղիների պարագայում հանդիպում են բնութագրական տարբեր դրսևորումներ, այդ կապակցությամբ առկա բազմաթիվ տեղեկությունները վկայում են, որ բոլոր դեպքերում հակաօրինական քննարկվող գործունեությամբ զբաղվում են ինչպես առանձին մանր, այնպես էլ խոշոր կազմակերպված հանցավոր խմբեր և ցանցեր: Միևնույն ժամանակ, գոյություն ունեն անօրինական միգրացիայի բազմաթիվ կազմակերպիչներ, որոնք զբաղվում են օրինական ձեռնարկատիրությամբ՝ դրանով իսկ քողարկելով իրենց հսկայական շահույթ բերող հանցավոր գործունեությունը: Այդ գործընթացում հաճախ ներգրավված են լինում նաև կոռումպացված պաշտոնատար անձինք, որոնք ձգտում են խոշոր նյութական օգուտ քաղել ստեղծված իրավիճակից<sup>10</sup>:

Ինչ վերաբերում է անօրինական միգրացիայի կազմակերպման **սուբյեկտիվ կողմին**, ապա նախ և առաջ հարկ է նշել, որ այն բնութագրվում է **ուղղակի դիրավորությամբ և շահադիրական նպատակով**:

Ընդհանուր առմամբ հանցակազմի տվյալ տարրն ընդունված է հասկանալ որպես հանցանք կատարելու հետ կապված հոգեկան գործունեության դրսևորում, որում արտահայտվում են այն կատարողի ներքին հոգեբանական և կամային առանձնահատկությունները, նրա հոգեհուզական վիճակը, վարքագծի շարժառիթները և նպատակները<sup>11</sup>:

ՀՀ քր. օր.-ի հոդված 25-ի (Հանցանքը դիտավորությամբ կատարելը) 3-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է **ուղղակի դիրավորությամբ** կատարված, եթե անձը

<sup>9</sup> Տե՛ս նաև Незаконный ввоз мигрантов – суровый поиск лучшей жизни / Информационный документ Управления ООН по наркотикам и преступности (UNODC) // URL: [https://www.unodc.org/documents/toc/factsheets/TOC12\\_fs\\_migrantsmuggling\\_RU\\_HIRES.pdf](https://www.unodc.org/documents/toc/factsheets/TOC12_fs_migrantsmuggling_RU_HIRES.pdf):

<sup>10</sup> Տե՛ս UNODC: The Globalization of Crime: A Transnational Organized Crime Threat Assessment. 2010 // URL:[http://www.unodc.org/documents/data-and-analysis/tocta/TOCTA\\_Report\\_2010\\_low\\_res.pdf](http://www.unodc.org/documents/data-and-analysis/tocta/TOCTA_Report_2010_low_res.pdf):

<sup>11</sup> Տե՛ս նաև *Фоменко Д. Д.*, К вопросу о понятии «Незаконная миграция» // Гуманитарные, социально-экономические и общественные науки. – 2021. – №2. – URL: <https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-ponyatii-nezakonnaya-migratsiya>.

գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, և այդ արարքը կատարելը նրա նպատակն է կամ նպատակին հասնելու միջոցը:

Միաժամանակ, նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է՝ եթե օրենքը հանցագործության ավարտը կապում է վտանգավոր հետևանքների առաջացման հետ, ապա հանցանքը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե այդ հետևանքների առաջացումն անձի նպատակն է եղել կամ նպատակին հասնելու միջոց, կամ նա նախատեսել է դրանց առաջացման անխուսափելիությունը:

Անօրինական միգրացիայի կազմակերպումը, ինչպես արդեն նշվել է, նախատեսված է ձևական հանցակազմով: Այսինքն՝ օրենքը հանցագործության ավարտը տվյալ դեպքում չի կապում վտանգավոր հետևանքների առաջացման հետ: Հետևաբար, ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցագործության սուբյեկտիվ կողմի առկայությունը հավաստելու համար նախ և առաջ անհրաժեշտ է հիմնավորել, որ հանցավորը **գիտակցել է**, մի դեպքում, օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը), իսկ մյուսում՝ անձի (անկախ քաղաքացիությունից կամ այն ունենալուց)՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելն իր կողմից կազմակերպելը, և այդ արարքները կատարելը նրա **նպատակն է եղել կամ այդ նպատակին հասնելու միջոցը**:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև, ինչպես արդեն նշվել է, **շահադիպական նպատակը**: Ընդ որում, այն պետք է առկա լինի ինչպես օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը կամ տեղափոխումը (ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի 1-ին մաս), այնպես էլ անձի (անկախ քաղաքացիությունից կամ այն ունենալուց)՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի 2-րդ մաս) կազմակերպելու պարագայում:

Հայոց լեզվում **շահադիպականը** հասկացվում է որպես շահադիտության վրա հիմնված, նյութական օգուտ, շահ ստանալու նպատակով կատարվող<sup>12</sup>: Իսկ **նպատակ** ասելով՝ ընդունված է հասկանալ ձգտման առարկան, այսինքն՝ այն ցանկալի արդյունքը, որին ձգտում են հասնել<sup>13</sup>: Հետևաբար, **շահադիպական նպատակը** հարկ է հասկանալ որպես այնպիսի ցանկալի արդյունքի ձգտում, որը կապված է նյութական օգուտ, շահ ստանալու հետ: Ընդ որում, նշված օգուտը (շահը) ենթադրում է նաև նյութական որոշակի ծախսերի կատարումից ազատվելու ցանկությունը:

Այս առումով հարկ է նշել, որ քրեական օրենսգրքում մի շարք հանցակազմեր ձևակերպելիս հայրենի օրենսդիրն օգտագործում է «շահադիտականի» իմաստն արտացոլող իրարից տարբերվող տերմինաբանություն: Մասնավորապես, հանցավոր առանձին արարքների (այդ թվում՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված) սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշների շարքում, մի դեպքում նախատեսված է շահադիտական նպատակը (օրինակ՝ հոդված 215-ի 1-ին մաս, հոդված 298-ի 1-ին մաս, ինչպես նաև հոդված 470-ի 1-ին և

<sup>12</sup> Տե՛ս նաև՝ Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան / **Աշոտ Մուրադի Սուքիասյան**, Երևան, «Երևանի Պետական Համալսարան», 2009:

<sup>13</sup> Տե՛ս Արդի հայերենի բացատրական բառարան / **Էդուարդ Բազրապի Աղայան**, Եր., «Հայաստան» Հրատարակչություն, 1976:

2-րդ մասեր), մյուսում՝ շահադիտական դրդումները (օրինակ՝ հոդված 155-ի 2-րդ մասի 10-րդ կետ, հոդված 166-ի 2-րդ մասի 8-րդ կետ, հոդված 191-ի 2-րդ մասի 7-րդ կետ, հոդված 244-ի 1-ին մաս և այլն) կամ շահադիտական շահագրգռվածությունը (օրինակ՝ հոդված 438-ի 1-ին մաս, հոդված 480-ի 2-րդ մասի 3-րդ կետ և այլն):

Ի դեպ, «շահադիտական նպատակ» հասկացությունը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի միայն վերը նշված երեք հոդվածներում: Ընդ որում, հոդված 298-ում տեղ է գտել «շահադիտական նպատակով կամ այլ ստոր դրդումներով» ձևակերպումը, որում, ըստ էության, նույնացվել են «նպատակ» և «դրդում» (շարժառիթ) հասկացությունները, ինչը չի կարող արդարացված համարվել: Բանն այն է, որ շարժառիթն ու նպատակը թեև սերտորեն փոխկապակցված, բայց նաև իրարից տարբերվող և ինքնուրույն երևույթներ են: Մասնավորապես, շարժառիթը մասնագիտական գրականության մեջ բնութագրվում է որպես գործունեության մղում, որը կապված է որոշակի պահանջմունքի արդիականացման հետ: Մինչդեռ նպատակը մարդկային գործունեության այն վերջնարդյունքն է, որով իրագործվում (բավարարվում) է համապատասխան պահանջմունքը<sup>14</sup>:

Բացի դրանից, ՀՀ քր. օր.-ի՝ քրեական օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները սահմանող հոդված 3-ում այդ իմաստով բացահայտվում է միայն շահադիտական դրդման էությունը: Մասնավորապես, այն սահմանվում է որպես հանցավորի՝ «իր կամ այլ անձի համար գույքային օգուտ ստանալու կամ գույքային ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու մղում»:

Այսպիսով, անձի արարքում շահադիտական դրդապատճառը (շարժառիթը, դրդումը) բացահայտելիս անհրաժեշտ է հիմք ընդունել այն հանգամանքը, որ դրա հիմնական բովանդակությունը նրա մղումների ուղղվածությունն է նյութական օգուտ ստանալուն, ապօրինի հարստանալուն: Այլ կերպ ասած՝ արարքը տվյալ դեպքում ոչ թե նպատակին հասնելու միջոց է, այլ ինքնանպատակ, համապատասխան դրդումը բավարարելու եղանակ: Այսինքն՝ շահադիտական շարժառիթը միշտ ենթադրում է նաև շահադիտական նպատակի առկայություն: Մինչդեռ հակառակը պնդելն անհնար է: Մասնավորապես, նյութական օգուտ ստանալու նպատակը կարող է պայմանավորված լինել նաև այլ (ոչ շահադիտական) շարժառիթներով, օրինակ՝ ինքնահաստատվելու մղումով, փառասիրությունից դրդված և այլն<sup>15</sup>:

Վերը նկարագրված հանգամանքներով պայմանավորված՝ իրավակիրառողները համապատասխան արարքները որակելիս կարող են լուրջ խնդիրներ ունենալ: Իրավիճակն ավելի կարող է բարդանալ օրենքում վերը քննարկված հասկացությունների միախառնվելու դեպքերում, որպիսիք, ինչպես արդեն նշվել է, առկա են: Ուստի, անհրաժեշտ ենք համարում «շահադիտական շարժառիթ (դրդում)» և «շահադիտական նպատակ» հասկացությունների օրենսդրական հստակ սահմանազատումը և օրենքում միատեսակ ձևակերպումների կիրառումը: Այսպես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահադիտական դրդումը (շարժառիթը)՝ որպես գույքային օգուտ ստանալու կամ գույքային ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու մղում, միանշանակ ենթադրում է այնպիսի ցանկալի վերջնարդյունքի ձգտում, որը կապված է նյութական շահ ստանալու հետ, առաջարկում ենք ՀՀ

<sup>14</sup> Տե՛ս նաև՝ *Романова В. В.*, Корыстная заинтересованность как мотив злоупотребления полномочиями // КриминалистЪ, 2012, №1 (10), էջ 27:

<sup>15</sup> Տե՛ս նաև՝ *Варанкина Ю.*, Проблемы квалификации преступлений, совершаемых из корыстной или иной личной заинтересованности (на примерах судебно-следственной практики по уголовным делам о преступлении, предусмотренном ст. 1451 УК РФ) // Уголовное право. 2008. № 6, էջ 18:



քրեական օրենսգրքում հրաժարվել «շահադիտական նպատակ» հասկացության կիրառումից՝ իրականացնելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

Միննույն ժամանակ, շահադիտական նպատակը որպես քննարկվող հանցագործության հատկանիշ սահմանելը, մեր կարծիքով, խնդրահարույց է: Բանն այն է, որ նյութական օգուտ ստանալը կարող է հանդիսանալ ոչ թե հանցավորի նպատակ, այլ որոշակի այլ նպատակի հասնելու միջոց: Օրինակ՝ անօրինական միգրացիան կարող է կազմակերպվել անտուն մարդկանց բարեգործական կացարան կամ անօթևան կենդանիների անվճար ապաստարան կառուցելու նպատակով, որին հասնելու համար պահանջվում են նյութական միջոցներ: Բացի այդ, հնարավոր է նաև քննարկվող արարքի կատարումն, օրինակ, ընտանիքի անդամներին կամ այլ հարազատներին կամ ընկերներին վերաբնակեցնելու կամ նրանց հետ վերամիավորվելու նպատակով: Ուստի, նման իրավիճակները ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով որակելը կհակասի սահմանված իրավակարգավորումներին: Հետևաբար, անօրինական միգրացիայի կազմակերպման դեմ առավել արդյունավետ պայքար իրականացնելու համար իրավական պատշաճ հիմք ստեղծելու նկատառումներով, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածում՝ որպես տվյալ արարքի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, նախատեսել դրա կատարումը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով:

### **Եզրակացություն**

Ամփոփելով քննարկվող հանցագործության սուբյեկտիվ հատկանիշները՝ կարելի է առանձնացնել հետևյալ եզրակացությունները.

– Անօրինական միգրացիա կազմակերպելու սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով: Դրա առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է նախ և առաջ հիմնավորել, որ հանցավորը գիտակցել է, մի դեպքում, օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը), իսկ մյուսում՝ անձի (անկախ քաղաքացիությունից կամ այն ունենալուց)՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելն իր կողմից կազմակերպելը, և այդ արարքները կատարելը նրա նպատակն է եղել կամ այդ նպատակին հասնելու միջոցը:

– Քրեական օրենսգրքում մի շարք հանցակազմեր ձևակերպելիս հայրենի օրենսդիրն օգտագործում է «շահադիտականի» իմաստն արտացոլող իրարից տարբերվող տերմինաբանություն: Մասնավորապես, հանցավոր առանձին արարքների (այդ թվում՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված) սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշների շարքում որոշ դեպքերում նախատեսված է շահադիտական նպատակը, մյուսներում՝ շահադիտական դրդումները կամ շահադիտական շահագրգռվածությունը: Ի դեպ, «շահադիտական նպատակ» հասկացությունը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի միայն երեք հոդվածներում: Ընդ որում, հոդված 298-ում տեղ է գտել «շահադիտական նպատակով կամ այլ ստոր դրդումներով» ձևակերպումը, որում, ըստ էության, նույնացվել են «նպատակ» և «դրդում» (շարժառիթ) հասկացությունները, ինչը չի կարող արդարացված համարվել, քանզի շարժառիթն ու նպատակը թեև սերտորեն փոխկապակցված, բայց նաև իրարից տարբերվող և ինքնուրույն երևույթներ են: Մասնավորապես, շարժառիթը գործունեության մղում է, որը կապված է որոշակի պահանջմունքի արդիականացման հետ: Մինչդեռ նպատակը մարդկային գործունեության

այն վերջնարդյունքն է, որով իրագործվում (բավարարվում) է համապատասխան պահանջմունքը:

- Անձի արարքում շահադիտական դրդապատճառը (շարժառիթը, դրդումը) բացահայտելիս անհրաժեշտ է հիմք ընդունել այն հանգամանքը, որ դրա հիմնական բովանդակությունը նրա մղումների ուղղվածությունն է նյութական օգուտ ստանալուն, ապօրինի հարստանալուն: Այլ կերպ ասած՝ արարքը տվյալ դեպքում ոչ թե նպատակին հասնելու միջոց է, այլ ինքնանպատակ, համապատասխան դրդումը բավարարելու եղանակ: Այսինքն՝ շահադիտական շարժառիթը միշտ ենթադրում է նաև շահադիտական նպատակի առկայություն: Մինչդեռ հակառակը պնդելն անհնար է, քանզի նյութական օգուտ ստանալու նպատակը կարող է պայմանավորված լինել նաև այլ (ոչ շահադիտական) շարժառիթներով, օրինակ՝ ինքնահաստատվելու մղումով, փառասիրությունից դրդված և այլն:

- Անհրաժեշտություն է առկա «շահադիտական շարժառիթ (դրդում)» և «շահադիտական նպատակ» հասկացություններն օրենսդրորեն հստակ սահմանազատելու և օրենքում այդ կապակցությամբ միատեսակ ձևակերպումներ կիրառելու: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահադիտական դրդումը (շարժառիթը)՝ որպես գույքային օգուտ ստանալու կամ գույքային ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու մղում, միանշանակ ենթադրում է այնպիսի ցանկալի վերջնարդյունքի ձգտում, որը կապված է նյութական շահ ստանալու հետ, առաջարկվում է ՀՀ քր. օր.-ում հրաժարվել «շահադիտական նպատակ» հասկացության կիրառումից՝ իրականացնելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

- Շահադիտական նպատակը որպես քննարկվող հանցագործության հատկանիշ սահմանելը խնդրահարույց է, քանզի որոշ դեպքերում նյութական օգուտ ստանալը կարող է հանդիսանալ ոչ թե հանցավորի նպատակ, այլ որոշակի ուրիշ նպատակի հասնելու միջոց: Օրինակ՝ անօրինական միգրացիան կարող է կազմակերպվել անտուն մարդկանց բարեգործական կացարան կամ անօթևան կենդանիների անվճար ապաստարան կառուցելու նպատակով, որին հասնելու համար պահանջվում են նյութական միջոցներ: Հնարավոր է նաև քննարկվող արարքի կատարումն, օրինակ, ընտանիքի անդամներին կամ այլ հարազատներին կամ ընկերներին վերաբնակեցնելու կամ նրանց հետ վերամիավորվելու նպատակով: Նման իրավիճակները ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով որակելը կհակասի սահմանված իրավակարգավորումներին: Հետևաբար նաև՝ անօրինական միգրացիա կազմակերպելու դեմ առավել արդյունավետ պայքար իրականացնելու համար իրավական պատշաճ հիմք ստեղծելու նկատառումներով, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածում՝ որպես տվյալ արարքի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, նախատեսել դրա կատարումը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով:

**Ամփոփագիր:** Հոդվածում քննարկվում են անօրինական միգրացիայի սուբյեկտիվ հատկանիշների առանձնահատկությունների հետ կապված հարցերը: Նշվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 470-ով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ հանցանքը կատարելու պահին 16 տարին լրացած ցանկացած մեղսունակ ֆիզիկական անձ: Բացի դրանից՝ ընդգծվում է, որ ՀՀ քրեական գործող օրենսդրության դրույթներին համապատասխան, քննարկվող հանցագործության պարագայում հարց կարող է առաջանալ նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին:

Հետազոտության շրջանակում հատուկ անդրադարձ է կատարվում նաև անօրինական միգրացիայի կազմակերպման սուբյեկտիվ կողմին: Այդ կապակցությամբ նշվում է, որ տվյալ հանցագործությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով:

Հեղինակը հատուկ ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ ՀՀ քրեական օրենսգրքում օրենսդիրն օգտագործում է «շահադիտականի» իմաստն արտացոլող իրարից տարբերվող տերմինաբանություն, ինչն անընդունելի է: Այդ կապակցությամբ առաջարկվում է որպես անօրինական միգրացիայի կազմակերպման սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ նախատեսել դրա կատարումը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով:

**Annotation.** The article discusses issues related to the characteristics of subjective signs of organizing illegal migration. It is noted that the subject of the crime under Art. 470 of the Criminal Code of the Republic of Armenia, any sane person who has reached the age of 16 years. In addition, it is emphasized that, in accordance with the provisions of the current criminal legislation of the Republic of Armenia, when committing this crime, the question of criminal liability of legal entities may also arise.

Within the framework of the study, special attention is also paid to the subjective side of the organization of illegal migration. In this regard, it is noted that this crime is characterized by direct intent and selfish purpose.

The author also draws special attention to the fact that in the RA Criminal Code, the legislator uses different terminology to denote the meaning of “self-interest,” which is unacceptable. In this regard, it is proposed to provide for the committing of an act out of selfishness or other personal or group interest as a mandatory feature of the subjective side of the organization of illegal migration.

**Аннотация.** В статье рассматриваются вопросы, связанные с особенностями субъективных признаков организации незаконной миграции. Отмечается, что субъектом преступления, предусмотренного ст. 470 Уголовного кодекса РА, может являться любое вменяемое лицо, достигшее 16-летнего возраста. Кроме того, подчеркивается, что в соответствии с положениями действующего уголовного законодательства РА, при совершении данного преступления может возникнуть также вопрос об уголовной ответственности юридических лиц.

В рамках исследования особое внимание уделяется также субъективной стороне организации незаконной миграции. В этой связи отмечается, что данное преступление характеризуется прямым умыслом и корыстной целью.

Автор также обращает специальное внимание на то обстоятельство, что в УК РА для обозначения понятия «корысть» законодатель использует различную терминологию, что неприемлемо. В данной связи предлагается в качестве обязательного признака субъективной стороны организации незаконной миграции предусмотреть совершение деяния из корыстной или иной личной или групповой заинтересованности.

**Բանալի բառեր** - անօրինական միգրացիա, անօրինական միգրացիայի կազմակերպում, հանցագործության սուբյեկտ, հանցագործության սուբյեկտիվ կողմ, հանցագործության սուբյեկտի տարիք, մեղսունակություն, դիտարկություն, շահադիտական նպատակ:

**Keywords:** illegal migration, organization of illegal migration, subject of the crime, subjective side of the crime, age of the subject of the crime, sanity (imputabilitas), intent, profit purpose.

**Ключевые слова:** незаконная миграция, организация незаконной миграции, субъект преступления, субъективная сторона преступления, возраст субъекта преступления, вменяемость, умысел, корыстная цель.

### Օգտագործված գրականության ցանկ

1. Արդի հայերենի բացատրական բառարան / Էդուարդ Բագրատի Աղայան, Եր., «Հայաստան» Հրատարակչություն, 1976:
2. ԱԱԾ-ն անօրինական միգրացիայի կազմակերպմամբ զբաղվող հերթական հանցավոր խումբն է բա-

ցահայտել // <https://www.aravot.am/2022/07/19/1280917/>:

3. Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան / Աշոտ Մուրադի Սուքիասյան, Երևան, «Երևանի Պետական Համալսարան», 2009:

4. 25.000 ԱՄՆ դոլարի դիմաց կազմակերպել են ՀՀ քաղաքացիների անօրինական մեկնումը ԱՄՆ // <https://www.aravot.am/2022/11/14/1304457/>:

5. Андрюшенков В. А., Субъект преступления, предусмотренного ст. 322, УК РФ «Организация незаконной миграции» // Психопедагогика в правоохранительных органах, 2016, № 3(66), էջ 39:

6. Полный курс уголовного права: в 5 томах / [Бойцов А. И. и др.] / Под ред. А. И. Коробеева. СПб.: «Юридический центр Пресс», 2008, էջ 388:

7. Варанкина Ю., Проблемы квалификации преступлений, совершаемых из корыстной или иной личной заинтересованности (на примерах судебно-следственной практики по уголовным делам о преступлении, предусмотренном ст. 1451 УК РФ) // Уголовное право. 2008. № 6, էջ 18:

8. Уголовное право. Общая часть: Учебник. Издание второе переработанное и дополненное / Под ред. докт. юрид. наук, проф. Л. В. Иногамовой-Хегай; докт. юрид. наук, проф. А.И. Рарога; докт. юрид. наук, проф. А.И. Чучаева. – М.: Юридическая фирма «КОНТРАКТ»: ИНФРА-М, 2008, էջ 116:

9. Михеев Р. И., Проблемы вменяемости, вины и уголовной ответственности (теория и практика): автореф. дис... д-ра юрид. наук. М., 1995, էջ 17, Павлов В. Г., Учение о субъекте преступления. М., 2015, էջ 60, Рарог А. И., Квалификация преступлений по субъективным признакам. СПб., 2002, էջեր 248–249:

10. Михеев Р. И., նշված աշխատություն, էջեր 17-18:

11. Романова В. В., Корыстная заинтересованность как мотив злоупотребления полномочиями // КриминалистЪ, 2012, №1 (10), էջ 27:

12. Фоменко Д. Д., К вопросу о понятии «Незаконная миграция» // Гуманитарные, социально-экономические и общественные науки. – 2021. – №2. – URL: <https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-ponyatii-nezakonnaya-migratsiya>.

13. Павлов В. Г., Учение о субъекте преступления, СПб., 2000, էջ 60:

14. Незаконный ввоз мигрантов – суровый поиск лучшей жизни / Информационный документ Управления ООН по наркотикам и преступности (UNODC) // URL: [https://www.unodc.org/documents/toc/factsheets/TOC12\\_fs\\_migrantsmuggling\\_RU\\_HIRES.pdf](https://www.unodc.org/documents/toc/factsheets/TOC12_fs_migrantsmuggling_RU_HIRES.pdf):

15. UNODC: The Globalization of Crime: A Transnational Organized Crime Threat Assessment. 2010 // URL:[http://www.unodc.org/documents/data-and-analysis/tocta/TOCTA\\_Report\\_2010\\_low\\_res.pdf](http://www.unodc.org/documents/data-and-analysis/tocta/TOCTA_Report_2010_low_res.pdf):

**Հարությունյան Ն.** - ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական, էլիասցե՝ [narek.har.v@gmail.com](mailto:narek.har.v@gmail.com):

Ներկայացվել է խմբագրություն 28.08.2024 թ., տրվել է գրախոսության 28.08.2024 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Ս. Առաքելյանի կողմից, ընդունվել է տպագրության 18.11.2024 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2024.7-9-85>

ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ  
*իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի  
քրեաբանության կիրառական հիմնախնդիրների  
գիտահետազոտական կենտրոնի պետ,  
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս*

GEVORG ISRAYELIAN  
*Candidate of Law, Associate Professor,  
Head of the Scientific Research Center of  
Applied Problems in Criminology of  
National Bureau of Expertises of the National Academy of  
Sciences of the Republic of Armenia,  
Lecturer at Eurasia International University*

ГЕВОРГ ИСРАЕЛЯН  
*Кандидат юридических наук, доцент,  
начальник Научно-исследовательского центра  
прикладных проблем криминологии  
Национального бюро экспертиз  
Национальной академии наук Республики Армения,  
преподаватель Международного университета Евразия*

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՏԻՊԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**TYPICAL MECHANISMS OF THEFT, COMMITTED THROUGH THE USE  
OF INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES  
AND PREVENTIVE MEASURES IN THE REPUBLIC OF ARMENIA**

**ТИПИЧНЫЕ МЕХАНИЗМЫ ХИЩЕНИЙ, СОВЕРШАЕМЫХ  
ПОСРЕДСТВОМ ИСПОЛЬЗОВАНИЯ ИНФОРМАЦИОННО-  
КОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ, И МЕРЫ ИХ  
ПРЕДУПРЕЖДЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

### **Ներածություն**

Վիճակագրական տվյալները վկայում են, որ վերջին տարիներին քրեաբանական բացասական միտում՝ լայն տարածում են ստացել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների դեպքերը (2021 թվականին արձանագրվել է 181, 2022-ին՝ 461, 2023-ին՝ 630 դեպք)<sup>1</sup>: Չնայած դրան՝ Հայաստանի Հանրապետությունում տվյալ խնդիրը գիտական մակարդակով ամբողջովին ուսումնասիրված չէ: Նշվածը պայմանավորում է սույն հետազոտության անհրաժեշտությունը, արդիականությունը և նորոպը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների տիպային մեխանիզմները, դրա հիման վրա ներկայացնել կանխարգելման առաջարկություններ:

### **Հիմնական հետազոտություն**

#### **Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների տիպային մեխանիզմները**

Քրեական գործերի՝ մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները հավաստում են, որ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակություններին բնութագրական են հետևյալ տիպային մեխանիզմները.

##### **1. Տուժողի «Իդրամ» դրամապանակին հասանելիություն ստանալը**

Հանցավորը, որը հաճախ քրեակատարողական հիմնարկի կալանավոր է, «Viber» և «WhatsApp» հավելվածներով զանգահարում է տարբեր անձանց՝ հայտնելով, թե իբրև սխալմամբ գումար է փոխանցել նրանց «Իդրամ» դրամապանակներին և խնդրում տրամադրել նրանց հեռախոսահամարներին ստացված գաղտնաբառերը: Դրանք ձեռք բերելուց հետո նա հասանելիություն է ստանում տուժողների «Իդրամ» դրամապանակներին և, համապատասխան տվյալը մուտքագրելով, նրանց անունից կնքում է վարկային պայմանագրեր:

##### **2. Տուժողի բանկային քարտի տվյալներին հասանելիություն ստանալը**

Այս մեխանիզմն ընդգրկում է հետևյալ եղանակները.

1) Անհայտ անձը «WhatsApp» հավելվածի միջոցով կապ է հաստատում քաղաքացու հետ՝ «List.am» կայքում տեղադրված նրա հայտարարության տվյալներով: Գումար փոխանցելու պատրվակով հանցավորն ուղարկում է «Հայ Փոստի» հղում, որտեղ տուժողը լրացնում է իր բանկային քարտի տվյալները, ինչից հետո անհայտ անձը հափշտակում է քարտին առկա գումարը:

2) «WhatsApp» հավելվածով կամ բանկի տարբերանշանով այլ բջջային հավելվածով կամ բանկի հեռախոսահամարով քաղաքացու հետ կապ հաստատած անձը ներկայանում է որպես տվյալ բանկի աշխատակից, հավելվածի անվտանգությունն ապահովելու պատրվակով խաբեությամբ տիրանում է տուժողի բանկային քարտի տվյալներին և հաշվեհամարից կանխիկացնում գումար կամ առցանց վարկ ձևակերպում:

3) Պատիժը կրելու ընթացքում գումար հափշտակելու դիտավորությամբ քրեակատարողական հիմնարկից՝ իր կողմից ապօրինի օգտագործվող բջջային հեռախոսների միջոցով

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում, էջ 19 // [https://www.prosecutor.am/storage/dynamic\\_web\\_pages/rep\\_50\\_8560351818.pdf](https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf), Հայաստանի Հանրապետության դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդում, էջեր 16-17 // [https://www.prosecutor.am/storage/dynamic\\_web\\_pages/dyn\\_page\\_285\\_1465690793.pdf](https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf) (վերջին մուտք՝ 23.07.2024թ.):

ստանալով համացանցի հասանելիություն՝ հանցավորը մուտք է գործում «Odnoklasniki.ru» կայք, որտեղ, բացելով անհատական էջ, ծանոթանում է տուժողի հետ, նրա հետ ստեղծում կեղծ մտերմիկ հարաբերություններ: Հետագայում, տուժողի վստահությունը չարաշահելու եղանակով՝ հանցավորը նրանից պահանջում է բանկային քարտի թվային տվյալները, որոնց միջոցով կատարում դրամական միջոցների հափշտակություն:

4) Հանցավորը սոցիալական կայքի միջոցով անձնական ծանոթություն է հաստատում տուժողի հետ, առաջարկում գնալ թատրոն և տոմսի համար վճարելու նպատակով նրան համոզում է բանկային քարտի տվյալները լրացնել իր կողմից ուղարկված՝ ֆիշինգային կայքում ստեղծված կեղծ վճարային համակարգի հղմանը: Տուժողը լրացնում է բանկային քարտի տվյալները, կատարում վճարում, սակայն ստանում է մերժում և առաջարկ՝ դիմել վաճառքը սպասարկող բաժին: Դիմելով այդ բաժին՝ տուժողից ճշտում են քարտին առկա ողջ գումարի չափը և, իմանալով դա, հափշտակում այն:

Այս մեխանիզմով կատարվող հափշտակությունների պարագայում հանցավորները, որպես կանոն, ձեռք են բերում կրիպտոարժույթ, որի շարժը վերահսկելի չէ, կամ հափշտակված գումարները փոխանցվում են հանցավորների կողմից տնօրինվող, սակայն այլ անձանց պատկանող բանկային քարտերին, որոնցից այնուհետև կանխիկացվում կամ փոխանցվում են Հայաստանում գործունեություն ծավալող բուքմեյքերական ընկերությունների խաղային հաշիվներին:

### **3. Տուժողի գումարին հասանելիություն ստանալը**

Այս մեխանիզմը ևս ներառում է տարբեր եղանակներ.

1) Հանցավորը «Facebook» կամ «Instagram» սոցիալական կայքով ներկայանում է որևէ կազմակերպության, օրինակ՝ «Գազպրոմ» ընկերության մենեջեր կամ ֆինանսական խորհրդատու, ներդրումային կեղծ կայքերում ներդրում կատարելու և եկամուտի հետ միասին հետ փոխանցելու պատրվակով տուժողից պահանջում և փոխանցման միջոցով ստանում է գումար, սակայն փոխանցելուց հետո խաբեությամբ հափշտակում է այն:

2) Անհայտ անձը «Facebook.com» սոցիալական ցանցում, տուժողի՝ արտերկրում, որպես կանոն, ԱՄՆ-ում կամ ՌԴ-ում գտնվող ընկերոջ անունով և նկարներով ֆեյսբուքյան էջ է բացում ու խաբեությամբ տիրանում որպես օգնություն տուժողի կողմից «Թեյ-Սեյ» հավելվածով կամ այլ էլեկտրոնային եղանակով փոխանցված գումարին:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ քննարկվող հանցագործությունների մեխանիզմում գլխավոր դերը, որպես կանոն, պատկանում է զոհային գործոնին: Այլ խոսքով՝ հիշատակված հանցագործությունների կատարումը գերազանցապես պայմանավորում է տուժողի անձնային, վարքային հատկանիշները, իսկ երբեմն նաև հանցավորի հետ փոխհարաբերությունների բնույթը: Տուժողներին բնութագրական անձնային հատկանիշներն են՝ դյուրահավատությունը, անշրջահայացությունը, թեթևամտությունը, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու նվազ կարողությունները: Նշված անձնային հատկանիշներին համապատասխան՝ կոնկրետ իրադրությունում տուժողները, որպես կանոն, դրսևորում են դասավորվող իրադրությունը ճիշտ գնահատելու անկարողություն, հայտնվում են մոլորության մեջ, երբեմն էլ անհեռատեսորեն հաստատում են վտանգավոր կապեր<sup>2</sup>:

Ձոհային գործոնից բացի՝ խնդրո առարկա հանցագործությունների կատարմանը նպաստում է իրավապահ մարմինների տեխնիկական սուղ հնարավորությունները<sup>3</sup>:

<sup>2</sup> Տե՛ս *Իսրայելյան Գ.*, Համակարգչային հափշտակության ընդհանուր զոհաբանական կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, ապրիլ-հունիս 2024, 4-6 (298-300), էջ 43:

<sup>3</sup> Տե՛ս *Իսրայելյան Գ.*, Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը և իրացումը

**Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների կանխարգելման առաջարկություններ**

Հաշվի առնելով խնդրո առարկա հանցագործությունների կատարման առանձնահատկությունները՝ հատուկ կանխարգելման կազմակերպման ուղղությամբ առաջարկում ենք.

1) լուծել իրավապահ մարմինների տեխնիկական վերազինման, համապատասխան հավելվածներ հասանելիության հարցը, մասնավորապես՝ պարբերաբար համագործակցել «Chainalysis» ընկերության տարածաշրջանային ներկայացուցչության հետ՝ հատկապես «Reactor» ծրագրային ապահովումից օգտվելու ժամանակավոր արտոնագրեր ստանալու նպատակով, որի միջոցով հնարավոր է տեղեկություններ ստանալ Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող կիրառությունների վերաբերյալ,

2) իրականացնել Հայաստանի Հանրապետության տեղեկատվական տիրույթի, մասնավորապես՝ դոմենային տիրույթի և հայտնի սոցիալական ցանցերի հայկական սեգմենտի մշտադիտարկում, օպերատիվորեն հայտնաբերել համացանցում անօրինական բովանդակությամբ համապատասխան տեղեկատվություն և համարժեք արձագանքել դրան:

Խնդրո առարկա հանցագործությունների կանխարգելման համար հատկապես արդյունավետ են զոհաբանական բնույթի կանխարգելիչ միջոցառումները: Նկատի ունենալով տուժողի անձնային, վարքային հատկանիշները, հանցավորի հետ փոխհարաբերությունների բնույթը՝ առաջարկում ենք իրականացնել զոհաբանական կանխարգելիչ հետևյալ միջոցառումները.

1) բնակչության շրջանում անցկացնել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների զոհաբանական հարցերով սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ,

2) նպատակաուղղված օգտագործել մեդիայի հնարավորությունները, օրինակ՝ իրականացնել մեդիահրապարակումներ զոհային վարքի ձևավորմանը նպաստող գործոնների և հետևանքների վերաբերյալ,

3) ուսումնական հաստատություններում կազմակերպել զոհաբանական դաստիարակության ուղղվածություն ունեցող պարապմունքներ,

4) իրավապահ մարմինների միջոցով բնակչության շրջանում անցկացնել իրազեկման միջոցառումներ այն մասին, թե ինչպես խուսափել զոհածին իրավիճակից, ինչպիսի վարքագիծ դրսևորել համացանցային կասկածելի ծանոթությունների առաջարկ ստանալիս, ում դիմել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով հափշտակությունից տուժելու դեպքում, ինչպես նաև տեղեկատվություն տարածել նշված մեխանիզմով հափշտակություններ կատարողի անձի առանձնահատկությունների, հանցանքի կատարման արդի ձևերի մասին<sup>4</sup>:

**Եզրակացություն**

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ.

1. Վիճակագրական տվյալների համաձայն՝ վերջին տարիներին քրեաբանական բացասական միտում՝ լայն տարածում են գտել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլո-

---

տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով (քրեաբանական տեսանկյուն) // Իրավունքի արդի հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու / ՀՀ ՆԳՍ կրթահամալիր: - Եր., ՄՌԱՎ ՊՐԻՆՏ, 2024, էջ 36:

<sup>4</sup> Տե՛ս *Իսրայելյան Գ.*, Համակարգչային հափշտակության ընդհանուր զոհաբանական կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, ապրիլ-հունիս 2024, 4-6 (298-300), էջ 45:



գիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների դեպքերը: Այդ հանցագործությունների կանխարգելման կազմակերպման համար անհրաժեշտ է բացահայտել դրանց կատարման մեխանիզմը:

2. Համակարգչային հափշտակությունները կատարվում են հետևյալ տիպային մեխանիզմներով՝ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու տարբեր եղանակներով տուժողի «Իդրամ» դրամապանակներին, բանկային քարտի տվյալներին, գումարին հասանելիություն ստանալով:

3. Հիշատակված հանցագործությունների կատարումը, որպես կանոն, պայմանավորում է տուժողի անձնային, վարքային հատկանիշները, իսկ երբեմն նաև հանցավորի հետ փոխհարաբերությունների բնույթը: Տուժողներին բնութագրական անձնային հատկանիշներն են՝ դյուրահավատությունը, անշրջահայացությունը, թեթևամտությունը, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու նվազ կարողությունները: Նշված անձնային հատկանիշներին համապատասխան՝ կոնկրետ իրադրությունում տուժողները, որպես կանոն, դրսևորում են դասավորվող իրադրությունը ճիշտ գնահատելու անկարողություն, հայտնվում են մոլորության մեջ, երբեմն էլ անհեռատեսորեն հաստատում են վտանգավոր կապեր:

Ձոհային գործոնից բացի՝ խնդրո առարկա հանցագործությունների կատարմանը նպաստում է իրավապահ մարմինների տեխնիկական սուղ հնարավորությունները:

4. Խնդրո առարկա հանցագործությունների հատուկ կանխարգելման ուղղությամբ անհրաժեշտ է լուծել իրավապահ մարմինների տեխնիկական վերազինման, համապատասխան հավելվածներ հասանելիության հարցը, իրականացնել Հայաստանի Հանրապետության տեղեկատվական տիրույթի մշտադիտարկում, օպերատիվորեն հայտնաբերել համացանցում անօրինական բովանդակությամբ համապատասխան տեղեկատվություն և համարժեք արձագանքել դրան:

5. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների կանխարգելման համար հատկապես արդյունավետ են զոհաբանական բնույթի կանխարգելիչ միջոցառումները: Այս ուղղությամբ անհրաժեշտ է բնակչության շրջանում անցկացնել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով կատարվող հափշտակությունների զոհաբանական հարցերով սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ, նպատակաուղղված օգտագործել մեդիայի հնարավորությունները, օրինակ՝ իրականացնել մեդիահարապարակումներ զոհային վարքի ձևավորմանը նպաստող գործոնների և հետևանքների վերաբերյալ, ուսումնական հաստատություններում կազմակերպել զոհաբանական դաստիարակության ուղղվածություն ունեցող պարապմունքներ, իրավապահ մարմինների միջոցով բնակչության շրջանում անցկացնել իրազեկման միջոցառումներ:

**Ամփոփագիր:** Վիճակագրական տվյալները վկայում են, որ վերջին տարիներին քրեաբանական բացասական միտում՝ լայն տարածում են գտել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների դեպքերը, ինչը պայմանավորում է այդ խնդրի հետազոտության անհրաժեշտությունը:

Հեղինակի հետազոտության արդյունքները վկայում են, որ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների տիպային մեխանիզմներն են՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու տարբեր եղանակներով տուժողի «Իդրամ» դրամապանակներին, բանկային քարտի տվյալներին, գումարին հասանելիություն ստանալը: Ակնհայտ է, որ քննարկվող հանցագործությունների մեխանիզմում գլխավոր դերը, որպես կանոն, պատկանում է զոհային գործոնին: Այլ խոսքով՝ հիշատակված հանցագործությունների կատարումը գերազանցապես պայմանավորում է տուժողի անձնային, վարքային հատկանիշ-

ները, իսկ երբեմն նաև հանցավորի հետ փոխհարաբերությունների բնույթը:

Խնդրո առարկա հանցագործությունների հատուկ կանխարգելման ուղղությամբ հեղինակն առաջարկում է լուծել իրավապահ մարմինների տեխնիկական վերազինման, համապատասխան հավելվածներ հասանելիության հարցը, իրականացնել Հայաստանի Հանրապետության տեղեկատվական տիրույթի մշտադիտարկում, օպերատիվորեն հայտնաբերել համացանցում անօրինական բովանդակությամբ համապատասխան տեղեկատվություն և համարժեք արձագանքել դրան:

Ձոհաբանական կանխարգելման ուղղությամբ հեղինակն առաջարկում է բնակչության շրջանում անցկացնել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով կատարվող հափշտակությունների զոհաբանական հարցերով սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ, նպատակաուղղված օգտագործել մեդիայի հնարավորությունները, ուսումնական հաստատություններում կազմակերպել զոհաբանական դաստիարակության ուղղվածություն ունեցող պարապմունքներ, իրավապահ մարմինների միջոցով բնակչության շրջանում անցկացնել իրազեկման միջոցառումներ:

**Annotation.** Statistical data show that in recent years there has been a negative criminological trend – cases of theft using information and communication technologies have become more frequent, which determines the need to study this problem.

The results of the author's research indicate that the typical mechanisms of theft carried out using information and communication technologies are obtaining access to Idram wallets, bank card data and the victim's funds by various means of deception or abuse of trust. It is obvious that the main role in the mechanism of the crimes under discussion, as a rule, belongs to the victim factor. In other words, the commission of these crimes largely determines the personal and behavioral characteristics of the victim, and sometimes the nature of the relationship with the perpetrator. In addition to the victim factor, the commission of the crimes in question is facilitated by the limited technical capabilities of law enforcement agencies.

In the direction of special prevention of the crimes under consideration, the author proposes to resolve the issue of technical re-equipment of law enforcement agencies, provide access to relevant applications, monitor the information space of the Republic of Armenia, promptly identify relevant information of illegal content on the Internet and adequately respond to it.

In order to victimological prevention, it is necessary to hold seminars, discussions and other events among the population on victimological issues of these crimes, carry out media publications of appropriate content, organize victimological and educational classes in educational institutions, conduct explanatory events by law enforcement agencies.

**Аннотация.** Данные статистики показывают, что в последние годы наметилась негативная криминологическая тенденция – участились случаи хищений с использованием информационно-коммуникационных технологий, что определяет необходимость исследования данной проблемы.

Результаты исследования автора указывают, что типичными механизмами хищений, осуществляемых с использованием информационно-коммуникационных технологий, являются получение доступа к электронным кошелькам «Idram», данным банковских карт и денежным средствам потерпевшего различными способами обмана или злоупотребления доверием. Очевидно, что основная роль в механизме обсуждаемых преступлений, как правило, принадлежит виктимному фактору. Иными словами, совершение указанных преступлений во многом определяют личностные и поведенческие особенности потерпевшего, а иногда и характер взаимоотношений с преступником. Помимо виктимного фактора, совершению рассматриваемых преступлений способствуют ограниченные технические возможности правоохранительных органов.

По направлению специального предупреждения рассматриваемых преступлений автор предлагает разрешить вопрос технического перевооружения правоохранительных органов, обеспечить доступ к соответствующим приложениям, осуществлять мониторинг информационного пространства Республики Армения, оперативно выявлять в сети Интернет соответствующую информацию противоправного содержания и адекватно реагировать на нее.

С целью виктимологического предупреждения рассматриваемых преступлений необходимо среди населения проводить семинары, дискуссии и другие мероприятия по виктимологическим вопросам указанных преступлений, осуществлять медиа-публикации соответствующего содержания, в образовательных учреждениях организовать занятия виктимологического-воспитательного характера, правоохранительными органами проводить разъяснительные мероприятия.

**Բանալի բառեր** - տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, հափշտակություն, կանխարգելում:

**Keywords:** information and communication technologies, theft, prevention.

**Ключевые слова:** информационные и коммуникационные технологии, хищение, предупреждение.

### Օգտագործված գրականության ցանկ

1. Իսրայելյան Գ., Համակարգչային հափշտակության ընդհանուր զոհաբանական կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, ապրիլ-հունիս 2024, 4-6 (298-300), էջեր 41-48:

2. Իսրայելյան Գ., Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը և իրացումը տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով (քրեաբանական տեսանկյուն) // Իրավունքի արդի հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու / ՀՀ ՆԳՆ կրթահամալիր: - Եր., ՄՈՒՎ ՊՐԻՆՏ, 2024, էջեր 34-44:

3. Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում // [https://www.prosecutor.am/storage/dynamic\\_web\\_pages/rep\\_50\\_8560351818.pdf](https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf):

4. Հայաստանի Հանրապետության դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդում // [https://www.prosecutor.am/storage/dynamic\\_web\\_pages/dyn\\_page\\_285\\_1465690793.pdf](https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf):

**Իսրայելյան Գ.** - ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, էլիասցե՝ [g\\_i\\_1979@mail.ru](mailto:g_i_1979@mail.ru):

Ներկայացվել է խմբագրություն 07.11.2024 թ., տրվել է գրախոսության 07.11.2024 թ., երաշխավորվել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Խեչոյանի կողմից, ընդունվել է տպագրության 18.11.2024 թ.:

**ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ / PENITENTIARY LAW /  
УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНОЕ ПРАВО**

<https://doi.org/10.59546/18290744-2024.7-9-92>

ՌՈԶԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս*

ROZA ABRAHAMYAN  
*Lecturer at YSU Chair of Criminal Law*

РОЗА АБРААМЯН  
*Преподаватель кафедры уголовного права ЕГУ*

**«ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ»՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ**

**«LEGAL GUARANTEES» AS A PROBLEM OF THE THEORY  
OF CRIMINAL-EXECUTIVE LAW**

**«ПРАВОВЫЕ ГАРАНТИИ» КАК ПРОБЛЕМА ТЕОРИИ  
УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНОГО ПРАВА**

**Ներածություն**

Դատապարտյալների իրավական վիճակի, ներառյալ նրանց իրավունքների կենսագործման համատեքստում «երաշխիքներ» հասկացության հետազոտությունների արդյունքները հնարավոր է օգտագործել այս գիտական հոդվածի հետազոտության առարկայի համատեքստից բխող քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման երաշխիքների իմաստավորման համար: Այդ հարցում չկան լուրջ տեսամեթոդաբանական արգելքներ. այլ կերպ ասած՝ քրեակատարողական հարաբերությունների ոլորտում դատապարտյալների իրավունքների երաշխիքների հայեցակարգն ընդունելի է նաև այդ ճյուղի սկզբունքների կենսագործման երաշխիքների հասկացության և շրջանակի տեսական հասկացության իմաստավորման համար, որովհետև իրավական ցանկացած սկզբունքին թղթակցում է դրանցից բխող համապատասխան սուբյեկտիվ իրավունքը(ները) և պարտականությունը(ները):

Ցանկացած իրավական սկզբունքից, որպես ղեկավար և ելակետային իրավական դրույթից բխում է այդ սկզբունքի կարգավորման ոլորտի մասնակից անձանց (իրավահարաբերությունների սուբյեկտների) համապատասխան սուբյեկտիվ իրավունքը կամ պարտականությունը: Հետևաբար, եթե քրեակատարողական օրենսդրությունն ամրագրում է պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքները, ապա այդ ղեկավար նշանակության իրավադրույթներից բխում է, որ դատապարտված (ազատագրված) անձինք

ունեն պատիժը տարբերակված և իրենց անձնական-յուրահատուկ հատկանիշներին համապատասխան անհատականացված կրելու սուբյեկտիվ իրավունքները: Ստացվում է, որ որպես սուբյեկտիվ իրավունքի նշանակություն ունեցող իրավադրույթի իրավական երաշխիքները միաժամանակ համանուն իրավական սկզբունքի կենսագործման երաշխիքներ են:

**Հիմնական հետազոտություն**

Իրավագիտության մեջ «երաշխիք» հասկացությունն իմաստավորված է մի քանի առումներով: Հանրագիտարանային իրավական բառարաններում «երաշխիք» (ռուսերեն: гарантия, անգլերեն՝ guarantee) հասկացության ճյուղային իրավական իմաստների բացահայտման (բնորոշման) ամփոփումը, հիմք է տալիս եզրակացնելու, որ իրավական երաշխիքներն ինչ-որ երևույթի (օրինականության, իրավակարգի, սուբյեկտիվ իրավունքի և այլն) կենսագործման (իրականացման) ապահովման իրավական, կազմակերպական, տեղեկատվական և այլ միջոցների ամբողջություն է<sup>1</sup>:

Իրավագիտության մեջ «երաշխիք» հասկացությունն ունի մի քանի առումներ, մասնավորապես՝ համընդհանուր ճանաչում ունեն «նորմ-երաշխիքներ» և «օրինականության (իրավակարգի) երաշխիքներ» հասկացությունները: Բացի դրանից՝ իրավունքի տեսությունը, ըստ սոցիալական նշանակության և իրավական համակարգում դերի, չափանիշի իրավանորմի տեսակներից է համարում ապահովող նորմերը կամ նորմ-երաշխիքները<sup>2</sup>:

Նորմ-երաշխիքները պարունակում են իրավական կարգավորման ընթացքում սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների իրականացումն ապահովող կարգադրեր և արժեքավոր են այնքանով, որքանով ստեղծում են իրավունքի անկանգառ և անընդհատ իրացման կառուցակարգեր և միջոցներ<sup>3</sup>: Իրավական օրինականության (օրինականության) տեսության համատեքստում օրինականության ապահովումը պետական գործունեության մեջ դիտարկվում է երկու տարրերի ամբողջություն՝ օրինականության խախտումների նախականելում և օրինականության ամրապնդում: Վերջինս ենթադրում է հանրային պետական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մեջ օրինականության ձևավորման և կատարելագործման երաշխիքների ամրապնդում: Օրինականության երաշխիքներն իրենց հերթին պետական կառուցակարգի ներսում և դրանցից դուրս դրականորեն գործող պայմաններ, գործոններ ու միջոցներ են, որոնք ապահովում են օրինականությունը, իրավակարգը<sup>4</sup>: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ օրինականության երաշխիքները հասարակական կյանքի օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների, կազմակերպական և հատուկ (իրավական) միջոցների համակարգ է, որոնք օգտագործում է պետությունն օրինականության, կայուն իրակավակարգի ապահովման համար<sup>5</sup>: Հետևաբար, «երաշխիքները օրինականությունը նշանակում է այն դարձնել անքակտելի»<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Юридический энциклопедический словарь, 2-е издание, М.: «Советская энциклопедия», 1987, էջ 74; *Барихин А.Б.*, Большая юридическая энциклопедия.- М.: Книжный мир, 2012, էջ 139-142; Краткий юридический словарь / под. ред. А.Н. Азрилияна.- М.: Институты новой экономики, 2005, էջ 110-116:

<sup>2</sup> Ըստ այդ չափանիշի նորմերի տեսակներն են՝ հիմնադիր (սկզբունքներ), կարգավորիչ (վարքագծի կանոններ), պահպանող, դեկլարատիվ (նորմ-հռչակագրեր), դեֆինիտիվ (նորմ-հասկացություններ), կոլիզիոն (նորմ-արբիտրներ), օպերատիվ (նորմ-գործիքներ) (տե՛ս Теория государства и права: Отв. ред. В.Д. Перевалов. 3-е изд., перераб. и доп. - М.: Норма., 2006, էջ 163-164):

<sup>3</sup> Տե՛ս Теория государства и права: Отв. ред. В. Д. Перевалов. 3-е изд., перераб. и доп. - М.: Норма., 2006, էջ 164:

<sup>4</sup> Տե՛ս Общая теория государства и права. Академический курс в трех томах /отв. ред. М. Н. Марченко.- 3-е изд., перераб. и доп. - М.: Норма, 2007, Том 3, էջ 191-192:

<sup>5</sup> Տե՛ս *Скакун О. Ф.*, Теория государства и права (энциклопедический курс): Харьков: Эспада, 2005, էջ 721-722:

<sup>6</sup> Տե՛ս Теория государства и права: Отв. ред. В. Д. Перевалов. 3-е изд., перераб. и доп. - М.: Норма., 2006, էջ 280:

Իրավական երաշխիքները համարվում են իրավական որևէ երևույթի (օրինականության, իրավակարգի, սուբյեկտիվ իրավունքի, իրավական սկզբունքի և այլն) կենսագործման (իրականացման) ապահովման հատուկ իրավական, կազմակերպական, տեղեկատվական և այլ միջոցների, օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների, գործոնների ամբողջություն, որն ստեղծում է իրավունքի անկանգառ և անընդհատ կենսագործման կառուցակարգեր:

Դ. Ի. Իվաշինն իր թեկնածուական ատենախոսության մեջ առանձին գլուխ է հատկացրել քրեակատարողական հիմնարկներում «պահվող անձանց իրավունքների իրավական երաշխիքների» հետազոտությանը՝ փորձելով կառուցել այդ երաշխիքների հասկացությունը, վեր հանել դրանց տեսակները<sup>7</sup>: Այս հեղինակը, կարևորելով իրավական երաշխիքների դերը և նշանակությունն ազատազրկման վայրերում պահվող անձանց կարգավիճակի և սուբյեկտիվ իրավունքների ու ազատությունների կենսագործման կառուցակարգում, փորձում է գտնել տեսամեթոդաբանական կողմնորոշիչ հայեցակարգ իրավական երաշխիքների հասկացության ու տեսակների դասակարգման հարցում և այդ փնտրտուքի արդյունքում նա կանգ է առնում սահմանադրական իրավունքի տեսության մաս կազմող մարդու և քաղաքացու կարգավիճակի հայեցակարգի վրա: Այս ընտրությունը պայմանավորված է նրանով, որ «իրավական երաշխիքների» հիմնահարցն ավանդաբար կազմում է մարդու իրավունքների տեսության կարևոր մասերից մեկը, որում երաշխիքները համարվում են բարենպաստ պայմանների ու միջոցների համակցություն, որոնք ապահովում են մարդու և քաղաքացու իրավունքների իրականացվածությունը<sup>8</sup>: Մեկ այլ մոտեցմամբ՝ մարդու իրավունքների երաշխիքները սոցիալական, տնտեսական, քաղաքական, բարոյական, իրավական, կազմակերպական նախադրյալների, պայմանների, միջոցների և եղանակների համակարգ են, որոնք անհատների համար ստեղծում են հավասար հնարավորություններ իրենց իրավունքների ու ազատությունների, շահերի իրականացման համար<sup>9</sup>:

Հարցին այս տեսանկյունից մոտեցած բոլոր հեղինակներից Դ. Ի. Իվաշինը քրեակատարողական իրավունքում իրավաբանական երաշխիքների հիմնահարցի մշակման համար որպես մեթոդաբանական-հայեցակարգային հիմք որդեգրում է սահմանադրագետ Ն. Վ. Վիտրուկի մշակած իրավունքների և ազատությունների իրավաբանական երաշխիքների՝ ըստ բաղադրատարրերի դասակարգված համակարգը<sup>10</sup>: Ն. Վ. Վիտրուկն անհատի իրավունքների ու ազատությունների երաշխիքները բաժանում է երկու խմբի՝

ա) իրավունքների ու ազատությունների կենսագործման (իրականացման) երաշխիքներ, մասնավորապես՝ իրավունքների ու ազատությունների սահմանների կոնկրետացումը. իրավունքների ու ազատությունների իրականացումն ապահովող իրավաբանական փաստերը. իրավունքների ու ազատությունների իրականացման վարույթային ձևերը. իրավունքների ու

<sup>7</sup> Տե՛ս *Ивашин Д. И.*, Правовое положение осужденных к лишению свободы в Российской Федерации. Дисс. канд. юрид. наук. 12.00.08. – Хабаровск, 2003, էջ 135-162:

<sup>8</sup> Տե՛ս *Глухарева Л. И.*, Права человека в современном мире (социально-философские основы и государственно-правовое регулирование). М., 2003, էջ 277:

<sup>9</sup> Տե՛ս *Общая теория государства и права. Академический курс в трех томах / отв. Ред. М.Н. Марченко. Том 3, М., Норма, 2007, էջ 321*: Մարդու իրավունքների երաշխիքները լինում են՝ ըստ գործողության ոլորտի՝ ներպետական և միջազգային, ըստ շարադրման եղանակի՝ հասարակ և խառը ինստիտուտային, ըստ անհատի կարգավիճակի՝ ընդհանուր, հատուկ և անհատական: Ընդհանուր իրավական երաշխիքները սերտորեն կապված են կազմակերպական երաշխիքների հետ, որոնք իրենց հերթին, ըստ բովանդակության, բաժանվում են՝ վերահսկողական, ընթացակարգային և կազմակերպական տեխնիկական երաշխիքների (տե՛ս նույն տեղը, էջ 319-325): Մարդու և քաղաքացու իրավունքների ընդհանուր երաշխիքներն իրենց հերթին բաժանվում են նյութատնտեսական, քաղաքական, սոցիալական, հատուկ-իրավական երաշխիքների:

<sup>10</sup> Տե՛ս *Витрук Н. В.*, Правовой статус личности в СССР. М.: Юридическая литература, 1985, էջ 95:

ազատությունների նախաձեռնողական իրականացումը խրախուսող խթանման և արտոնությունների միջոցները,

բ) իրավունքների ու ազատությունների պահպանության (պաշտպանության) երաշխիքներ, մասնավորապես՝ իրավունքի սուբյեկտների վարքագծի նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը իրավախախտումների վերհանման նպատակով. իրավական պաշտպանությունը. իրավական պատասխանատվությունը. կանխումը և այլ իրավապահպան միջոցառումները. իրավունքների և ազատությունների պահպանության վարույթային ձևերը (ներառյալ իրավապահպան միջոցների կիրառման ձևերը). իրավախախտումների կանխումը և նախականխումը:

Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ, որ Ն. Վ. Վիտրուկը, բացի վերը բերված խորհրդային շրջանի մենագրությունից, նույն հիմնահարցի վերաբերյալ ունի նոր հրապարակված աշխատություններ, որոնցում փոխել է իր նախնական տեսիրական դիրքորոշումները և մշակել է ավելի ընդգրկուն հասկացություն՝ մարդու իրավունքների ապահովման սոցիալ-իրավաբանական կառուցակարգ<sup>11</sup>, որն ավելի ամբողջական և լայն մոտեցում է դրսևորում մարդու իրավունքների ապահովման և կենսագործման համակարգի նկատմամբ և դրանում առանձնացնում է համապատասխան ենթակառուցակարգերը՝ իրավունքների իրավական ամրագրման (իրավաստեղծ), իրավունքների պաշտպանության, խախտված սուբյեկտիվ իրավունքների վերականգնման, իրավական դաստիարակության:

Դ.Ի. Իվաշինը՝ Ն. Վ. Վիտրուկի նախնական, խորհրդային շրջանի մոտեցումը համարել է «բավականին հանգամանալից, որը գործնականորեն շոշափում է իրավական համակարգի բոլոր հիմնական առումները»<sup>12</sup>: Այս դրվատանքից հետո նա քննադատում է Ն.Վ. Վիտրուկի իրավական երաշխիքների տեսլականը, գտնելով, որ այն կրում է ընդլայնված բնույթ և բավական հստակ չի բնութագրում «իրավական երաշխիքները»<sup>13</sup>: Այս քննադատական մոտեցման լույսի տակ Դ. Ի. Իվաշինը սկսում է Ն. Վ. Վիտրուկի իրավական երաշխիքների համակարգի տարրերից բացառել կամ վերաձևակերպել դրանց մի մասը: Այսպես, Ն. Վ. Վիտրուկն իրավունքների կենսագործման երաշխիքների խմբում առաջին տեղում դնում է իրավունքների և ազատությունների սահմանների կոնկրետացումը: Առանց խորանալու դրա բովանդակության մեջ, Դ. Ի. Իվաշինն իրավական երաշխիքների այդ տարրը հայտարարում է «բավական վերացարկված»՝ գտնելով, որ անհասկանալի է մնում, թե ինչ սահմանների մասին է խոսքը, և ինչպես դրանք կոնկրետացնել<sup>14</sup>: Այս քննադատության հիմքով, Դ. Ի. Իվաշինն, ընդօրինա-

<sup>11</sup> Ст'я Общая теория государства и права. Академический курс в трех томах / отв. Ред. М.Н. Марченко. Том 3, М., Норма, 2007, էջ 293-296:

<sup>12</sup> Ст'я Ивашин Д. И., Правовое положение осужденных к лишению свободы в Российской Федерации. Дисс. канд. юрид. наук. 12.00.08. – Хабаровск, 2003, էջ 138:

<sup>13</sup> Ст'я նույն տեղը:

<sup>14</sup> Կոնկրետացման որպես իրավունքի կենսագործման տեսակի գաղափարը առաջ է քաշվել դեռևս խորհրդային շրջանում: Օրինակ՝ ըստ Լ. Ն. Զավադսկայայի «իրավական կարգադրագրերի իրականացման գործունեության» մեջ այդպիսի մոտեցում ներմուծելը «հնարավորություն է տալիս ցույց տալու, թե ինչպես են իրականացվում նորմատիվ կարգադրագրերը, ինչպիսի իրավական գործընթացում է դա տեղավորվում, և ինչպես են ազդում դրա վրա այն սոցիալական պայմանները, որոնցում դա ընթանում է»: Նրա կարծիքով՝ «իրավաիրականցող (կենսագործող) գործունեության փուլը ընդգրկում է պետական մարմինների գործունեությունը՝ ուղղված իրավական կարգադրագրերի բանական (ռացիոնալ) համակարգի ստեղծմանը, ինչը կոնկրետացնում է սկզբնական նորմատիվ ակտը: Այդ էտապում դեռևս չկան կոնկրետ իրավական հարաբերությունները: Իրավական կարգադրագրերի իրացման (ռեալիզացիայի) գործունեությունը դրսևորվում է իրավունքի ճշգրիտ գործողության համար նորմատիվ պայմանների ստեղծման համար» (տե՛ս Правовая система социализма. Функционирование и развитие /Отв. ред. А.М. Васильев, М., 1987, էջ 121):

կելով Ա. Ն. Բաբայի առաջարկությունը, գտնում է, որ իրավական երաշխիքների այդ տարրը պետք է վերաձևակերպել հետևյալ կերպ. «իրավունքների ու ազատությունների ինքնաբավությունը», որ ներառում կամ ենթադրում է դրանց հստակ ձևակերպումը օրենսդրության մեջ, որը բացառում է դրա երկակի մեկնաբանությունը<sup>15</sup>: Կարծում ենք, որ այս առաջարկությունը միակողմանի, համապարփակ ու ամբողջական չի կարելի համարել, քանի որ «ձևակերպման հստակության» պահանջը շատ նեղ բովանդակություն ունի և հնարավոր է տրամաբանորեն հստակ ու ինքնաբավ ձևակերպված իրավադրույթը չունենա կոնկրետացում: Մյուս կողմից պետք է նկատի ունենալ, որ Ն. Վ. Վիտրուկը, լինելով սահմանադրագետ կոնկրետացումը որպես իրավական երաշխիքի առաջին տարր դիտարկելով, նկատի ունի այն, որ Սահմանադրության բարձրագույն ուժ ունեցող և շատ դեպքերում վերացական ու համառոտ ձևակերպված իրավադրույթները միշտ ունեն Սահմանադրությունից օրենքներ և ենթաօրենսդրական նորմատիվ, ինչպես նաև անհատական ակտերի իրավակարգավորման կառուցակարգում կոնկրետացման խնդիր: Հենց այս հանգամանքն է հիմք հանդիսացել Ն. Վ. Վիտրուկի համար իրավական կոնկրետացումը համարելու իրավական երաշխիքի հիմնական և առաջին տարր: Ընդ որում՝ կոնկրետացման որպես իրավական նորմատիվ կարգավորման գործընթացը զուտ և միայն սահմանադրական իրավունքին բնորոշ հիմնական խնդիր չէ: Այն բնորոշ է իրավական կարգավորման բոլոր ոլորտներին և ճյուղերին, ներառյալ քրեակատարողական իրավունքին:

Այսպիսով, Դ. Ի. Իվաշինն իրավական երաշխիքների մեկնաբանության Ն.Վ. Վիտրուկի տարբերակը շատ լայն համարելով, քրեակատարողական իրավունքի ոլորտում համարում է այն անընդունելի: Նրա իսկ խոսքերով «իրերի այդպիսի դրությունը պայմանավորված է դրանում չափից դուրս շատ քանակով տարրեր ներառելով, ինչը տանում է դրա բովանդակության տարալուծման, ինչպես նաև թույլ չի տալիս իրականում որոշել դրա ներքին էությունը»<sup>16</sup>:

Դ. Ի. Իվաշինի այս դիտողության հիմքերը խորապես ուսումնասիրելով՝ ակնհայտ է դառնում, որ այն ևս հիմնավոր չէ: Մասնավորապես՝ Ն. Բ. Վիտրուկի վերը բերված մոտեցումներում առաջ քաշված ներպետական և կենսագործման իրացման (ոչ պաշտպանական) երաշխիքների շրջանակում ներառված է թվով չորս երաշխիք, այսինքն՝ ճիշտ այնքան, որքան Դ. Ի. Իվաշինի առաջարկած համանման երաշխիքների քանակը՝ չորսը: Քննադատել ինչ-որ մեկին «չափից դուրս շատ քանակով» երաշխիքներ առաջադրելու համար և առաջադրել նույն քանակով երաշխիքների շրջանակ, իսկապես անհիմն ու տարօրինակ մոտեցում է: Ընդ որում՝ վերը նշված քննադատություններից հետո այս տեսաբանն, ընդօրինակելով Ն. Վ. Վիտրուկի բաժանումը, իրավաբանական երաշխիքները դասակարգում է երկու խմբերի՝ ա) կենսագործման երաշխիքներ, բ) իրավական պաշտպանության երաշխիքներ:

Մեզ հետաքրքրող քրեակատարողական իրավունքի ոլորտում դատապարտյալների իրավունքների ու ազատությունների առաջին խմբի երաշխիքների շարքում նա ներառում է հետևյալները. 1) իրավական ամրագրումը (առաջին հերթին դատապարտյալների իրավունքների և ազատությունների), 2) կենսագործման իրավական կառուցակարգը, 3) իրավասու մարմինների իրավակիրառ գործունեությունը, 4) կենսագործման վարույթային ձևերը<sup>17</sup>:

<sup>15</sup> Տե՛ս *Бабай А. Н.*, Правовое государство и роль ОВД в его формировании. Хабаровск: ХВШ МВД РСФСР, 1992, էջ 35:

<sup>16</sup> Տե՛ս *Ивашин Д.И.*, Правовое положение осужденных к лишению свободы в Российской Федерации. Дисс. канд. юрид. наук. 12.00.08. – Хабаровск, 2003, էջ 139:

<sup>17</sup> Իրավական երաշխիքների երկրորդ խումբը, և՛ Ն. Վ. Վիտրուկը, և՛ Դ. Ի. Իվաշինն անվանում են «իրավական պահպանության (պաշտպանության) երաշխիքներ» (տե՛ս *Витрук Н.В.* Правовой статус личности в СССР. М.:



Արված վերլուծությունը ցույց է տալիս, որ քրեակատարողական իրավունքում իրավական երաշխիքների հիմնահարցը դիտարկվում է շատ նեղ իմաստով, և ըստ էության, մեծամասամբ վերաբերում է իրավական գործունեության իրավակիրառ ոլորտի երաշխիքների համակարգին՝ բաց թողնելով, օրինակ, իրավաստեղծագործության որպես իրավական կարգավորման փուլին բնորոշ երաշխիքները: Հենց այդ պատճառով է քրեակատարողական իրավունքի ոլորտի տեսաբանը հնթացս մերժում սահամանադրական իրավունքի տեսության մոտեցումները: Արդյունքում հիմնահարցի տեսական մեկնաբանության վարկածը ստացվում է ոչ ամբողջական (չի բնութագրում իրավական կարգավորման բոլոր փուլերի երաշխիքները), ոչ հիմնարար (խորքային), որովհետև համահունչ չէ սահամանադրագիտության, տեսական մոտեցումներին: Մյուս կողմից ինչպես Ն. Վ. Վիտրուկի, այնպես էլ Դ. Ի. Իվաշինի տեսակետներին պետք է մոտենալ վերապահումներով այն դեպքերում, երբ որ սուբյեկտիվ իրավունքը, որի երաշխիքների համակարգը փորձում ենք վեր հանել, չի հասնում տվյալ իրավունքի ճյուղի սկզբունք համարվող իրավադրույթի մակարդակին: Իրավունքի սկզբունքն իր կարգավորիչ մասշտաբներով, իրավական հասցեատերերի կենսագործման կառուցակարգերի շրջանակով շատ ավելի ընդգրկում ու լայն է, քան սուբյեկտիվ իրավունքը: Ի վերջո, սուբյեկտիվ իրավունքն ընդամենը սկզբունքի որպես հիմնարար, ելակետային, ղեկավար դրույթի բովանդակային մեկ տարրն է, հետևաբար մեկ տարրի երաշխիքների շրջանակը շատ ավելի նեղ է լինելու, քան ամբողջինը:

**Եզրակացություն**

Այսպիսով, երաշխիքների հիմնահարցը քրեակատարողական իրավունքի տեսության գրեթե չուսումնասիրված տեսագործական հիմնահարցերից է, որտեղ առավել շատ են դատապարտյալների «իրավունքների և ազատությունների երաշխիքներին» նվիրված հետազոտությունները և աշխատանքները: Դրանց ամփոփումը հիմք է տալիս եզրակացնելու, որ քրեակատարողական իրավունքի տեսության մեջ իրավական երաշխիքների հիմնահարցը դիտարկվում է նեղ իմաստով, մեծամասամբ վերաբերում է իրավակիրառ ոլորտին՝ անտեսելով իրավական կարգավորման կառուցակարգի այլ փուլերին բնորոշ երաշխիքները: Այստեղից բխում է, որ քրեակատարողական իրավունքի ոլորտում գործող սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքների ամբողջական, խորապատկերային համակարգը կառուցելու համար անհրաժեշտ է դիմել ավելի հիմնարար, մեթոդաբանական նշանակություն ունեցող գիտական ոլորտի՝ իրավունքի տեսության մաս կազմող որոշակի ընդհանրացված հայեցակարգերի գիտական մոտեցումների օգնությանը և փորձել լուծել, հաղթահարել առկա տեսական խնդիրները և բարդությունները:

**Ամփոփագիր:** Հոդվածում դիտարկվել են քրեաիրավական երաշխիքները, նախ՝ որպես մեխանիզմի դրական նորմատիվ համակարգ (քրեական օրենսդրության կատեգորիա), և երկրորդ՝ առկա հասարակության արժեքների պրիզմայով (ըստ էության՝ քրեաիրավական սկզբունքների երաշխիքներով), որպես քրեական

Юридическая литература, 1985., էջ 95): Դ. Ի. Իվաշինը դատապարտյալների իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքները նախ բաժանում է ներպետական և վերպետական մակարդակների, ընդ որում՝ քրեակատարողական հիմնարկներում որպես այդպիսին դիտարկելով ա) գերտեսչական վերահսկողությունը, բ) պետական մարմինների վերահսկողությունը, գ) դատախազական հսկողությունը, դ) դատական պաշտպանությունը (տե՛ս **Ивашин Д. И.**, Правовое положение осужденных к лишению свободы в Российской Федерации. Дисс. канд. юрид. наук. 12.00.08. – Хабаровск, 2003, էջ 149):

իրավունքի նոր ուղղություն՝ սոցիալապես արդար քրեական իրավունքի ձևավորման: Արդյունքում ձևակերպվել է «Քրեաիրավական երաշխիքների մասին» տեսական մոդել-հայեցակարգը, որը հնարավորություն է տալիս ձևավորել քրեաիրավական երաշխիքների ամբողջ ինստիտուտը և այն ձևավորող նորմերը, կապել երաշխիքային նորմերը միմյանց հետ, նաև այլ նորմերի հետ: Նաև թույլ է տալիս միմյանց կապել քրեական օրենսդրության ինստիտուտներն ու հիմնական դրույթները և հայեցակարգերը՝ քրեաիրավական սկզբունքների պահանջների շրջանակում:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դատապարտյալների ազատության ապահովման իրավական երաշխիքներին: Այս երաշխիքները առանձնահատուկ նշանակություն ունեն ազատագրվումը կրելու ժամանակ: Այս դեպքում պետք է հաշվի առնել «իրավական երաշխիքների» իրավական բովանդակությունը:

**Annotation.** An attempt the article was made to adopt criminal law guarantees, firstly, as a positive normative system (a category of legislative regulation), and secondly, in connection with the adoption of a decision in the public assembly (under the constitution, criminal law guarantees), as a new direction of criminal -legal thought the formation of a socially just purpose of law. As a result, a theoretical model-concept "On Criminal Legal Guarantees" was compiled, which allows forming in the whole institution of criminal legal guarantees and the norms that form it, linking the norms-guarantees with each other, with other norms and institutions and basic provisions, management concepts. legislation in the framework of the criminal law guarantees.

It is necessary to pay attention to legal guarantees of ensuring the freedom of convicted persons. These guarantees are of particular importance when serving a prison sentence. In this case, it is necessary to take into account the different legal content of «legal guarantees».

**Аннотация.** В статье предпринята попытка взглянуть на уголовно-правовые гарантии, во-первых, как на позитивную нормативную систему механизма (категорию уголовного законодательства), во-вторых, сквозь призму существующих в обществе ценностей (по сути, принципов уголовно-правовых гарантий) как на новое направление уголовно-правовой мысли формирования социально справедливого уголовного права. В результате сформулирована теоретическая модель-концепция «Об уголовно-правовых гарантиях», позволяющая формировать в целом институт уголовно-правовых гарантий и норм, его образующих, увязывать нормы-гарантии между собой, с другими нормами и институтами и базовыми положениями, концепциями уголовного законодательства в рамках требований принципов уголовно-правовых гарантий.

Необходимо обратить внимание на правовые гарантии обеспечения свободы осужденных. Особое значение эти гарантии имеют при отбывании лишения свободы. При этом следует учитывать различное юридическое содержание «правовых гарантий».

**Բանալի բառեր** - պաշտպանության երաշխիքներ, իրավագիտակցություն, իրավական մշակույթ, քրեաիրավական երաշխիքներ, սկզբունքներ, հանցագործություն, պատիժ, նոր բանաձև-հայեցակարգ:

**Keywords:** guarantees of protection, legal consciousness, legal culture, criminal-legal guarantees, principles, crime, punishment, new formula-concept.

**Ключевые слова:** гарантии защиты, правосознание, правовая культура, уголовно-правовые гарантии, принципы, преступление, наказание, новая формула-концепция.

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Юридический энциклопедический словарь, 2-е издание, М.: «Советская энциклопедия», 1987.
2. Барихин А.Б., Большая юридическая энциклопедия.- М.: Книжный мир, 2012.
3. Краткий юридический словарь /под. ред. А.Н. Азрилияна.- М.: Институты новой экономики, 2005.

4. Теория государства и права: Отв. ред. В.Д. Перевалов. 3-е изд., перераб. и доп. - М.: Норма., 2006.
5. Общая теория государства и права. Академический курс в трех томах /отв. ред. М.Н. Марченко.- 3-е изд., перераб. и доп. - М.: Норма, 2007, Том 3.
6. Скакун О.Ф., Теория государства и права (энциклопедический курс): Харьков: Эспада, 2005.
7. Ивашин Д.И., Правовое положение осужденных к лишению свободы в Российской Федерации. Дисс. канд. юрид. наук. 12.00.08. – Хабаровск, 2003.
8. Глухарева Л.И., Права человека в современном мире (социально-философские основы и государственно-правовое регулирование). М., 2003.
9. Общая теория государства и права. Академический курс в трех томах / отв. Ред. М.Н. Марченко. Том 3, М., Норма, 2007.
10. Витрук Н.В., Правовой статус личности в СССР. М.: Юридическая литература, 1985, էջ 95.
11. Общая теория государства и права. Академический курс в трех томах / отв. Ред. М.Н. Марченко. Том 3, М., Норма, 2007.
12. Ивашин Д.И., Правовое положение осужденных к лишению свободы в Российской Федерации. Дисс. канд. юрид. наук. 12.00.08. – Хабаровск, 2003.
13. Правовая система социализма. Функционирование и развитие /Отв. ред. А.М. Васильев, М., 1987.
14. Бабай А.Н., Правовое государство и роль ОВД в его формировании. Хабаровск: ХВШ МВД РСФСР, 1992.

**Աբրահամյան Ռ.** - ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, էլիասցե՝ rozaabrahamyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 18.10.2024 թ., տրվել է գրախոսության 18.10.2024 թ., երաշխավորվել է իրավ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Խաչիկյանի կողմից, ընդունվել է տպագրության 18.11.2024 թ.:

ԵԴ/0253/11/20

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**  
**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ**  
**(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)**

30 օգոստոսի 2024 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ դիմող Սիլվարդ Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2006 թվականի մարտի 6-ին Լոռու մարզի դատախազությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 55200706 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2006 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ Անահիտ Այվազյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

Նախաքննության մարմնի՝ 2006 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճվել է՝ ենթադրյալ հանցանք կատարած Սեյրան Այվազյանի մահվան հիմքով:

Նույն որոշման 2-րդ կետով ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի չորս աշխատակիցների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ նրանց գործողություններում հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոնշյալ որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Ա.Այվազյանի բողոքների վերաբերյալ Լոռու մարզի դատախազության՝ 2006 թվականի նոյեմբերի 16-ի, նոյեմբերի 20-ի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության՝ 2007 թվականի հունվարի 19-ի գրություններով հայտնվել է, որ որոշումը կայացվել է օրենսդրությանը համապատասխան, և այն վերացնելու հիմքեր չկան:

2. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքի քննության արդյունքում Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը 2007 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է:

2.1. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ

դատարան) 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումը՝ թողել անփոփոխ:

2.2. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանը 2008 թվականի մայիսի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը մերժել է, Վերաքննիչ դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

2.3. Տուժողի իրավահաջորդ Սիլվարդ Այվազյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2017 թվականի հունիսի 1-ին *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* (գանգատ թիվ 56717/08) գործով վճիռ է կայացրել, որով ճանաչել է Սեյրան Այվազյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 2-րդ հոդվածով երաշխավորված՝ կյանքի իրավունքի խախտման փաստը:

3. Ս.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վճռաբեկ բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով հարուցվել է Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշման վերանայման վարույթ:

4. Վճռաբեկ դատարանը 2018 թվականի մարտի 20-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակիորեն. վերանայել է Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, բեկանել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի սեպտեմբերի 12-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումները, և գործն ուղարկել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

5. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ դիմող Ս.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը բավարարվել է, և վարույթն իրականացնող մարմինը պարտավորեցվել է վերացնել քրեական գործի վարույթը կարճելու մասին 2006 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ թույլ տրված անձի իրավունքների խախտումները:

6. Լոռու մարզի դատախազի տեղակալի՝ 2018 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացվել է:

2018 թվականի հոկտեմբերի 29-ին Լոռու մարզի դատախազությունից ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչությունում ստացվել է թիվ 55200706 քրեական գործը, որն ընդունվել է վարույթ և վերսկսվել է քրեական գործով նախաքննությունը:

Նախաքննության ընթացքում՝ 2018 թվականի նոյեմբերի 22-ին, քրեական գործի նյութերով ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ծառայողների կողմից ենթադրաբար կատարված ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 19107318 քրեական գործը, որը 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 190-րդ հոդվածի 6-րդ մասի կարգով ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ քրեական գործով նախաքննությունը շարունակելու նպատակով:

Քրեական գործի փաստական հանգամանքներով պայմանավորված, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված կարգով 2018 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթ է հանձնվել նաև թիվ 55200706 քրեական գործը, որը նույնպես ընդունվել է վարույթ:

2018 թվականի դեկտեմբերի 19-ին որոշում է կայացվել թիվ 55200706 և 19107318 քրեական

գործերը մեկ վարույթում միացնելու մասին: Քրեական գործին շնորհվել է 55200706 համարը:

7. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ Սեյրան Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, 316-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդում չի իրականացվել՝ վերջինիս արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ի մեկ այլ որոշմամբ, ՀՀ ոստիկանության Լոռու մարզի Թումանյանի բաժնի աշխատակիցներ Արամ Սահակյանի, Աշոտ Աբգարյանի, Ռուսլան Մոսինյանի և Հրաչյա Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ վերջիններիս արարքը քրեական օրենքով իրավաչափ համարվելու հիմքով և նույն հիմքով քրեական գործով վարույթը կարճվել է:

8. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Մարտիրոսյանի՝ 2020 թվականի փետրվարի 5-ի «Բողոքը քննության առնելու մասին» որոշմամբ դիմող Ս.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը՝ Ս.Այվազյանի նկատմամբ «Քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման դեմ, մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Ս.Այվազյանի նկատմամբ «Քրեական հետապնդում չիրականացնելու մասին» նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը և «Բողոքը քննության առնելու մասին» ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Մարտիրոսյանի՝ 2020 թվականի փետրվարի 5-ի որոշումը դիմող Ս.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանը բողոքարկել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

9. Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշմամբ վերոնշյալ որոշումների դեմ դիմող Ս.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը մերժվել է:

10. Դիմող Ս.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը՝ 2020 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշումը թողնելով անփոփոխ:

11. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ դիմող Ս.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ<sup>1</sup>: Վճռաբեկ դատարանը 2023 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

12. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

<sup>1</sup> Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Մասնավորապես, խախտվել են ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածը:

**Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարաններն առանց որևէ ապացույցի գտել են, որ կասկածներ կան Ս.Այվազյանի մեղսունակության վերաբերյալ, և, չփարատված կասկածները հոգուր կասկածյալի կամ մեղադրյալի մեկնաբանելով, եկել են եզրահանգման, որ հնարավոր չէ փաստել Ս.Այվազյանի՝ իրեն վերագրվող հանցագործությունների սուբյեկտ լինելը, ուստի վերջինիս արարքում բացակայում են իրեն վերագրվող հանցագործությունների հանցակազմերը:**

**Բողոքաբերը փաստարկել է, որ վերոնշյալը իրավաչափ չէ, քանզի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ անձի մեղսունակ կամ անմեղսունակ լինելու հանգամանքը կարող է հաստատվել միայն դատահոգեբուժական փորձագիտական եզրակացությամբ: Ուստի, վարույթն իրականացնող մարմինը մեղսունակությունը կասկածի փակ դնելու հիմքերի առկայության դեպքում պետք է նշանակի փորձաքննություն:**

**Բողոքաբերը նշել է, որ անմեղսունակության հասկացությունը բացահայտվում է երկու չափանիշներով՝ բժշկական (կենսաբանական, հոգեբուժական) և իրավաբանական, իսկ բժշկական չափանիշների հիմքը կազմում են դատական հոգեբուժության գիտության դրույթները:** Այնինչ, վարույթն իրականացնող մարմինը, ստորադաս դատարաններն իրենց պատճառաբանությունները հիմնավորելիս, որպես ապացույց հիմք են ընդունել Ս.Այվազյանի նկատմամբ նշանակված ամբուլատոր հետմահու դատահոգեբուժական փորձաքննության թիվ 225/06 եզրակացությունը, որի համաձայն՝ Ս.Այվազյանը տառապել է «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև» խրոնիկական հոգեկան հիվանդությամբ և 1993 թվականից սկսած տարբեր հոգեբուժական հիվանդանոցներում իր վիճակի համար բուժում է ստացել: Միևնույն ժամանակ, փորձագետը նշել է, որ ներկայացված քրեական գործի նյութերում, բժշկական փաստաթղթերում (վերջին գրառումներն ամբուլատոր քարտում կատարված են 2003 թվական, 2004 թվական) բավարար տեղեկություններ չկան Ս.Այվազյանի հոգեկան վիճակի վերաբերյալ ինչպես դեպքին նախորդող ժամանակահատվածում, այնպես էլ դեպքի օրը, որի պատճառով առաջադրված փորձագիտական հարցերին հնարավոր չէ պատասխանել:

Բողոքաբերը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումը, նշել է, որ փորձագետի եզրակացությունն ապացույցների տեսակներից մեկն է և, որպես այդպիսին, չունի նախապես հաստատված ապացույցի ուժ, իսկ դրա գնահատման նկատմամբ կիրառելի են ապացույցների գնահատման ընդհանուր կանոնները:

13. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ, բավարարել Առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքը, վերացնել նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ի և դատախազի՝ 2020 թվականի փետրվարի 5-ի որոշումները՝ վերացնելով Ս.Այվազյանի կյանքի և վերջինիս իրավահաջորդի իրավունքների խախտումները:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

14. Սեյրան Այվազյանի նկատմամբ նշանակված ամբուլատոր հետմահու դատահոգեբուժական փորձաքննության թիվ 225/06 եզրակացության համաձայն՝ «Սեյրան Այվազյանը տառապել է «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև» խրոնիկական հոգեկան

հիվանդությամբ: Ներկայացված քրեական գործի նյութերում, բժշկական փաստաթղթերում / վերջին գրառումներն ամբուլատոր քարտում կատարված են 2003 թվական, 2004 թվական/ բավարար տեղեկություններ չկան Սեյրան Այվազյանի հոգեկան վիճակի վերաբերյալ ինչպես դեպքին նախորդող ժամանակահատվածում, այնպես էլ դեպքի օրը, որի պատճառով առաջադրված փորձագիտական հարցերին հնարավոր չէ պատասխանել»<sup>2</sup>:

15. Քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինը նշել է՝ «[Ս]ույն քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալներով պարզվել և հիմնավորվել է Ս.Այվազյանի կողմից Լոռու մարզի Օձուն գյուղի բնակիչներ՝ Երվանդ Պետրոսյանի առողջությանը թեթև վնաս պատճառելու (ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդված), Հռիփսիմե Չոբանյանի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու (ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մաս), ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի աշխատակիցներ՝ Վահան Բոշյանի նկատմամբ ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված կյանքի կամ առողջության համար վրանգավոր բռնություն գործադրելու (ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մաս), Հայկազ Գևորգյանի նկատմամբ սպանության փորձ կատարելու (ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մաս), իր տանն ապօրինի կերպով ռազմամթերք հանդիսացող «ՌԳ-42» տեսակի մարտական նռնակ պահելու (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մաս) հանգամանքները:

(...)

Թիվ 55200706 գործի նախաքննության ընթացքում նշանակված դատահոգեբուժական փորձաքննության թիվ 225/06 եզրակացության համաձայն՝ Ս.Այվազյանը տառապել է «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև» խրոնիկական հոգեկան հիվանդությամբ: Փորձաքննությանը ներկայացված քրեական գործի նյութերում, բժշկական փաստաթղթերում (վերջին գրառումներն ամբուլատոր քարտում կատարված են 2003թ., 2004թ.) բավարար տեղեկություններ չկան Սեյրան Այվազյանի հոգեկան վիճակի վերաբերյալ ինչպես դեպքին նախորդող ժամանակահատվածում՝ այնպես էլ դեպքի օրը, որի պատճառով առաջադրված փորձագիտական հարցերին հնարավոր չէ պատասխանել, այսինքն՝ նախաքննության ընթացքում հնարավոր չի եղել պարզել Սեյրան Այվազյանի մեղսունակ լինելու հանգամանքը, որի պայմաններում հնարավոր չէ փաստել Սեյրան Այվազյանին վերագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հանցակազմերի սուբյեկտ լինելը, քանի որ (...) չփարափված կասկածները մեկնաբանվում են ի օգուտ կասկածյալի կամ մեղադրյալի, հետևաբար՝ Սեյրան Այվազյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հանցակազմը:

Միաժամանակ նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով պարզվել է, որ Ս.Այվազյանի մոտ հայտնաբերվել է տարբեր տեսակի դանակներ, իսկ հագուստի գրպանում՝ 0,24 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

(...)

<sup>2</sup> Տե՛ս թիվ 55200706 քրեական գործի նյութեր, հատոր 4, թերթեր 116-120:



Համաձայն նշանակված քրեագիտական փորձաքննության 2006 թվականի հունիսի 16-ի թիվ 15040602 եզրակացության՝ փորձաքննությանը ներկայացված 5 դանակները և մետաղյա հատվածը /բժշկական նշտարը/ սառը զենք չեն հանդիսանում:

Քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալները համադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթների հետ, անհրաժեշտ է փաստել, որ Սեյրան Այվազյանի մոտ հայտնաբերված «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը զգալի չափերի չէ, իսկ հայտնաբերված դանակները և բժշկական նշտարը իրենից սառը զենք չի ներկայացնում, հետևաբար՝ Սեյրան Այվազյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործությունների հանցակազմը (...):<sup>3</sup>:

16. Դատախազ Ա.Մարտիրոսյանի՝ 2020 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ արձանագրվել է, որ նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումն օրինական է և հիմնավորված, այն վերացնելու հիմքերը բացակայում են, հետևաբար, դիմող Ս.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ<sup>4</sup>:

17. Առաջին ատյանի դատարանը 2020 թվականի հունիսի 18-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) [Ն]ախաքննության ընթացքում հնարավոր չի եղել պարզել Սեյրան Այվազյանի մեղսունակ լինելու հանգամանքը, որի պայմաններում հնարավոր չէ փաստել Սեյրան Այվազյանին վերագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հանցակազմերի սուբյեկտ լինելը, քանի որ (...) չփարատված կասկածները մեկնաբանվում են ի օգուտ կասկածյալի կամ մեղադրյալի, հետևաբար՝ Սեյրան Այվազյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հանցակազմը:

(...)

Դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինն իրավացիորեն հանգել է հետևության, որ Սեյրան Այվազյանի մոտ հայտնաբերված «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը զգալի չափերի չէ, իսկ հայտնաբերված դանակները և բժշկական նշտարը իրենից սառը զենք չի ներկայացնում, հետևաբար՝ Սեյրան Այվազյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործությունների հանցակազմը:

Հետևաբար վիճարկվող որոշումները կայացվել են նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան և բխում են քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալներից:

Բողոքաբերի պատճառաբանություններն այն մասին, որ նախաքննության մարմնի կողմից չեն ձեռնարկվել բոլոր միջոցները՝ հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ, նախաքննության ընթացքում չեն պարզվել գործի լուծման համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքներ՝ անհիմն են, իսկ որոշման մեջ նշված, քրեական գործով ձեռք բերված փաստական հանգամանքների վերաբերյալ քննիչի գնահատականների հետ բողոքաբերի՝

<sup>3</sup> Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 21-36:

<sup>4</sup> Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 15-20:

համամիտ չլինելը կամ բողոքաբերի սուբյեկտիվ կարծիքը՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից պատշաճ քննություն չկատարելու, մի շարք հարցեր քննության առարկա չդարձնելու մասին, բավարար չեն՝ քննիչի վիճելի որոշման հետևանքով իրավունքների խախտում արձանագրելու համար:

Հաշվի առնելով, որ բողոքարկվող որոշումները կայացվել են օրենքին համապատասխան, դրանցով անձի իրավունքների կամ ազատությունների՝ խախտված լինելու վերաբերյալ բավարար հիմնավորումներ դատարանին չեն ներկայացվել, վարույթն իրականացնող մարմնի գործողությունների և որոշումների օրինականության ստուգման ընթացակարգերը և ժամկետները պահպանվել են՝ դատարանը գտնում է, որ բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման:

Բացի այդ՝ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի կողմից իրականացվող ապացուցողական գործունեությանը (ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելը) և ընդհանրապես վարույթն իրականացնող մարմնի գործառույթներին դատարանի միջամտությունը ոչ միայն չի բխում մինչդատարանական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության խնդիրներից, այլև նման միջամտության անթույլատրելիությունն անհրաժեշտ նախապայման է՝ դատարանի անկողմնակալության և անմեղության կանխավարկածի սկզբունքների պահպանության համար (...)<sup>5</sup>:

18. Վերաքննիչ դատարանը 2020 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Առաջին ատյանի դատարանը, մինչդատարանական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում վերլուծելով գործի փաստական տվյալները, հանգել է իրավաչափ և հիմնավոր հետևության, որի հետ չհամաձայնելու հիմքեր, ըստ էության, առկա չեն:

(...)

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Ս.Այվազյանի և նրա ներկայացուցչի իրավունքների խախտում կամ անհամաչափ սահմանափակում թույլ չի տրվել, իսկ վերաքննիչ բողոքի հիմնավորումներն առարկայազուրկ են և տվյալ դեպքում վիճարկվող որոշումը բեկանելու հիմք չեն կարող հանդիսանալ:

Բացի այդ, դիմողի ներկայացուցչի կողմից չի ներկայացվել որևէ իրավաչափ հիմք արձանագրելու, որ քննիչի՝ հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդում չիրականացելու մասին որոշմամբ թույլ է տրվել Ս.Այվազյանի և նրա ներկայացուցչի իրավունքների և ազատությունների խախտում կամ անհամաչափ սահմանափակում: Վարույթն իրականացնող մարմինը, պատշաճ ընթացակարգի շրջանակներում գնահատելով սույն գործով ձեռք բերված փաստական տվյալները, հանգել է իրավաչափ հետևության՝ Ս.Այվազյանի արարքում հանցակազմի բացակայության վերաբերյալ (...)<sup>6</sup>:

#### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

19. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք ստորադաս դատարանների այն հետևությունը, որ համապատասխան եզրակացության բացակայության փաստը, որպես չփարատված կասկած, կարող է բավարար հիմք հանդիսանալ հաստատված համարելու, որ անձը քրեական օրենքով արգելված արարք կատարելիս գտնվել է անմեղսունակության վիճակում:

<sup>5</sup> Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 79-104:

<sup>6</sup> Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 117-126:

20. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, փոստողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

(...)

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին»:

20.1. Վճռաբեկ դատարանը Ներսես Միսակյանի վերաբերյալ որոշմամբ դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,

- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները (...)»<sup>7</sup>:

<sup>7</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ1/0003/11/08

21. ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է սույն օրենսգրքով սահմանված տարիքի»:

ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, ով հանրության համար վրանգավոր արարք կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, այսինքն՝ քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով չէր կարող գիտակցել իր գործողության (անգործության) վրանգավորությունը կամ ղեկավարել դա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործով վարույթում ստորև նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով՝

(...)

2) հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետևանքով մեղադրյալի ունակ չլինելը դեպքի պահին գիտակցելու իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը կամ ղեկավարելու դրանք՝ դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությունը (...):»:

21.1. Վճռաբեկ դատարանը մեղսունակության (անմեղսունակության) հատկանիշները մեկնաբանել է իր նախադեպային իրավունքի շրջանակներում<sup>8</sup>:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով կանխավարկածների էությանը, Վճռաբեկ դատարանը նշել է, որ քրեական դատավարությունում կանխավարկածը օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը<sup>9</sup>:

22. Վճռաբեկ դատարանը, քրեական դատավարությունում կանխավարկածի հասկացության լույսի ներքո զարգացնելով մեղսունակության (անմեղսունակության) առնչությամբ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, հարկ է համարում արձանագրել, որ թեև ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում մեղսունակության կանխավարկածն ուղղակիորեն ամրագրված չէ, սակայն սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավանորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ քրեական վարույթի շրջանակներում գործում է անձի մեղսունակության կանխավարկածը, ըստ որի՝ անձը համարվում է մեղսունակ, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ մեղսունակության կանխավարկածի նշանակությունը կայանում է նրանում, որ վարույթն իրականացնող մարմինը հարկադրված

որոշումը:

<sup>8</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հարություն Շուքրոյանի գործով 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ԵՔԲԴ/0350/01/08 որոշման 18-րդ կետը, Արա Շուշանյանի գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0030/01/15 որոշումը:

<sup>9</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 30-րդ կետը:

չլինի ապացուցել ենթադրյալ արարքը կատարած անձի մեղսունակությունը յուրաքանչյուր քրեական վարույթով, այդ թվում նաև այն դեպքերում, երբ կոնկրետ քրեական վարույթում առկա չլինի ենթադրյալ արարքը կատարած անձի մեղսունակությունը կասկածի տակ դնող որևէ փաստական տվյալ: Այլ կերպ, մեղսունակության կանխավարկածը նպատակ է հետապնդում վարույթն իրականացնող մարմնին ազատել յուրաքանչյուր քրեական վարույթով ենթադրյալ արարքը կատարած անձի մեղսունակությունն ապացուցելու պարտականությունից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անմեղսունակության վիճակի հաստատումը ոչ այլ ինչ է, քան մեղսունակության կանխավարկածի հաղթահարում: Մինևույն ժամանակ, անմեղսունակությունը հաստատված համարելու համար բավարար ապացույցների բացակայությունը նշանակում է, որ մեղսունակության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված անմեղսունակությունը հավասարազոր է ապացուցված մեղսունակության:

Վճռաբեկ դատարանը, մեղսունակության կանխավարկածի բուն էությունը սահմանելու հետ մեկտեղ, հարկ է համարում անդրադառնալ նաև այդ կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ դատավարական պահանջներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածը՝ որպես հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետևանքով դեպքի պահին իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը գիտակցելու կամ դրանք ղեկավարելու՝ մեղադրյալի ունակ չլինելը հաստատելու համար, պարտադիր նախապայման է դիտարկում դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությունը նախապես ստանալը և հետազոտելը:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Ամբուլատոր հետմահու դատահոգեբուժական փորձաքննության թիվ 225/06 եզրակացության համաձայն՝ Ս.Այվազյանը տառապել է «շիզոֆրենիա, պարանոիդ ձև» խրոնիկական հոգեկան հիվանդությամբ, սակայն ներկայացված քրեական գործի նյութերում, բժշկական փաստաթղթերում (վերջին գրառումներն ամբուլատոր քարտում կատարված են 2003 թվական, 2004 թվական) բավարար տեղեկություններ չկան Սեյրան Այվազյանի հոգեկան վիճակի վերաբերյալ՝ ինչպես դեպքին նախորդող ժամանակահատվածում, այնպես էլ դեպքի օրը, որի պատճառով առաջադրված փորձագիտական հարցերին հնարավոր չի եղել պատասխանել<sup>10</sup>:

- Վարույթն իրականացնող մարմինը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա Ս.Այվազյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում է կայացրել այն պատճառաբանությամբ, որ նախաքննության ընթացքում հնարավոր չի եղել պարզել Ս.Այվազյանի մեղսունակ լինելու հանգամանքը, որի պայմաններում հնարավոր չէ փաստել Ս.Այվազյանին վերագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, 316-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմերի սուբյեկտ լինելու հանգամանքը, քանի որ չփարատված կասկածները մեկնաբանվում են ի օգուտ կասկածյալի կամ մեղադրյալի<sup>11</sup>:

- Դատախազ Ա.Մարտիրոսյանի՝ 2020 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ դիմող

<sup>10</sup> Տես սույն որոշման 14-րդ կետը:

<sup>11</sup> Տես սույն որոշման 15-րդ կետը:

Ս.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը մերժվել է<sup>12</sup>:

- Առաջին ատյանի դատարանը 2020 թվականի հունիսի 18-ի որոշմամբ ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը մերժել է այն պատճառաբանությամբ, որ *վիճարկվող որոշումները կայացվել են նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան և բխում են քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալներից*<sup>13</sup>:

- Վերաքննիչ դատարանը 2020 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ ներկայացուցիչ Կ.Թումանյանի վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ *Առաջին ատյանի դատարանը, մինչդարձ վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում վերլուծելով գործի փաստական տվյալները, հանգել է իրավաչափ և հիմնավոր հետևության, որի հետք չհամաձայնելու հիմքեր, ըստ էության, առկա չեն*<sup>14</sup>:

24. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-22-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և դրանց վերլուծության համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարույթն իրականացնող մարմինը, անտեսելով, որ քրեական վարույթի շրջանակներում գործում է անձի մեղսունակության կանխավարկածը, հաստատված է համարել ենթադրյալ արարքները կատարելու պահին Սեյրան Այվազյանի անմեղսունակության վիճակում գտնվելը՝ չունենալով անմեղսունակությունը հաստատող բավարար ապացույցներ:

Այսինքն, վարույթն իրականացնող մարմինը, չփարատված կասկածներն ի օգուտ կասկածյալի կամ մեղադրյալի մեկնաբանելու կանոնով առաջնորդվելով, չապացուցված մեղսունակությունը դիտարկել է որպես ապացուցված անմեղսունակություն: Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, քրեական դատավարության ընթացքում գործում է հակառակ կանոնը. չապացուցված անմեղսունակությունը հավասարազոր է ապացուցված մեղսունակության:

Ինչ վերաբերում է գործով ստացված՝ Ս.Այվազյանի վերաբերյալ ամբուլատոր հետմահու դատահոգեբուժական փորձաքննության թիվ 225/06 եզրակացությանը, ապա դրանով չի հաստատվում անձի անմեղսունակության վիճակում լինելը, քանզի այն միայն պարունակում է նշում առ այն, որ վերջինս տառապել է «շիզոֆրենիա, պարանոիդ ձև» խրոնիկական հոգեկան հիվանդությամբ, սակայն ներկայացված քրեական գործի նյութերում, բժշկական փաստաթղթերում բավարար տեղեկություններ չկան Սեյրան Այվազյանի հոգեկան վիճակի վերաբերյալ՝ ինչպես դեպքին նախորդող ժամանակահատվածում, այնպես էլ դեպքի օրը, իսկ ամբուլատոր քարտում վերջին գրառումները կատարված են 2003-2004 թվականներին, մինչդեռ ենթադրյալ արարքները կատարվել են 2006 թվականին, և չկա որևէ տվյալ այդ ժամանակահատվածում Ս.Այվազյանի առողջական վիճակի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, վերը նշված եզրակացությունում բացակայում է անմեղսունակության իրավաբանական չափանիշի վերաբերյալ որևէ եզրահանգում:

24.1. Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով Սեյրան Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, 316-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չիրականացնելիս, նախաքննության մարմինը հիմնավորված է համարել *Ս.Այվազյանի կողմից Երվանդ Պետրոսյանի առողջությանը թեթև վնաս պատճառելու (ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդված), Հռիփսիմե Չոբանյանի*

<sup>12</sup> Տե՛ս սույն որոշման 16-րդ կետը:

<sup>13</sup> Տե՛ս սույն որոշման 17-րդ կետը:

<sup>14</sup> Տե՛ս սույն որոշման 18-րդ կետը:

առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու (ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մաս), ՀՀ ոստիկանության աշխատակիցներ՝ Վահան Բոշյանի նկատմամբ ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված կյանքի կամ առողջության համար վրանգավոր բռնություն գործադրելու (ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մաս), Հայկազ Գևորգյանի նկատմամբ սպանության փորձ կատարելու (ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մաս), իր տանն ապօրինի կերպով ռազմամթերք հանդիսացող «ՌԳ-42» տեսակի մարտական նռնակ պահելու (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մաս) հանգամանքները՝ այդպիսով արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու որոշման մեջ տալով ձևակերպումներ, որոնք կասկածի տակ են դնում այն անձի անմեղությունը, որի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել<sup>15</sup>:

24.2. Արդյունքում, անձը գրկվել է արդար դատաքննության իրավունքից և խախտվել է նրա անմեղության կանխավարկածը:

25. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարույթն իրականացնող մարմինը ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, 316-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով Սեյրան Այվազյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելով՝ ենթադրյալ արարքները կատարելու պահին նրա անմեղությունակության վիճակում գտնվելու պատճառաբանությամբ, հանգել է ոչ իրավաչափ հետևության:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների այն հետևությունը, որ համապատասխան եզրակացության բացակայության փաստը, որպես չփարատված կասկած, կարող է բավարար հիմք հանդիսանալ հաստատված համարելու, որ անձը քրեական օրենքով արգելված արարք կատարելիս գտնվել է անմեղությունակության վիճակում, իրավաչափ չէ:

26. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու, Առաջին ատյանի դատարան ներկայացված՝ դիմող Սիլվարդ Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը բավարարելու և դիմողի իրավունքների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուն վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361<sup>1</sup>-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 23-ի որոշումները բեկանել ու փոփոխել:

<sup>15</sup> Տե՛ս, *mutatus mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴՈ-871 որոշումը:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված՝ դիմող Սիլվարդ Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը բավարարել՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնելու դիմողի իրավունքների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտումները:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:



ԵԴ/0128/11/19

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ  
ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ  
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)**

27 սեպտեմբերի 2024 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 16-ի որոշման դեմ դիմող Արսեն Սարգսյանի ներկայացուցիչ Տ.Եգորյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում 2017 թվականի մարտի 17-ին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով բուժվող հիվանդ Արթուր Ռոբերտի Սարգսյանին անզգուշությամբ մահ պատճառելու դեպքի առթիվ, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 130-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, հարուցվել է թիվ 69100817 քրեական գործը:

1.1. ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում, 2018 թվականի մայիսի 25-ին, ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող որոշ աշխատակիցների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու հետևանքով Արթուր Սարգսյանին անզգուշությամբ մահ պատճառելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 69103118 քրեական գործը, որը նույն օրը միացվել է թիվ 69100817 քրեական գործին:

2018 թվականի մայիսի 29-ին թիվ 69100817 քրեական գործն ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

1.2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի նախկին պետ Գևորգ Կարոյի Հարությունյանի, ինչպես

նաև հիշյալ քրեակատարողական հիմնարկի և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող պետական ծառայություն իրականացնող այլ պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրանց արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 69100817 քրեական գործը նախաքննությունը շարունակելու համար ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե:

1.3. ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության պետ Վ.Մուրադյանի՝ 2019 թվականի հունվարի 8-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2018 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման դեմ դիմողի ներկայացուցիչ Տ.Եգորյանի բողոքը մերժվել է:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2021 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2018 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման դեմ դիմողի ներկայացուցիչ Տ.Եգորյանի բողոքը մերժվել է:

3. Դիմողի ներկայացուցիչ Տ.Եգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 5-ի որոշումը թողնելով անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ դիմողի ներկայացուցիչ Տ.Եգորյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հունվարի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ<sup>1</sup>: Վճռաբեկ դատարանը 2023 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ, այն է՝ չեն կատարել քրեական գործի քննության բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության նկատմամբ պատշաճ դատական վերահսկողություն, ինչի արդյունքում բողոքաբերը զրկվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային իրավունքներից:

Ըստ բողոք բերած անձի՝ ստորադաս դատարանները չեն իրականացրել գործի փաստական հանգամանքների ճիշտ վերլուծություն և դրանց լույսի ներքո ճիշտ չեն գնահատել նախաքննության մարմնի կայացրած որոշման իրավաչափությունն ու հիմնավորվածությունը: Մասնավորապես, հղում կատարելով կենդանության օրոք Ա.Սարգսյանի և/կամ նրա պաշտպանների կողմից գրառված հայտարարություններին՝ բողոքաբերը նշել է, որ կալանավորման պահից սկսած Ա.Սարգսյանն ուներ ցավեր և ամեն օր ստանում էր ցավազրկող միջոցներ, 2016 թվականի սեպտեմբերին նրա ցավերը սաստկացել են, մի քանի անգամ բժիշկ է հրավիրվել, սակայն նրան օգնություն չի ցուցաբերվել: 2016 թվականի դեկտեմբերի

<sup>1</sup> Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

11-ին վերջինիս մոտ սկսվել են արյունային փսխումներ, այցելել է քրեակատարողական հիմնարկի բժիշկը, առաջարկել ցավազրկող, չափել ճնշումը, ինչը բարձր է եղել Ա.Սարգսյանի համար, սակայն չի տրամադրվել ճնշումն իջեցնելու միջոց, իսկ վերջինիս՝ շտապ օգնություն հրավիրելու պահանջը երկու անգամ մերժվել է: Մի քանի ժամ անց՝ Ա.Սարգսյանի վիճակի շարունակական վատթարացման պայմաններում կանչվել է շտապ օգնություն և վերջինս տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ նշանակված բուժումը դիմողին տրամադրվել է միայն 2016 թվականի դեկտեմբերի 23-ից սկսած:

Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել որևէ փաստական հանգամանքի, ուստի դատական ակտը պատճառաբանված չէ:

6. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 16-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ ճանաչելով դիմող Ա.Սարգսյանի իրավունքների խախտումը և սահմանելով այն վերացնելու պարտականություն:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

7. Սույն գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ թիվ 58212116 քրեական գործով Արթուր Ռոբերտի Սարգսյանը կալանավորվել և 2016 թվականի օգոստոսի 3-ին տեղափոխվել է ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ (այսուհետ՝ նաև «Նուբարաշեն» ՔԿՀ): 2016 թվականի օգոստոսի 5-ին հիշյալ քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի պետ Գևորգ Հարությունյանի կողմից Ա.Սարգսյանի մոտ ակտորոշվել է «Ողնաշարի պարանոցային հատվածի տրավմա (2007թ.): Վիճակ վիրահատությունից հետո, ցավային արմատիկային համախտանիշ: Որովայնի սպիտակ գծի ճողվածք», որի համար նշանակվել է սիմպտոմատիկ բուժում:

2016 թվականի դեկտեմբերի 21-ին Ա.Սարգսյանը «Բեխտերևի հիվանդություն, արմատիկային ցավային համախտանիշով, շարժողական ֆունկցիայի խանգարում, էրոզիվ էզոֆագիտ մակերեսային գաստրիտ: Որովայնի սպիտակ գծի ճողվածք» ակտորոշմամբ ընդունվել է ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ (այսուհետ՝ նաև «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ):

2016 թվականի դեկտեմբերի 30-ին, հաշվի առնելով նույն օրը ստացված բժշկական կոնսիլիումի եզրակացությամբ Ա.Սարգսյանի մոտ ակտորոշված հիվանդության («Անկիլացնող սպոնդիլոարթրիտ (Բեխտերևի հիվանդություն) խրոնիկ պրոգրեսիվ ընթացքով, հենաշարժական ֆունկցիայի զգալի խանգարումով») բնույթը, որոշում է կայացվել Ա.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը չհեռանալու մասին ստորագրությամբ փոխարինելու մասին:

2017 թվականի հունվարի 23-ին ստացվել է թիվ 273/հձ դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացությունը, ըստ որի՝ Ա.Սարգսյանի մոտ ակտորոշված վերոնշյալ հիվանդությունը դասվում է ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ սահմանված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների շարքին:

2017 թվականի փետրվարի 8-ին տրամադրվել է դատաբժշկական հանձնաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 17-0202 եզրակացությունը, ըստ որի՝ Ա.Սարգսյանի մոտ առկա հիվանդությունների ներկայիս դրսևորումները չեն դասվում ՀՀ Կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների շարքին:

2017 թվականի փետրվարի 9-ին Ա.Սարգսյանը կրկին կալանավորվել և տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, որտեղ կալանքի տակ գտնվելու ամբողջ ընթացքում՝ 2017 թվականի փետրվարի 9-ից մինչև 2017 թվականի մարտի 6-ը, իրականացրել է հացադուլ և հրաժարվել է հետազոտություններից ու բուժումներից: 2017 թվականի մարտի 6-ին Ա.Սարգսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է անձնական երաշխավորությամբ, վերջինս ազատ է արձակվել ու շտապ օգնության մեքենայով տեղափոխվել «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն (այսուհետ՝ նաև «Արմենիա» ՀԲԿ), որտեղ մինչև 2017 թվականի մարտի 10-ը ներառյալ ստացել է ստացիոնար բուժում: 2017 թվականի մարտի 11-ին՝ ժամը 9<sup>00</sup>-ից Ա.Սարգսյանը բացակայել է հիվանդասենյակից: Դրանից հետո՝ 2017 թվականի մարտի 15-ին, Ա.Սարգսյանը կրկին տեղափոխվել է «Արմենիա» ՀԲԿ, որտեղ վերջինիս մոտ ախտորոշվել է «Սուր որովայն, պորտային օղակված ճողվածք, խոռոչավոր օրգանի պերֆորացիա, պերիտոնիտ»: Նույն օրն Ա.Սարգսյանը կյանքի ցուցումով շտապ վիրահատվել է, սակայն հետագայում նրա վիճակը վատացել է և չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ վերջինս 2017 թվականի մարտի 16-ին՝ ժամը 15<sup>40</sup>-ին, մահացել է:

8. 2018 թվականի հոկտեմբերի 30-ի դատաբժշկական հանձնաժողովային կրկնակի թիվ 9/կ փորձաքննության եզրակացության «Բժշկական փաստաթղթերի տվյալները» մասի համաձայն՝ փորձաքննությանը, ի թիվս այլնի, ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

8.1. «Նուբարաշեն» ՔԿՀ-ում Ա.Սարգսյանի անվամբ լրացված բժշկական քարտի լուսապատճենը, որի տվյալների ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2016 թվականի օգոստոսի 3-ին կատարվել է կրծքավանդակի օրգանների R-հետազոտություն և Ա.Սարգսյանի մոտ ախտորոշվել է «Խրոնիկական բրոնխիտ»: 2016 թվականի նոյեմբերի 4-ին վերջինս նաև ենթարկվել է վիրաբույժի գննման, ախտորոշվել է «Որովայնի սպիտակ գծի ճողվածք» և ցուցվել է պլանային վիրահատություն<sup>2</sup>:

8.2. «Էրեբունի» բժշկական կենտրոնի անհետաձգելի բուժօգնության բաժանմունքի թիվ 20424 քարտը, որի տվյալներից երևում է, որ Ա.Սարգսյանը 2016 թվականի դեկտեմբերի 11-ին ժամը 23<sup>45</sup>-ին ընդունվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն, նշել է, որ, ի թիվս այլնի, գանգատվում է որովայնի ցավերից, փսխումներից, դրանց մեջ թարմ արյան առկայությունից: Իրականացված հետազոտությունների արդյունքում տրվել է եզրակացություն՝ «Հեպատոմեգալիա, լյարդի ճարպային դիստրոֆիա», ախտորոշում՝ «Մելորի-Վեյսի համախտանիշ, մակերեսային գաստրիտ, պորտային ճողվածք»<sup>3</sup>:

8.3. Շտապ և անհետաձգելի բժշկական օգնության հմ. 556 կանչի թերթիկը, ըստ որի՝ «Հիվանդ՝ Արթուր Սարգսյան, կանչի օրը՝ 12.12.2016 թ., ժամը՝ 22:23-ին: Ըստ հիվանդի խոսքերի՝ թքի մեջ նկատել է արյան առկայություն: Գանգատվում է էպիգաստրալ շրջանի ցավերից: Անամնեզում նշվում է պորտային ճողվածք: (...) Ախտորոշում-Ստամոքս-աղիքային արյունահոսություն?, զարկերակային հիպերտենզիա»<sup>4</sup>:

8.4. «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում լրացված թիվ 453/16 հիվանդության պատմագրի լուսապատճենը, որի տվյալներից երևում է, որ Ա.Սարգսյանը 2016 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունվել է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի թերապևտիկ բաժանմունք, որտեղ տրվել է կլինիկական ախտորոշում՝ «Բեխտերևի հիվանդություն: Արմատիկային ցավային համախտանիշ, շարժողական ֆունկցիայի խանգարումով: Որովայնի

<sup>2</sup> Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 56:

<sup>3</sup> Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 56-57:

<sup>4</sup> Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 67:

սպիտակ գծի ճողվածք,  $C_1$  և  $C_2$  ողերի սպոնդիլոարթրոզ (ողնաշարի պարանոցային հատվածի օստեոմետալոսինթեզ): Էրոզիվային գաստրիտ, բուլբիտ: Մելորի-Վեյսի սինդրոմ: Խր. Հեպատոխոլեցիստիտ: Խր. Բրոնխիտ»: 2016 թվականի դեկտեմբերի 22-ին Ա.Սարգսյանը ենթարկվել է գաստրոէնտերոլոգի խորհրդատվության, թերապևտի զննման, սոնոգրաֆիայի, դրվել է նախնական ախտորոշում՝ «Բեխտերևի հիվանդություն, արմատիկային ցավային համախտանիշով և շարժողական ֆունկցիայի խանգարումով: Խր. հեպատիտ (ճարպային դիստրոֆիա): Էրոզիվային գաստրիտ, բուլբիտ (Մելորի-Վեյսի սինդրոմ): Որովայնի սպիտակ գծի ճողվածք,  $C_1$  և  $C_2$  ողերի պրոթեզավորում: Ձախ ձեռքի 4-րդ մատի տրավմատիկ ամպուտացիա»: Նշվել է, որ, ի թիվս այլ հետազոտությունների, անհրաժեշտ է կատարել «ԷՍԳ»<sup>5</sup>:

8.5. «Դիագնոստիկա» բժշկական միավորումում 2016 թվականի դեկտեմբերի 29-ին կատարված Ա.Սարգսյանի համակարգչային բազմաշերտության հետազոտության 2016 թվականի դեկտեմբերի 30-ի արձանագրությունը, որից երևում է, որ վերջինիս թոքերի օդակրությունը պահպանված է, պլերալ խոռոչներում հեղուկի առկայություն չի հայտնաբերվում, իսկ թոքային հյուսվածքում և միջնորմում չեն հայտնաբերվում ծավալային գոյացություններ և օջախային փոփոխություններ<sup>6</sup>:

8.6. ՀՀ առողջապահության նախարարության միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված թիվ 273/հձ եզրակացությունը (փորձաքննությունը սկսվել է 2016 թվականի դեկտեմբերի 30-ին, ավարտվել՝ 2017 թվականի հունվարի 23-ին), որի համաձայն՝ ըստ ներկայացված բժշկական փաստաթղթերի և սույն փորձաքննության ընթացքում կատարված հետազոտության արդյունքների Ա.Սարգսյանը, ի թիվ այլնի, տառապում է «Խրոնիկ բրոնխիտով»<sup>7</sup>:

8.7. «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի 2017 թվականի մարտի 22-ի թիվ 35 պատասխան գրությունը, որի համաձայն՝ Ա.Սարգսյանի արյան հետազոտության արդյունքում հայտնաբերվել է «Հեպատիտ Ց» վիրուս<sup>8</sup>:

8.8. Դիակի դատաբժշկական փորձաքննության թիվ 0408 եզրակացությունը, որի համաձայն՝ «(...)Ա.Սարգսյանի մահը վրա է հասել բազմաօրգանային անբավարարությունից, որը պայմանավորված է երկկողմանի թարախա-ֆիբրինային միաձույլ թոքաբորբով, օջախային շճային միոկարդիտով, սրտամկանի ծանր դիստրոֆիայով, օղակված պորոպային ճողվածքի և սուր բարակաղիքային օբստրուկցիոն անանցանելիության կապակցությամբ կատարված վիրահատությամբ՝ որովայնահատմամբ, փարածուն շճային պերիտոնիտով, վիրուսային հեպատիտ «C»-ով, քրոնիկ հեպատիտի ֆոնի վրա լյարդի ոչ լրիվ սեպտալ ցիռոզով, ներքին օրգանների ծանր միկրոցիրկուլյատոր խանգարումներով, դիստրոֆիկ-նեկրոտիկ փոփոխություններով, որոնք առկա են եղել Ա.Սարգսյանի մոտ կենդանության օրոք և մահվան անմիջական պատճառի հետ գտնվել են ուղղակի պատճառական կապի մեջ:

(...)Ա.Սարգսյանը կենդանության օրոք փառապել է նաև անկիրոզացնող սպոնդիլոարթրոզիտով (Բեխտերևի հիվանդություն) պրոգրեսիվող ընթացքով հենաշարժական ֆունկցիայի զգալի խանգարումով, երկկողմանի IV աստիճանի սակրոիլիտիտով, սինդեզմոֆիտոզով, կոնք-ազդրային հոդերի երկկողմանի երկրորդային դեֆորմացնող III աստիճանի օստեոարթրոզով,

<sup>5</sup> Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 57-58:

<sup>6</sup> Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 62:

<sup>7</sup> Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 58-59:

<sup>8</sup> Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 70:

ներքին օրգանների հենքի և անոթների շարակցական հյուսվածքի համակարգային ախտահարումով (սրտի և աորտալ փականների ֆիբրոզ և հիալինոզ, պերիբրոնխիալ և պերիվասկուլյար սկլերոզ, ֆիբրոզ, երիկամների, փայծաղի հենքի շարակցահյուսվածքային ներածի տեղամասեր, մանրօջախային կարդիոսկլերոզ, սրամոքսի և աղիների ենթալորձային շերտի ֆիբրոզ), միտրալ փականի անբավարարությունով 0-1 աստիճան, գոնոարթրիտով, խրոնիկական աբորոֆիլ գաստրիտով, խրոնիկ էնդոթելիոզի սրացումով, խրոնիկական պրոստատիտով, թութքով, որոնք մահվան անմիջական պատճառի հետ չեն գտնվել ուղղակի պատճառական կապի մեջ: Ա.Սարգսյանի մոտ հայտնաբերվել են նաև վիճակ ողնաշարի պարանոցային առաջին և երկրորդ ողերի վիրահատական միջամտությունից հետո, Մելրի-Վեյսի համախտանիշ, որոնք մահվան հետ չեն գտնվում պատճառական կապի մեջ (...):<sup>9</sup>

9. 2018 թվականի մայիսի 17-ի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության թիվ 226/հձ եզրակացության համաձայն՝ «(...) Բեխտերևի հիվանդությամբ պայմանավորված շարակցական հյուսվածքի համակարգային ախտահարումը կարող էր պատճառ հանդիսանալ քրոնիկական աբորոֆիլ գաստրիտի և քրոնիկական էնդոթելիոզի առաջացման համար, որոնց ընթացքի սրացում է նկատվել արդեն իսկ «Դատապարտյալների հիվանդանոց» ԲԿՀ-ում և «Էրեբունի» ԲԿ-ում, որտեղ 2016թ.-ի դեկտեմբերի 11-ին արձանագրվել է սրամոքս-աղիքային արյունահոսություն, Մելրի-Վեյսի համախտանիշ, էռոզիվ գաստրիտի և բուլբիտի ֆոնի վրա: 2017թ.-ի մարտի 6-ից մինչև 10-ը՝ «Արմենիա» ՀԲԿ-ում սրացիոնար բուժման ընթացքում Արթուր Սարգսյանի մոտ հայտնաբերվել են՝ սրտի իշեմիկ հիվանդություն, հետինֆարկտային կորոնարոկարդիոսկլերոզ և սրտի ձեռքերովի միտրալ արատ, որոնց առաջացման հստակ պատճառներն ու վաղեմությունները հնարավոր չէ որոշել: Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշվել են նաև (...) քրոնիկական բրոնխիտ և քրոնիկական հեպատոխոլեցիստիտ, լյարդի ցիռոզ (...), որոնց առաջացման պատճառներն ու վաղեմությունները ևս՝ ստույգ հնարավոր չէ որոշել (...):

(...) [Ի]նչպես «Նուբարաշեն, այնպես էլ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկներում մահվան անմիջական պատճառի հետ ուղղակի պատճառական կապի մեջ չգտնվող Բեխտերևի հիվանդության, և քրոնիկական սիրտ-թոքային անբավարարության կապակցությամբ բուժում չի իրականացվել (...):<sup>10</sup>

10. 2018 թվականի հոկտեմբերի 30-ի դատաբժշկական հանձնաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 9/կ եզրակացության համաձայն՝ «(...) Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշված քրոնիկական բրոնխիտը, որի առաջացման վաղեմությունը հնարավոր չէ ստույգ որոշել, իսկ մահվանից 2-4 օր առաջ զարգացած թարախաֆիբրինային թոքաբորբը կարող էր լինել շնչառական ֆունկցիայի խանգարման, ինֆեկցիայի ներթափանցման, լյարդի ցիռոզի և հացադուլի պատճառով զարգացած իմունոսուպրեսիայի (իմունիտետի անկման) համակցությունների հետևանք:

(...)

Արթուր Սարգսյանի մոտ մահվանից հետո՝ վիրուսոլոգիական հետազոտությամբ հայտնաբերված քրոնիկական հեպատիտ «C» անցումով լյարդի ցիռոզի հիվանդության առաջացման ժամկետները և պատճառները հնարավոր չէ պարզել՝ համապարասխան բժշկական փաստաթղթերի բացակայության պատճառով: Այդ հիվանդությունը կապված չէ հիմնական՝ Բեխտերևի հիվանդության հետ, սակայն նրա առկայությունը այլ բարդությունների համակցությամբ կարող էր նպաստել աղիների սուր անանցանելիության հետ կապված

<sup>9</sup> Տես նյութեր, հատոր 1-ին, թերթեր 73-74:

<sup>10</sup> Տես նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 83-84:

բազմաօրգանային անբավարարության առաջացմանը:

(...) «Նուբարաշեն» ՔԿՀ-ում Արթուր Սարգսյանի նկատմամբ իրականացվել է միայն սիմպտոմատիկ՝ ցավազրկող բուժում, իսկ հիպոպենզիկ (արյան ճնշումն իջեցնող) և էռոզիվ գաստրիտի, բուլբիտի դեմ նշանակված դեղամիջոցներն ընդունելուց, ըստ գրառումների, հիվանդը հրաժարվել է: (...) Քրոնիկ բրոնխիտի առկայության վերաբերյալ կլինիկական երևույթների նկարագրություն բժշկական քարտում առկա չէ: «Քրոնիկ բրոնխիտի» թոք-սրտային հնարավոր անբավարարության առաջացման վերաբերյալ հետազոտություններ չեն կատարվել և բուժում չի իրականացվել (ըստ քարտի գրառումների):

(...) ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 03.08.2016թ.-ից մինչև 21.12.2016թ. ժամանակահատվածում Արթուր Սարգսյանի գտնվելու ընթացքում, ինչպես նաև 21.12.2016թ.-ին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ ընդունվելիս, մինչև 30.12.2016 թվականը ընկած ժամանակահատվածում գտնվելու ընթացքում ըստ բժշկական փաստաթղթերի տվյալների՝ սիրտ-թոքային ախտաբանության կլինիկական արտահայտություններ նկարագրված չէ, ուստի և համապատասխան հետազոտություն կատարելու ցուցում չի եղել: ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում 21.12.2016թ.-ից մինչև 30.12.2016թ. ժամանակահատվածում Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշված Բեխտերևի հիվանդության կապակցությամբ պաթոգենետիկ բուժում չի իրականացվել: Սույն հանձնաժողովը գտնում է, որ Արթուր Սարգսյանի մոտ Բեխտերևի հիվանդության զարգացման տվյալ էրապուլ՝ այդպիսի բուժումը արդյունավետ լինել չէր կարող, նշանակված բուժումը հիվանդի վիճակից ելնելով՝ սիմպտոմատիկ է: Նույն նպատակով նշանակված է եղել նաև ֆիզիոթերապևտիկ բուժում: Նշանակումները եղել են ճիշտ:

(...) «Էռոզիվային գաստրիտ, բուլբիտ, Մելորի-Վեյսի սինդրոմ» հիվանդությունները կարող էին առաջանալ ստամոքսի և աղիների հյուսվածքների կազմի մեջ մտնող շարակցական հյուսվածքի համակարգային ախտահարումների ֆոնի վրա (...) ցավազրկող դեղամիջոցների, հատկապես ոչ ստերոիդների շարքի, ազդեցության հետևանքով: «Քրոնիկական բրոնխիտ» հիվանդությունը կարող էր առաջանալ Բեխտերևի հիվանդության հետ կապված՝ արտաքին շնչառական ֆունկցիայի խանգարման և պերիբրոնխիալ շարակցահյուսվածքային ախտահարումների ֆոնի վրա, ինֆեկցիայի ներթափանցման հետևանքով: (...) Բժշկական փաստաթղթերում առկա «Հեպատոխոլեցիստիտ» իրականում պետք է նկատի ունենալ (...) հետազոտության արդյունքում հաստատված «Քրոնիկական վիրուսային հեպատիտ C, անցումով լյարդի ցիռոզի՝ ըստ Child-A աստիճանի» ախտորոշումը, որը հիվանդության տվյալ փուլում եղել է կոմպենսացված՝ առանց կլինիկական արտահայտության: Այդ հիվանդությունը (...) Բեխտերևի հիվանդության հետ չի առնչվում:

(...) «Որովայնի սպիտակ գծի ճողվածք» հիվանդությունը (...) առնչություն չունի Բեխտերևի հիվանդության հետ: (...) Այն ենթակա է որովայնի առաջնային պարի ամբողջականության վերականգմանը՝ վիրաբուժական գործողությամբ:

(...) ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում քրոնիկ բրոնխիտի ախտորոշման և բուժման, ինչպես նաև թոք-սրտային անբավարարության հայտնաբերման ուղղությամբ եղել են թերություններ, սակայն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ 30.12.2016թ.-ին Արթուր Սարգսյանի խափանման միջոցը փոխելու կապակցությամբ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից դուրս գրվելուց հետո՝ մինչև 09.12.2017թ.-ն ընկած ժամանակահատվածում նրա հիվանդության ընթացքի վերաբերյալ տեղեկություններ առկա չեն, իսկ 09.12.2017թ.-ից մինչև 06.03.2017թ. ժամանակահատվածում «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում գտնվելու ընթացքում

Ա.Սարգսյանը հայտարարել է հացադուլ, առանձին գրառմամբ նշվում է, որ հրաժարվել է նաև ջուր ընդունելուց, հրաժարվել է հեղուկացված գազից և բուժումից, այդպիսիք փաստացի չի ցուցաբերվել, ուստի հնարավոր չէ հեղուկ վերը նշված հիվանդությունների կլինիկական ընթացքին, առաջացման ժամկետներին, բացահայտել պատճառահետևանքային շղթաները և ապացույցներ ներկայացնել այն մասին, որ Արթուր Սարգսյանի մոտ «Արմենիա» ՀԲԿ-ում ախտորոշված թարախաֆիբրինային միաձուլ թոքաբորբը, սրտի իշեմիկ հիվանդությունը, հեղինֆարկտային կորոնարոկարդիոսկլերոզը հանդիսանում են վերոհիշյալ քրեակարարողական հիմնարկներում թույլ տրված բացթողումների հետևանք:

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկում Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշված «Որովայնի սպիտակ գծի ճողվածք» հիվանդությունը իր կլինիկական դրսևորումներով չի ունեցել անհետաձգելի վիրաբուժական միջամտության ցուցում: (...) Նման ախտորոշման դեպքում պլանային հիվանդությունների ժամկետները առաջարկվում է բժշկի կողմից՝ ելնելով հիվանդի սոմատիկ վիճակից (...) և հիվանդի համաձայնությունը այդպիսի վիրահատության կատարման և ժամկետների վերաբերյալ: Եթե որովայնի սպիտակ գծի ճողվածքի առկայության դեպքում չկա բարդությունների առաջացման կլինիկական դրսևորումներ, ապա պլանային վիրահատությունը ժամկետ չի նախատեսում: [ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ-ում Ա.Սարգսյանի անվամբ լրացված բժշկական] քարտում և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիվանդության պատմագրերում Արթուր Սարգսյանին որովայնի սպիտակ գծի ճողվածքի կապակցությամբ պլանային վիրահատություն կատարելու և դրա ժամկետների վերաբերյալ գրառումներ առկա չեն: 15.03.2017թ-ին «Արմենիա» ՀԲԿ-ում «Սուր որովայն, օղակված պորտային ճողվածք, խոռոչային օրգանի պերիտոնալիտ, պերիտոնիտ» կլինիկական ախտորոշումը հանդիսանում է որովայնի սպիտակ գծի ճողվածքի բարդություն, սակայն այն չի հանդիսանում ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ-ների բժշկական անձնակազմի կողմից թույլ տրված բացթողումների, թերությունների կամ սխալների արդյունք, քանի որ վերը նշված բարդությունը կարող է առաջանալ ներորովայնային ճնշման բարձրացման հետևանքով՝ փարբեր պատճառներից: (...)<sup>11</sup>:

10.1. Վերոնշյալ փորձաքննությունն իրականացրած փորձագիտական հանձնաժողովի նախագահ Ե.Սահակյանը, որպես փորձագետի արցաքննվելիս պատասխանելով Ա.Սարգսյանի մոտ ախտորոշված՝ «Քրոնիկ բրոնխիտ» հիվանդության վերաբերյալ քննիչի հարցերին, նշել է, որ քրեակատարողական հիմնարկներում ախտորոշված վերոնշյալ հիվանդության առկայությունը հերքվել է 2016 թվականի դեկտեմբերի 30-ին «Դիագնոստիկա» բժշկական միավորումում կատարված հետազոտությամբ, և հիմք ընդունելով վերոնշյալ հետազոտության արդյունքները՝ պնդել է, որ մինչ այդ Ա.Սարգսյանի մոտ ախտորոշված «Քրոնիկ բրոնխիտ» հիվանդությունը չէր կարող պատճառ հանդիսանալ և հանգեցնել վերջինիս մոտ «Արմենիա» ՀԲԿ-ում ախտորոշված թարախաֆիբրինային միաձուլ թոքաբորբի, և սրվյալ դեպքում դրանք միմյանց հետ չեն գտնվել պատճառական կապի մեջ<sup>12</sup>:

11. «Նուբարաշեն» ՔԿ-ի բժշկական սպասարկման բաժնի պետ Գևորգ Հարությունյանն ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ Ա.Սարգսյանը «Նուբարաշեն» ՔԿ-ում գտնվելու ընթացքում ունեցել է ողնաշարի և ստամոքսի հետ կապված խնդիրներ, ցավեր, որոնց համար ստացել է դեղորայքային բուժում: 2016 թվականի դեկտեմբերի 12-ին՝ գիշերը,

<sup>11</sup> Տես նյութեր, հատոր 1-ին, թերթեր 83-88:

<sup>12</sup> Տես նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 33-37:



Արթուրի մոտ սկսվել են ստամոքսային ցավեր, հրավիրվել է շտապօգնություն, և վերջինիս մոտ հարցականով ախտորոշվել է ստամոքսի արյունահոսություն, որից հետո Արթուրը տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ կատարված հետազոտությունների արդյունքում հերքվել է ստամոքսի արյունահոսությունը:

Քննիչի այն հարցին, թե ինչ դեղորայք է նշանակվել Ա.Սարգսյանին և ինչ հաճախականությամբ է նա ստացել այն, Գ.Հարությունյանը պատասխանել է, որ իր կողմից վերջինիս նշանակված են եղել «Կետոնալ» (ողնաշարի հիվանդության հետ կապված ցավերի դեպքում), «Ամոքսացիլին» և «Պանտոպրազոլ» (կապված «Էրեբունի» բժշկական կենտրոնում ախտորոշված «Էրոզիվ գաստրիտ, բուլբիտ» հիվանդությունների հետ): Արթուրը հրաժարվել է «Պանտոպրազոլ» դեղն ընդունելուց՝ պատճառաբանելով, որ այն իրեն հայտնի չէ, իսկ մյուս դեղերի ընդունման հաճախականության մասին ինքը տեղյակ չէ, դրա վերաբերյալ տվյալները պետք է նշված լինեն համապատասխան մատյաններում:

Պատասխանելով Ա.Սարգսյանի մոտ «Քրոնիկ բրոնխիտ» հիվանդության ախտորոշման պայմաններում թոք-սրտային հնարավոր անբավարարության ուղղությամբ հետազոտություններ կատարելու և բուժում իրականացնելու վերաբերյալ քննիչի հարցերին՝ Գ.Հարությունյանը նշել է, որ «Քրոնիկ բրոնխիտ» հիվանդությունը երբեք չի կարող առաջացնել թոք-սրտային հնարավոր անբավարարություն, բացի այդ Ա.Սարգսյանն ինչպես «Քրոնիկ բրոնխիտ», այնպես էլ հնարավոր թոք-սրտային անբավարարության վերաբերյալ երբևէ որևէ գանգապ չի ներկայացրել, դրանց վերաբերյալ տվյալներ բժշկական քարտում առկա չեն եղել, հետևաբար բուժում իրականացնելու անհրաժեշտություն նույնպես չի եղել<sup>13</sup>:

12. Քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2018 թվականի դեկտեմբերի 13-ի որոշումը քննիչը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Այսպիսով՝ վերլուծելով և գնահատելով սույն քրեական գործով ձեռք բերված տվյալները՝ պետք է արձանագրել, որ տվյալ դեպքում ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատարարության հիվանդանոց» քրեակադրոնական հիմնարկների բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից թույլ չեն տրվել բացթողումներ, թերություններ կամ սխալներ՝ իրենց մասնագիտական պարտականությունների կատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ կապված, որոնց հետևանքով Արթուր Սարգսյանին անզուգույնությամբ պատճառված լինի մահ, հետևաբար, նրանց նկատմամբ քրեական հետապնդում չի կարող իրականացվել՝ վերջիններիս արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով (...)»<sup>14</sup>:

13. ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետ Գ.Աղաբաբյանի՝ Առաջին ատյանի դատարանին հասցեագրված 2019 թվականի ապրիլի 3-ի թիվ 7-46քր-17 գրության համաձայն՝ հաշվի առնելով, որ նախաքննությունը շարունակվում է, դրա գաղտնիության սկզբունքից ելնելով՝ բողոքին առնչվող նյութերի ամբողջական ծավալը (հարցաքննված անձանց ցուցմունքները) դատարանին չի կարող տրամադրվել<sup>15</sup>:

13.1. Առաջին ատյանի դատարանը, 2021 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ մերժելով դիմողի ներկայացուցիչ Տ.Եգորյանի բողոքը, նշել է. «(...) Դատարանն արձանագրում է, որ Քննիչի կողմից նախաքննության ընթացքում, դրսևորվել է անհրաժեշտ և բավարար ջանասիրություն գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման

<sup>13</sup> Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 86-102:

<sup>14</sup> Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 131-147:

<sup>15</sup> Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 45:

համար օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներն իրականացնելու ուղղությամբ, իսկ ձեռք բերված փաստական տվյալները վարույթն իրականացնող մարմնի համար բավարար էին քրեադատավարական օրենքի պահանջին համապատասխան հիմնավորված և պատճառաբանված որոշում կայացնելու համար:

Այսպիսով, Դատարանը գտնում է, որ նախաքննության մարմինը (...) գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական և դատավարական գործողությունների կատարման ճանապարհով ապացույցներ հավաքելով՝ գնահատել է դրանք և պատճառաբանված որոշում է կայացրել՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Այդ որոշման մեջ նշված, քրեական գործով ձեռք բերված փաստական հանգամանքների վերաբերյալ Քննիչի գնահատականների հետ Դիմողի՝ համամիտ չլինելը բավարար չէ արձանագրելու Դիմող կողմի իրավունքների և ազատությունների խախտման փաստը: Ավելին՝ Դիմողի կողմից բավարար չափով չի պատճառաբանվել, թե վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության որ պահանջն է խախտվել, ինչու է այն դրսևորվել, դրա հետևանքով Դիմողի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել, իսկ վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի իրավունքների կամ ազատությունների խախտում թույլ տրված լինելու փաստ հաստատելու արդյունքում Դատարանը կխախտի հանրային և մասնավոր շահերի ճիշտ հավասարակշռումը, ինչը կհակասի քրեական դատավարության տրամաբանությանը:

Ավելին, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կայացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված քրեորեն հետապնդելի արարքի կապակցությամբ, իսկ թիվ 69100817 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում, այսինքն դեռևս չի բացառվում քննությամբ քրեորեն հետապնդելի արարքների հատկանիշներ պարունակող փաստերի ձեռք բերումը և պատշաճ քննության շրջանակներում դրանց անդրադառնալը (...) սահմանված կարգով, վերստին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նոր ի հայտ եկած հանգամանքների շուրջ քննություն իրականացնելու հնարավորությունը : (...)»<sup>16</sup>:

14. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 16-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Դատարանը, մինչդարձ փաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության՝ իր լիազորությունների սահմաններում, առանց նախաքննության մարմնի ապացուցողական գործունեությանը (ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելը) միջամտելու, ուսումնասիրելով և վերլուծելով գործի փաստական տվյալները, հանգել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող իրավաչափ և գործի փաստական տվյալներից բխող՝ հիմնավոր հետևության:

Ելնելով քրեական հետապնդում չիրականացնելու մասին նախաքննության մարմնի 13.12.2018թ. որոշմամբ արձանագրված փաստական տվյալներից, հիմնավորումներից ու եզրահանգումներից՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դրանց հետ չհամաձայնելու օբյեկտիվ և իրավաչափ հիմքեր չկան: Որևէ իրավաչափ հիմք չկա արձանագրելու, որ վերը նշված՝ քրեական գործով Գևորգ Հարությունյանի և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի բժշկական օգնության և սպասարկում իրականացնող

<sup>16</sup> Տես նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 150-161:

պետական ծառայություն իրականացնող այլ պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ թույլ է տրվել անձի, այդ թվում դիմող Ա.Սարգսյանի իրավունքների և օրինական շահերի խախտում կամ անհամաչափ սահմանափակում:

Բողոքարկերի փաստարկները չեն բխում գործի փաստական հանգամանքներից, դրանք սուբյեկտիվ դատողության արդյունք են և հիմք չեն կարող հանդիսանալ բողոքարկված դատական ակտը բեկանելու համար: Այդ փաստարկներին անդրադարձել է Դատարանը՝ իր կողմից կայացրած դատական ակտի պարճառաբանական մասում, վերլուծել և գնահատել դրանք՝ գալով իրավաչափ հետևության այն մասին, որ քրեական հետապնդում չիրականացնելու մասին նախաքննության մարմնի կողմից կայացրած որոշումը հիմնավոր է (...):»<sup>17</sup>:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

15. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք նախաքննության մարմնի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2018 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

16. ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...):»:

17. Մեջբերված սահմանադրական և կոնվենցիոն նորմերով ամրագրված է կյանքի իրավունքը՝ որպես անձի հիմնարար իրավունք:

17.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված նորմին, այն մեկնաբանել է որպես այդ դրույթի նյութաիրավական կողմի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմ՝ հաշվի առնելով այս իրավունքի հիմնարար բնույթը<sup>18</sup>:

18. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի ընթացակարգային բաղադրիչի՝ արդյունավետ քննության մասով, Եվրոպական դատարանն իր դիրքորոշումներում բազմիցս ընդգծել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը պետություններին պարտավորեցնում է ոչ միայն ձեռնպահ մնալ անձանց կյանքի նկատմամբ դիտավորյալ, անօրինական ոտնձգություններից, այլ նաև սահմանում է, որ պետությունները պետք է իրենց իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար համապատասխան քայլեր ձեռնարկեն<sup>19</sup>: Կյանքի իրավունքի պաշտպանությունն անուղակիորեն պետությունից պահանջում է անձանց մահվան կապակցությամբ պաշտոնապես օբյեկտիվ քննություն իրականացնել: Նման

<sup>17</sup> Տե՛ս նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 76-86:

<sup>18</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *McCann and Others v. The United Kingdom* գործով 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, կետեր 157-164, *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23818/94, կետ 82, *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետեր 101-106:

<sup>19</sup> Ի թիվս այլոց, տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Osman v. the United Kingdom* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 87/1997/871/1083, կետ 115:

քննություն իրականացնելու պարտականությունը ծագում է բոլոր դեպքերում՝ սպանության կամ կասկած հարուցող մահվան դեպքերում՝ անկախ նրանից, թե հանցանք կատարած անձինք անհատներ են, թե պետական մարմիններ կամ անհայտ անձինք<sup>20</sup>:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջն է, որ իրավասու մարմինները գործեն պատշաճ ջանասիրությամբ ու արագությամբ և պարտավոր լինեն նախաձեռնել քննություն, որն ի վիճակի է նախ որոշակիացնել այն հանգամանքները, որոնցում դեպքը տեղի է ունեցել և կարգավորող համակարգի գործունեության ցանկացած թերություն, երկրորդ՝ բացահայտել դրանում ներգրավված պետական պաշտոնյաներին և մարմիններին<sup>21</sup>:

18.1. Քննությունն արդյունավետ կարող է համարվել այն դեպքում, երբ հնարավոր կլինի քննությամբ ձեռք բերված փաստերը համադրել և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկել: Իշխանությունները տեղի ունեցած իրադարձությունը բացահայտելու համար պետք է ձեռնարկեն հասանելի, խելամիտ քայլեր՝ վկաների հարցաքննություն, դատաբժշկական փորձաքննության նշանակում, ինչպես նաև դիախերձում, ինչը թույլ կտա բացահայտել առկա վնասվածքների ամբողջական և իրական պատկերը, ինչպես նաև մահվան պատճառը<sup>22</sup>: Քննության եզրակացությունը պետք է հիմնված լինի գործով առկա փաստերի ամբողջական, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության վրա:

18.2. Եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս ընդգծել է, որ քննության արդյունավետությունը գնահատելիս կարևոր է հատկապես այն հանգամանքը, թե որքան արագ են իշխանություններն արձագանքում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքներին, ինչը նպաստում է հանրության վստահության պահպանմանը՝ օրինականության ամրապնդման և անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողականության բացառման հարցում<sup>23</sup>:

18.3. Եվրոպական դատարանն ընդգծել է, որ քննությունը պետք է լինի մանրամասն: Դա նշանակում է, որ տեղի ունեցածը բացահայտելու նպատակով իրավասու մարմինները պետք է գործադրեն լուրջ ջանքեր և քննությունն ավարտելիս կամ իրենց որոշումները պատճառաբանելիս չհենվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված եզրահանգումների վրա: Նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ձեռք բերեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ականատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները: Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը<sup>24</sup>:

18.4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդդեմ Հայաստանի կայացված մի շարք վճիռներում արձանագրվել է, որ պետությունն իր պոզիտիվ պարտականության շրջանակներում չի կատարել մահվան դեպքերի առնչությամբ

<sup>20</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Nachova and Others v. Bulgaria* գործով 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատներ թիվ 43577/98, 43579/98, կետ 110:

<sup>21</sup> Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kats and Others v. Ukraine*, 2008 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 29971/04, կետ 116:

<sup>22</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Tanrikulu v. Turkey* գործով 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23763/94, կետ 109 և *Gül v. Turkey* գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, կետ 89:

<sup>23</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hugh Jordan v. United Kingdom* գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, կետ 108, *Yasa v. Turkey* գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, կետեր 102-104:

<sup>24</sup> Տե՛ս, ի թիվս այլոց, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorelov v. Russia*, 2014 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 49072/11, կետ 52:

արդյունավետ քննություն, ինչը հանգեցրել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչի խախտման<sup>25</sup>: Եվրոպական դատարանն արձանագրել է, որ քննություն իրականացնող մարմինները չեն գործել բավարար ջանասիրությամբ և չեն ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի պարզեն տուժողի մահվան հանգամանքները<sup>26</sup>:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար (...)»:

19.1. Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներում մշտապես ընդգծել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված՝ կյանքի իրավունքի առաջնային և հիմնարար բնույթը<sup>27</sup>: Միաժամանակ, Եվրոպական դատարանի ձևավորած մոտեցումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության գնահատման հիմնական չափանիշներից են՝

ա) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ, բ) քննության արդյունքում պետք է հստակեցվեն դեպքի հանգամանքները,

գ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներ ձեռք բերելու համար: Վարույթն իրականացնող մարմինները պետք է ձեռնպահ մնան շտապողական կամ թույլ պատճառաբանված հետևություններից, քանի որ քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում մահվան պատճառները պատասխանատու անձանց կողմից պարզելու կարողությունը, վրանգում է քննության արդյունավետությունը, հետևաբար և Կոնվենցիայի 2-րդ հոդվածով պետության ստանձնած պարտավորությունների իրագործումը:

Այն դեպքում, երբ պետության վերահսկողության ներքո (ուստիկանությունում, քրեակատարողական հիմնարկում և այլն) գտնվող անձը մահանում է, և պետությունը Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ուժով պարտավորություն է կրում ներկայացնելու մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, ապա իրավասու մարմինները (պաշտոնատար անձինք) կասկածելի մահվան փաստի առթիվ պետք է հարուցեն քրեական գործ և քրեադատավարական ողջ գործիքակազմի ներգրավմամբ իրականացնեն հնարավոր ողջամիտ քայլերը՝ դեպքի հանգամանքները պարզելու համար (...)»<sup>28</sup>:

19.2. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ կալանավորված, դատապարտված կամ այլ կերպ պետության իրավասության ներքո գտնվող անձի մահվան դեպքերում քննություն իրականացնող մարմինները պետք է գործեն արդյունավետ, կատարեն մանրամասն քննություն, ձեռնարկեն հնարավոր և անհրաժեշտ բոլոր միջոցները՝ անձի մահվան

<sup>25</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Մուրադյանն ընդդեմ Հայաստանի գործով 2016 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 11275/07, Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի գործով 2017 թվականի նոյեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 27524/09 և այլն, Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի գործով 2020 թվականի մայիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 3673/11:

<sup>26</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ նույն վճիռները:

<sup>27</sup> Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Սեյրան Այվազյանի գործով 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08, Լևոն Գուլյանի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0051/11/09, Կարեն Փափազյանի գործով 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0002/11/10, Սուսաննա Անտոնյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12, Ռուզաննա Նիսազյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշումները:

<sup>28</sup> Մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ռուզաննա Նիսազյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշման 25-26-րդ կետերը:

պատճառներն ու հանգամանքները, ինչպես նաև դրանում ներգրավված պատասխանատու անձանց պարզելու և հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար՝ միաժամանակ ձեռնպահ մնալով հապճեպ կամ չհիմնավորված վերջնական որոշումներ կայացնելուց և գնահատականներ տալուց: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ պետության վերահսկողության ներքո գտնվող անձանց մահվան դեպքերով վերը նշված պահանջներին համապատասխանող քննությունը միայն կարող է համարվել արդյունավետ և համահունչ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչին:

20. ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով (...):

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ կամ մարդու ինունային անբավարարության վարակի հարուցիչով վարակում (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է անգործությամբ՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից իրենց մասնագիտական պարտականությունները չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ կամ մարդու ինունային անբավարարության հարուցիչով վարակում: Քննարկվող հանցակազմը նյութական է. հանցագործության պարտադիր հատկանիշ է որոշակի հետևանքների առաջացումը, հետևաբար արարքի որակման անհրաժեշտ պայման է նաև հանցավորի վարքագծի և նշված հետևանքների միջև պատճառական կապի առկայությունը:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է համապատասխան պարտականությունների նկատմամբ հանցավորի անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքով:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է՝ որոշակի մասնագիտություն, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու իրավունք ունեցող յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- նախաքննության մարմինը 2018 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդում չի իրականացրել՝ այն պատճառաբանությամբ, որ նրանց կողմից թույլ չեն տրվել իրենց մասնագիտական պարտականությունների կատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ կապված բացթողումներ, թերություններ կամ սխալներ, որոնց հետևանքով Արթուր Սարգսյանին անզգուշությամբ պատճառված լինի մահ<sup>29</sup>:

- Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ արձանագրել է, որ նախաքննության մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ և բավարար ջանասիրություն՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներն իրականացնելու ուղղությամբ, որի արդյունքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական և դատավարական գործողությունների կատարման ճանապարհով ապացույցներ հավաքելով

<sup>29</sup> Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

և դրանք գնահատելով՝ պատճառաբանված որոշում է կայացվել՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին<sup>30</sup>:

- Վերաքննիչ դատարանը, մերժելով դիմողի ներկայացուցիչ Տ.Եգորյանի վերաքննիչ բողոքը, նշել է, որ Առաջին աստիճանի դատարանը մինչդեռ ատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության՝ իր լիազորությունների սահմաններում, առանց նախաքննության մարմնի ապացուցողական գործունեությանը (ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելը) միջամտելու, ուսումնասիրելով և վերլուծելով գործի փաստական տվյալները, հանգել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող իրավաչափ և գործի փաստական տվյալներից բխող հիմնավոր հետևության<sup>31</sup>:

22. Սույն որոշման 7-14-րդ և նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով սույն որոշման 16-20-րդ կետերում վկայակոչված իրավանորմերը և արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը գնահատելիս պատշաճ ուշադրության չեն արժանացրել սույն գործի փաստական հանգամանքները: Այսպես՝ Վճռաբեկ դատարանը ներկայացված նյութերի վերլուծության արդյունքում փաստում է, որ նախաքննության մարմինը սույն գործով դրսևորել է շտապողականություն և «լուրջ ջանքեր» չի գործադրել պարզելու, թե Ա.Սարգսյանի մոտ դիակի դատաբժշկական փորձաքննությամբ ախտորոշված և վերջինիս մահվան անմիջական պատճառի՝ բազմաօրգանային անբավարարության հետ ուղղակի պատճառական կապի մեջ գտնվող հիվանդությունները<sup>32</sup> հանդիսանում են արդյոք «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող պաշտոնատար անձանց կողմից իրենց մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանք, թե ոչ: Մասնավորապես, ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ.

- վարույթն իրականացնող մարմինը չի ձեռնարկել բոլոր ողջամիտ քայլերը՝ պարզելու, թե վերոնշյալ քրեակատարողական հիմնարկներում Ա.Սարգսյանի մոտ ախտորոշված «Քրոնիկ բրոնխիտ» հիվանդությունը կարող էր հանգեցնել վերջինիս մոտ «Արմենիա» ՀԲԿ-ում ախտորոշված և վերջինիս մահվանը հանգեցրած թարախաֆիբրինային միաձուլ թոքաբորբի և սիրտ-թոքային անբավարարության առաջացման, թե ոչ, ինչպես նաև արդյոք դրանց ախտորոշման և բուժման կապակցությամբ նշված քրեակատարողական հիմնարկներում եղել են հնարավոր բացթողումներ, թե ոչ:

Այսպես՝ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 2016 թվականի օգոստոսի 3-ին կատարվել է կրծքավանդակի օրգանների R-հետազոտություն և Ա.Սարգսյանի մոտ ախտորոշվել է «Քրոնիկական բրոնխիտ»<sup>33</sup>,

- 2016 թվականի դեկտեմբերի 21-ին Ա.Սարգսյանը, առանց վերոնշյալ ախտորոշման, տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, որտեղ նույն օրը, ի թիվս այլնի, այն նշվել է որպես կլինիկական ախտորոշում<sup>34</sup>,

- նույն ՔԿՀ-ում 2016 թվականի դեկտեմբերի 22-ին կատարված հետազոտությունների

<sup>30</sup> Տե՛ս սույն որոշման 13.1-րդ կետը:

<sup>31</sup> Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

<sup>32</sup> Տե՛ս սույն որոշման 8.8-րդ կետը:

<sup>33</sup> Տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը:

<sup>34</sup> Տե՛ս սույն որոշման 7-րդ և 8.4-րդ կետերը:

արդյունքում որոշվել է, որ անհրաժեշտ է կատարել էլեկտրաստացրություն<sup>35</sup>, սակայն ներկայացված նյութերում դրա կատարման վերաբերյալ տեղեկություններ առկա չեն,

- 2016 թվականի դեկտեմբերի 30-ին «Դիագնոստիկա» բժշկական միավորումում կատարվել է հետազոտություն, որով, ըստ վկա Ե.Սահակյանի ցուցմունքի՝ հերքվել է քրեակատարողական հիմնարկներում ախտորոշված վերոնշյալ հիվանդության առկայությունը և հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ վկան պնդել է, որ Ա.Սարգսյանի մոտ ախտորոշված «Քրոնիկ բրոնխիտ» հիվանդությունը չէր կարող պատճառ հանդիսանալ և հանգեցնել վերջինիս մոտ «Արմենիա» ՀԲԿ-ում ախտորոշված թարախաֆիբրինային միաձուլ թոքաբորբի և դրանք տվյալ դեպքում միմյանց հետ չեն գտնվել պատճառական կապի մեջ<sup>36</sup>, մինչդեռ, սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ «Դիագնոստիկա» բժշկական միավորումում հետազոտությունը կատարվել է ոչ թե 2016 թվականի դեկտեմբերի 30-ին, այլ նույն թվականի դեկտեմբերի 29-ին, իսկ դեկտեմբերի 30-ին կազմվել է համապատասխան արձանագրությունը<sup>37</sup>, բացի այդ՝ 2016 թվականի դեկտեմբերի 30-ին սկսված և 2017 թվականի հունվարի 23-ին ավարտված ՀՀ առողջապահության նախարարության միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված թիվ 273/հձ եզրակացությամբ արձանագրվել է, որ Ա.Սարգսյանը, ի թիվս այլնի, տառապում է «Քրոնիկ բրոնխիտով»<sup>38</sup>,

- ավելին՝ հանձնաժողովը դատաբժշկական հանձնաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 9/կ եզրակացությամբ հաստատել է, որ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ներում Ա.Սարգսյանի մոտ հայտնաբերված «Քրոնիկ բրոնխիտի» ախտորոշման և բուժման, ինչպես նաև թոք-սրտային անբավարարության հայտնաբերման ուղղությամբ թույլ են տրվել թերություններ, և միաժամանակ հաշվի առնելով, որ 2016 թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 2017 թվականի փետրվարի 9-ն Ա.Սարգսյանի՝ ազատության մեջ գտնվելու, ինչպես նաև 2017 թվականի փետրվարի 9-ից մինչև նույն թվականի մարտի 6-ը՝ հացադուլի մեջ գտնվելու, հետազոտություններից և բուժումից հրաժարվելու հանգամանքները, չի կարողացել հստակ հետևության հանգել, որ Ա.Սարգսյանի մոտ ախտորոշված թարախաֆիբրինային միաձուլ թոքաբորբը, սրտի իշեմիկ հիվանդությունը, հետինֆարկտային կորոնարոկարդիոսկլերոզը հանդիսանում են հիշյալ քրեակատարողական հիմնարկներում թույլ տրված բացթողումների հետևանք<sup>39</sup>: Այս առումով հատկանշական են նաև նույն եզրակացության այն դատողությունները, ըստ որոնց՝ «Քրոնիկ բրոնխիտի» հետևանքով թոք-սրտային հնարավոր անբավարարության առաջացման վերաբերյալ հետազոտություններ չեն կատարվել և բուժում չի իրականացվել<sup>40</sup>, ինչպես նաև վկա Գ.Հարությունյանի ցուցմունքներն այն մասին, որ «Քրոնիկ բրոնխիտ» հիվանդությունը երբեք չի կարող առաջացնել թոք-սրտային հնարավոր անբավարարություն, բացի այդ Ա.Սարգսյանն ինչպես «Քրոնիկ բրոնխիտ», այնպես էլ հնարավոր թոք-սրտային անբավարարության վերաբերյալ երբևէ որևէ գանգապ չի ներկայացրել, դրանց վերաբերյալ տվյալներ բժշկական քարտում առկա չեն եղել, հետևաբար բուժում իրականացնելու անհրաժեշտություն նույնպես չի եղել<sup>41</sup>: Մինչդեռ, նշված հակասական փաստական տվյալների առկայության պայմաններում, այդ կապակցությամբ

<sup>35</sup> Տե՛ս սույն որոշման 8.4-րդ կետը:

<sup>36</sup> Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

<sup>37</sup> Տե՛ս սույն որոշման 8.5-րդ կետը:

<sup>38</sup> Տե՛ս սույն որոշման 8.6-րդ կետը:

<sup>39</sup> Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>41</sup> Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:



քննություն չի կատարվել, նախաքննության մարմինը կատարված քննության ընթացքում միջոցներ չի ձեռնարկել Ա.Սարգսյանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 2017 թվականի փետրվարի 9-ը՝ ազատության մեջ գտնվելու ժամանակահատվածում վերջինիս հիվանդությունների, դրանց հնարավոր բուժման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու և ըստ այդմ՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող էական հանգամանքի վերաբերյալ հետևության հանգելու համար: Բացի այդ, վարույթն իրականացնող մարմինը չի պարզել, թե ինչպե՞ս է ստացվել, որ թեև «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 2016 թվականի օգոստոսի 3-ին Ա.Սարգսյանի մոտ ախտորոշված է եղել «Քրոնիկ բրոնխիտ» հիվանդությունը, սակայն երբ վերջինիս նույն թվականի դեկտեմբերի 21-ին տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, վերոնշյալ ախտորոշումը նշված չի եղել, ավելին՝ այն կրկին հաստատվել է հաջորդ օրը: Չի պարզվել նաև, թե հնարավոր էր արդյոք, որ 2016 թվականի օգոստոսի 3-ին ախտորոշված հիվանդությունը հերքվեր 2016 թվականի դեկտեմբերի 29-ին և կրկին ախտորոշվեր 2016 թվականի դեկտեմբերի 30-ից 2017 թվականի հունվարի 23-ն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև չի պարզել, թե ինչու՞ Ա.Սարգսյանին չի կատարվել էլեկտրասրտագրություն, և արդյոք դրա կատարման դեպքում հնարավոր կլիներ արձանագրել Ա.Սարգսյանի մոտ հնարավոր թոք-սրտային անբավարարությունը, ինչպես նաև մահվան հետ անմիջական պատճառական կապի մեջ գտնվող օջախային շճային միոկարդիտը, սրտամկանի ծանր դիստրոֆիան կամ թեև մահվան հետ անմիջական պատճառական կապի մեջ չգտնվող, սակայն կենդանության օրոք վերջինիս ունեցած սրտի իշեմիկ հիվանդությունը, հետինֆարկտային կորոնարոկարդիոսկլերոզը,

- նախաքննության մարմինը բավարար միջոցներ չի ձեռնարկել Ա.Սարգսյանի մահվան պատճառի հետ անմիջական պատճառահետևանքային կապի մեջ գտնվող՝ «քրոնիկական հեպատիտ «Ց» անցումով լյարդի ցիռոզի» հիվանդության հայտնաբերման և բուժման ուղղությամբ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ներում իրականացված միջոցառումները պարզելու կամ այդպիսիք ձեռնարկված չլինելու դեպքում՝ դրանց պատճառները պարզաբանելու ուղղությամբ: Մասնավորապես, քննիչը չի փորձել հստակ պատասխան ստանալ այն հարցին, թե քրեակատարողական հիմնարկ ընդունվող՝ ազատությունից զրկված անձը, պարտադիր կերպով ի՞նչ հետազոտությունների է ենթարկվում, արդյոք դրանք չեն ներառում հեպատիտների նախնական ախտորոշիչ հետազոտությունները<sup>42</sup>: Ավելին՝ քննիչը քննարկման առարկա չի դարձրել այն հանգամանքները, որ 2016 թվականի դեկտեմբերի 11-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնում իրականացված հետազոտությունների արդյունքում Ա.Սարգսյանի մոտ ախտորոշվել է «Հեպատոմեգալիա, լյարդի ճարպային դիստրոֆիա»<sup>43</sup>, իսկ 2016 թվականի դեկտեմբերի 22-ին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում արձանագրվել է «Խր. հեպատիտ (ճարպային դիստրոֆիա)»<sup>44</sup>, և չի պարզել, թե արդյոք դրանք չեն վկայել Ա.Սարգսյանի մոտ հեպատիտ «Ց»-ի առկայության մասին, և նշված ախտորոշումների կապակցությամբ քրեակատարողական հիմնարկներում ի՞նչ

<sup>42</sup> Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/86336c95ac7349cbe5d51ff372cbcd8cc.pdf>, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2021 թվականի գործունեության վերաբերյալ» 2021 թվականի տարեկան զեկույցը, ըստ որի՝ տրամադրված տեղեկությունների համաձայն «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ ընդունվող ազատությունից զրկված անձինք պարտադիր կերպով ենթարկվում են արյան և մեզի ընդհանուր քննության, արյան կենսաքիմիական քննության, իսկ սկսած 2015 թվականից՝ նաև հեպատիտների և ՄԻԱՎ-ի նախնական ախտորոշիչ հետազոտությունների:

<sup>43</sup> Տե՛ս սույն որոշման 8.2-րդ կետը:

<sup>44</sup> Տե՛ս սույն որոշման 8.4-րդ կետը:

միջոցառումներ են ձեռնարկվել: Իսկ այն փաստը, որ դատաբժշկական հանձնաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 9/կ եզրակացությունից հետևում է, որ նշված հիվանդությունը տվյալ փուլում եղել է կոմպենսացված՝ առանց կլինիկական արտահայտության<sup>45</sup>, վերևում արձանագրված փաստական հանգամանքների պայմաններում չի կարող բացառել բժիշկների կողմից համապատասխան հետազոտություններ կատարելու անհրաժեշտությունը և դրանց միջոցով վկայակոչված հիվանդությունը բացահայտելու փաստացի հնարավորությունը,

- նախաքննության մարմնի կողմից մանրամասն քննություն չի տարվել պարզելու նաև, թե Ա.Սարգսյանի մոտ ախտորոշվել են արդյո՞ք արյան ճնշման խնդիրներ և ստամոքս-աղիքային արյունահոսություն, թե ոչ, եթե այո, ապա քրեակատարողական հիմնարկների բուժանձնակազմի կողմից ինչ քայլեր են ձեռնարկվել դրանց բուժման ուղղությամբ, արդյո՞ք նշանակվել և վերջինիս տրամադրվել է համապատասխան դեղորայք կամ պետք է նշանակվեր, թե ոչ, և չնայած այն հանգամանքին, որ տվյալ դեպքում նշված հիվանդությունները մահվան պատճառի հետ չեն գտնվել ուղղակի պատճառական կապի մեջ, չի պարզվել, թե դրանք կարող էին արդյո՞ք որպես նպաստող գործոն պատճառ հանդիսանալ Ա.Սարգսյանի մահվանը հանգեցրած հիվանդությունների զարգացման համար:

Վերոնշյալ հարցերի շուրջ քննություն կատարելու անհրաժեշտությունը կարևորվում է դրանց առնչությամբ սույն գործով հակասական և իրարամերժ տվյալների առկայությամբ: Այսպես՝ թեև դատաբժշկական հանձնաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 9/կ եզրակացության համաձայն՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում Արթուր Սարգսյանի նկատմամբ հիպոտենզիվ (արյան ճնշումն իջեցնող) և էրոզիվ գաստրիտի, բուլբիտի դեմ բուժում չի իրականացվել, սակայն դա պայմանավորված է եղել, ըստ գրառումների, դեղամիջոցներն ընդունելուց հիվանդի հրաժարվելու հետ<sup>46</sup>, մինչդեռ սույն գործով ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դրանցում նման գրառումներ առկա չեն, ավելին՝ վկա Գ.Հարությունյանն իր ցուցմունքով հայտնել է, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում գտնվելու ընթացքում Ա.Սարգսյանին դեղորայքային բուժում նշանակված է եղել ողնաշարի և ստամոքսի խնդիրների հետ կապված, և վերջինս հրաժարվել է միայն «Պանտոպրազոլ» դեղն ընդունելուց, որը նշանակված է եղել «էրոզիվ գաստրիտ, բուլբիտ» հիվանդությունների առնչությամբ, իսկ մյուս դեղերի ընդունման հաճախականության մասին քննիչի հարցին վկան պատասխանել է, որ տեղյակ չէ, դրա վերաբերյալ տվյալները պետք է նշված լինեն համապատասխան մատյաններում<sup>47</sup>: Այս առումով հատկանշական է նաև բողոքաբերի փաստարկն այն մասին, որ ըստ՝ Ա.Սարգսյանի և վերջինիս պաշտպանների կատարած գրառումների՝ երբ 2016 թվականի դեկտեմբերի 11-ին Ա.Սարգսյանը «Նուբարաշեն» ՔԿՀ-ում վատացել և ունեցել է բարձր ճնշում, վերջինիս չի տրամադրվել այն իջեցնելու միջոց<sup>48</sup>: Բացի այդ, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության հմ. 556 կանչի թերթիկի գրառման համաձայն՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ին Ա.Սարգսյանի մոտ ախտորոշվել է զարկերակային հիպերտենզիա<sup>49</sup>: Նման պայմաններում նախաքննության մարմնի կողմից չեն ձեռնարկվել քայլեր՝ առնվազն «Նուբարաշեն» ՔԿՀ-ում դեղերի ընդունման հաճախականության մասին համապատասխան մատյանները հայտնաբերելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտար պարզելու և հաղթահարելու վերոնշյալ հակասությունները և գալու հիմնավոր եզրահանգման:

<sup>45</sup> Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

<sup>46</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>47</sup> Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

<sup>48</sup> Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

<sup>49</sup> Տե՛ս սույն որոշման 8.3-րդ կետը:

Վերոգրյալի համատեքստում պատշաճ ուշադրության և գնահատման չեն արժանացել նաև Ա.Սարգսյանի մոտ ստամոքս-աղիքային արնահոսության ախտորոշման վերաբերյալ սույն գործով առկա հակասական տվյալները: Մասնավորապես՝ դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության թիվ 226/հձ եզրակացությունից հետևում է, որ «Էրեբունի» բժշկական կենտրոնում 2016 թվականին կատարված հետազոտությամբ այդ ախտորոշումը հաստատվել է<sup>50</sup>, իսկ նշված հարցի կապակցությամբ Գ.Հարությունյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2016 թվականի դեկտեմբերի 12-ին շտապօգնության կողմից Ա.Սարգսյանի մոտ հարցականով ախտորոշված ստամոքսի արնահոսությունը հերքվել է «Էրեբունի» բժշկական կենտրոնում կատարված հետազոտությունների արդյունքում<sup>51</sup>,

- նախաքննության մարմնի կողմից պատշաճ գնահատման չեն ենթարկվել Ա.Սարգսյանի մոտ դեռևս 2016 թվականի օգոստոսի 5-ին «Նուբարաշեն» ՔԿՀ-ում բժշկական սպասարկման բաժնի պետ Գ.Հարությունյանի կողմից ախտորոշված «Որովայնի սպիտակ գծի ճողվածք»-ի առնչությամբ նշված և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի բուժաշխատողների կողմից իրականացված միջոցառումները: Այս առումով հատկանշական է այն, որ Ա.Սարգսյանի մահվան պատճառը պայմանավորված է եղել նաև օղակված պորտային ճողվածքի և սուր բարակ աղիքային օբտուրացիոն անանցանելիության կապակցությամբ կատարված վիրահատությամբ, տարածուն շճային պերիտոնիտով<sup>52</sup>, որպիսի կլինիկական ախտորոշումը, ըստ դատաբժշկական հանձնաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 9/կ եզրակացության, հանդիսացել է «Որովայնի սպիտակ գծի ճողվածք»-ի բարդություն<sup>53</sup>: Միաժամանակ նշված փորձագիտական եզրակացությամբ հետևություն է արվել, որ այն չի հանդիսանում «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ների բժշկական անձնակազմի կողմից թույլ տրված բացթողումների, թերությունների կամ սխալների արդյունք, քանի որ նշված բարդությունը կարող էր առաջանալ ներորովայնային ճնշման բարձրացման հետևանքով՝ տարբեր պատճառներից<sup>54</sup>: Նույն եզրակացությամբ, անդրադառնալով նաև «Որովայնի սպիտակ գծի ճողվածք»-ի կապակցությամբ դեռևս 2016 թվականի նոյեմբերի 4-ին վիրաբույժի կողմից պլանային վիրահատություն ցուցված լինելուն, հանձնաժողովը հանգել է հետևության, որ քրեակատարողական հիմնարկներում ախտորոշված նշված հիվանդությունը չի ունեցել բարդությունների առաջացման կլինիկական դրսևորումներ և անհետաձգելի վիրաբուժական միջամտության ցուցում, որպիսի պայմաններում պլանային վիրահատությունը ժամկետ չի նախատեսում, իսկ քրեակատարողական հիմնարկների հիվանդության պատմագրերում դրա կապակցությամբ պլանային վիրահատություն կատարելու և դրա ժամկետների վերաբերյալ գրառումներ առկա չեն<sup>55</sup>: Այս մասով վարույթն իրականացնող մարմինը քննություն չի իրականացրել և չի պարզել, թե արդյո՞ք Ա.Սարգսյանին առաջարկվել է կատարել վիրահատություն, թե ոչ, արդյո՞ք 2016 թվականի դեկտեմբերի 11-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնում իրականացված հետազոտությունների արդյունքում Ա.Սարգսյանի մոտ ախտորոշված պորտային ճողվածքի առկայությունը չի հանդիսացել վերոնշյալ հիվանդության բարդացում<sup>56</sup>, և արդյո՞ք հիվանդության տվյալ փուլում

<sup>50</sup> Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

<sup>51</sup> Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

<sup>52</sup> Տե՛ս սույն որոշման 8.8-րդ կետը:

<sup>53</sup> Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

<sup>54</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>55</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>56</sup> Տե՛ս սույն որոշման 8.2-րդ կետը:

վիրահատությունը կարող էր կանխել հետագայում առաջացած բարդությունները:

23. Նախորդ կետում վկայակոչված հանգամանքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող որոշ աշխատակիցների կողմից մասնագիտական պարտականությունները ենթադրաբար չկատարելու հետևանքով Արթուր Սարգսյանին անզգուշությամբ մահ պատճառելու դեպքի առթիվ իրականացված քննության կապակցությամբ չեն ձեռնարկվել բոլոր ողջամիտ քայլերը, որոնք օբյեկտիվ դիտորդին համոզիչ կերպով հնարավորություն կընձեռեին լիարժեք պատկերացում կազմել դեպքի իրական հանգամանքների վերաբերյալ: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ տրված դատավարական խախտումների պայմաններում արդյունավետ քննություն չի իրականացվել, ինչը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել ստորադաս դատարանների կողմից: Ուստի, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ նախաքննության մարմնի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2018 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

24. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտ կայացնելիս, ստորադաս դատարանները թույլ են տվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական բաղադրիչի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Վերոշարադրյալը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու, դիմող Ա.Սարգսյանի ներկայացուցիչ Տ.Եգորյանի բողոքը բավարարելու և Ա.Սարգսյանի իրավունքների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականություն սահմանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361<sup>1</sup>-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 5-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 16-ի որոշումները բեկանել և փոփոխել: Դիմողի ներկայացուցիչ Տ.Եգորյանի բողոքը բավարարել՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնելու դիմող Արսեն Սարգսյանի իրավունքների խախտումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՍնԴ/3572/04/22

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**  
**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ**  
**(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)**

2024 թվականի սեպտեմբերի 02-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) դիմումի՝ «Կվադրա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.09.2023 թվականի որոշման դեմ Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանների բերած վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ:

Սնանկության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.01.2023 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Դատարանի 11.05.2023 թվականի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը և նշանակվել է պարտատերերի առաջին ժողով:

Դատարանը 25.05.2023 թվականին որոշել է «(...) Լեոնարդ Հովսեփյանի և Տաթևիկ Հովսեփյանի պահանջը՝ «Կվադրա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի նկատմամբ հաստատել 56.500.000 (հիսունվեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետով նախատեսված՝ ստորադաս չափահովված պահանջ, իսկ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով պահանջը, որպես դատական ծախսի գումար հաստատել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետով նախատեսված հերթում: (...)»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 25.09.2023 թվականի որոշմամբ Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանների (...) բերած վերաքննիչ բողոքները մերժվել են, ու Դատարանի 25.05.2023 թվականի «Սահմանված ժամկետում դատարան չներկայացված պահանջների քննարկման մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի դատավոր Ն. Կարապետյանը հայտնել է հատուկ կարծիք:  
Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանները  
(ներկայացուցիչ Վարդան Ալոյան):  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ, 44-րդ, 46-րդ, 50-րդ ու 82-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 570.1-ին, 928.1-ին և 928.6-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 105-րդ ու 107-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձինք նշված հիմքերի առկայությունը պարճառաբանել են հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության և իրենց միջև 20.09.2019 թվականին կնքված՝ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի համաձայն՝ Ընկերության հատուկ հաշվեհամարին իրենց մուտքագրած ցանկացած գումար համարվում է գրավադրված հոգուտ իրենց՝ Ընկերության ստանձնած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը ոչ իրավաչափորեն է իրենց ներկայացրած պահանջի փոփոխությունը դիտարկել որպես առանձին ներկայացված պահանջ. այն պահանջի փոփոխություն է, որի մասին հստակ նշվել է պահանջի փոփոխության տեքստում: Պահանջի փոփոխությամբ ներկայացվել է գնահատման հաշվետվություն և խնդրել են կատարել պահանջի փոփոխություն: Այն որպես պահանջի փոփոխություն չդիտարկելու արդյունքում խախտվել է իրենց սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ պահանջի փոփոխությունը ներկայացվել է 25.03.2023 թվականին, իսկ պահանջների վերջնական ցուցակը Դատարանը հաստատել է միայն 11.05.2023 թվականի որոշմամբ: Այսինքն՝ պահանջի փոփոխությունը Դատարան է ներկայացվել պահանջների վերջնական ցուցակը հաստատվելուց մոտ 50 օր առաջ, որի պայմաններում Դատարանի կողմից ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդությունը մերժելը և պահանջը որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի «ը» հերթի պահանջ գրանցելն իրավաչափ չէ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի «դ» հերթի պահանջ ներկայացված 3.359.721 ՀՀ դրամ պահանջից ընդամենը 400.000 ՀՀ դրամը գրանցելու դեպքում գումարի չափն ակնհայտ քիչ է և չի համապատասխանում կատարված ու սնանկության վարույթում դեռ կատարվելիք աշխատանքի բարդությանը և ծավալներին: Պարտատերերի և «Թրասթ Լոու» ՍՊԸ միջև 21.03.2023 թվականին կնքվել է թիվ TLTH-21/03/23 իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը, որով «Թրասթ Լոու» ՍՊԸ-ն ստանձնել է իրականացնել նույն պահանջի փոփոխության կազմման և ներկայացման, ինչպես նաև սույն սնանկության գործի շրջանակներում վստահորդների շահերի ներկայացումն ու պաշտպանությունը: Պայմանագրի 2.1-ին կետի համաձայն՝ իրավական օգնության համար վարձատրության չափ է սահմանվել՝ որպես հաջողության

պարգևավճար, վստահորդների կողմից Ընկերությունից ձեռք բերած կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի շուկայական արժեքի՝ 56.500.000 ՀՀ դրամի և բնակարանը հանձնելն ուշացնելու համար կառուցապատողի հետ կնքված պայմանագրով սահմանված տույժի՝ 10.694.430 ՀՀ դրամի 5%-ը, այսինքն՝ ընդհանուր 3.359.721 ՀՀ դրամը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 25.09.2023 թվականի որոշումը և փոփոխել այն:

**3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության՝ որպես վաճառողի, և Տաթևիկ ու Լեոնարդ Հովսեփյանների՝ որպես գնորդների, միջև 20.09.2019 թվականին կնքվել է կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր), որի 1.1-ին կետում նշվել է, որ նույն պայմանագրով գնորդները ձեռք են բերում վաճառողին սեփականության իրավունքով պատկանող և կառուցապատվող՝ Երևանի Կենտրոն, Անտառային փողոցի թիվ 126/8 հասցեում գտնվող հողամասի վրա կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 2-2 բնակարանը գնելու իրավունքը, իսկ գնորդները պարտավորվում են վաճառողից օբյեկտը սեփականության իրավունքով փոխանցելու ակտի կնքման առաջարկն ստանալու դեպքում կնքել սեփականության իրավունքի փոխանցման ակտն ու օբյեկտի ձեռքբերման դիմաց վճարել պայմանավորված գինը՝ նույն պայմանագրում նախատեսված կարգով և չափով (...):

Պայմանագրի 2.1-ին կետում նշվել է, որ Պայմանագրի գնից՝ 38.170.000 ՀՀ դրամ գումարից 11.460.000 ՀՀ դրամ գումարը, որպես կանխավճար, գնորդները պարտավորվում են փոխանցել Բանկում սպասարկվող վաճառողի թիվ 1150005023653671 հատուկ բանկային հաշվին մինչև Պայմանագրի կնքման հաջորդ աշխատանքային օրը, իսկ մնացած 26.710.000 ՀՀ դրամ գումարը պարտավորվում են նույն բանկում սպասարկվող՝ վաճառողի թիվ 1150005023653671 հատուկ բանկային հաշվին փոխանցել մինչև 26.12.2020 թվականը:

Պայմանագրի 2.3-րդ կետում նշվել է, որ գնորդների կողմից վաճառողի հատուկ հաշվին գումարները մուտքագրելու պահից նույն պայմանագրի ուժով դրանք համարվում են գնորդների օգտին վաճառողի կողմից գրավադրված՝ որպես շենքի կառուցման ավարտից հետո օբյեկտը սեփականության իրավունքով հանձնելու վաճառողի պարտավորության և Պայմանագրի լուծման դեպքում կանխավճարի վերադարձման վաճառողի պարտավորության կատարման ապահովման միջոց:

Պայմանագրի 7.3-րդ կետում նշվել է, որ Վաճառողի թերացման հետևանքով շենքի շահագործման թույլտվությունը նույն պայմանագրով սահմանված ժամկետից 60 օրացուցային օրից ուշ ստանալու դեպքում գնորդն իրավունք ունի վաճառողից պահանջել տույժ՝ կետանցի 61-րդ օրվանից սկսած՝ յուրաքանչյուր օրվա համար օբյեկտի գնի 0,05 տոկոսի չափով, որը հաշվանցելի է Պայմանագրի գնի մնացորդի գումարի հետ, եթե առկա է մնացորդ (**հիմք՝ Սնանկության դատարանի կողմից 20.05.2024 թվականի գրությանը կից ուղարկված պայմանագիրը**):

2) Բանկի դիմումը բավարարելու արդյունքում Դատարանի 25.01.2023 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ (**հավելված 1-ին, գ.թ. 10-34**):

3) սնանկության մասին հայտարարությունից (սնանկության մասին հայտարարությունը «azdarar.am» կայքում տրվել է 20.02.2023 թվականին) հետո՝ մեկամսյա ժամկետում՝ 06.03.2023 թվականին, պարտատերեր Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանները Դատարան են ներկայացրել պահանջ՝ Պայմանագրում նշված անշարժ գույքի՝ բնակարանի, և Պայմանագրի

7.3-րդ կետով հաշվարկված 10.649.430 ՀՀ դրամի չափով տույժի մասին (**հավելված 2-րդ, գ.թ. 37-39, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք՝ «azdarar.am»**).

4) Դատարանի 11.05.2023 թվականի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը, այդ թվում նաև հաստատվել է Լեոնարդ Հովսեփյանի և Տաթևիկ Հովսեփյանի պահանջը 10.649.430 ՀՀ դրամի չափով՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի «է» հերթում. պահանջի մյուս մասի վերաբերյալ Դատարանը որոշում չի կայացրել, ինչպես նաև այդ մասին չի անդրադարձել որոշման պատճառաբանական մասում (**հավելված 1-ին, գ.թ. 76-84**).

5) Դատարանում 24.03.2023 թվականին ստացվել է Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանների՝ «Պահանջի փոփոխություն» վերտառությամբ փաստաթուղթը, որով դիմողները խնդրել են իրենց կողմից 06.03.2023 թվականին ներկայացված պահանջում կատարել փոփոխություն՝ իրենց պահանջը գրանցելով հետևյալ կերպ.

«1) ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Անտրառային 126/8 հասցեում կառուցված շենքի նախագծային 2-2 բնակարանի շուկայական արժեքի՝ 56.500.000 ՀՀ դրամ վճարման պահանջը, որն ապահովված է «Կվադրա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի «Հայթիզնեսթանկ» ՓԲԸ-ում բացված կառուցապարտողի հափուկ 1150005023653671 հաշվին առկա դրամական միջոցների գրավով,

2) որպես Բնակարանի հանձնումը ուղացնելու համար Պայմանագրով սահմանված տույժի գումար՝ 10.694.430 ՀՀ դրամ պահանջը, որն ապահովված է «Կվադրա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի «Հայթիզնեսթանկ» ՓԲԸ-ում բացված կառուցապարտողի հափուկ 1150005023653671 հաշվին առկա դրամական միջոցների գրավով,

3) որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար՝ 3.359.721 ՀՀ դրամ պահանջը գրանցել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի «դ» հերթի պահանջ»:

Միաժամանակ խնդրել են հարգելի համարել պահանջի փոփոխությունում տեղ գտած չապահովված պահանջի և ապահովված պահանջի չապահովված մասը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառը, եթե առկա է ժամկետի բացթողում (**հավելված 2-րդ, գ.թ. 60-66**).

6) Դատարանի 25.05.2023 թվականի որոշմամբ Ընկերության նկատմամբ Լեոնարդ Հովսեփյանի և Տաթևիկ Հովսեփյանի պահանջը հաստատվել է 56.500.000 ՀՀ դրամի չափով՝ որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետով նախատեսված՝ ստորադաս չապահովված պահանջ, իսկ 400.000 ՀՀ դրամի չափով պահանջը՝ որպես դատական ծախսի գումար՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետով նախատեսված հերթում (**հավելված 1-ին, գ.թ. 85-127**).

7) «Թրասթ Լոու» ՍՊԸ-ի և Տաթևիկ ու Լեոնարդ Հովսեփյանների միջև 21.03.2023 թվականին կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 1.1-ին կետի համաձայն՝ «Թրասթ Լոու» ՍՊԸ-ն պարտավորվել է Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյաններին մատուցել պայմանագրի 1.2-րդ կետում նշված փաստաբանական ծառայությունները, իսկ վերջիններս պարտավորվել են իրավաբանական օգնության համար «Թրասթ Լոու» ՍՊԸ-ին վճարել պայմանագրի 2.1-ին կետին համապատասխան:

Նույն պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ «Թրասթ Լոու» ՍՊԸ-ն ստանձնել է Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանների շահերի պաշտպանությունն Ընկերության սնանկության գործի շրջանակներում, մասնավորապես՝ կազմել և ներկայացնել նոր պահանջ, կամ պահանջի փոփոխություն (...), իրականացնել դատական ներկայացուցչություն (...):

Նույն պայմանագրի 2.1-ին կետի համաձայն՝ իրավաբանական օգնության համար



վճարման ենթակա վարձատրությունը կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանվում է հաջողության պարգևավճարի տեսքով՝ Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանների կողմից Շնկերությունից ձեռք բերված կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի շուկայական արժեքի՝ 56.500.000 ՀՀ դրամի և բնակարանը հանձնելն ուշացնելու համար պայմանագրով սահմանված տույժի՝ 10.694.430 ՀՀ դրամի 5 տոկոսի չափով, որը ենթակա է վճարման բնակարանը որպես սեփականություն ստանալուց, կամ դրա անհնարինության դեպքում՝ դրա արժեքը փաստացի ստանալուց և (կամ) տույժի գումարը փաստացի ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում (**հավելված 2-րդ, գ.թ. 74-78**):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ, 44-րդ ու 46-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 570.1-ին և 928.6-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ՝*

1. պահանջի փոփոխության հասկացությանը՝ բացահայտելով դրա էությունը,
2. կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի շրջանակներում կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի կողմից կատարված կանխավճարային վճարումը որպես ապահովված իրավունքի առարկա դիտարկելուն,
3. փաստաբանի խելամիտ վարձատրության գումարների հարցին՝ վերահաստատելով նախկինում արդարադատված դիրքորոշումները:

1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում, բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ պարտատիրոջ պահանջում պետք է նշվեն պահանջի չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, մասսների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝ համապատասխան հաշվարկներով:

Նույն հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները չպահպանելու դեպքում ներկայացված պահանջը չի դիտարկվում, որի մասին պարտատերը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը: (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պահանջը սահմանված կարգով ներկայացվելու դեպքում գրանցվում է դատարանում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պահանջի գրանցումից ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում դատարանը պահանջի և նրան կից փաստաթղթերի օրինակներն ուղարկում է կառավարչին՝ դրա մեկ օրինակը պարտապանին հանձնելու համար:

Մինչև 12.02.2024 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասով նախատեսված ժամկետում ներկայացրած բոլոր պահանջները կառավարիչն ընդգրկում է պարտատերերի

պահանջների նախնական ցուցակում՝ նույն օրենքի 82-րդ հոդվածով սահմանված պահանջների բավարարման հերթականությանը համապատասխան:

Մինչև 12.02.2024 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Եթե հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ չեն ներկայացնում դատարան, ապա դատավորը եռօրյա ժամկետում առանց նիստ հրավիրելու որոշում է կայացնում պահանջների ցուցակը հաստատելու մասին (վերջնական ցուցակ):

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատարանը առարկությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կարող է բողոքարկվել:

Մինչև 12.02.2024 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումից հետո դատարան ներկայացրած նոր պահանջները և պահանջների փոփոխությունները դատարանը հանձնում է կառավարչին: Կառավարիչը պահանջը կամ պահանջի փոփոխությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դրա պատճենն ուղարկում է պարտապանին, պարտատերերին կամ այդ մասին ամփոփ տեղեկատվություն է հրապարակում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում:

Եթե պահանջի փոփոխության պատճենն ստանալուց կամ իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում տեղեկատվություն հրապարակելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը, պարտատերերը պահանջի, պահանջի փոփոխության դեմ գրավոր առարկություն չեն ներկայացնում դատարան, ապա կառավարիչը պահանջը կամ պահանջի փոփոխությունը գրանցում է պահանջների գրանցամատյանում՝ նույն օրենքի 85-րդ հոդվածին համապատասխան:

Մինչև 07.01.2023 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դատարան չներկայացված չապահովված պահանջները համարվում են ստորադաս չապահովված պահանջներ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պահանջները սահմանված ժամկետներում հարգելի պատճառներով չներկայացրած պարտատերերի պահանջները կարող են ընդգրկվել տվյալ պահանջին համապատասխանող հերթում: Պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը և պահանջների հիմնավորվածությունը որոշելու համար դատավորը հրավիրում է դատական նիստ, որի ժամանակի և

վայրի մասին կառավարչին, պարտապանին, պարտատերերին ծանուցում է պատշաճ կարգով: (...): Պատճառների հարգելիության և պահանջների հիմնավորվածության քննարկման արդյունքում դատարանը կայացնում է որոշում, որը կարող է բողոքարկվել:

Մինչև 12.02.2024 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե պահանջը կամ պահանջի փոփոխությունն առարկվում է, ապա դատավորը նույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով որոշում է պահանջի չափը, օրինականությունը, առաջնահերթությունը և ապահովվածությունը:

Առարկությունների քննարկման արդյունքում դատարանը կայացնում է որոշում, որը կարող է բողոքարկվել:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է նաև, որ պարտատերերն իրենց պահանջները, որպես կանոն, պետք է դատարան ներկայացնեն սնանկության մասին հայտարարությունից հետո, որը սահմանված կարգով ներկայացվելու դեպքում ենթակա է դատարանում գրանցման: Ընդ որում, պահանջը համարվում է սահմանված կարգով ներկայացված նաև այն դեպքում, երբ դրանում նշված է պահանջի չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, մասսների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝ համապատասխան հաշվարկներով: Հակառակ դեպքում նման պահանջը չի դիտարկվում, որի մասին պարտատերը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը:

Դատարանը, գրանցելով պահանջը, ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում պահանջի և դրան կից փաստաթղթերի օրինակներն ուղարկում է կառավարչին՝ դրա մեկ օրինակը պարտապանին հանձնելու համար:

Իր հերթին կառավարիչը վերը նշված ժամկետում ներկայացված բոլոր պահանջներն ընդգրկում է պարտատերերի պահանջների նախնական ցուցակում՝ օրենքով սահմանված պահանջների բավարարման հերթականությանը համապատասխան, և պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին ու հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Եթե հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատարանն առարկությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունն ու որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին, որը կարող է բողոքարկվել:

**Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է նաև վերը նշված ժամկետից հետո ներկայացված պահանջների գրանցման առանձնահատկությունները՝ այդ պահանջների մի խումբն անվանելով «նոր պահանջներ», այսինքն՝ սահմանված ժամկետում ներկայացված սկզբնական պահանջի հետ չկապված (դրա հետ որևէ առնչություն չունեցող), իսկ մյուս դեպքում՝ «պահանջի փոփոխություններ», այսինքն՝ սահմանված ժամկետում ներկայացված սկզբնական պահանջի հետ անմիջականորեն կապված (դրա հետ առնչություն ունեցող):** Այսպես՝ վերը նշված ժամկետից հետո ներկայացված այդ պահանջների մասով օրենսդիրը սահմանել է, որ դատարանը դրանք հանձնում է կառավարչին, իսկ վերջինս այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դրա պատճենն ուղարկում է պարտապանին, պարտատերերին կամ այդ մասին ամփոփ տեղեկատվություն է հրապարակում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ

հրապարակող մամուլում: Ընդ որում, եթե պահանջի փոփոխության պատճենն ստանալուց կամ իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում տեղեկատվություն հրապարակելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը, պարտատերերը պահանջի, պահանջի փոփոխության դեմ գրավոր առարկություն չեն ներկայացնում դատարան, ապա կառավարիչը պահանջը կամ պահանջի փոփոխությունը գրանցում է պահանջների գրանցամատյանում՝ վերը նշված օրենքի 85-րդ հոդվածին համապատասխան՝ որպես ստորադաս չապահովված պահանջներ: Բոլոր այն դեպքերում, երբ պահանջը կամ պահանջի փոփոխությունն առարկվում է, ապա դատավորը որոշում է պահանջի չափը, օրինականությունը, առաջնահերթությունը և ապահովվածությունը, որպիսի որոշումը կարող է բողոքարկվել:

Ընդ որում, օրենսդիրը չի բացառել նաև դատարանի կողմից պահանջները (պահանջի փոփոխված) սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու հնարավորությունը՝ այդ պատճառը հարգելի համարելու դեպքում պահանջն ընդգրկելով տվյալ պահանջին համապատասխանող հերթում:

2. Անդրադառնալով վերը նշված պահանջները որպես ապահովված կամ չապահովված, ինչպես նաև ստորադաս չապահովված պահանջ գրանցելու առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովված են համարվում ապահովված իրավունքով ծանրաբեռնված պահանջները: Ապահովված պարտատերեր են համարվում ապահովված իրավունք ունեցող անձինք՝ այդ պահանջների մասով:

Մինչև 12.02.2024 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ գրավով կամ երաշխիքով (երաշխավորությամբ) չապահովված բոլոր պահանջները կամ ապահովված պահանջների չապահովված մասերը համարվում են չապահովված պահանջներ, այդ թվում՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո առաջացած պահանջները և պարտապանի գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունները, որոնց առաջնահերթությունը սահմանված է նույն օրենքի 82-րդ հոդվածի առաջին մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել գրավով (...) և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ եղանակներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովված իրավունքը օրենքի կամ պայմանագրի ուժով, ի ապահովումն պարտավորության կատարման, գույքի կամ գույքային իրավունքի կամ պարտավորական իրավունքի նկատմամբ պարտատիրոջ իրավունքն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավը լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավը ծագում

է պայմանագրի ուժով: (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 253-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ գրավի տեսակներն են դրամական միջոցների գրավը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 257-րդ հոդվածի համաձայն՝ գրավի առարկա դրամական միջոցները պահվում են բանկի կամ նոտարի դեպոզիտային հաշվում: (...):

Մինչև 28.06.2022 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 570.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնորդի և կառուցապատողի միջև կարող են համաձայնեցվել բանկում բացված՝ կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի մուտքագրած դրամական միջոցները լրիվ կամ մասնակի՝ հոգուտ գնորդի կամ հոգուտ գնորդի վարկատուի գրավադրման պայմանները՝ որպես շենքի կառուցման ավարտից հետո անշարժ գույքը սեփականության իրավունքով հանձնելու կառուցապատողի պարտավորության և կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի լուծման դեպքում կանխավճարի վերադարձման կառուցապատողի պարտավորության կատարման ապահովման միջոց: Կառուցապատողի և գնորդի միջև դրամական միջոցների գրավի պայմանագրով կամ դրա փոփոխություններով կարող է նախատեսվել մինչև կառուցվող շենքի շինարարության ավարտը կամ մինչև սեփականության իրավունքի փոխանցման ակտի կնքումը կամ մինչև շենքի շահագործման թույլտվության ստացումը բանկում բացված՝ կառուցապատողի հատուկ հաշվի միջոցների մի մասի գրավի իրավունքի դադարեցում, որի կիրառման դեպքերում գրավից ազատվող միջոցները փոխանցվում են կառուցապատողի այլ բանկային հաշիվներին և կարող են տնօրինվել կառուցապատողի կողմից, իսկ գնորդը կրում է կառուցապատողի սնանկության դեպքում չապահովված պարտատեր հանդես գալու ռիսկերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հատուկ բանկային հաշիվներ են նույն գլխով [ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50.1-ին գլուխ] նախատեսված կառուցապատողի հատուկ հաշիվը (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառուցապատողի և գնորդի միջև դրամական միջոցների գրավի պայմանագիր կնքվելու դեպքում կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի կողմից կատարվող կանխավճարային վճարումները կառուցապատողի հատուկ հաշվին մուտք լինելու պահից **համարվում են գնորդի օգտին գրավադրված՝ ի ապահովման կառուցման ավարտից հետո շենքից անշարժ գույքը գնորդին հանձնելու՝ կառուցապատողի պարտավորության և կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի լուծման դեպքում կանխավճարի վերադարձման՝ կառուցապատողի պարտավորության պարշաճ կատարման**: Կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի կատարած կանխավճարային վճարումները հաջորդող գրավի կանոններով կարող են գրավադրվել գնորդի վարկատուի օգտին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դատարան չներկայացված չապահովված պահանջները համարվում են ստորադաս չապահովված պահանջներ:

Մինչև 07.01.2023 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պահանջները սահմանված ժամկետներում հարգելի պատճառներով չներկայացրած պարտատերերի պահանջները կարող են ընդգրկվել տվյալ պահանջին համապատասխանող հերթում: Պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը և պահանջների հիմնավորվածությունը որոշելու համար դատավորը հրավիրում է դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին կառավարչին, պարտապանին, պարտատերերին ծանուցում է պատշաճ կարգով:

Ծանուցվող անձանց թիվը 10-ից ավելի լինելու դեպքում պատշաճ ծանուցում է համարվում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակված հայտարարությունը: Պատճառների հարգելիության և պահանջների հիմնավորվածության քննարկման արդյունքում դատարանը կայացնում է որոշում, որը կարող է բողոքարկվել:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ ապահովված են համարվում ապահովված իրավունքով ծանրաբեռնված պահանջները, իսկ ապահովված պարտատերեր են՝ ապահովված իրավունք ունեցող անձինք՝ այդ պահանջների մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով ապահովված իրավունք է նաև գրավի իրավունքը, որը գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, և միաժամանակ միջոց է՝ գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Գրավի տեսակ է նաև դրամական միջոցների գրավը, որոնք պահվում են բանկի կամ նոտարի դեպոզիտային հաշվում: Դրամական միջոցների գրավի տեսակ է նաև կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի շրջանակներում կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի կողմից կատարված կանխավճարային վճարումը, որը կառուցապատողի հատուկ հաշվին մուտք լինելու պահից համարվում է գնորդի օգտին գրավադրված՝ ի ապահովումն կառուցման ավարտից հետո շենքից անշարժ գույքը գնորդին հանձնելու՝ կառուցապատողի պարտավորության և կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի լուծման դեպքում կանխավճարի վերադարձման՝ կառուցապատողի պարտավորության պատշաճ կատարման:

Ընդ որում, կառուցապատողի և գնորդի միջև դրամական միջոցների գրավի պայմանագրով կամ դրա փոփոխություններով կարող է նախատեսվել մինչև կառուցվող շենքի շինարարության ավարտը կամ մինչև սեփականության իրավունքի փոխանցման ակտի կնքումը կամ մինչև շենքի շահագործման թույլտվության ստացումը բանկում բացված՝ կառուցապատողի հատուկ հաշվի միջոցների մի մասի գրավի իրավունքի դադարեցում, որի կիրառման դեպքերում գրավից ազատվող միջոցները փոխանցվում են կառուցապատողի այլ բանկային հաշիվներին ու կարող են տնօրինվել կառուցապատողի կողմից, իսկ գնորդը կրում է կառուցապատողի սնանկության դեպքում չապահովված պարտատեր հանդես գալու ռիսկերը:

Մինևույն ժամանակ օրենսդիրը մինչև 12.02.2024 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով սահմանել է նաև չապահովված պահանջների հասկացությունը՝ նշելով, որ այդպիսին են համարվում գրավով կամ երաշխիքով (երաշխավորությամբ) չապահովված բոլոր պահանջները, ինչպես նաև ապահովված պահանջների չապահովված մասերը:

Դրա հետ մեկտեղ օրենսդիրը սահմանել է նաև ստորադաս չապահովված պահանջների տեսակները՝ դրանց մեջ ներառելով նաև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դատարան չներկայացված չապահովված պահանջները:

**3.** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա

սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Սնանկության դատարանում նաև սնանկության գործերի վարումը որպես կանոն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Միևնույն ժամանակ օրենսդիրը որոշակի բացառություն է նախատեսել այն դեպքերի համար, երբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կանոնների համեմատ սահմանված են այլ կանոններ՝ արձանագրելով, որ այդ դեպքում սնանկության գործի քննությունն իրականացվում է «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կանոններով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ պարտատերերի չափահովված պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝ դատական ծախսերը:

Տվյալ դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքով առանձին սահմանված չեն դատական ծախսերի կազմը և այդ ծախսերի հետ կապված որոշակի իրավակարգավորումներ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով վերը նշված հարցերի վերաբերյալ այլ բան սահմանված չլինելու պայմաններում այդ հարցերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված ծախսերի փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված

հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ դատական ծախսերը կազմված են նաև գործի քննության հետ կապված այլ ծախսերից: Նման ծախս են հանդիսանում նաև գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները, որոնց չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը՝ այն որոշելիս հիմք ընդունելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը, գործի բարդությունը, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունը: Ընդ որում, գործին մասնակցող անձանց կրած՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարների փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը՝ դրանք գործին մասնակցող անձանց միջև բաշխելով բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև փաստաբանի խելամիտ վարձատրությունը: Ուստի փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախևառաջ պետք է դիտել որպես դատական ծախս, և թե՛ հայցվորը, և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց (տե՛ս *անհատ ձեռնարկատեր Նարինե Ռոստոյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/1401/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճարեկ դատարանն արձանագրել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (տե՛ս *Ֆերդինանտ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ փաստաբանի վճարների փոխհատուցման չափորոշիչներն անտեսելու պարագայում խոսք չի կարող լինել արդյունավետ դատական պաշտպանության մասին, քանի որ որոշ դեպքերում դատական պաշտպանության դիմած անձինք կհայտնվեն առավել անբարենպաստ վիճակում, քան մինչ այդ էին (տե՛ս *Լիլիթ Մուսեյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4084/05/15 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

### **Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության՝ որպես վաճառողի, և Տաթևիկ ու Լեոնարդ Հովսեփյանների՝ որպես գնորդների, միջև 20.09.2019 թվականին կնքվել է



**կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագիր**, որի 1.1-ին կետում նշվել է, որ նույն պայմանագրով գնորդները ձեռք են բերում վաճառողին սեփականության իրավունքով պատկանող և կառուցապատվող՝ Երևանի Կենտրոն, Անտառային փողոցի թիվ 126/8 հասցեում գտնվող հողամասի վրա կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 2-2 բնակարանը գնելու իրավունքը, իսկ գնորդները պարտավորվում են վաճառողից օբյեկտը սեփականության իրավունքով փոխանցելու ակտի կնքման առաջարկն ստանալու դեպքում կնքել սեփականության իրավունքի փոխանցման ակտը ու օբյեկտի ձեռքբերման դիմաց վճարել պայմանավորված գինը՝ նույն պայմանագրում նախատեսված կարգով և չափով (...):

Պայմանագրի 2.1-րդ կետում նշվել է, որ **Պայմանագրի գնից՝ 38.170.000 ՀՀ դրամ գումարից 11.460.000 ՀՀ դրամ գումարը, որպես կանխավճար, գնորդները պարտավորվում են փոխանցել Բանկում սպասարկվող վաճառողի թիվ 1150005023653671 հափուկ բանկային հաշվին մինչև Պայմանագրի կնքման հաջորդ աշխատանքային օրը, իսկ մնացած 26.710.000 ՀՀ դրամ գումարը պարտավորվում են նույն բանկում սպասարկվող՝ վաճառողի թիվ 1150005023653671 հափուկ բանկային հաշվին փոխանցել մինչև 26.12.2020 թվականը:**

Պայմանագրի 2.3-րդ կետում նշվել է, որ **գնորդների կողմից վաճառողի հափուկ հաշվին գումարները մուտքագրելու պահից նույն պայմանագրի ուժով դրանք համարվում են գնորդների օգտին վաճառողի կողմից գրավադրված՝ որպես շենքի կառուցման ավարտից հետո օբյեկտը սեփականության իրավունքով հանձնելու վաճառողի պարտավորության և Պայմանագրի լուծման դեպքում կանխավճարի վերադարձման վաճառողի պարտավորության կապարձման ապահովման միջոց:**

Բանկը դիմում է ներկայացրել Դատարան՝ Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին, որը բավարարելու արդյունքում Դատարանի 25.01.2023 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ:

Սնանկության մասին հայտարարությունից հետո՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում՝ 06.03.2023 թվականին, պարտատերեր Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանները Դատարան են ներկայացրել պահանջ՝ Պայմանագրում նշված անշարժ գույքի՝ բնակարանի, և Պայմանագրի 7.3-րդ կետով հաշվարկված 10.649.430 ՀՀ դրամի չափով տույժի մասին:

Դատարանի 11.05.2023 թվականի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը, այդ թվում նաև հաստատվել է Լեոնարդ Հովսեփյանի և Տաթևիկ Հովսեփյանի պահանջը 10.649.430 ՀՀ դրամ տույժի չափով՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի «է» հերթում. պահանջի մյուս մասի՝ Պայմանագրում նշված անշարժ գույքի՝ բնակարանի վերաբերյալ Դատարանը որոշում չի կայացրել, ինչպես նաև այդ մասին չի անդրադարձել որոշման պատճառաբանական մասում:

Վճարել դատարանն արձանագրում է, որ թեև Դատարանն իր կողմից 11.05.2023 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում այդ մասին հատուկ չի նշել, ինչպես նաև այդ մասին պարտատերեր Լեոնարդ ու Տաթևիկ Հովսեփյաններին չի տեղեկացրել, սակայն վերջիններիս կողմից ներկայացված վերը նշված պահանջը՝ կապված Պայմանագրում նշված անշարժ գույքի՝ բնակարանի հետ, չի բխել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի բովանդակությունից և նույն հոդվածի 2.1-ին կետի հիմքով այդ պահանջն ամեն դեպքում ենթակա չէր դիտարկման, քանի որ այն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի իմաստով չի հանդիսացել սահմանված կարգով ներկայացված՝ այն պատճառաբանությամբ, որ իրենից ներկայացրել է ոչ թե պահանջ, որն ունի չափ՝ առանձին հիմնական պարտքի, վստասների կամ

տուժանքի (տուգանքի, տույժի) նշմամբ, և համապատասխան հաշվարկներով, այլ՝ բնեղենով ներկայացված պահանջ, որի ներկայացումը նույն օրենքի իմաստով անթույլատրելի է:

Դրանից հետո, պարտատերեր Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանները սնանկության մասին հայտարարությունից հետո՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետի ավարտից հետո, բայց մինչև Դատարանի կողմից պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշում կայացնելը՝ 24.03.2023 թվականին, Դատարան են ներկայացրել «Պահանջի փոփոխություն» վերտառությամբ փաստաթուղթ, որում նշելով, որ անշարժ գույքի մասով իրենց ներկայացրած պահանջը չի դիտարկվել որպես պահանջ, խնդրել են իրենց կողմից 06.03.2023 թվականին ներկայացված պահանջում կատարել փոփոխություն՝ իրենց պահանջը գրանցելով հետևյալ կերպ.

«1) ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Անտրառային 126/8 հասցեում կառուցված շենքի նախագծային 2-2 բնակարանի շուկայական արժեքի՝ 56.500.000 ՀՀ դրամ վճարման պահանջը, որն ապահովված է «Կվադրա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի «Հայրիզնեսբանկ» ՓԲԸ-ում բացված կառուցապարտողի հապուկ 1150005023653671 հաշվին առկա դրամական միջոցների գրավով,

2) որպես Բնակարանի հանձնումը ուղացնելու համար Պայմանագրով սահմանված տույժի գումար՝ 10.694.430 ՀՀ դրամ պահանջը, որն ապահովված է «Կվադրա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի «Հայրիզնեսբանկ» ՓԲԸ-ում բացված կառուցապարտողի հապուկ 1150005023653671 հաշվին առկա դրամական միջոցների գրավով,

3) որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար՝ 3.359.721 ՀՀ դրամ պահանջը գրանցել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի «դ» հերթի պահանջ»՝ **պահանջի հիմքում դնելով նաև այն, որ իրենք կառուցապարտողի հապուկ հաշվեհամարին մուտքագրել են բնակարանի գնման իրավունքի ձեռքբերման արժեքը, որպիսի գումարը համարվում է գրավադրված հոգուր իրենց՝ պարտապանի սպանձնած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով:**

Միաժամանակ խնդրել են հարգելի համարել պահանջի փոփոխությունում տեղ գտած չապահովված պահանջի և ապահովված պահանջի չապահովված մասը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառը, եթե առկա է ժամկետի բացթողում:

Դատարանի 25.05.2023 թվականի որոշմամբ Ընկերության նկատմամբ Լեոնարդ և Տաթևիկ Հովսեփյանների պահանջն արդեն հաստատվել է 56.500.000 ՀՀ դրամի չափով՝ որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետով նախատեսված՝ ստորադաս չապահովված պահանջ, իսկ 400.000 ՀՀ դրամի չափով պահանջը՝ որպես դատական ծախս՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետով նախատեսված հերթում:

Դատարանը պատճառաբանելով, որ՝

- «դեռևս 06.03.2023թ-ին Մ-8947 մուտքային համարով Լեոնարդ Հովսեփյանը և Տաթևիկ Հովսեփյանը պահանջ են ներկայացրել դատարան, որով խնդրել են իրենց պահանջը գրանցել՝ 10,649,430(տասը միլիոն վեց հարյուր քառասունինը հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամ գումարի չափով: ՀՀ սնանկության դատարանի 11.05.2023թ-ի՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու և պարտավորների առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը նշանակելու մասին որոշմամբ Լեոնարդ Հովսեփյանի և Տաթևիկ Հովսեփյանի պահանջը 10.649.430 ՀՀ դրամի չափով հաստատվել է, որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» ենթակետով նախատեսված չապահովված պահանջ»,

և անդրադառնալով վերը նշված առաջին պահանջի հաստատմանն ու նշելով նաև, որ՝

- «Համաձայն «Ափթայմ» ՍՊԸ կողմից 22.03.2023 թվականի թիվ Ե/03/0606

խորհրդարավական նամակի՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Անտրառային փողոց 126/8 հասցեում կառուցված շենքի նախագծային 2-2 բնակարանի շուկայական արժեքը կազմում է 56.500.000 ՀՀ դրամ»,

- «Պարտավորությունները կառուցապատողի հատուկ հաշվեհամարին մուտքագրել են բնակարանի գնման իրավունքի ձեռքբերման արժեքը՝ 38,170,00 (երեսունութ միլիոն մեկ հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամի չափով: Պարտապանը պատշաճ կարգով չի կատարել իր պարտավորությունները, որի արդյունքում Լեոնարդ Հովսեփյանի և Տաթևիկ Հովսեփյանի մոտ ծագել է բնակարանի գնման իրավունքի ձեռքբերման արժեքի չափով փոխհատուցում պահանջելու իրավունքը: Միևնույն ժամանակ, դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Լեոնարդ Հովսեփյանի և Տաթևիկ Հովսեփյանի մոտ ծագել է բնակարանի գնման իրավունքի շուկայական արժեքի և դրա դիմաց փաստացի վճարված արժեքի տարբերության մասով պահանջի իրավունքը /բաց թողնված օգուտ/, քանի որ տվյալ դեպքում առկա է բաց թողնված օգուտի տեսքով վնասների առկայության համար անհրաժեշտ բոլոր հանգամանքները, մասնավորապես՝ բաց թողնված օգուտի իրական չափը, կառուցապատողի ոչ օրինաչափ վարքագծի առկայության, բաց թողնված օգուտի և կառուցապատողի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքները»,

- «ներկայացված պահանջի փոփոխության չափի դեմ որևէ առարկություն չի ներկայացվել, իսկ դրա հիմնավորման համար պահանջին կից ներկայացվել են բավարար ապացույցներ», գտել է, որ Լեոնարդ և Տաթևիկ Հովսեփյանների պահանջը՝ 56.500.000 ՀՀ դրամի մասով, ենթակա է հաստատման:

Միևնույն ժամանակ Դատարանը, անդրադառնալով այդ պահանջի ապահովվածության հարցին, արձանագրել է, որ «պահանջը ենթակա է հաստատման որպես չափափակված պահանջ», «սույն դեպքում ներկայացված պահանջի փոփոխությամբ վկայակոչված պայմանագրի դրույթների ուսումնասիրությունից որևէ կերպ չի հիմնավորվում նույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով առաջացած մայր գումարի, տույժերի, տուգանքների և վնասի կատարման ապահովման համար կառուցապատողի հատուկ բանկային հաշվին մուտք եղած գումարներով ապահովված լինելու հանգամանքը, իսկ Պարտապանի և Պարտավորների միջև 20.09.2019թ. կնքված Կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի 2.3. կետի համաձայն՝ Գնորդի կողմից Վաճառողի հատուկ հաշվին մուտքագրման պահից գումարները սույն պայմանագրի ուժով համարվում են Վաճառողի կողմից գրավադրված Գնորդի օգտին որպես շենքի կառուցման ավարտից հետո Օբյեկտը սեփականության իրավունքով հանձնելու Վաճառողի պարտավորության և սույն պայմանագրի լուծման դեպքում կանխավճարի վերադարձման Վաճառողի պարտավորության կատարման ապահովման միջոց: Այսինքն, դրամական միջոցների գրավը սահմանվել է վաճառողի, տվյալ դեպքում՝ «Կվարդա Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության մեղքով պայմանագրի լուծման դեպքում առաջացող պարտավորությունների կատարման համար, մինչդեռ սույն դեպքում առկա չէ կողմերի միջև կնքված պայմանագրի՝ վաճառողի մեղքով լուծման փաստը, հետևաբար դատարանը գտնում է, որ նշված հիմնավորումները պահանջներն ապահովված հաստատվելու համար անհիմն են և պահանջները ենթակա են հաստատման, որպես չափափակված պահանջներ»:

Դատարանը, անդրադառնալով ներկայացված պահանջի հերթականությանը և պահանջը սահմանված ժամկետում չներկայացնելը հարգելի համարելու միջնորդությանը, արձանագրել է, որ «Լեոնարդ Հովսեփյանի և Տաթևիկ Հովսեփյանի կողմից չի ապացուցվել, որ օրենքով

սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկվել է ողջամիտ ու բավարար միջոցներ դատական պրոցեսին մասնակցելու, պահանջը և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու ուղղությամբ, սակայն իրենց կամքից անկախ պատճառներով նշված ժամկետը չի բավականացրել համապատասխան դատավարական գործողությունները կատարելու համար, ավելին՝ դեռևս 06.03.2023թ-ին Լեոնարդ Հովսեփյանը և Տաթևիկ Հովսեփյանը պահանջ են ներկայացրել դատարան, որով խնդրել են իրենց պահանջը գրանցել՝ 10,649,430(տասը միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամ գումարի չափով, այսինքն վերջիններս տեղեկացված են եղել պարտապանի վերաբերյալ պահանջները ներկայացնելու համար սահմանված ժամկետի վերաբերյալ: Վերը նշվածի հաշվառմամբ, դատարանը գտնում է, որ Լեոնարդ Հովսեփյանի և Տաթևիկ Հովսեփյանի պահանջը 56.500.000 (հիսունվեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով ենթակա է հաստատման, որպես «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ի մասի «ը» հերթի չապահովված պահանջ»:

Անդրադառնալով փաստաբանի խելամիտ վարձատրության հարցին՝ Դատարանն արձանագրել է, որ «հաշվի առնելով սույն գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը՝ պահանջներ կազմելը, պահանջների չափի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը, սնանկության գործընթացի առանձնահատկությունները, դատարանը գտնում է, որ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի չափը պետք է հաստատել 400.000 ՀՀ դրամ գումարի չափով, իսկ մնացած մասով այն պետք է մերժել:

Միաժամանակ անդրադառնալով ներկայացված դատական ծախսի մասով պահանջի հերթականությանը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանների ու «Թրասթ Լոու» ՍՊԸ միջև իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ TLTH-21/03/23 պայմանագիրը կնքվել է 21.03.2023թ-ին, հետևաբար պարտավորելն իրենց կամքից անկախ պատճառներով չէին կարող դատական ծախսի մասով պահանջը ներկայացնել սահմանված ժամկետում, ուստի դատարանը գտնում է, որ դատական ծախսի մասով ներկայացված պահանջը սահմանված ժամկետում չներկայացնելը պետք է հարգելի համարել և 400.000 ՀՀ դրամ գումարի չափով դատական ծախսը պետք է հաստատել «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետով նախատեսված հերթում»:

Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ՝

- «Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանի կողմից բողոքաբերների պայմանագրերը լուծված լինելու պայմանի բացակայությամբ պայմանավորված պահանջի ապահովվածության հարցի դիտարկումը բխում է նրանից, որ պայմանագրերի առարկա շենքի շինարարությունն անավարտ է, որպիսի պայմաններում վերոնշյալ առաջին դեպքը, երբ գործում է դրամական միջոցների գրավի պայմանագիրը, առերևույթ բացակայում էր, ուստի Դատարանը քննարկման առարկա էր դարձրել հնարավոր մյուս՝ պայմանագրի լուծման դեպքում կանխավճարի վերադարձման կառուցապատողի պարտավորության պայմանի առկայության հարցը, և իրավաչափորեն գտել է, որ սույն դեպքում խնդրո առարկա պայմանագրերը լուծված չեն, ուստի ներկայացված պահանջները դուրս են գրավով ապահովված պարտավորությունների ծավալից: Ավելին, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բոլոր բողոքաբերների պահանջներն, բացի կանխավճարային վճարներից, ըստ էության ներառում են տույժերի, բաց թողնված օգուտի (վնասի) գումարներ, որպիսի գումարներն առհասարակ ոչ օրենքի, ոչ էլ պայմանագրերի դրույթներով չեն ներառվում գրավով ապահովված պարտականությունների ծավալում»,

- «կիրառելի իրավակարգավորումների լույսի ներքո, բողոքաբերները կարող էին ակնկալել իրենց պահանջի՝ որպես գրավոր ապահովված պահանջի հաստատում բացառապես այն դեպքում, եթե կիսակառույց շենքի կապակցությամբ կնքված պայմանագրով ձեռնամուխ լինեին պայմանագրի լուծմանը և նման փաստակազմի առկայությամբ դիմեին Դատարան՝ իրենց վճարած կանխավճարների վերադարձման պահանջով, որպիսի իրավիճակը սույն դեպքում բացակայում է»,

և անդրադառնալով «խնդրո առարկա պահանջները ոչ թե նոր պահանջներ, այլ նախկինում ներկայացված պահանջների փոփոխություններ հանդիսանալու վերաբերյալ փաստարկներին»՝ նշել է, որ «ըստ էության ավելացվել են թվով երկու պահանջներ՝ 56,500,000 ՀՀ դրամ վճարման պահանջը, որը մասով հանդիսանում է պայմանագրի առարկա կառուցվող անշարժ գույքի ձեռքբերման արժեքը՝ 38,170,00 ՀՀ դրամ (Պայմանագրի 1.3. կետ), իսկ մնացած մասով՝ գույքի պայմանագրային արժեքի և գնահատված շուկայական արժեքի տարբերությունը՝ որպես բաց թողնված օգուտի գումար: Բացի այդ, ներկայացվել է փաստաբանի խելամիտ վարձատրության ծախսի հատուցման մասով պահանջ», «անկախ նրանից, թե բողոք բերողները ինչպես են գնահատել իրենց կողմից ներկայացվող պահանջները, դրանք ըստ էության հանդիսանում են նոր՝ տարբերվող հիմքերից ծագող պահանջներ, ուստի առարկություններ ներկայացված լինելու պայմաններում դրանց հիմնավորվածությունը, օրինականությունը, ապահովվածությունը և չափը քննության առարկա դարձնելով Դատարանը որևէ խախտում թույլ չի տվել: Ավելին, բողոքաբերները փաստարկել են, որ ներկայացված դիմումները որպես պահանջի փոփոխություն չդիտարկելը խախտում է իրենց իրավունքները, մինչդեռ չի ներկայացվել որևէ հիմնավոր փաստարկ առ այն, թե ինչ իրավունքների խախտման է հանգեցրել Դատարանի նման որակումը»:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ՝

- «բողոք բերողներ Տաթևիկ Լեոնարդի Հովսեփյանի և Լեոնարդ Անուշավանի Հովսեփյանի կողմից սկզբնապես ներկայացվել է միայն պայմանագրի պայմանները խախտելու համար փույժի մասով դրամական պահանջ, որին՝ 24.03.2023 թվականի դիմումով, ավելացվել է վնասի (բաց թողնված օգուտի) գումարը, ինչպես նաև փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը, ուստի անհիմն են բողոք բերողի փաստարկները՝ ուղղված նոր ներկայացված պահանջի՝ որպես նախկին պահանջի լրացում ներկայացնելուն, և ինչպես նախորդ բողոքաբերների դեպքում, Տաթևիկ Լեոնարդի Հովսեփյանի և Լեոնարդ Անուշավանի Հովսեփյանի կողմից ևս ներկայացվել են սկզբնապես հաստատված պահանջից զատ՝ նոր պահանջներ»,

- «ինչպես նախորդ բողոք բերողների, այնպես էլ սույն դեպքում էական չէ նաև այն հանգամանքը, որ նոր պահանջը ներկայացվել է մինչև պահանջների վերջնական ցուցակի հաստատման վերաբերյալ հարցի լուծումը, քանի որ խնդրո առարկա դատարարական ժամկետի հոսքը սկսվում է սնանկության մասին հայտարարության կատարումից, և ավարտվում է նշված պահից մեկամսյա ժամկետում, այլ ոչ թե պահանջների վերջնական ցուցակի հաստատման որոշման կայացմամբ, իսկ ժամկետի հարգելիության հարցի կապակցությամբ ինչպես Դատարանում և Վերաքննիչ դատարանում փաստարկված՝ ժամանակի սղության, պարտավորելի՝ իրավաբանական գիտելիքներ չունենալու, անհրաժեշտ գործողությունների կատարման համար պահանջվող ժամանակահատվածի վերաբերյալ բողոք բերողների փաստարկները չեն հիմնավորվում սնանկության հավելվածի նյութերում առկա փաստաթղթերով»:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով փաստաբանի խելամիտ վարձատրության

չափի մասով փաստարկներին, և արձանագրելով, որ «սնանկության գործի հավելվածով հիմնավորվող՝ փաստաբանի կողմից կատարված աշխատանքի ծավալը (24.03.2023 թվականին կազմել և ներկայացրել է նոր պահանջները, ներկայացրել է նշված պահանջների դեմ առարկությունների մասով դիրքորոշում, ինչպես նաև հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկություններով պայմանավորված՝ հետագայում կատարման ենթակա հնարավոր/կանխարեսելի աշխատանքի ծավալը), գործի բարդությունը (Վերաքննիչ դատարանի գնահատմամբ սույն գործը կարելի է դասել միջին բարդություն ներկայացնող գործերի շարքին՝ նկատի ունենալով, որ պահանջը բխում է կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրերից ծագող իրավահարաբերություններից, ինչպես նաև հաշվի առնելով նշված իրավահարաբերությունները կարգավորող նյութափրավական նորմերի հատուկ կարգավորումները, գործով պահանջների չափի մասով առարկությունների բացակայությունը, սնանկության վարույթում պահանջների բավարարմանը հասնելուն ուղղված ընթացակարգերի կապակցությամբ հարուստ փաստաբանական և դատական պրակտիկայի առկայությունը և այլն), նմանարիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը (Գնացուցակով ինչպես գումարի բռնագանձման, այնպես էլ իրավաբանական անձի սնանկության հարցերով սահմանված հոնորարի միջին չափը), ինչպես նաև բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը, գտնում է, որ սույն գործով Դատարանի կողմից սահմանված 400.000 ՀՀ դրամի չափով փաստաբանի վարձատրության չափը խելամիտ է, քանի որ ծախսերը այդ չափով կատարվել են փաստացիորեն և անհրաժեշտաբար, և որ դրանց քանակը ողջամիտ է», գտել է, որ դրանք նույնպես անհիմն են:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը 25.09.2023 թվականի որոշմամբ մերժել է նաև Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանների բերած վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի 25.05.2023 թվականի որոշումը:

1. Վկայակոչված նորմատիվ իրավական ակտերի և դրանց վերաբերյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ կապված Դատարանում 24.03.2023 թվականին ստացված՝ Տաթևիկ ու Լեոնարդ Հովսեփյանների կողմից ներկայացված «Պահանջի փոփոխություն» վերտառությամբ փաստաթղթում նշված պահանջը որպես նոր պահանջ գնահատելու հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ եզրահանգումները հիմնավոր են մասնակիորեն՝ բացառապես փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի մասով, և չէին կարող բավարար հիմք հանդիսանալ Տաթևիկ ու Լեոնարդ Հովսեփյանների բերած վերաքննիչ բողոքի հիմքն անհիմն համարելու համար նաև այն մասով, որը վերաբերելի է վերը նշված բնակարանի շուկայական արժեքի՝ 56.500.000 ՀՀ դրամի չափով պահանջը որպես Ընկերության Բանկում բացված կառուցապատողի հատուկ 1150005023653671 հաշվին առկա դրամական միջոցների գրավով ապահովված պահանջ գրանցելու հետ, քանի որ վերջիններիս կողմից ներկայացված «Պահանջի փոփոխություն» վերտառությամբ փաստաթղթում նշված այդ պահանջը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով ու վերը նշված վերլուծության արդյունքում հանդիսացել է ոչ թե լրիվ նոր պահանջ, այլ՝ օրենքով սահմանված ժամկետում արդեն իսկ ներկայացված՝ Պայմանագրում նշված անշարժ գույքի՝ բնակարանի մասին պահանջի (**թեկուզև այն սկզբնապես ներկայացված է եղել բնեղենի տեսքով**) փոփոխություն: Նշված եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ փոփոխության տեսքով ներկայացված պահանջն անմիջականորեն կապված է (բխում է) սկզբնապես ներկայացված՝ անշարժ գույքի պահանջի հետ, որպիսի պահանջները

ներկայացնելու երկու դեպքում էլ պարտատերերը դրել են պարտապանի հետ կնքված Պայմանագիրը, պարզապես մի դեպքում պահանջը ներկայացվել է բնեղենի տեսքով, իսկ մյուս դեպքում՝ դրա շուկայական արժեքի: Ընդ որում, սկզբնապես ներկայացված պահանջի այդ մասի վերաբերյալ Դատարանը որևէ որոշում չի կայացրել՝ դրան չանդրադառնալով իր կողմից 11.05.2023 թվականին կայացված որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում:

Ինչ վերաբերում է փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի մասով պահանջին, ապա այն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով և վերը նշված վերլուծության արդյունքում հանդիսանում է նոր պահանջ, որպիսի եզրահանգումը Վճռաբեկ դատարանը պայմանավորում է նրանով, որ այն չի ներկայացվել օրենքով սահմանված ժամկետից հետո, իսկ Պայմանագրով սահմանված և որպես տույժի գումար ներկայացված 10.694.430 ՀՀ դրամի չափով պահանջն արդեն իսկ հաստատվել է Դատարանի 11.05.2023 թվականին կայացված որոշմամբ: Ընդ որում, վերջին պահանջն իրավացիորեն է հաստատվել որպես չապահովված, քանի որ բացակայել է այն որպես ապահովված գրանցելու իրավական հիմքը:

2. Վկայակոչված նորմատիվ իրավական ակտերի և դրանց վերաբերյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ կապված կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի շրջանակներում կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի կողմից կատարված կանխավճարային վճարումը որպես ապահովված իրավունքի առարկա չդիտարկելու հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանի վերը նշված պատճառաբանություններից բխում է, որ պարտատերերի կողմից սույն գործով ներկայացված պահանջը որպես ապահովված հաստատելու համար Պայմանագրի 2.3-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ պայման է պարտատերեր կողմից Պայմանագրի լուծմանը ձեռնամուխ լինելը և համապատասխան հիմքով դատարան դիմելը՝ իրենց վճարած կանխավճարների վերադարձման պահանջով, որպիսի իրավիճակը սույն դեպքում բացակայել է: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը, Պայմանագրի 2.3-րդ կետը մեկնաբանելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, արձանագրում է, որ նույն Պայմանագրի 2.1-ին կետում նշված գումարները գնորդի կողմից վաճառողի հատուկ հաշվին մուտքագրելու պահից արդեն իսկ հանդիսանում են (այդ փաստը բավարար է) գնորդի օգտին վաճառողի կողմից գրավադրված ինչպես Պայմանագրի, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված հոդվածների ուժով՝ նպատակ ունենալով ապահովելու շենքի կառուցումն ավարտելուց հետո օբյեկտը սեփականության իրավունքով հանձնելու վաճառողի պարտավորությունը կամ նույն պայմանագիրը լուծելու դեպքում վաճառողի՝ կանխավճարը վերադարձնելու պարտավորության կատարումը: Պայմանագրի լուծումը Պայմանագրի կողմերը չեն նախատեսել որպես վերը նշված գումարները գրավադրված համարելու, իսկ դրա հիմքով սույն գործով ներկայացված վերը նշված պահանջն ապահովված համարելու անհրաժեշտ պայման:

Մինևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով պահանջը կարող է հանդիսանալ ապահովված, իսկ այն ներկայացրած պարտատերերը՝ ապահովված իրավունք ունեցողներ, եթե այդ պահանջի հիմքում դրված է գրավի իրավունքը, տվյալ դեպքում՝ դրամական միջոցների գրավը: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նրանով,

որ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագիր կնքելու դեպքում, որի շրջանակներում համապատասխան հատուկ հաշվին պարտատիրոջ՝ որպես գնորդի կողմից կատարվում է կանխավճարային վճարում, որը մուտք է լինում վաճառողի համապատասխան հատուկ հաշվին, այդ պահից այդ դրամական միջոցները համարվում են պարտատիրոջ օգտին գրավադրված՝ ի ապահովումն կառուցման ավարտից հետո շենքից անշարժ գույքը գնորդին հանձնելու՝ վաճառողի պարտավորության կամ կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի լուծման դեպքում կանխավճարի վերադարձման՝ կառուցապատողի պարտավորության պատշաճ կատարման:

Տվյալ դեպքում պարտատերեր Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանների վերը նշված պահանջը համապատասխան հիմքերի առկայության պայմաններում կարող է համարվել ապահովված գրավով, և այդ փաստը հաստատված համարվելու դեպքում չի կարող հանդիսանալ չապահովված պահանջ, ու պետք է գրանցվի բացառապես որպես ապահովված:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի հավելվածում բացակայում են Բանկում սպասարկվող վաճառողի թիվ 1150005023653671 հատուկ բանկային հաշվին Պայմանագրով նախատեսված գումարները պարտատերերի կողմից փոխանցված (մուտքագրված) լինելու վերաբերյալ ապացույցները, որի պայմաններում Վճռաբեկ դատարանն անհնար է համարում պարզելը, թե 56.500.000 ՀՀ դրամի չափով ներկայացված պահանջից որքան մասն է վերը նշված դիրքորոշումների համաձայն հանդիսանում ապահովված:

**3.** Վկայակոչված նորմատիվ իրավական ակտերի և դրանց վերաբերյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ կապված Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանների կողմից պահանջվող փաստաբանի վարձատրության գումարի չափը որպես խելամիտ գնահատելու հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն այդ առումով բխում են վերը նշված նորմերի ու դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումներից, քանի որ դրա չափը որոշելիս Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել ողջամտության չափորոշիչները՝ փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը, գործի բարդությունը, Տաթևիկ և Լեոնարդ Հովսեփյանների կողմից ներկայացված պահանջում նշված գումարի ու պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունը, նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում վճռաբեկ բողոքի այդ հիմքը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն՝ Դատարանի 25.05.2023 թվականի որոշումը՝ Ընկերության նկատմամբ Լեոնարդ ու Տաթևիկ Հովսեփյանների պահանջը 56.500.000 ՀՀ դրամի չափով՝ որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետով նախատեսված՝ ստորադաս չապահովված պահանջ հաստատելու մասով անփոփոխ թողելու մասով, վերացնելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտը մասնակիորեն



վերացնելու և վերացված մասով գործը Սնանկության դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը՝ սահմանելով նոր քննության ծավալը: Վճռաբեկ դատարանը որպես գործի նոր քննության ծավալ է սահմանում նաև պարզելը, թե Բանկում սպասարկվող վաճառողի թիվ 1150005023653671 հատուկ բանկային հաշվին արդյո՞ք պարտատերեր Լեոնարդ և Տաթևիկ Հովսեփյանների կողմից փոխանցվել (մուտքագրվել) են Պայմանագրով նախատեսված գումարները, արդյո՞ք այդ գումարներից մի մասը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 570.1-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով ազատվել է գրավից և փոխանցվել Ընկերության այլ բանկային հաշիվներին ու տնօրինվել վերջինիս կողմից, և արդյո՞ք Ընկերության սնանկության դեպքում Լեոնարդ ու Տաթևիկ Հովսեփյանները կրում են նույն հոդվածի 5-րդ մասում նշված՝ չապահովված պարտատերեր հանդես գալու ռիսկերը, որից հետո լուծել 56.500.000 ՀՀ դրամի չափով ներկայացված պահանջը որպես ապահովված կամ չապահովված (սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառները հարգելի չհամարելու դեպքում ստորադաս չապահովված) գրանցելու և դրա հետ կապված՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհրաժեշտ այլ հարցերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.09.2023 թվականի որոշումը մասնակիորեն՝ Դատարանի 25.09.2023 թվականի որոշումը «Կվարդա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի նկատմամբ Լեոնարդ Հովսեփյանի և Տաթևիկ Հովսեփյանի պահանջը 56.500.000 ՀՀ դրամի չափով՝ որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետով նախատեսված՝ ստորադաս չապահովված պահանջ հաստատելու մասով անփոփոխ թողելու մասով, վերացնել ու վերացված մասով գործն ուղարկել Սնանկության դատարան՝ նաև վերը նշված ծավալով նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՎԴ/9227/05/23

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**  
**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ**  
**(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)**

2024 թվականի սեպտեմբերի 25-ին  
գրավոր ընթացակարգով քննելով Գագիկ Մաթևոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.01.2024 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ վարչական գործով ըստ դիմումի Գագիկ Մաթևոսյանի ընդդեմ ՀՀ կառավարության՝ ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի «Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդ, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» թիվ 1528-Ն որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Չ Ե Ց Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Գագիկ Մաթևոսյանը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի «Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդ, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» թիվ 1528-Ն որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Հարությունյան, դատավորներ՝ Ե. Առաքելյան, Մ. Համբարձումյան, Մ. Մելքումյան, Մ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 20.11.2023 թվականի որոշմամբ դիմումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.01.2024 թվականի որոշմամբ Գագիկ Մաթևոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.11.2023 թվականի «Դիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գագիկ Մաթևոսյանը (ներկայացուցիչ՝ Արթուր Գրիգորյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 3-րդ, 5-րդ հոդվածները, 61-րդ հոդվածի 1-ին մասը, 62-րդ հոդվածի 1-ին մասը, 81-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը:

*Բողոքաբերը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Դատական սխալի հետևանքով ոտնահարվել է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, ինչպես նաև Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված դիմողի սեփականության իրավունքը՝ հետապնդվող նպատակի և այդ իրավունքի պաշտպանության միջև արդարացի հավասարակշռությունը պահպանելու անհրաժեշտության համատեքստում:

Դատարանները հրաժարվել են արդարադատության իրականացումից, դիմողի դատական պաշտպանության իրավունքն ակնհայտ անհամաչափ սահմանափակումների ենթարկելով՝ խաթարել են արդարադատության բուն էությունը:

Դատարանները դիմողին զրկել են իր սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունից՝ այդ իրավունքի իրացման հնարավորությունը չարդարացված կերպով սահմանափակելով այն աստիճան, որ չեզոքացվել է այդ իրավունքի բուն էությունը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 26.01.2024 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Դատարանի 20.11.2023 թվականի «Դիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի, 61-րդ հոդվածի 1-ին մասի, 81-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկություններին:*

Ըստ այդմ՝ սույն գործով Վճռաբեկ դատարանի խնդիրն է մարդու իրավունքների ու ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու իր սահմանադրական գործառույթի շրջանակներում պարզել. *արդյո՞ք նորմատիվ իրավական ակտի կամ դրա դրույթների՝ դրանից ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին, այդ թվում ՀՀ Սահմանադրությանը և Կոնվենցիային համապատասխանությունը որոշելու հարցը կարող է վիճարկման առարկա դառնալ վարչադատավարական կարգով:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է, երբ հայցի առարկան իր բնույթով «նյութական» է և հիմնված է այնպիսի իրավունքների ենթադրյալ խախտումների վրա, որոնք նույնպես նյութական են (*տես, Editions Périscope v. France գործով Եվրոպական դատարանի 26.03.1992 թվականի վճիռը, կետ 44*), կամ երբ գործի ելքը «վճռորոշ է մասնավոր իրավունքների և պարտականությունների» համար (*տես, H. v. France գործով Եվրոպական դատարանի 24.10.1989 թվականի վճիռը, կետ 47*):

Հետևապես, անհրաժեշտ է, որպեսզի վարչական մարմինների որոշումները, որոնք ինքնին չեն բավարարում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, ենթարկվեն համապատասխան վերահսկողության «լիարժեք իրավասություն ունեցող դատական մարմնի կողմից» (*տես, Ortenberg v. Austria գործով Եվրոպական դատարանի 25.10.1994 թվականի վճիռը, կետ 31*):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող

միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*տե՛ս, Ashingdane v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի «գործնական և արդյունավետ»: Որպեսզի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անհատը պետք է «ունենա հստակ, գործնական հնարավորություն՝ վիճարկելու այն ակտը, որով միջամտություն է կատարվում իր իրավունքներին» (*տե՛ս, Bellet v. France գործով Եվրոպական դատարանի 04.12.1995 թվականի վճիռը, կետեր 36, 38*): Այն կանոնները, որոնք կարգավորում են դատական վերանայման համար բողոք կամ դիմում ներկայացնելիս ձեռնարկվելիք պաշտոնական քայլերն ու ժամկետների հետ համապատասխանությունը, նպատակ ունեն ապահովելու արդարադատության պատշաճ իրականացումը և, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքի հետ համապատասխանությունը (*տե՛ս, Cañete de Goñi v. Spain գործով Եվրոպական դատարանի 15.01.2003 թվականի վճիռը, կետ 36*): Հետևաբար, նշված կանոնները կամ դրանց կիրառումը չպետք է խոչընդոտեն դատավարության մասնակիցների՝ իրավական պաշտպանության հասանելի միջոցի օգտագործումը (*տե՛ս, Miragall Escolano v. Spain գործով Եվրոպական դատարանի 25.04.2000 թվականի վճիռը, կետ 36*):

«Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով հանգամանորեն անդարադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատական քննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ կարևորելով դրանք որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատալնթացակարգային բնագավառներում (քրեական, քաղաքացիական և վարչական):

Մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանն իր 12.07.2016 թվականի թիվ ՍԴՈ-1293 որոշմամբ առանձնացրել է դատարանի մատչելիության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող հետևյալ չափանիշները.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես «Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով, իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես «Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:

«Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս փաստել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում

ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (տես, «Ֆասթ Սփայ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը, Վարդան Աբրահամյանն ընդդեմ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԴ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները երաշխավորող իրավակարգավորումների և դրանցից բխող իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է մեկնաբանվի նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածը:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 191-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

Օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է վարչական դատարան դիմելու նախադրյալները, ըստ որոնց՝ 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ՝

1) որևէ անհատական իրավական ակտով, բացառությամբ դատական ակտի, կամ որևէ ռեալ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա որևէ դրույթով) խախտվել են Սահմանադրության 2-րդ գլխով, **մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների վերաբերող միջազգային իրավունքի նորմերով**, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները:

2) իրենց նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա դրույթով) կարող են խախտվել նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված իրենց իրավունքները:

Վկայակոչված նորմերից հետևում է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել վարչադատավարական կարգով իր իրավունքների պաշտպանությունն իրականացնող սուբյեկտին վիճարկման առարկա դարձնելու իր իրավունքները և ազատությունները ենթադրյալ խախտող այն նորմատիվ իրավական ակտը կամ դրա դրույթները, որի վերաբերյալ վերջինս բարձրացնում է դրանից ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության հարց: Ընդ որում, շահագրգիռ անձն իրավունք ունի նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման պահանջով դիմելու վարչական դատարան, ի թիվս այլնի նաև, այն դեպքում, երբ համարում է, որ վեճի առարկա նորմատիվ իրավական ակտով կամ դրա որևէ դրույթով խախտվել են մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող **միջազգային իրավունքի նորմերով ամրագրված իր իրավունքները, կամ երբ առկա է այդ իրավունքների խախտման հնարավորություն:**

1) Վերոգրյալի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում, նախ, անդրադառնալ ՀՀ վարչական դատարանում նորմատիվ իրավական ակտի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հիմքով՝ իրավաչափության ստուգման հնարավորությանը:

Այսպես, հարկ է փաստել, որ Օրենսգրքի 191-րդ հոդվածով օրենսդիրը վարչական

դատարանին ընդդատյա՝ նորմատիվ իրավական ակտերի վիճարկման գործերի շարքում չի ներառել ՀՀ Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը որոշելու հնարավորությունը:

Միաժամանակ, նման դրույթ նախատեսված է նաև Օրենսգրքի ընդհանուր մասում: Մասնավորապես՝ Օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, իր ընդդատության շրջանակում ընդգրկելով հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, առանձնացրել է այնպիսի գործերի մի շրջանակ, որոնց քննությունը դուրս է ՀՀ վարչական դատարանի առարկայական ընդդատության սահմաններից, որոնց շարքում ներառվում են նաև ՀՀ սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, այդ թվում նաև՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործերը:

ՀՀ Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ կազմավորման և գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը:

ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածը, որը վերաբերում է Հանրապետության նախագահի, Կառավարության, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի և Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությանը, սահմանում է, որ նույն հոդվածում նշված գործերով կարող է վիճարկվել Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ինչպես նորմատիվ, այնպես էլ անհատական բնույթ ունեցող իրավական ակտերի սահմանադրականությունը, բացառությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դիմում ներկայացվելու դեպքերի:

Վկայակոչված նորմերից հետևում է, որ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը՝ ապահովելով ՀՀ Սահմանադրության գերակայությունը: Վերոնշյալ լիազորությունն իրականացնելիս ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է նաև օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության

նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: Այսինքն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու լիազորությունը վերապահված է բացառապես ՀՀ սահմանադրական դատարանին: Հետևաբար այն դեպքում, երբ ՀՀ վարչական դատարան ներկայացվում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու պահանջ, ապա այդպիսի հարցը դուրս է ՀՀ վարչական դատարանի առարկայական ընդդատության շրջանակից:

2) Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև նորմատիվ իրավական ակտերի վիճարկման գործերով այդ ակտերի կամ դրանց վիճարկվող դրույթների՝ միջազգային իրավունքի նորմերին, այդ թվում նաև՝ Կոնվենցիային համապատասխանությունը որոշելու ՀՀ վարչական դատարանի լիազորությանը:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

Նույն հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

Նույն հոդվածի 3-րդ մասը Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև առաջացող հակասությունը լուծում է՝ նախապատվությունը տալով միջազգային պայմանագրերի նորմերին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը, լինելով եվրոպական մայրցամաքային իրավական ընտանիքին պատկանող պետություն, իր պոզիտիվ իրավունքի աղբյուրների շարքում հիմնական դերակատարությունը վերապահում է նորմատիվ իրավական ակտերին՝ սահմանելով որոշակի աստիճանակարգություն՝ յուրաքանչյուր տեսակի նորմատիվ ակտի համար: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրությունը իրավական նորմերի աստիճանակարգությունում առանձանահատուկ տեղ է հատկացնում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական ակտերին՝ դրանց և ազգային օրենքների նորմերի միջև հակասությունը լուծելով հօգուտ միջազգային իրավունքի նորմերի:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման, հաստատման, ուժի մեջ մտնելու, կատարման, փոփոխման, չեղյալ հայտարարման, գործողության երկարաձգման և կասեցման և դրանց հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով:

Նշված օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և Հայաստանի Հանրապետության օրենքների միջև հակասության դեպքում կիրառվում են վավերացված միջազգային պայմանագրերի նորմերը:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 10-րդ կետերի համաձայն՝ միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության և պայմանավորվող մյուս կողմի (կողմերի) միջև մեկ փաստաթղթի կամ փոխկապակցված և միմյանցից անբաժանելի մեկից ավելի փաստաթղթերի տեսքով գրավոր ձևակերպված



և միջազգային հանրային իրավունքով կարգավորվող համաձայնություն է՝ անկախ դրա անվանումից, իսկ վավերացումը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից օրենք ընդունելու կամ հանրաքվեի միջոցով միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր ճանաչելուն ուղղված ներպետական ընթացակարգ:

Վերոգրյալից հետևում է, որ միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության և պայմանավորվող մյուս կողմի (կողմերի) միջև որոշակի ձևով կնքված համաձայնություն է, որը կարգավորվում է միջազգային հանրային իրավունքի նորմերով, իսկ դրա նորմերը ազգային իրավունքի նորմերի համեմատ առաջնային կիրառություն են ստանում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից օրենք ընդունելու կամ հանրաքվեի միջոցով այն վավերացնելուց հետո:

Միավորված ազգերի կազմակերպության կողմից 23.05.1969 թվականին ընդունված, 16.06.2005 թվականին ուժի մեջ մտած «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) (Հայաստանի Հանրապետությունը միացել է 23.10.1996 թվականին) 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր պետություն օժտված է պայմանագրեր կնքելու իրավունակությամբ»:

Վիեննայի կոնվենցիայի 26-րդ հոդվածով ամրագրված «pacta sunt servanda» սկզբունքի համաձայն՝ յուրաքանչյուր գործող պայմանագիր պարտադիր է դրա մասնակիցների համար և պետք է նրանց կողմից բարեխղճորեն կատարվի:

Վիեննայի կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը որպես պայմանագիրը չկատարելու արդարացման պատճառաբանություն չի կարող վկայակոչել իր ներքին իրավունքի դրույթները:

Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածը սահմանում է, որ պայմանագիրն առոչինչ է, եթե կնքման պահին հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին: Նշված նորմն անվանվում է նաև jus cogens, որը պետությունների միջազգային հանրության կողմից ամբողջությամբ ընդունվում ու ճանաչվում է որպես նորմ, որից շեղումն անթույլատրելի է, և որը կարող է փոփոխվել միայն ընդհանուր միջազգային իրավունքի հաջորդ նորմով:

Եվրոպայի խորհրդի կանոնադրության (Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի կանոնադրությունը վավերացրել է 20.12.2000 թվականին) 3-րդ հոդվածի համաձայն՝ Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավունքի գերակայության սկզբունքը և այն սկզբունքը, որի համաձայն յուրաքանչյուր անձ, ով գտնվում է այդ անդամի իրավագործության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից: Նա պարտավորվում է անկեղծորեն և արդյունավետ կերպով համագործակցել առաջին գլխում սահմանված նպատակի իրականացման համար:

ՀՀ սահմանադրական դատարանը 22.02.2002 թվականի թիվ ՍԴՈ-350 որոշմամբ, որոշելով 04.11.1950 թվականին Հռոմում ստորագրված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայում, նշված կոնվենցիայի՝ 20.03.1952 թվականին Փարիզում ստորագրված արձանագրությունում, 16.09.1963 թվականին Ստրասբուրգում ստորագրված թիվ 4 արձանագրությունում և 22.11.1984 թվականին Ստրասբուրգում ստորագրված թիվ 7 արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է բարեխղճորեն կատարել միջազգային իրավունքի սկզբունքներից ու նորմերից բխող պարտավորությունները, այդ թվում՝ միջազգային պայմանագրային պարտավորությունները (Pacta sunt servanda):

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 4-րդ և 43-րդ հոդվածները, ըստ էության, նշված դաշնագրերի դրույթները ներառում են սահմանադրաիրավական հարաբերությունները կարգավորող նորմերի և սկզբունքների համակարգի մեջ:

ՀՀ սահմանադրական դատարանը նաև գտել է, որ չնայած միջազգային հանրային իրավունքի նորմերով պետությունները կրում են միմյանց նկատմամբ պարտավորություններ, սակայն միջազգային հանրային իրավունքի համակարգում մարդու իրավունքների պաշտպանության այսօր ձևավորված մոտեցումը հիմք է տալիս եզրակացնել, որ բազմակողմ կոնվենցիաների համակարգի վրա հիմնված մարդու հիմնական իրավունքները և հիմնարար ազատություններն ավելի շատ հանդիսանում են պետությունների վարքագծի օբյեկտիվ չափորոշիչներ, քան թե նրանց փոխադարձ իրավունքներ և պարտականություններ: Այդ կոնվենցիաներով նախատեսված պետությունների պարտավորություններն ավելի շատ ուղղված են իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց, քան թե մյուս մասնակից պետություններին:

Կոնվենցիայի 15-րդ արձանագրությամբ Բարձր պայմանավորվող կողմերը, սուբսիդիարության սկզբունքին համապատասխան, կրում են Եվրոպական կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքները և ազատություններն ապահովելու առաջնային պատասխանատվությունը, և այդ անելիս նրանք օգտվում են հայեցողության իրավունքից, որը ենթակա է Եվրոպական դատարանի վերահսկողությանը: Սուբսիդիարության սկզբունքը պարտադրում է համատեղ պատասխանատվություն մասնակից պետությունների և Եվրոպական դատարանի միջև: Դատարանները պետք է մեկնաբանեն և կիրառեն ներպետական օրենսդրությունն այնպես, որ լիարժեք ուժ տան Կոնվենցիայով և դրա կից արձանագրություններով սահմանված իրավունքներին և ազատություններին (*տես Grzęda v. Poland գործով Եվրոպական դատարանի 15.03.2022 թվականի վճիռը, կետ 324*):

Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը պահանջում է, որ այն դեպքում, երբ տեղի է ունեցել Կոնվենցիայով պահպանվող մեկ կամ մի քանի իրավունքների ենթադրյալ խախտում, տուժողին հասու լինի պետական ծառայողներին կամ պետական մարմիններին այդ խախտման համար պատասխանատվության ենթարկելու մեխանիզմ: Պայմանավորվող պետությունները որոշակիորեն ազատ են որոշելու այն եղանակը, որով նրանք կկատարեն այս դրույթի ներքո Կոնվենցիայով իրենց վրա դրված պարտականությունները: Որպես ընդհանուր կանոն, եթե առանձին միջոցն ինքնին լիովին չի բավարարում 13-րդ հոդվածի պահանջները, ներպետական օրենսդրությամբ նախատեսված միջոցների ամբողջությունը կարող է այդպիսին լինել (*տես, «Menesheva v. Russia» գործով Եվրոպայան դատարանի 09.03.2006 թվականի վճիռը, «Čonka v. Belgium» գործով Եվրոպական դատարանի 05.02.2002 թվականի վճիռը, «Kudla v. Poland» գործով Եվրոպական դատարանի 26.10.2000 թվականի Մեծ պալատի վճիռը*):

Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է ազգային մակարդակով այնպիսի իրավական պաշտպանության միջոցի գոյությունը, որով հնարավոր կլինի կենսագործել Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների բուն էությունը՝ ներպետական իրավական համակարգում դրանց գոյության որևէ ձևով: Այսպիսով՝ 13-րդ հոդվածի ազդեցությունն այն է, որ պարտադրի իրավական պաշտպանության այնպիսի ներպետական միջոցի ստեղծում, որը հնարավորություն կտա իրավասու ազգային մարմիններին թե՛ անդրադառնալու Կոնվենցիայով նախատեսված իրավունքի խախտման դեմ ներկայացված համապատասխան բողոքի էությանը, թե՛ ապահովելու իրավունքի համապատասխան վերականգնում, թեպետև մասնակից

պետություններին տրվում են որոշակի լիազորություններ այն հարցում, թե ինչպես նրանք պետք է իրականացնեն սույն դրույթով իրենց ստանձնած պարտավորությունները (*տես*, «*Baczkovski and others v. Poland*» գործով Եվրոպական դատարանի 03.05.2007 թվականի վճիռը, «*Chahal v. the United Kingdom*» գործով Եվրոպական դատարանի 15.11.1996 թվականի վճիռը):

Վկայակոչված նորմերից և իրավական դիրքորոշումներից հետևում է, որ Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորությամբ Հայաստանի Հանրապետությունն ընդունել է իրավունքի գերակայության սկզբունքը, ինչպես նաև այն սկզբունքը, որ յուրաքանչյուր անձ, ով գտնվում է իր իրավազորության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից: Ուստի, անկախ ներպետական օրենսդրությամբ ընձեռված հնարավորություններից, պետությունը պարտավորվում է ձեռնարկել անհատական և ընդհանուր միջոցներ՝ իր օրենսդրությունը կիրառելու այնպես, որպեսզի չխախտվեն Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքները և ազատությունները՝ համատեղ պատասխանատվություն կրելով Կոնվենցիան վավերացրած պետությունների և Եվրոպական դատարանի առջև:

Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների իրականացման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է Եվրոպական դատարանի վճիռների կատարման ապահովմամբ, ինչպես նաև պետությունների կողմից միջազգայնորեն ճանաչված *jus cogens* սկզբունքների պահպանմամբ, որը ենթադրում է ներպետական օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան միջազգային իրավունքի նորմերով սահմանված չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված, մշտական բնույթ կրող գործընթաց:

Անդրադառնալով Կոնվենցիայի՝ նորմատիվ իրավական ակտ հանդիսանալու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտ է, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:

Մինչև 07.04.2018 թվականը գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունվող իրավական ակտերն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացրած կամ Հայաստանի Հանրապետության Նախագահի հաստատած և ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերը (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրեր):

Վերոգրյալից հետևում է, որ նախկինում գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը միջազգային պայմանագրերն ընդգրկում էր Հայաստանի Հանրապետությունում ընդունվող իրավական ակտերի շարքում, մինչդեռ ներկայումս գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում նման կարգավորում առկա չէ: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ միջազգային պայմանագրի վավերացման միջոցով այդ պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է պարտադիր: Այսինքն՝ վավերացման միջոցով միջազգային պայմանագիրն ընդգրկվում է ներպետական օրենսդրություն և դառնում դրա մի մասնիկը՝ օժտվելով պարտադիր կիրառելիության հատկանիշով: Ընդ որում, միջազգային պայմանագիրն այդպիսով ոչ միայն դառնում է իրավական համակարգի մի մասը, այլև ընդգրկվում է ներպետական օրենսդրությունում և հավասարեցվում ազգային օրենքներին,

ըստ այդմ՝ ներպետական օրենսդրության աստիճանակարգությունում, հաջորդելով ՀՀ Սահմանադրությանը, զբաղեցնում է իր ուրույն տեղը: Ընդ որում՝ վերոգրյալը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նախքան միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշում է ՀՀ սահմանադրական դատարանը՝ Կառավարության դիմումի հիման վրա:

Վերոգրյալի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 191-րդ հոդվածը ՀՀ վարչական դատարանին ընդդատյա նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության ստուգումը պայմանավորել է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի ՀՀ Սահմանադրությունից) դրանց համապատասխանությունը որոշելով, ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագիր է, որը վավերացման փաստով պայմանավորված ներմուծվել է ՀՀ իրավական համակարգ՝ դառնալով օրենսդրության մի մասը, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատարանը պարտավոր է *inter alia* ստուգել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (կամ դրա դրույթի)՝ Կոնվենցիային համապատասխանելու հանգամանքը նույնպես, որպիսի իրավագործությունը բխում է նաև միջազգային հանրության առջև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից:

Դեռ ավելին, Օրենսգրքի 192-րդ հոդվածով սահմանված նորմատիվ իրավական ակտերի վիճարկման նախադրյալներից մեկը դատարան դիմող սուբյեկտի՝ որևէ անհատական իրավական ակտով կամ որևէ ռեալ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա որևէ դրույթով) **մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով** ամրագրված իր իրավունքների խախտման փաստն է:

Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում, երբ անձը, դիմելով դատարան, վիճարկում է իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի կամ դրա դրույթի համապատասխանությունը Կոնվենցիային, ապա ՀՀ վարչական դատարանը պարտավոր է ըստ էության քննության առարկա դարձնել դիմողի ներկայացրած փաստարկները:

### **Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գագիկ Մաթևոսյանը, դիմելով դատարան, պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի «Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդ, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» թիվ 1528-Ն որոշումը (**գ.թ. 3-12**):

**Դատարանի** 20.11.2023 թվականի որոշմամբ Գագիկ Մաթևոսյանի ներկայացրած դիմումը վերադարձվել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) *օրենսդիրը, ՀՀ վարչական դատարանին վերապահելով նորմատիվ իրավական ակտի՝ դրա համեմատաբար ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին համապատասխանությունը գնահատելու իրավասություն, բացառել է վարչադատարանական կարգով նորմատիվ իրավական ակտի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը գնահատելու հնարավորությունը:*

(...) Միաժամանակ, դիմումատուին իր դիմումով մատնացուց չի արել որևէ այլ իրավական ակտ, որին, ըստ դիմումատուի, հակասում է իր կողմից վիճարկվող՝ ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի 1528-Ն որոշումը:

Փաստորեն, դիմումատու վիճարկում է ՀՀ կառավարության կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտ, նման վիճարկումը փաստարկելով ՀՀ Սահմանադրությանը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային անհամապատասխանությունով:

(...) Տվյալ պարագայում դիմումատուի կողմից ներկայացված փաստերը և պահանջը հիմնավորող փաստարկները բավարար չեն՝ ներկայացված դիմումը ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 26-րդ՝ «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը» վերառությամբ, գլխի շրջանակներում վարույթ ընդունելու համար»:

**Վերաքննիչ դատարանը**, 26.01.2024 թվականի որոշմամբ մերժելով Գագիկ Մաթևոսյանի վերաքննիչ բողոքը, արձանագրել է հետևյալը. «(...) բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է համապատասխան նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը, ապա այդ հարցի վերաբերյալ որոշման ընդունումը Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակում է, իսկ եթե վիճարկվում է համապատասխան նորմատիվ իրավական ակտի՝ դրա համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող այլ նորմատիվ իրավական ակտերին (ոչ՝ Սահմանադրությանը) համապատասխանությունը, ապա վեճը ենթակա է քննության վարչական դատարանում:

(...) սույն դեպքում բարձրացվում է ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի 1528-Ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարց, ինչը, վերը նշված պարզառաբանությամբ, դուրս է վարչական դատարանի լիազորությունների շրջանակից:

(...)

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է, սակայն այն չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության բաղկացուցիչ մասը՝ այն հիմնավորմամբ, որ օրենսդրությունը օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, այն է՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի կամ Ազգային ժողովի ընդունած նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության, սահմանադրական օրենքների և օրենքների, ինչպես նաև Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտերի ամբողջությունն է, իսկ միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության և պայմանավորվող մյուս կողմի (կողմերի) միջև մեկ փաստաթղթի կամ փոխկապակցված և միմյանցից անբաժանելի մեկից ավելի փաստաթղթերի տեսքով գրավոր ձևակերպված և միջազգային հանրային իրավունքով կարգավորվող համաձայնություն է՝ անկախ դրա անվանումից: Այսինքն՝ միջազգային պայմանագիրը որևէ կերպ չի հանդիսանում օրենսդրական կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ, ըստ այդմ՝ նաև չի հանդիսանում օրենսդրություն, դրա մաս»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Գագիկ Մաթևոսյանը ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի «Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդ, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» թիվ 1528-Ն որոշման վիճարկման հիմքում դրել է այդ ակտի՝ ՀՀ Սահմանադրությանը և

Կոնվենցիային հակասելու փաստարկները:

Դատարանը, ինչպես նաև Վերաքննիչ դատարանն իրավաչափորեն եզրահանգել են, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու պահանջը դուրս է ՀՀ վարչական դատարանի ենթակայության շրջանակներից և քննության է ենթակա ՀՀ սահմանադրական դատարանի կողմից:

Ինչ վերաբերում է վիճարկվող նորմատիվ իրավական ակտի՝ Կոնվենցիային հակասելու վերաբերյալ դիմողի փաստարկներին, ապա Դատարանը և Վերաքննիչ դատարանը, ըստ էության, փաստարկել են, որ Կոնվենցիան չի հանդիսանում նորմատիվ իրավական ակտ, այն ՀՀ օրենսդրության մաս համարվել չի կարող, ուստի դիմողը պետք է ներկայացնե՞ր ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին հակասելու այլ փաստարկներ:

Մինչդեռ, սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Կոնվենցիան վավերացնելու փաստի ուժով՝ այն ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ՝ կազմելով օրենսդրության մի մասը և օժտվել է կիրառելիության առաջնայնության և պարտադիրության ուժով: Հետևաբար, դիմողի կողմից ներկայացված փաստարկները՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտը Կոնվենցիային համապատասխանելու վերաբերյալ, ենթակա են ըստ էության քննության դատարանների կողմից, որպիսի փաստը Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում Դատարանի 20.11.2023 թվականի «Դիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ Գագիկ Մաթևոսյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժելով՝ Վերաքննիչ դատարանը բողոք բերած անձին զրկել է ՀՀ կառավարության վիճարկվող որոշումը ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին՝ Կոնվենցիային, համապատասխանելու հիմքով վիճարկելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հնարավորությունից, ինչի արդյունքում սահմանափակել է դիմողի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու և Վերաքննիչ դատարանի 26.01.2024 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.01.2024 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 20.11.2023 թվականի «Դիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

19/12.07.2022  
Մ-13311/22

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ  
ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ  
ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ  
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)**

2024 թվականի սեպտեմբերի 16-ին

քաղաք Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2022 թվականի նոյեմբերի 11-ի որոշման դեմ մեղադրյալ Էրիկ Սարգսի Ալեքսանյանի պաշտպան Զ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**Վարույթի դատավարական նախապատմությունը.**

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2022 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը և թույլատրվել՝ 2 (երկու) ամիս ժամկետով Արուսյակ Հարությունի Ալեքսանյանի նկատմամբ իրականացնել «Թվային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկում», «Ներքին դիտում» և «Արտաքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Առաջին ատյանի դատարանը, քննարկելով նախաքննության մարմնի միջնորդությունը, 2022 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ թույլատրել է Ա.Ալեքսանյանի նկատմամբ իրականացվող «Թվային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկում», «Ներքին դիտում» և «Արտաքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների ժամկետը երկարաձգել 2 (երկու) ամիս ժամանակով՝ մինչև 2022 թվականի նոյեմբերի 12-ը:

2. 2022 թվականի հոկտեմբերի 17-ին թիվ 58236222 քրեական վարույթով Էրիկ Ալեքսանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

3. Քննարկելով Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 12-ի որոշման դեմ

մեղադրյալ Է.Ալեքսանյանի պաշտպան Գ.Պապոյանի բողոքը՝ Վերաքննիչ դատարանը 2022 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ այն թողել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Է.Ալեքսանյանի պաշտպան Զ.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի հունվարի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

2023 թվականի հունվարի 16-ին գործը բաշխվել (հանձնվել) է ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմին<sup>1</sup>:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքաբերը, մեջբերելով ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների մի շարք որոշումներ, պնդել է, որ Ա.Ալեքսանյանի նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներն անմիջականորեն առնչվում են նաև մեղադրյալ Է.Ալեքսանյանի իրավունքներին և օրինական շահերին, վկայում են վերջինիս մասնավոր կյանքի իրավունքի սահմանափակման մասին:

Բողոքաբերի պնդմամբ Ա.Ալեքսանյանի նկատմամբ «Ներքին դիտում» ՕՀ միջոցառման արդյունքները պարունակող լազերային սկավառակի զննության արդյունքում պարզվել է, որ ձայնային ֆայլերի մեջ արձանագրված խոսակցությունները, ըստ նախաքննական մարմնի, տեղի են ունենում Է.Ալեքսանյանի և Ա.Ալեքսանյանի միջև: Հետևաբար, ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանի՝ Ա.Ալեքսանյանի նկատմամբ «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելը թույլատրելու մասին որոշումներով սահմանափակվել է նաև Է.Ալեքսանյանի հաղորդակցության գաղտնիության իրավունքը:

Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ կատարված ՕՀ միջոցառման արդյունքները ծառայել են Է.Ալեքսանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու և փաստական հիմք են հանդիսացել վերջինիս նկատմամբ խափանման միջոց կալանքը կիրառելու համար: Ուստի, ըստ բողոքաբերի՝ Է.Ալեքսանյանը միանշանակ պետք է դիտվի որպես շահագրգիռ անձ և լիարժեք իրավունք ունենա վիճարկելու Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը:

Վերը նշվածի համատեքստում բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, իր պատճառաբանություններում չսահմանափակվելով միայն այն հանգամանքով, որ ՕՀ միջոցառումների կատարումը թույլատրվել է մեկ այլ անձի՝ Ա.Ալեքսանյանի նկատմամբ, պետք է գնահատման ենթարկեր նաև Է.Ալեքսանյանին որպես շահագրգիռ անձ դիտարկելու հարցը:

6. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը՝ վարույթը փոխանցելով նույն դատարան՝ նոր քննության:

<sup>1</sup> Համաձայն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-24-Ն սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ մասի՝ կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված դատական ակտերի դեմ քրեական պալատի վարույթ ընդունած բողոքները ենթակա են վերաբաշխման Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատին:



**Վճուրբել բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

7. 2022 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանը, բավարարելով նախաքննության մարմնի միջնորդությունը՝ Ա.Ալեքսանյանի նկատմամբ «ԹՎային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկում», «Ներքին դիտում» և «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ, նշել է հետևյալը. «(...) Դատարան ներկայացված նյութերը վկայում են այն մասին, որ ըստ ստացված տվյալների՝ Արուսյակ Հարությունի Ալեքսանյանը՝ զբաղեցնելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնը, հանդիսանալով դատական իշխանության ոլորտում մշտապես պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձ, իր վարույթում գտնվող տարբեր դատական գործերով, դեռևս չպարզված անձանցից պարբերաբար պահանջում և ստանում է խոշոր չափերով՝ 2.000.000-5.000.000 (երկու միլիոնից մինչև հինգ միլիոն) ՀՀ դրամ գումար կաշառք՝ իր իշխանական լիազորությունների շրջանակներում կաշառք տվողների ներկայացրած անձանց օգտին դատավարական որոշումների կայացման համար:

Դատարանն արձանագրում է, որ ներկայացված տվյալները առերևույթ վկայում են ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքի հնարավոր առկայության մասին, որը՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի՝ դասվում է առանձնապես ծանր հանցանքների տեսակին:

Միջնորդությունից և ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Արուսյակ Ալեքսանյանն օգտագործում է 055-44-74-34 և 041-57-50-11 բջջային հեռախոսահամարները, վերջինիս աշխատասենյակը գտնվում է ք.Երևան, Նազարբեկյան թաղամաս 40 հասցեում գտնվող Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Աջափնյակ-1 նստավայրի 3-րդ հարկում՝ գլխավոր մուտքի աջակողմյան աստիճանահարթակով դեպի 3-րդ հարկ բարձրացող, նշված հարկի աստիճանահարթակներից անմիջապես դեպի աջ տանող միջանցքի ուղղությամբ տեղակայված աջակողմյան առաջին սենյակի ներսում՝ նշված սենյակի մուտքից անմիջապես աջ կողմում տեղակայված առանձնացված սենյակում և իր՝ վերոգրյալ հնարավոր հանցավոր գործունեությանը վերաբերելի խոսակցությունները վարում է նշված հեռախոսահամարով և նշված հասցեից:

Բացի այդ, ըստ ներկայացված նյութերի՝ միջնորդություն ներկայացրած օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինը ձեռնարկել է նաև այլ միջոցներ՝ ձեռնարկվել են «օպերատիվ հարցում» և «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնց արդյունքում հնարավորություն չի ընձեռնվել հաստատել կամ հերքել ստացված օպերատիվ տեղեկությունները:

Նկատելի ունենալով, որ ներկայացված նյութերը պարունակում են տեղեկություններ Արուսյակ Հարությունի Ալեքսանյանի կողմից առերևույթ ծանր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման և այդ հանցավոր գործունեությունը վերջինիս կողմից շարունակելու հավանականության մասին, միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման և հանցավոր գործունեության շարունակումը կանխելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ այլ եղանակով ողջամտորեն հնարավոր չէ այդ տեղեկատվության ձեռքբերումը, և գտնելով, որ ենթադրյալ հանցանք կատարած անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից

անմիջապես հետո բացահայտելու, ինչպես նաև նրա կողմից հանցավոր, գործունեության շարունակումը հայտնաբերելու և կանխելու նպատակով Արուսյակ Հարությունի Ալեքսանյանի նկատմամբ երկու ամիս ժամկետով «թվային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկում», «ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ՝ «արտաքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտության մասին ներկայացվել են բավարար հիմնավորումներ՝ Դատարանը գտնում է, որ նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացնելը թույլատրելու անհրաժեշտությունը բխում է ենթադրյալ առանձնապես ծանր հանցագործության կատարումը բացահայտելու, հանցավոր գործունեության հավանական շարունակումը կանխելու հանրային շահը տվյալ իրավիճակում գերակայում է Արուսյակ Հարությունի Ալեքսանյանի անձնական կյանքի գաղտնիության իրավունքին: (...)»<sup>2</sup>:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «(...) Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության և կոռուպցիայի հակազդման դեպարտամենտի պետ Վիգեն Պետրոսյանի միջնորդությունը բավարարվել է, թույլատրվել է՝ երկու ամիս ժամկետով Արուսյակ Հարությունի Ալեքսանյանի նկատմամբ իրականացնել տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում», վերջինի կողմից օգտագործվող 055-44-74-34 և 041-57-50-11 բջջային հեռախոսահամարներով «Թվային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկում» և վերջինի աշխատասենյակում՝ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս 40 հասցեում գտնվող Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ Աջափնյակ-1 նստավայրի 3-րդ հարկում՝ գլխավոր մուտքի աջակողմյան աստիճանահարթակով դեպի 3-րդ հարկ բարձրացող, նշված հարկի աստիճանահարթակներից անմիջապես դեպի աջ տանող միջանցքի ուղղությամբ տեղակայված աջակողմյան առաջին սենյակի ներսում՝ նշված սենյակի մուտքից անմիջապես աջ կողմում տեղակայված առանձնացված սենյակում «Ներքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որը որևէ կերպ չի առնչվում Էրիկ Սարգսի Ալեքսանյանի իրավունքներին և օրինական շահերին: Հետևաբար՝ Դատարանի որոշումը չի շոշափել Էրիկ Սարգսի Ալեքսանյանի օրինական շահերը, մասնավորապես՝ նրա հաղորդակցության ազատության և գաղտնիության, բնակարանի անձեռնմխելիության, մասնավոր և ընդհանրական կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքները:

Վերաքննիչ դատարանի վերը նշված դիրքորոշումը պայմանավորված է նաև նախկինում կայացված Մ-8212-22, Մ-2238-22, Մ-2624-22, Բ-3916-21, Բ-3917-21, Բ-3918-21 որոշումներով:

Ուստի, ելնելով վերոգրյալից՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ այն դեպքում երբ պաշտպանական կողմի համոզմամբ վիճարկվող դատական ակտով շոշափվել են նաև Էրիկ Ալեքսանյանի իրավունքները և օրինական շահերը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պաշտպանները զրկված չեն հետազայում՝ գործն ըստ էության քննելիս վիճարկելու քրեական գործում առկա այդ ապացույցի թույլատրելիությունը, վերաբերելիությունը կամ արժանահավատությունը (տե՛ս mutatis mutandis, Արա Շահնազարյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի հունիսի 30-ի թիվ Բ-3683/20 որոշման 22-րդ կետը):

Հաշվի առնելով վերը նշվածը և նկատի ունենալով, որ չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ հատուկ վերանայման բողոքը ներկայացրել է այն անձը, որը հատուկ վերանայման բողոք

<sup>2</sup> Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 15-19:

ներկայացնելու իրավունք չունեն, ուստի մեղադրյալ էրիկ Ալեքսանյանի պաշտպան Գայանե Պապոյանի կողմից ներկայացված հատուկ վերանայման բողոքը պետք է թողնել առանց քննության: (...)»<sup>3</sup>:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Ա.Ալեքսանյանի նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն տալու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ է.Ալեքսանյանի պաշտպան Գ.Պապոյանի կողմից բերված հատուկ վերանայման բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը:

10. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

*«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը սահմանում է. *«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 353-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Դատական վերանայման բողոք բերելու իրավունք ունեն՝*

*1) վարույթի մասնավոր մասնակիցը.*

*2) վարույթի մասնավոր մասնակից չհանդիսացող անձը, եթե դատական ակտն ուղղակիորեն վերաբերում է նրա իրավաչափ շահերին.*

*3) դատախազը:*

*2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված անձանց կողմից կամ ի շահ նրանց դատական վերանայման բողոքը կարող է բերվել միայն դատական ակտի՝ այդ անձանց մասնավոր շահերին առնչվող մասով:»:*

11. ՀՀ Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշմամբ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ, ի թիվս այլնի, նշել է.

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը

<sup>3</sup> Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 72-73:

հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման<sup>4</sup>:

12. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով,<sup>5</sup>

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը<sup>6</sup>,

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա<sup>7</sup>:

13. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով դատարանի մատչելիության իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ. «Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատարանի պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները»<sup>8</sup>:

14. Վճռաբեկ դատարանը, Գոռ Սարգսյանի գործով որոշմամբ, բացահայտելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետախուզական-որոնողական բնույթը, արձանագրել է, որ դրանց արդյունքում միջամտություն է տեղի ունենում մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին, որոնց առնչությամբ պետք է պահպանվեն պետության ստանձնած

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշման 4.1-րդ կետը:

<sup>5</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

<sup>6</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

<sup>7</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

<sup>8</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Այվազյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշումը, 16-րդ կետ, *Լևոն Հարությունյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը, 13-րդ կետ:

պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունները<sup>9</sup>:

Վճռաբեկ դատարանը նաև փաստել է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների նկատմամբ իրականացվող միջամտության ծավալներն անհամեմատ ընդարձակ են: Ավելին, որոշ դեպքերում դրանք նույնիսկ «թիրախավորում» են անորոշ թվով անձանց շրջանակի, ինչն էլ օպերատիվ-հետախուզական միջոցառումները, քննչական գործողությունների համեմատ, դարձնում է հանցավոր դեպքի բացահայտման առավել ծայրահեղ միջոց: Ուստի, օժտված լինելով հանցագործությունների բացահայտման բարձր արդյունավետությամբ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների գործիքակազմը գործնականում կարող է «թիրախավորել» ոչ միայն այն անձանց, ովքեր ուղղակի առնչություն են ունեցել հանցավոր դեպքին (օրինակ՝ հանդիսացել են հանցագործությանն օժանդակող), այլ նաև անուղղակի առնչություն ունեցողներին (օրինակ՝ դեպքի վայրով անցնող անձանց): Նման պայմաններում, անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել այդ երկու խումբ անձանց նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների կապակցությամբ արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու կառուցակարգը և այն չափանիշը, որի պայմաններում այդ կառուցակարգը կարող է գործադրվել<sup>10</sup>:

15. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանը հատկապես կարևոր է համարել ընդգծել օպերատիվ-հետախուզական միջոցառումների կապակցությամբ իրավական պաշտպանություն հայցելու կառուցակարգի արդյունավետության ապահովման անհրաժեշտությունը: Այս առումով հատկանշական են Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի առնչությամբ: Մի շարք գործերով Եվրոպական դատարանն ընդգծել է, որ այդ հոդվածը պահանջում է, որ ներպետական պաշտպանության միջոց առկա լինի Եվրոպական կոնվենցիայով նախատեսված՝ «վիճարկելի» բողոքի էությունը քննելու և համապատասխան օգնություն տրամադրելու համար, չնայած որ պայմանավորվող պետություններին տրվում է որոշակի թույլատրելի հայեցողության շրջանակ՝ կապված այն ձևի հետ, որով նրանք կատարում են Եվրոպական կոնվենցիայի այս դրույթով նախատեսված իրենց պարտականությունները<sup>11</sup>: Բացի այդ, դատարանը կարևորել է, որ 13-րդ հոդվածով պահանջվող պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ»՝ ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրության մեջ, ընդ որում՝ դրա կիրառումը չպետք է անարդարացիորեն խոչընդոտվի պետության գործողություններով կամ բացթողումներով<sup>12</sup>:

16. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում, ինչպես նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վերաբերելի գնահատականների հիման վրա Վճռաբեկ դատարանն Արա Շահնազարյանի գործով վերահսկողության գաղտնի միջոցառումների իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատական ակտը ստուգելու «արդյունավետ վերահսկողության» միջոց է դիտարկել բացառապես դրա իրավաչափության վիճարկումը վերադատության

<sup>9</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռ Սարգսյանի* գործով 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԿԴ/0229/01/16 որոշումը, 17.1-17.2 կետեր:

<sup>10</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արա Շահնազարյանի* գործով 2022 թվականի հունիսի 30-ի թիվ Բ-3683/20 որոշման 12-րդ կետը:

<sup>11</sup> Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ *Petropavlovskis v. Latvia* գործով 2015 թվականի հունվարի 13-ի վճիռը, գանգատ թիվ 44230/06, 91-րդ կետ:

<sup>12</sup> Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ *Paul and Audrey Edwards v. The United Kingdom* գործով 2002 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 46477/99, 96-97-րդ կետեր:

կարգով: Նախնական դատական վերահսկողության ենթակա օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրավաչափության՝ վերադասության կարգով վիճարկելու սուբյեկտային կազմի կապակցությամբ, **Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գաղտնի միջոցառումների «արդյունավետ վերահսկողության» հիշյալ մեխանիզմը կարող է գործադրվել այն դեպքում, երբ այդ միջոցառման արդյունքում անձը դարձել է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման զոհ:**

Վերոգրյալի հետ մեկտեղ, հաշվի առնելով, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրենց բնույթով կարող են «թիրախավորել» անորոշ թվով անձանց շրջանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ պարագայում, օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունը գնահատելու համար կիրառվում է երկաստիճան թեստ՝ բաղկացած հետևյալ հարցերից.

**ա) արդյո՞ք անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ տեղի է ունեցել միջամտություն,**

**բ) եթե այո, ապա արդյո՞ք այդպիսի միջամտությունն ուղղակի կամ անուղղակի վնաս է պատճառել անձին կամ ազդեցություն թողել իր լեգիտիմ շահերի վրա:**

Միաժամանակ, ընդգծվել է, որ վերոնշյալ վերջին չափանիշը իրավակիրառ պրակտիկայում չպետք է այն աստիճան ձևականացվի (excessive formalism), որ անձը, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ տեղի ունեցած միջամտության պայմաններում, զրկվի օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման իրավաչափությունը ստուգման ենթարկելու հնարավորությունից:

Մյուս կողմից էլ, նշվել է, որ շահագրգիռ անձինք, իրենց բողոքը ներկայացնելիս, պետք է հիմնավորեն վերոնշյալ չափանիշների առկայությունը: Այս առումով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման արդյունքում ձեռքբերված փաստական տվյալների հիման վրա անձին որպես մեղադրյալ ներգրավելը և մեղադրանք առաջադրելն ինքնին չի կարող վկայել վերոնշյալ չափանիշները հաղթահարված գնահատելու համար: Մասնավորապես, անձանց նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռքբերված տվյալների հիման վրա կարող են որպես մեղադրյալ ներգրավվել երրորդ անձինք: Նշվածը՝ խնդրո հարցի համատեքստում չի կարող դիտարկվել որպես լեգիտիմ շահի պաշտպանության մեխանիզմ, եթե այդ երրորդ անձանց որևէ իրավունք չի ենթարկվել միջամտության բուն օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման շրջանակներում: Նրանք կարող են հետագայում՝ հնարավոր քրեական վարույթի շրջանակներում վիճարկել մեղադրանքի հիմքում դրված այդ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ձեռքբերված փաստական տվյալների թույլատրելիությունը<sup>13</sup>:

17. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ բավարարվել է վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը և թույլատրվել՝ 2 (երկու) ամիս ժամկետով Ա.Ալեքսանյանի նկատմամբ իրականացնել «Թվային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկում», «Ներքին դիտում» և «Արտաքին դիտում» համալիր

<sup>13</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արա Շահնազարյանի* գործով 2022 թվականի հունիսի 30-ի թիվ Բ-3683/20 որոշումը: Ինչպես նաև տե՛ս, mutatis mutandis, *Գևորգ Աթաբեկյանի* գործով 2022 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 39/14.06.2021, *Արթուր Ներկարարյանի* և *Արսեն Մալերյանի* գործով 2024 թվականի մարտի 1-ի թիվ 33/15.09.2021 որոշումները:

օպերատիվ-հետախուզական միջոցառումներ<sup>14</sup>,

- 2022 թվականի հոկտեմբերի 17-ին թիվ 58236222 քրեական վարույթով Է.Ալեքսանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով հարուցվել է հանրային քրեական հետապնդում<sup>15</sup>,

- Վերաքննիչ դատարանը, քննարկելով Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 12-ի դատական ակտի դեմ մեղադրյալ Է.Ալեքսանյանի պաշտպան Գ.Պապոյանի բողոքը, այն թողել է առանց քննության՝ մեղադրյալ Է.Ալեքսանյանի կամ նրա պաշտպանի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք չունենալու պատճառաբանությամբ: Միննույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ վիճարկվող դատական ակտը վերաբերվել է Ա.Ալեքսանյանի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի սահմանափակմանը, որը որևէ կերպ չի առնչվում Է.Ալեքսանյանի իրավունքներին և օրինական շահերին: Հետևաբար՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը չի շոշափել Է.Ալեքսանյանի օրինական շահերը, մասնավորապես՝ նրա հաղորդակցության ազատության և գաղտնիության, բնակարանի անձեռնմխելիության, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքները:

Միաժամանակ, հղում կատարելով Վճռաբեկ դատարանի՝ Արա Շահնազարյանի գործով որոշմանը՝ Վերաքննիչ դատարանը դիրքորոշում է հայտնել, որ եթե պաշտպանական կողմի համոզմամբ վիճարկվող դատական ակտով շոշափվել են նաև Է.Ալեքսանյանի իրավունքները և օրինական շահերը, ապա պաշտպանները զրկված չեն հետագայում՝ գործն ըստ էության քննելիս վիճարկելու քրեական գործում առկա այդ ապացույցի թույլատրելիությունը, վերաբերելիությունը կամ արժանահավատությունը<sup>16</sup>:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, բացառելով օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրող որոշումը երրորդ անձանց կողմից վերադասության կարգով բողոքարկելու հնարավորությունը՝ հաշվի չի առել, որ այդ որոշման հիման վրա կարող է տեղի ունենալ միջամտություն երրորդ անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին:

Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ փաստում է, որ թեև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվությունը տրվել է Ա.Ալեքսանյանի նկատմամբ, սակայն նշված հանգամանքն ինքնին բավարար չէր եզրահանգելու, որ Է.Ալեքսանյանն այն բողոքարկելու իրավունք չունի:

Մասնավորապես, նախաքննության մարմնի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 6-ին կազմված «Ձևնում կատարելու մասին» արձանագրությամբ փաստվում է, որ Ա.Ալեքսանյանի աշխատասենյակում «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման ընթացքում վերահսկման են ենթարկվել վերջինիս և Է.Ալեքսանյանի միջև տեղի ունեցած հեռախոսային խոսակցությունները<sup>17</sup>: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարան ներկայացված նյութերում առկա տվյալներով հիմնավորվել է, որ

<sup>14</sup> Տես սույն որոշման 7-րդ կետը:

<sup>15</sup> Տես սույն որոշման 2-րդ կետը:

<sup>16</sup> Տես սույն որոշման 8-րդ կետը:

<sup>17</sup> Տես վարույթի նյութեր, «Ձևնում կատարելու մասին» 2022 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրություն, թերթեր 46-62:

Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 12-ի որոշման հիման վրա առերևույթ միջամտություն է տեղի ունեցել Է.Ալեքսանյանի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ բողոքի հեղինակը նաև հիմնավորել է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ միջամտությունն առերևույթ ազդեցություն է թողել Է.Ալեքսանյանի լեզուի շահերի վրա:

19. Նման պայմաններում, առանց որևէ հիմնավոր պատճառաբանության բացառելով Է.Ալեքսանյանի առնչությունն իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումներին և այդպիսով նրան դիտարկելով որպես բողոքարկման իրավունք չունեցող անձ՝ Վերաքննիչ դատարանի որոշմամբ Է.Ալեքսանյանը զրկվել է արդյունավետ դատական պաշտպանություն հայցելու իր՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված իրավունքից:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ բողոքը ներկայացնելիս բողոքաբերի կողմից հիմնավորվել է *Արա Շահնազարյանի* գործով որոշմամբ ձևակերպված՝ բողոքարկման իրավասության իրավական չափորոշիչների պահպանումը: Հիշյալ նախադեպային որոշմամբ մշակված չափանիշների առկայության հիմնավորումն էլ հենց պայմանավորում է Ա.Ալեքսանյանի նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը թույլատրող Առաջին ատյանի դատարանի որոշումը վերադասության կարգով վիճարկելու Է.Ալեքսանյանի իրավունքը:

Այսպիսով, վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Է.Ալեքսանյանի պաշտպան Գ.Պապոյանը Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 12-ի որոշումը բողոքարկելու իրավունք չի ունեցել: Հետևաբար Ա.Ալեքսանյանի նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ Է.Ալեքսանյանի պաշտպան Գ.Պապոյանի կողմից բերված հատուկ վերանայման վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը հիմնավոր չէ:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հատուկ վերանայման վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը *prima facie* անհամաչափորեն սահմանափակել է Է.Ալեքսանյանի՝ դատարանի մատչելիության իրավունքը, արդյունքում թույլ է տրվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է վարույթի ելքի վրա, ինչպես նաև հանգեցրել է վարույթի հանրայնության սկզբունքի խախտման, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ և 362-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը բեկանելու և վարույթը ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության փոխանցելու համար<sup>18</sup>:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ 361-րդ, 363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

<sup>18</sup> Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 և Ավաթ Ամինիի գործով 2023 թվականի հունվարի 25-ի թիվ ԵԴ/0752/06/22 որոշումները:



## ՈՐՈՇԵՑ

1. Մեղադրյալ Էրիկ Սարգսի Ալեքսանյանի պաշտպան Գ. Պապոյանի հատուկ վերանայման բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

## **ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ**

*ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է*

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր  
**Սամվել ՕՀԱՆՅԱՆԻ** ծննդյան 65-ամյակը,

*մաղթում նրան առողջություն, երկար տարիների կյանք  
և վաստակաշատ հանգիստ:*

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ  
**Արման ԴԻԼԱՆՅԱՆԻ** ծննդյան 50-ամյակը,

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր  
**Արթուր ՊՈՂՈՍՅԱՆԻ** ծննդյան 60-ամյակը,

ՀՀ սնանկության դատարանի դատավոր  
**Բագրատ ՄԿՐՏՉՅԱՆԻ** ծննդյան 55-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության  
քրեական դատարանի դատավոր  
**Վարդան ԳՐԻԳՈՐՅԱՆԻ** ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության  
քաղաքացիական դատարանի դատավոր  
**Դանիել ՄԽԵՅԱՆԻ** ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության  
դատարանի դատավոր  
**Աննա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ** ծննդյան 45-ամյակը,

ՀՀ դատավորների միության փոխնախագահ  
**Արթուր ՍՏԵՓԱՆՅԱՆԻ** ծննդյան 40-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի դատավոր  
**Արկադիկ ՄԿՐՏՉՅԱՆԻ** ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության  
քաղաքացիական դատարանի դատավոր  
**Արմինե ՍԱՖԱՐՅԱՆԻ** ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության  
դատարանի դատավոր  
**Անի ԵՐԻՋԱՆՅԱՆԻ** ծննդյան 35-ամյակը,

*մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ  
և մասնագիտական արդյունավետ գործունեություն:*

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:

Պարբերականի գիտական խմբագրական խորհուրդը քննարկում է միայն այն նյութերը, որոնք ներկայացվում են գրախոսականի առկայությամբ:

Տպագրվող նյութը պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ **ներածություն, հիմնական հետազոտություն** (որը կարող է ունենալ բաժիններ և ենթաբաժիններ), **եզրակացություն**:

«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող նյութերի տեխնիկական պահանջները.

1. նյութի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
2. հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը (գլխատառերով), հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
3. տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
4. հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
5. հիմնական տառաչափը՝ 12,
6. միջտողային հեռավորությունը՝ 1.5,
7. օգտագործված գրականության ցանկ՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջերի քանակը,
8. հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
9. նյութը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա երեք լեզուներով ամփոփագրեր (ընդ որում՝ եթե այն անգլերեն կամ ռուսերեն չէ, ամփոփագիրը պետք է լինի 150-250 բառի սահմաններում), որոնք պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Նյութը երեք լեզվով պետք է ունենա մինչև 10 բանալի բառեր,
10. նյութն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ՝ [kchalabyan@gmail.com](mailto:kchalabyan@gmail.com)):

Պարբերականում նյութերը տպագրվում են անվճար հիմունքներով: